Ռ. ԻՆՃԻԿՅԱՆ



ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վ

Й Рг Ушинский К.
140463 Нац библ-тека
Дипломный архив
отд. ф.
972

Р. ИШХАНЯН

ИСТОРИЯ АРМЯНСКОЙ БИБЛИОГРАФИИ

ВЫП. 3

АРМЯНСКАЯ СОВЕТСКАЯ БИБЛИОГРАФИЯ

ГОС. КНИЖНАЯ ПАЛАТА АРМ. ССР
ЕРЕВАН 1966

Ռ. ԻՇԽԱՆՅԱՆ

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՊՐԱԿ Գ

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ 1966

... ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ...
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
[illegible]

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Հայ մատենագիտության պատմության» առաջին պրակը, որ նվիրված է հայ հին և միջնադարյան մատենագիտությանը, հրատարակվել է Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի կողմից (1964 թ.)։ Առաջին պրակին բնականաբար հաջորդում է երկրորդը, թեև քիչ չեն նաև այն դեպքերը, երբ հանգամանքների բերումով որևէ հաջորդ պրակ կամ հատոր նախորդից առաջ է լույս տեսնում։ Ներկա դեպքում էլ երրորդ պրակի լույս ընծայումը նախորդում է երկրորդին։ Պատճառն այն է, որ նախ այս պրակը տպագրելու հնարավորություն ստեղծվեց։ Գրապալատը, որպես հայ խորհրդային մատենագիտության գլխավոր կենտրոններից մեկը հանձն առավ հրատարակելու «Հայ մատենագիտության պատմության» այս մասը, որ նվիրված է Խորհրդային Հայաստանի մատենագիտության զարգացման հարցերին և զգալի չափով լուսաբանում է հենց իր՝ գրապալատի անցած աշխատանքային ուղին։

Ներկա պրակի համար մեր հավաքած նյութերը բավական շատ էին, որ բացատրվում է Խորհրդային Հայաստանում կատարված ու կատարվող մատենագիտական աշխատանքի մեծ չափերով, ու թեև պրակի նախապես սահմանված ծավալը բավականին մեծացավ, միևնույն է, հնարավոր չեղավ ընդգրկելու հավաքված ողջ նյութը։ Մենք աշխատել ենք եղած

հնարավորության սահմաններում ավելի շատ փաստական նյութ օգտագործել, այսինքն՝ առարկայորեն ներկայացնել անցած 45 տարվա ընթացքում հայ մատենագիտության իրական նվաճումները և ավելի քիչ հրապուրվել ընդհանուր բնույթի մի շարք հարցերով, որոնք արդեն շոշափված են ուրիշ աշխատությունների մեջ։

Նույն նկատառումով մեր ուշադրության կենտրոնում եղել են խորհրդային ժամանակաշրջանում հրատարակված ամենից ավելի կարևոր մատենագիտական աշխատությունները։ Անշուշտ, լավ կլիներ հանգամանորեն անդրադառնալ մատենագիտական բոլոր կարգի հրատարակություններին, նրանց արժեքին ու թերություններին, քանի որ յուրաքանչյուր մատենագիտություն իր տեղն ու դերն ունի մատենագիտական ընդհանուր աշխատանքի մեջ։ Սակայն այդ հնարավորությունը չունենալով՝ նպատակահարմար գտանք մի շարք աշխատությունների ավելի թռուցիկ անդրադառնալու հաշվին՝ ավելի մանրամասն խոսել խորհրդային շրջանի հայ մատենագիտության առավել աչքի ընկնող գործերի մասին։

Մատենագիտություն առարկայի մեջ բացի մատենագիտական ցանկերից, նրանց կազմման հետ կապված խնդիրներից ենթադրվում են նաև մատենագիտական աշխատանքի փորձի ամփոփման, դրա հիման վրա որոշ տեսական և գործնական դրույթների մշակման, տեղեկատու-մատենագիտական աշխատանքի որոշ ձևերի կազմակերպման հարցերը, ինչպես նաև գրքագիտության, այդ թվում գրքի պատմության խնդիրներ։ Սակայն այդ ամենը կկազմի աշխատության չորրորդ պրակի նյութը, քանի որ ներկա պրակի սահմանները հնարավորություն չտվեցին անդրադառնալու դրանց, իսկ սփյուռքահայ մատենագիտությանը (1920-ից հետո) նվիրված պրակը կլինի հինգերորդը (նախապես ծրագրված չորրորդի փոխարեն)։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1920—30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

Արևելահայոց մեջ 19-րդ դարում և 20-րդի սկզբում, ինչպես տեսանք, մատենագիտական աշխատանքը թույլ էր զարգանում: Այստեղ գոյա ցանկային բնույթի մատենագիտական հրատարակություններ քանակը (առանձին տպված, ներգրքային, ինչպես և պարբերականների էջերում) հասնում էր շուրջ հարյուր անունի, հաշված նաև փոքր գրացանկերը: Արևելահայոց մեջ ամենից ավելի ծավալուն մատենագիտական ցանկերը եղան գրադարանային գրացուցակները և ձեռագրացուցակները: Տպագիր գրականության իսկական իմաստով մատենագիտություն, որպիսին ստեղծվեց արևմտահայության մեջ, գլխավորապես Վենետիկում, արևելահայոց մեջ, ինչպես տեսանք, երևան չեկավ ողջ 19-րդ դարում և 20-րդի սկզբում: Այստեղ առավել արժեքավոր եղան գրքի ու մամուլի պատմությանը նվիրված աշխատությունները, հատկապես Լեոի և Գ. Լևոնյանի նշանավոր երկերը:

Բացի այդ, նախախորհրդային շրջանում հայկական գրեթե ողջ մատենագիտությունը կազմվում և հրապարակվում էր Հայաստանից դուրս, հայկական մշակութային կենտրոններում՝ մասնավորապես արևելահայոց մեջ՝ Թիֆլիսում, Բաքվում, Պետերբուրգում, Մոսկվայում: Մատերի վրա կարելի է

հաշվել մայր երկրում հրապարակված մատենագիտական ցանկերը։ Դրանք էջմիածնում տպագրված մի երկու ձեռագրացուցակներ են, «Արարատում» հրապարակված գրացուցակները և տեղի տպարանի հրատարակչական մի քանի ցուցակները, ապա նաև Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշվա գրադարանի ոչ մեծ գրացուցակները, տըպված Շուշիում և Գ. Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը» գիրքը, հրատարակված Ալեքսանդրապոլում (1895 թ.)։

Անցյալում արևելահայոց մեջ՝ թե՛ մայր երկրում, թե՛ նրանից դուրս կատարված մատենագիտական աշխատանքը ներկայացնելու համար հաճախ ստիպված ենք լինում հիշատակել նույնիսկ այնպիսի աննշան ցանկեր, որոնց նմանները այսօր ուշադրության առարկա լինել չէին կարող։

Խորհրդային ժամանակաշրջանի հայ մատենագիտությունը աչքի է ընկնում իր մի քանի տարբերիչ առանձնահատկություններով, որոնցից ամենակարևորներն են. ա) Մատենագիտական աշխատանքը դարձավ պետական գործ, հատուկ պետական-գիտական հիմնարկներ սկսեցին զբաղվել մատենագիտական աշխատությունների ստեղծմամբ ու հրապարակմամբ։ բ) Հայ մատենագիտության ուղղությամբ կատարվող աշխատանքը հիմնականում կենտրոնացավ մայր հայրենիքում։ գ) Մատենագիտությունը դարձավ մասնագիտություն. եթե անցյալում մատենագիտական աշխատանքով զբաղվում էին պատմաբաններ, գրականագետներ, գրողներ, թարգմանիչներ և այլ մասնագիտության տեր մարդիկ՝ իրենց հիմնական աշխատանքին զուգահեռ, ապա այժմ կա մատենագիտություն մասնագիտությունը, որ ձեռք է բերվում հատուկ կրթությամբ և գործնական աշխատանքով։ Մատենագիտական աշխատանքով սկսեցին զբաղվել հիմնականում մասնագետ մատենագետները։ դ) Հրատարակվեցին մի շարք մեծարժեք մատենագիտական աշխատություններ, որոնք ոչ իրենց որակով, ոչ քանակով համեմատվել անգամ չեն կարող նախախորհրդային Հայաստանում լույս տեսած մի քանի ցուցակների հետ։

Մատենագիտական աշխատանքը Հայաստանում նոր հիմքերով կազմակերպելու ուղղությամբ առաջին քայլերը կատարվեցին 1921—1922 թվականներին։ Մատենագիտության անհրաժեշտությունը հատկապես զգացվում էր գրահրատարակչական գործի և պարբերական մամուլի զարգացման հեռանկարի կապակցությամբ։

1920 թվականի հունիսի 30-ին Վ. Ի. Լենինի ստորագրությամբ հրապարակվեց ՌՍՖԽՀ ժողկոմխորհի հայտնի օրենքը «Մատենագիտության գործը ՌՍՖԽՀ-ում Լուսավորության ժողովրդական կոմիսարիատին հանձնելու մասին», որով պետությունը իր ձեռքն էր վերցնում մատենագիտության կազմակերպման գործը։

Լուսժողկոմատին էր հանձնարարվում ողջ Ռուսաստանյան ֆեդերացիայում հրատարակվող տպագիր արտադրանքի մատենագիտական գրանցումը և ցուցակների հրապարակումը։ Այնուհետև առաջ էր քաշվում մատենագիտական աշխատանքի ծավալման ծրագիրը. պետք է ստեղծվեին արձանագրական մատենագիտության կենտրոններ՝ գրապալատներ, մատենագիտական ինստիտուտներ և դասընթացներ, ինչպես նաև մատենագիտական հատուկ գրադարաններ։ Առաջ էր քաշվում երկրում եղած բոլոր մատենագիտական հիմնարկների և ընկերությունների աշխատանքի համաձայնեցման հարցը։ Մտցվում էին նոր հրատարակվող տպագիր երկերի ձրի պարտադիր օրինակներ, որոնք պետք է ստանային գրապալատները և խոշոր գրադարանները։ Սրանով ապահովվում էր արձանագրական և այլ կարգի մատենագիտական աշխատանք ծավալելու հիմքը։

Հետագայում, 1920 թվականի այս օրենքի հիման վրա Խորհրդային Միության հանրապետություններում կայացվեցին մատենագիտական գործի վերաբերյալ համապատասխան որոշումներ։

Հայաստանի ժողկոմխորհի 1922 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ ստեղծվեց ՀՍԽՀ պետական գրապալատը, որպես հայ ազգային մատենագիտության կենտրոն։ Գրապա-

լատի հիմնական խնդիրը պետք է լիներ գրանցել և հաշվառման ենթարկել Հայաստանում լույս տեսնող ողջ տպագիր արտադրանքը։

Նախքան այդ, Ժողկոմխորհի 1921 թվականի մայիսի 11-ի որոշմամբ սկսել էր գործել Հայաստանի պետական հանրային գրադարանը, որը հետագայում պետք է դառնար հայ ազգային մատենագիտության մյուս խոշոր կենտրոնը։

Կարևոր նշանակություն ուներ նաև 1921 թվականին, Ժողկոմխորհի որոշմամբ Հայաստանի պետական հրատարակչության (Հայպետհրատի) հիմնադրումը։ Հայպետհրատը Հայաստանում գրքի հրատարակչության գլխավոր կենտրոնը պիտի դառնար առաջիկա տարիներին։ Նրա հրատարակությունների քանակը արագորեն ավելանում էր։

1920 թվականին Հանրապետությունում արդեն լույս էր տեսնում 19 անուն պարբերական։ Հայաստանում հրատարակվող թերթերի ու ամսագրերի թիվը նույնպես տարեցտարի աճում էր։

Այդպիսով, 1920-ական թվականների սկզբին Հայաստանում արդեն զարգացման ուղին էր բռնել գրքի և մամուլի հրատարակման գործը, և հիմնադրվել էին հայ մատենագիտության ու գրքի պահպանման երկու կարևորագույն կենտրոնները։ Սակայն, եթե Հայպետհրատը, ինչպես և մյուս հրատարակչությունները իրենց գործունեությունը սկսեցին հիմնադրման տարուց ևեթ, ապա մատենագիտական աշխատանքը սկսվեց որոշ ուշացումով։ Գրապալատը իր առաջին «Տպագրության տարեգիրը» սկսեց կազմել 1925-ին, իսկ տպագիր քարտերը՝ 1930-ից սկսած։ Ալ. Մյասնիկյանի անվան Պետական հանրային գրադարանը մատենագիտական շատ թե քիչ լուրջ աշխատանք սկսեց կատարել 1929 թվականից՝ գիտական հիմքի վրա դնելով իր գրքային ունեցվածքի քարտային գրացուցակները (կատալոգները) և քայլեր անելով հյուղային քարտարաններ կազմելու ուղղությամբ։ Մատենագիտական գործերի հրատարակությունը գրադարանն սկսում է էլ ավելի ուշ՝ 1937-ին։

Այսպիսի հասարակական ուներ իր մի քանի պատճառները, որոնց մեջ երկրորդական չէր մատենագիտական լուրջ աշխատանքի փորձի և մասնագետների պակասը, եթե չասենք բացակայությունը այն տարիներին։

Սակայն անկախ գրապալատից և հանրային գրադարաններից, Հայաստանում որոշ մատենագիտական աշխատանք արդեն տարվում էր։

1920-ական թվականներին առաջին մատենագիտական ցանկերը, ինչպես և պետք էր սպասել, հրատարակչական գրացուցակներ էին, լույս ընծայված Հայպետհրատի կողմից։

1923-ին Լուսժողկոմատի Վաղարշապատի տպարանից լույս է տեսնում ՀՍԽՀ պետական հրատարակչության անդրանիկ «Գրացուցակը», որ ընդգրկում էր 1922-ից մինչև 1923-ի մայիսը լույս ընծայված գրքերի անունները։ Այնուհետև, Պետհրատի գրացուցակները լույս են տեսնում ամեն տարի, իսկ հետագայում տարին մի քանի անգամ։

«Խորհրդային Հայաստան» և «Մանկավարժ» լրագրերի խմբագրություններն 1920-ական թվականներին հրատարակել են գրքեր և գրքույկներ։ Փոքրիկ պրակներով Երևանում լույս էին տեսնում այդ հրատարակությունների գրացուցակները՝ «Կատալոգ» վերնագրով. վերջին № 3 «Կատալոգը» հրատարակվել է 1929-ին։

Նույն թվականներին հայերեն գրքեր էին հրատարակվում Մոսկվայում՝ ԽՍՀՄ ժողովուրդների կենտրոնական հրատարակչության կողմից։ Ահա այս հիմնարկը ևս լույս է ընծայում (Մոսկվայում) իր հրատարակած գրքերի գրացուցակները։ Մեզ հայտնի է այդպիսի երկու գրացուցակ, մեկը տպագրված 1926-ին, մյուսը՝ 1928-ին։

Այդ տարիներին լույս են տեսնում նաև մի քանի այլ մատենագիտական ցանկեր, որոնցից կարելի է հիշատակել Հայկական ռազմական խմբագրական-հրատարակչական կոլեգիայի տպագրած փոքրիկ գրացուցակը (1926 թ.), ինչպես նաև մի քանի ներգրքային ցանկեր, օրինակ Ա. Մուշեղյանի «Անտառի օրը» գրքի վերջում «Գիտական գրականություն»

ցուցակը, Մ. Գրեմյացկու ռուսերենից թարգմանված «Նախամարդու տեխնիկան» գրքի (1928 թ.) վերջում «Յուցակ հանրագիտական կարևոր գրականության» ցանկը, Մ. Դուրգարյանի «Ինչպիսի գիրք է պետք նախադպրոցականին» (1929 թ.) և նույն հեղինակի «Նախադպրոցական արշավի տեղեկատու» գրքույկներում զետեղված մատենագիտական ցուցակները, մի ոչ մեծ ցուցակ Հաջիկի «Պիոներական շարժական խաղեր» գրքում (1929 թ.) և այլն։ Ի դեպ, ասենք, որ այս վերջին ցանկերը, թեև արժեքով համեստ էին, բայց մանկական գրականության մատենագիտության երախայրիքներն էին Խորհրդային Հայաստանում։

Բացի այս, հանրապետության մեջ հրատարակվող հանդեսներում ու լրագրերում պարբերաբար տրվում էին տեղեկություններ նոր լույս տեսնող գրքերի մասին։ Պետք է ասել, որ պարբերականներում տպագրվող ոչ մեծ գրացուցակները, ինչպես և նոր հրատարակություններին նվիրված գրախոսությունները 1920-ական թվականների երկրորդ կեսից բավական կանոնավոր, երբեմն ուղղակի օրինակելի բնույթ էին կրում։

Այսօր թերթելով այն տարիների հանդեսները՝ «Նորք», «Նոր ուղի», «Գրական դիրքերում», «Գյուղատնտեսական կյանք», «Երիտասարդ բոլշևիկ» և այլն, գտնում ենք նոր լույս ընծայված գրքերի բազմապիսի մատենագիտական արձանագրություններ, այդ թվում գրախոսականներ և գրացուցակներ։ Առավել ծավալուն և արժեքավոր մատենագիտական ցուցակներից կարելի է հիշատակել «Գրական դիրքերում» հանդեսի 1930 թվականի 11—12 միացյալ համարում տպագրված «Տասնամյակի ընթացքում լույս տեսած գեղարվեստական գրականությունը» մատենագիտությունը, որն այսօր էլ անփոխարինելի աղբյուր է, մանավանդ մինչև 1925 թվականը, այսինքն՝ մինչև գրապալատի արձանագրական աշխատանքի սկիզբը լույս ընծայված գրքերի մասին տեղեկանքներ ստանալու համար։

Սակայն, ինչ խոսք, թվարկված մատենագիտական բոլոր

այս փոքր հրատարակությունները լուրջ կարևորություն չունեին, մատենագիտական բավական համեստ աշխատանքի արդյունք էին։ Հայաստանում 20-ական թվականներին սկիզբ առած մատենագիտական աշխատանքի ամենակարևոր նվաճումը գրապալատի առաջին մատենագիտական պարբերականի՝ «Տպագրության տարեգրի» լույս ընծայումն էր։

1925-ից մինչև 1928 թվականը այդ պարբերականը տարեկան տպագրվում էր մեկ, իսկ 1929 թվականից սկսած տարեկան չորս անգամ։

Մատենագիտական աշխատանքը Հայաստանում սկսում է ավելի ու ավելի լուրջ քայլեր անել 30-ական թվականներին։ Եթե 1920-ական թվականները ոչ մեծ փորձերի և նախապատրաստման ժամանակաշրջան էին, ապա 1930-ական թվականները բավական արդյունավետ եղան, ասպարեզ բերեցին հայ խորհրդային մատենագիտության առաջին լուրջ աշխատությունները։

Գրապալատի մատենագիտական պարբերականների հրատարակությունը 30-ական թվականներին շարունակվում էր և բարելավվում մատենագիտական նկարագրությունների և նյութերի խմբավորման տեսակետից, մեծանում էր նրանց ծավալը՝ հրատարակվող գրքերի քանակն ավելանալու կապակցությամբ։

Գրացուցակային բնույթի հրատարակությունները երևանում նույնպես շարունակվում էին և աճում։ Պետհրատի հրատարակությունների գրացուցակները լույս էին տեսնում կանոնավոր, թեև տարբեր անուններով (գրացուցակ, ցուցակ, բյուլետեն)։ 1936 թվականից սկսեցին տպագրվել նաև Պետհրատի թեմատիկ պլանները, որոնք արդեն ոչ թե հրատարակված, այլև հրատարակվելիք գրքերի ցուցակներ էին։

Գրացուցակներից կարելի է հիշատակել նաև մի քանի ուրիշները, ինչպես՝ Կուսհրատի գրացուցակները, «Սոյուզպեչատի» Հայաստանի բաժանմունքի տպագրած «ՀՍԽՀ պարբերական մամուլի կատալոգը» (1934), ինչպես նաև «Մելքոնյան ֆոնդի հրատարակությունները» ցանկը, որ տպագրվեց

մի քանի գրքերի մեջ, այդ թվում (երևի ամենից լրիվը) Հ. Մանանդյանի «Էրոտոսթենեսի ստադիոնը և պարսից ասպարեզը» գրքում (1934 թ.)։ Այս գրացուցակն այսօր մեզ ներկայացնում է Մելքոնյան ֆոնդի հրատարակությամբ լույս ընծայված հայագիտական մեծարժեք աշխատությունների հիմնական մասը՝ հիշեցնելով ժամանակին այդ ֆոնդի կատարած կարևոր դերը։

***

30-ական թվականներին Հայաստանում կատարված մատենագիտական աշխատանքի մեջ ամենից ավելի աչքի է ընկնում Գարեգին Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը» մատենագիտությունը, որ լույս տեսավ 1934-ին և որի մասին արժե հատուկ խոսել։

Գ. Լևոնյանը նոր չէ, որ մուտք էր գործել հայ մատենագիտության բնագավառը. նախքան իր այս աշխատության հրապարակումը նա միշտ հետաքրքրվել է ու լրջորեն զբաղվել հայ գրքի ու մամուլի պատմության հարցերով։

Գարեգին Լևոնյանը ծնվել է 1872 թվականին Գյումրի (Ալեքսանդրապոլ) քաղաքում հայ մեծ գուսան Ջիվանու ընտանիքում (Ջիվանու որդին էր)։ Սկզբնական կրթությունը ստացել է տեղի վիճակային դպրոցում։ Ապա 1897 թվականից սովորել է Պետերբուրգի արվեստների ակադեմիայում և ավարտել այն 1902 թվականին։ 1902-ից մինչև 1907 թվականը դասավանդել է Գևորգյան ճեմարանում։

Աշխատել է հայ գուսանական (աշուղական) արվեստի հարցերի լուսաբանման վրա, գրել է այդ բնագավառին վերաբերող մի շարք աշխատություններ, կազմել բնագրեր։ Միաժամանակ զբաղվել է արվեստի տեսության, հայ արվեստի պատմության, ինչպես նաև հայ գրքի, տպագրության և պարբերական մամուլի պատմության հարցերով։

Գ. Լևոնյանը երկար ժամանակ խմբագրել է «Գեղարվեստ» հանդեսը։

Երևանի համալսարանում և մանկավարժական ինստիտուտում դասավանդել է արվեստի պատմություն։ Մահացել է 1947-ին։

Լևոնյանի մատենագիտական բնույթի առաջին լուրջ աշխատությունը հայոց պարբերական մամուլի 100-ամյակի (1894 թ.) առթիվ Ալեքսանդրապոլում 1895-ին հրատարակված «Հայոց պարբերական մամուլը» գիրքն էր, ինչպես նաև Թիֆլիսի «Լույս» ամսագրում 1909 թվականին տպված «Լիակատար ցանկ հայ լրագրության»-ը և «Братская помощь» ժողովածուի մեջ (Մոսկվա, 1898) զետեղված «Армянская периодическая печать» հոդվածը, որոնց մասին արդեն խոսք եղել է։

Ինչպես իր տեղում նշվել է, 19-րդ դարի վերջում և 20-րդ-ի սկզբում հայ բանասիրությունը սկսում է աշխույժ հետաքրքրություն ցուցաբերել հայ պարբերական մամուլի անցած ուղու նկատմամբ։ Ասպարեզ են բերվում հայ մամուլի, նրա առանձին հատվածների պատմական ակնարկը տվող մի շարք աշխատություններ։ Գ. Լևոնյանի աշխատությունը դրանցից մեկն էր, որ ըստ էության, հայ մամուլի պատմություն էր, բայց և բավական մոտ մատենագիտական ցանկի բնույթին։ Մոտավորապես այդպիսին էին նաև Գ. Գալեմքյարյանի «Պատմություն հայ լրագրության ի սկզբանե, մինչև մեր ժամանակները» (1893) և Ն. Հարոյի ավելի վաղ հրատարակած (1878 թ.) «Հայոց մամուլը Ռուսաստանում և Կովկասի մեջ» աշխատությունները։

Գ. Լևոնյանի 1934-ի նոր մատենագիտության հրատարակմանը նախորդեցին նաև Մ. Պոտուրյանի[1], Ռ. Քոսյանի[2]

---

1 Մ. Պոտուրյան Հայ մամուլը տասնհինգ տարուն մեջ։ 1894—1909, Վենետիկ, 1909, 303 էջ (նաև «Բազմավեպ»-ի 1909 թ. համարներում)։

2 Ռ. Քոսյան Լիակատար ցուցակ հայերեն լրագիրներու, որոնք կգտնվին Մխիթարյան մատենադարանին մեջ ի Վիեննա։ 1794—1921, Վիեննա, 1924, 79 էջ (նաև «Հանդես ամսօրյա»-ի 1922—1924 թթ. համարներում)։



ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ

(Ռ. Կարապետյանի) աշխատությունները, նվիրված հայ մամուլի մատենագիտությանը։

Ավելի ուշ արտասահմանում տպագրվեցին Վ. Ջարդարյանի մի շարք աշխատությունները, նվիրված հայ պարբերա-

կան մամուլի առանձին հատվածներին։ Դրանք մասն էին կազմում հեղինակի կողմից Կահիրեում շարունակաբար հրատարակվող «Հիշատակարանի» նյութերի[1]։

Խորհրդային ժամանակաշրջանում դեռևս 20-ական թվականներից հետաքրքրություն է սկսվել անցյալի հայ պարբերական մամուլի նկատմամբ։ Այդ հարցին նվիրված մի շարք հետաքրքրական հոդվածներ լույս տեսան այն տարիներին։ Կարելի է հիշել, օրինակ, Ռ. Ավդալբեգյանի հոդվածը «Ազդարար»-ի մասին («Հայ անդրանիկ պարբերականն ու նրա խմբագիրը»), տպագրված 1924 թվականին[2], Ա. Երշնկյանի «Մեր մամուլի պատմությունից» հոդվածը (նվիրված էր «Կայծ», «Պայքար», «Կոմունիստ» բոլշևիկյան թերթերին)[3] և այլն։ Խորհրդային հայ մամուլի պատմությանն էին նվիրված Կ. Համբեկյանի[4], Ե. Զուբարի[5] և այլոց մի շարք հոդվածները։

Ինչպես նախքան Լևոնյանի նոր աշխատության հանդես գալը արդեն զգալի աշխատանք էր կատարված հայ պարբերական մամուլի ուսումնասիրման և ցուցակագրման գործում, սակայն մի ընդհանուր մատենագիտական ցանկի պահանջը մնծ էր, այնպիսի մի ցանկի, որի երևան գալը նախապատրաստվել էր նախորդ երեք-չորս տասնամյակներին թափված ջանքերով։

1930 թվականի հուլիսին Հայաստանի պետական գրապա-

---

1 Վ. Զարդարյան Եվրոպա հրատարակված լրագիրներուն ցուցակը։ 1855—1905։— «Հիշատակարան», մատենաշար թիվ 14—13, Հա. Բ, 1933, էջ 2—3։ Կովկասահայ թերթերի մի ցուցակ զետեղված է «Հիշատակարանի» 1933 թ. Ա հատորում (մատենաշար թիվ 2), նաև Թրեանայ լրագրություն։ 1832—1932։— «Հիշատակարան», 1932, մատենաշար թիվ 4 և այլն։

2 «Վերնէր», 1924, № 2—3, էջ 135—140։

3 «Կոմունիստ», 1927, № 4—5, էջ 39—46։

4 «Կոմունիստ», 1925, № 2, էջ 125—133 և «Խորհրդային Հայաստան», 1925, 31 մայիսի։

5 «Заря Востока», 1923, № 100, «Խորհրդային Հայաստան», 1923, № 93։

Ա 4983

ՀԱՅԿ ԱՍՏ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

լատը Գարեգին Լևոնյանին առաջարկում է կազմել հայ պարբերական մամուլի մի լիակատար ցուցակ, սկզբից մինչև 30-ական թվականները: Մատենագիտության մեջ պետք է նշվեին յուրաքանչյուր պարբերականի հրատարակության վայրը, սկիզբն ու ավարտը, խմբագիր-հրատարակիչների անունները և տպարանները:

Գրապալատի և նրա գերագույն լուսժողկոմատի կողմից հանձնակի ընտրությունը ճիշտ էր կատարվել. այդ ժամանակ Հայաստանում միակ մարդը Գ. Լևոնյանն էր, որ կարող էր գլուխ բերել առաջադրված վերին աստիճանի ծանր ու պատասխանատու աշխատանքը: Եվ այդ ոչ միայն այն պատճառով, որ Լևոնյանը անցյալում տասնյակ տարիներ զբաղվել է հայ մամուլի պատմությամբ ու մատենագիտությամբ, այլև այն, որ նրա անձնական գրադարանում էր այդ ժամանակ գտնվում հայ պարբերականների Հայաստանում եղած ամենամեծ հավաքածուն՝ 850 անուն[1]:

Հանձն առնելով դժվարին գործը՝ Լևոնյանը երեք տարի լարված աշխատում է, և հայ պարբերական մամուլի հարյուրքառասնամյակին՝ 1934 թվականին նրա աշխատությունը լույս է ընծայվում ՀՍԽՀ Լուսժողկոմատի կողմից, Մելքոնյան ֆոնդի դրամական միջոցներով:

Լևոնյանն իր մատենագիտությունը կազմելիս օգտագործել է ինչպես իր հավաքածուի մեջ եղած, այնպես էլ Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանում, էջմիածնի մատենադարանում և իրեն մատչելի այլ գրապահոցներում պահվող հայ պարբերական մամուլը:

Աշխատության առաջաբանից իմանում ենք, որ Լևոնյանի տրամադրության տակ եղել են 1179 անուն հայերեն պարբերականներ, հետո դրանց վրա ավելացել են մի քանիսը ևս: Լևոնյանի ձեռքի տակ եղած և տեսնելով նկարագրված (de visu) այդ պարբերականների մասին մատենագիտության մեջ

---

1 Ուշագրավ է նշել, որ այն ժամանակ Հանրային գրադարանն ուներ ընդամենը 229, իսկ Մատենադարանը՝ 54 անուն հայերեն պարբերականներ:

տրված տեղեկությունները, անշուշտ, ամենաարժեքավորն են։

Սակայն Լևոնյանի ցուցակում նկարագրված վերջին պարբերականի համարը 1586 է։ Բանն այն է, որ մոտ 400 պարբերական աշխատության մեջ նկարագրված են առանց ձեռքի տակ ունենալու, առանց տեսնելու։ Այդ նկարագրությունների համար օգտագործված են արդեն եղած մատենագիտական աղբյուրները (Գ. Գալեմքյարյանի, Մ. Պոտուրյանի, Ռ. Քոսյանի և այլոց աշխատությունները, տարբեր գրացուցակներ և այլն)։

Առանց տպագիր երկը տեսնելու որևէ գրավոր աղբյուրից կատարված նկարագրությունների նկատմամբ եղած սովորական անվստահությունը մեծ մասամբ ավելորդ է դառնում Լևոնյանի նույն կարգի նկարագրություններին ծանոթանալիս։ Մատենագետը մեծ զգուշությամբ է մոտեցել իր աղբյուրներին, տարբեր ձևերով ստուգել է նրանցում եղած տեղեկությունները, մի շարք կարևոր ճշտումներ կատարել, նույնիսկ խիստ քննադատել Ռ. Քոսյանին (Կարապետյանին), որը իր ձեռքի տակ եղած պարբերականների հարուստ հավաքածուն (Վիեննայի Մխիթարյան մատենադարանի) հարկ եղածին չափ կանոնավոր չի ցուցակագրել։

Լևոնյանը իր մատենագիտության համար նյութերն ընտրելիս որոշակի սկզբունք է ունեցել։ Նա «Պարբերական մամուլ» հասկացողությունը չի տարածել մի շարք հրատարակությունների վրա, որոնք այլոց կողմից ժամանակին դիտվել են իբրև պարբերականներ։ Ինչպես ինքը՝ հեղինակն է ասում, երբեմն պարբերական են դիտվել «ամեն տեսակի միաեռուն հրատարակություններ՝ համարներով կամ պրակներով հրատարակված» կամ երգարաններ, ինչպես և մատենաշարով հրատարակված հանրամատչելի գրքույկներ և այլն։ Այս ամենը Լևոնյանը դուրս է թողել իր մատենագիտությունից։ Այդտեղ չեն մտել նաև միօրյա, պարբերաբար չհրատարակվող և համար չունեցող թերթերը, պատի թերթերը, ձեռագիր և խմորատիպ թերթերն ու հանդեսները (վիմագիր և տպակե-

տիպ մի շարք արժեքավոր պարբերականներ նկարագրված են) և այլ նյութեր։

Պետք է ասել, որ սա հայ մատենագիտության մեջ առաջին քննական վերաբերմունքն էր «պարբերական» ըմբռնման նկատմամբ, որի շնորհիվ բավականին ճշտվեց, թե ինչը պետք է դիտվի պարբերական, ինչը՝ ոչ։ Անշուշտ, ամեն թերթ և ամեն հանդես պարբերական չեն, ինչպես և շարունակվող ամեն հրատարակություն (բազմահատոր, մատենաշար) դեռևս պարբերական չէ։ Իհարկե, այս տարբերակման գործում Լևոնյանն ունի նաև վրիպումներ, սակայն հիմնական մոտեցումը ճիշտ է եղել։ Ափսոս միայն, որ նա իր առաջաբանում իրենից առաջ պարբերական դիտված ոչ պարբերականները թվարկելուց հետո, որոշակիորեն չի ասում, թե ինչը, այնուամենայնիվ, ինչ է հասկանում պարբերական մամուլ ասելով։

Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը»[1] աշխատությունը բաղկացած է մի քանի մասից։ Այն սկսվում է Առաջաբանով, ուր խոսվում է մատենագիտությունը կազմելու հանգամանքների մասին։ Սրան հաջորդում է Ներածությունը, որը անցյալի (մինչև Հոմտեմբերյան հեղափոխությունը) հայ պարբերական մամուլի համառոտ տեսությունն է։ Այնուհետև գալիս է աշխատության հիմնական մասը՝ հայ պարբերական մամուլի ժամանակագրական մատենագիտությունը, որը հեղինակը կոչում է «Մայր ցուցակ»։ Աշխատությունն ունի նաև վեց օժանդակ ցանկեր, դրանք են՝ հայատառ թուրքերեն պարբերականների ցուցակ, հայ պարբերական մամուլի քանակական ցուցանիշների տախտակ (թե որ թվին քանի անուն հայ պարբերական է լույս տեսել) և վերջում՝ ծանոթագրություններ, ուղղումներ, լրացումներ։ Այս

---

1 Գ. Լևոնյան «Հայոց պարբերական մամուլը»։ Լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794—1934)։ Առաջաբանով, ներածությամբ, ծանոթագրություններով և աղյուսակներով կազմեց Գարեգին Լևոնյան։ Եր., Հրատ. Մկրտչյան ֆոնդի, 1934, 228 էջ (ՀՍԽՀ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատ)։

ՀՍԽՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ՀԱՅՈՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

ԼԻԱԿԱՏԱՐ ՑՈՒՑԱԿ
ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ
ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ
(1794—1934)

Առաջաբանով, Ներածությամբ, Ծանոթություններով
և Ցուցակներով

Կազմեց ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՖՈՆԴԻ

ԵՐԵՎԱՆ 1934

Գ. Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը»
մատենագիտության տիտղոսաթերթը

վերջիններիը այն բացերի լրացումներն են, այն սխալների ուղղումը, որոնք հեղինակը նկատել է մատենագիտությունը տպագրելու ընթացքում։

Նշենք նաև, որ մատենագիտական-վիճակագրական բնույթի որոշ աշխատանքներ հայ պարբերական մամուլի վերաբերյալ հեղինակը տվել է նաև առաջաբանի մեջ։ Դրանցից է, օրինակ, պարբերականների կյանքի տևողությանը (քի որ պարբերականը որքան է շարունակվել) նվիրված աղյուսակը, որը կարևոր տեղեկություններ է տալիս անցյալի հայ պարբերականների ունեցած տպաքանակի և նրանց տարածման մասին։

Մայր ցուցակը կազմված է հետևյալ սկզբունքով։ Համապատասխան տարեթվի տակ այբբենական կարգով տրվում են տվյալ տարեթվին հիմնադրված պարբերականների (կամ պարբերականի) նկարագրությունները։ Այդ նկարագրություններից յուրաքանչյուրը սկսվում է լրագրի կամ հանդեսի անունով, որի տակ նշվում է հրատարակության վայրը, ապա, քե որ թվից որն է լույս տեսել, պարբերականությունը (օրաթերթ, ամսագիր, շաբաթաթերթ և այլն), ինչպես նաև պարբերականի բնույթը (բանասիրական, քաղաքական, երգիծական և այլն) և քաղաքական ուղղությունը։

Այնուհետև, տեղեկություններ են տրվում հրատարակչի, խմբագրի և տպարանի մասին, շատ դեպքերում տրվում է պարբերականի չափը, դիրքը, երբեմն՝ էջերի քանակը, ինչպես նաև՝ ծանոթագրություններ անվան և ուղղության փոփոխման մասին և այլն։

Մի շարք պարբերականների անունը տրված է ճակատի նմանահանության ձևով, այսինքն՝ պարբերականի իրական ձևավորման պատկերով, իսկ մի քանի հանդեսների ողջ անվանաթերթը կամ առաջին էջն է բերված։ Սրա շնորհիվ մատենագիտությունից օգտվողը անմիջապես պատկերացում է կազմում անցյալի մի շարք թերթերի ու պարբերականների տեսքի, ձևավորման, ուսուի և ինչ-որ չափով՝ ժամանակի մասին։

Մյուս ցանկերը, որ մենք անվանեցինք օժանդակ, իրա-

կանում սովորական իմաստով օժանդակ չեն։ Դրանցից առաջինը՝ տեղեկանքներ է տալիս այն մասին, թե սկսած 1794-ից ո՛ր թվականին քանի անուն հայերեն պարբերական է հրատարակվել (և ո՛ր թվականներին բոլորովին չեն եղել այդպիսիները)։ Մյուս ցանկը, որ կոչվում է «Հայոց պարբերական մամուլը ըստ հրատարակության վայրերի», դարձյալ ժամանակագրական կառուցվածք ունի, այսինքն՝ սկզբում տրված են այն երկրների անունները, ուր ավելի վաղ են հրատարակվել հայ պարբերականներ, ապա ասոիճանաբար ավելի ուշ շրջանում ունեցողներինը։ Տվյալ երկրի անվան տակ քաղաքները տրված են դարձյալ ժամանակագրական սկզբունքով, այսինքն՝ ավելի վաղ շրջանի հայ պարբերական ունեցած քաղաքները նախորդում են ավելի ուշ ունեցածներին։ Միևնույն քաղաքի մեջ տպված հայ պարբերականները դարձյալ դասավորված են ժամանակագրական կարգով, այսպես՝

Ի Տ Ա Լ Ի Ա.

Վենետիկ

Տարեգրութիւն 1799

Եղանակ բիւզանդեան 1803

Յիշատակարան 1807 և այլն։

Հաջորդ ցանկը, որ աղյուսակի ձև ունի, տեղեկություններ է տալիս այն մասին, թե ինչ բնույթների են եղել հայ պարբերականները, այսինքն, թե ինչպիսի բնագավառների են վերաբերել (գեղարվեստական, բանասիրական, քաղաքական, գյուղատնտեսական, տնտեսագիտական և այլն) և որ բնագավառի պարբերականներից որ երկրում քանի անուն է հրատարակվել։

Ապա գալիս է խմբագիրների և հրատարակիչների այբբենական ցանկը։ Այստեղ յուրաքանչյուր անվան դիմաց տրված է մայր ցուցակի այն համարը, որի տակ գտնվում է տվյալ պարբերականի լրիվ նկարագրությունը։ Մի շարք անունների դիմաց կան ոչ թե մեկ, այլ երկու և ավելի համարներ, որ նշան է, թե տվյալ խմբագիրը կամ հրատարակիչը այդքան պարբերական է հրատարակել։

Հայ պարբերականներ տպագրող տպարանները հատուկ ցանկում ներկայացված են համապատասխան քաղաքների անունների տակ։ Քաղաքների հերթականությունը որոշված է ըստ նշանակության, այսինքն՝ ըստ տպարանների քանակի. սկզբում այն քաղաքներն են, ուր ավելի շատ են եղել պարբերական տպագրող տպարանները՝ Կ. Պոլիս, Թիֆլիս, Երևան, Փարիզ և այլն։

Ցանկերի մեջ շատ կարևոր է «Հայոց պարբերական մամուլը այբբենական կարգով» տեղեկատուն։ Այստեղ թերթերի ու հանդեսների անունների այբբենական կարգով դասավորված յուրաքանչյուր անվան դիմաց տրված է հրատարակման վայրը, հիմնադրման թվականը և մայր ցուցակում նրա նկարագրության հերթական համարը։

Այս տեղեկատուն ամենից ավելի օգտագործվողն է, քանի որ այս կամ այն պարբերականի մասին տեղեկություններ ստանալու համար ընթերցողը նախ դիմում է այբբենական ցանկին։ Հասկանալի է, որ որևէ պարբերականի մասին ամենից հեշտ հիշվող նվազագույն տեղեկությունը նրա անունն է, իսկ հիմնադրման տարեթիվը, խմբագրի կամ հրատարակչի ազգանունը, տպարանը և այլն ավելի քիչ հիշվող են, դրանք մեծ մասամբ հենց այն տեղեկություններն են, որ մատենադիտությունը պիտի տա ընթերցողին։ Ուստի հասկանալի է, որ Լևոնյանի (ինչպես և այլ) մատենագիտությունից օգտվողը սովորաբար նախ դիմում է պարբերականների այբբենական ցանկին և ոչ թե ժամանակագրականին կամ խմբագիրների և հրատարակիչների ցանկերին։ Այբբենական ցանկում անհրաժեշտ պարբերականի անունը գտնելուց հետո՝ ընթերցողը նշված համարի օգնությամբ ժամանակագրական մայր ցուցակում գտնում է պարբերականի լրիվ նկարագրությունը և քաղում անհրաժեշտ տեղեկանքներ։ Սա Լևոնյանի ցանկից օգտվելու սովորական, ամենից ավելի շատ դիտվող եղանակն է։ Մյուս օժանդակ ցանկերը, անշուշտ, նույնպես օգտագործվում են, միայն ոչ այբբենականի չափ հաճախակի։

Պետք է ասել, որ այսօր հայ պարբերական մամուլի վե-

բաբերյալ տեղեկանքներ ստանալու համար ոչ մի մատենադիտական ցանկ այնքան չի օգտագործվում և այնքան վստահելի չէ, որքան Լևոնյանի այս աշխատությունը։ Իրավացիորեն Գ. Լևոնյանի մատենագիտությունը ընդունված է համարել առաջին գիտական մատենագիտական գործը, հրատարակված Խորհրդային Հայաստանի մեջ։

Լևոնյանի այս աշխատությունը միանգամից բարձր մակարդակի հասցրեց Խորհրդային Հայաստանում նոր զարգանալ սկսող մատենագիտական աշխատանքը։ Դա, հիրավի, մի սքանչելի մատենագիտական հուշարձան է, համառ և տքնաջան աշխատանքի արդյունքը։ Այն Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտությունից» հետո հայ տպագիր արտադրանքին նվիրված հաջորդ մեծարժեք մատենագիտությունը եղավ հայ մշակույթի պատմության մեջ։

Հասկանալի է, որ թերություններ, այն էլ բավականին լուրջ, չէին կարող տեղ չգտնել այսպիսի մի դժվարին, աշխատատար և անասելիորեն լարված ուշադրություն պահանջող գործի մեջ։

Ինքը՝ Գ. Լևոնյանը իր առաջաբանի վերջում գրում է, որ աշխատությունը պակասներ ու սխալներ պիտի ունենա, և խնդրում է օգտվողներից դիտողություններ անել հաջորդ հրատարակությունն ավելի կատարյալ դարձնելու համար։

Երկու խոսքով տեսնենք, թե ինչ կարգի թերություններ են տեղ գտել այս մատենագիտության մեջ։ Իբրև ամենալուրջ թերություն ժամանակին նշվեց (Ն. Ակինյանի, Ն. Գաասպյանի և այլոց կողմից) բավական թվով հայ պարբերականների բացակայությունը աշխատության մեջ։

Ինչպես ասվեց, մի շարք թերիներ հրատարակման ընթացքում նկատել է և ուղղումներ տվել աշխատության վերջում ինքը՝ հեղինակը։ Թեև սա մատենագիտական աշխատանքի բնագավառում քիչ հանդիպող և շատ դրական երևույթ է, բայց ներկա դեպքում չնչին չափով է լրացրել մատենագիտության մեջ եղած ամենակարևոր թերությունը՝ բացթողումները։ Պետք է ասել, որ այդ բացթողումների հիմնական մասը

հեղինակից անկախ պատճառներով է տեղ գտել աշխատության մեջ (ձեռքի տակ չեն եղել բազմաթիվ պարբերականներ), թեև, հասկանալի է, որ այս պատճառաբանությունը չի ծածկում բացերի փաստը։

Արգեն ասվեց, որ մատենագիտության մեջ ներկայացված է 1586 անուն հայ պարբերական, մինչդեռ պետք է ենթադրել, որ դրանց քանակը նույնիսկ մինչև 1934 թվականը մոտ է եղել երկուս ու կես հազարի [1]։ Այսինքն՝ Լևոնյանի մատենագիտությունից դուրս են մնացել բավական շատ պարբերականներ, որոնց թիվը գուցե և շատ հեռու չէ 1000-ից։

Ուշագրավ է, որ հայոց պարբերական մամուլի քարտարան կազմելու գործով զբաղված երկու մասնագետներ մի քանի տարի առաջ համեմատելով Գ. Լևոնյանի մատենագիտությունը Երևանի առավել խոշոր գրապահոցներում եղած պարբերականների հետ՝ նկատել էին, որ «... Գ. Լևոնյանի կազմած և 1934 թվականին հրատարակված «Հայոց պարբերական մամուլը» գրքից դուրս են մնացել ավելի քան 150 անուն պարբերականներ, որոնք նրա ուսումնասիրած ժամանակաշրջանում գոյություն են ունեցել, բայց գրանք կամ նրա ձեռքը չեն անցել, կամ նրանց գոյության մասին տեղեկու-

---

[1] Հայ պարբերականների, ինչպես և հայ տպագիր գրքերի անունների շատ քիչ ճիշտ քանակը հայտնի չէ. նրն հայերեն տպագիր գրքերի համար կարելի է նշել 70—75 հազար (անուն) մոտավոր թիվը, ապա պարբերականների վերաբերյալ կարծիքների լուրջ տարբերություններ կան։ 1938-ին Մ. Պոտուրյանը հայերեն պարբերականների քանակը համարում էր 2600 (տե՛ս նրա «Հայ հանրագիտակը», էջ 4), Ա. Կարինյանը 1956-ին՝ 4000 (տե՛ս նրա «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության», հ. 1, էջ 8), Հ. Պետրոսյանը 1957-ին՝ 2000 (տե՛ս նրա «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիան», հ. 2, էջ IX), Ն. Գասապյանը 1961-ին՝ 3000 (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 3—4, էջ 318)։ Հասկանալի է, որ ժամանակագրական կարգով թվարկված այս կարծիքների տարբերության խնդրում 23 տարվա ժամանակամիջոցում (1938—1961) հայ պարբերականների ավելացումը փոքր դեր է խաղացել (մանավանդ, որ երբեմն ավելի մեծ թիվ նշող կարծիքը նախորդել է ավելի փոքր թիվ նշողին)։ Տարբերությունների պատճառն ամենից առաջ ճիշտ հաշվառման բացակայությունն է և նրա դժվարությունը (նրն չասենք անհնարինությունը)։

թյուններ չի ունեցել»[1]: Բերվում են մատենագիտությունից դուրս մնացած մի քանի հատկանշական օրինակներ, ինչպես՝ «Ամսօրյա տեղեկատու», Կ. Պոլիս, 1909—1914, «Ատենագրություն ազգային ժողովի», Կ. Պոլիս, 1908—1911, «Բյուլետեն արտասահմանյան հայ սպիտակ մամուլի», Երևան, 1930, № 1—6, «Դրոշակ», Թիֆլիս, 1882—1884 և այլն:

Եթե միայն Երևանի խոշոր գրապահոցներում Լևոնյանի ցուցակից դուրս մնացած ավելի քան 150 անուն պարբերականներ են հայտնաբերվել, ապա դրանց քանակը որքան կավելանա, եթե մանրամասն ստուգվեն աշխարհի բոլոր մասերում եղած մեծ ու փոքր, պետական ու մասնավոր հավաքածուները: Պետք է նկատի ունենալ նաև այն, որ մի շարք հայ պարբերականներից տարբեր պատճառներով ոչ մի համար չի պահպանվել:

Ն. Գասապյանը 1961 թվականին՝ Հ. Պետրոսյանի «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա» աշխատությանը նվիրած իր ծավալուն գրախոսության մեջ[2] բերում է Պետրոսյանի մատենագիտությունից դուրս մնացած պարբերականների մի մեծ ցուցակ: Այդ պարբերականների մեջ այնպիսիք, որ հիմնադրվել են մինչև 1930—1934 թվականները, մեծ մասամբ դուրս են մնացել նաև Գ. Լևոնյանի մատենագիտությունից, քանի որ Հ. Պետրոսյանը, ինչպես ստորև ցույց կտրվի, իբրև իր մատենագիտության հիմք գրեթե նույնությամբ ընդունել է Գ. Լևոնյանի աշխատությունը: Օրինակ, Գասապյանի այդ ցանկում բերված պարբերականներից Լևոնյանի մատենագիտության մեջ տեղ չեն գտել «Ազգասերը» (Զմյուռնիա, 1830—1842), «Ազատության տարեցույցը» (Կ. Պոլիս, 1918), «Դիցավան» (Բուխարեստ, 1924), «Երևան» (Փարիզ, 1926—1929) և շատ ուրիշներ:

---

1 Մկրտչյան և Փ. Դաստումյան լրացվում է հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիան:— «Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1962, № 5, էջ 38:

2 «Պատմա-բանասիրական» հանդես, 1961, № 34, էջ 319—329:

Ահա հայոց պարբերականների ոչ լրիվ ընդգրկումն է Գ. Լևոնյանի հոյակապ աշխատության հիմնական թերությունը։

Այնուհետև, աշխատության մեջ տեղ են գտել տարբեր կարգի սխալներ. ճիշտ չեն նշված մի շարք պարբերականների հիմնադրման կամ փակման թվականները, որոշ դեպքերում սխալ է բնութագրված պարբերականի ուղղությունը, կան հեղինակային և տպագրական վրիպակներ և այլն։ Օրինակ, Խ. Բարսեղյանը նշում է, որ որոշ պարբերականներ Գ. Լևոնյանը սխալմամբ է համարել բոլշևիկյան[1], ինչպես՝ «Սոցիալ դեմոկրատ» (Թիֆլիս, 1905) և «Հոսանք» (Թիֆլիս, 1907) թերթերը։

Մի շարք պարբերականների հիմնադրման և փակման տարեթվեր կիսատ են կամ ճիշտ չեն Լևոնյանի գրքում, ահա մի քանի օրինակ. «Հոսանք», Կահիրե, 1912, № 1—32, Լևոնյանի մոտ՝ 1912, № 1—12, «Արի», Բուխարեստ, 1924—1928, Գ. Լևոնյանի մոտ միայն՝ 1924, «Առողջ կենցաղ», Երևան, 1929—1931, Գ. Լևոնյանի մոտ՝ միայն 1929, «Հորիզոն», Ֆիլադելֆիա, 1923, № 1—13, 1924, № 1—49, Լևոնյանի մոտ՝ 1923, № 1—4, 1924, № 1—34[2] և այլն։

Ն. Գասապյանի վերը հիշված գրախոսականում բերված է Հ. Պետրոսյանի «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիայում» պարբերականների վերաբերյալ տրված սխալ տեղեկությունների մի ընդարձակ ցանկ[3]։ Այդ սխալների մի մասը Հ. Պետրոսյանի մատենագիտության մեջ են մտել Գ. Լևոնյանի աշխատությունից, ուստի և վերաբերում են նաև սրան։

Իբրև Գ. Լևոնյանի աշխատության թերություն սովորաբար նշվում է նաև այն, որ հեղինակը չի առաջնորդվել թերթերի և հանդեսների նկարագրության մատենագիտական կանոններով, որոնք այն ժամանակ գործում էին ողջ Խորհրդային

1 Խ. Բարսեղյան Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա։ Եր., 1959, էջ 7։

2 «Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1962, № 5, էջ 38։

3 «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 3—4, էջ 309—314։

Միության մեջ, ինչպես և այլ երկրներում։ Սա, անշուշտ, թերություն է, քանի որ նկարագրության միասնական կանոնները, որ մշակվել են մատենագիտական աշխատանքի մեծ փորձի հիման վրա, լավագույն մասնագետների կողմից, տպագիր երկերը ներկայացնում են ամենահամառոտ, բայց և լավագույն ձևով, բոլոր կարևոր տեղեկություններով։ Սակայն Լևոնյանի գրքում սա մի թերություն է, որ հատուկ է ոչ միայն անցյալի, այլև, ինչպես կտեսնենք, ներկայի հայ մատենագիտության մի շարք լավագույն նմուշներին։

Այնուհետև, որպես Լևոնյանի աշխատության թերություն է նշվում նաև այն, որ այնտեղ տրված է պարբերականների ցուցակը սոսկ, և վերլուծական նկարագրության չեն ենթարկված այդ պարբերականների մեջ տպագրված նյութերը։ Այսինքն՝ Լևոնյանից պահանջվում է մի այնպիսի ահռելի գործ, ինչպիսին է հայ պարբերական մամուլում տպագրված հոդվածների և այլ նյութերի մատենագիտության կազմումը։

Իհարկե, մի մատենագետի տարբեր պահանջներ ներկայացնելը հեշտ գործ է, սակայն պահանջելուց առաջ պետք է պատկերացնել պահանջածը, նկատի ունենալ հնարավորությունները, ժամանակը։ Եթե Լևոնյանը 1930 թվին ձեռնամուխ լիներ հայ պարբերական մամուլում հրապարակված նյութերի մատենագիտության կազմմանը, և եթե նա միայն դրանով զբաղվեր, ապա մինչև իր կյանքի վերջը այդ աշխատանքի մեկ քառորդն էլ չէր կարող կատարել, իսկ դա նշանակում է, որ այսօր մենք չէինք ունենա ոչ պարբերական մամուլի նյութերի մատենագիտությունը, ոչ էլ պարբերական մամուլի այն մատենագիտությունը, որ ունենք այժմ։

Մատենագիտական աշխատանքը, ինչպես և ամեն մի աշխատանք նախ պետք է գնահատել ըստ արժանիքների, ըստ օգտակարության։ Այսպես մոտենալով՝ տեսնում ենք, որ Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը» աշխատանքը լավագույններից մեկն է հայ ողջ մատենագիտության մեջ, կարելի է ասել, նրա զարգերից մեկը։

Գ. Լևոնյանը 30-ական թվականներին հասարակայնու-

թյան ուշադրությանը ներկայացրեց նաև մի այլ մատենագիտական ցանկ, որ, անշուշտ, թե՛ իր ընդգրկմամբ և թե՛ արժեքով շատ ավելի համեստ է։ Խոսքը վերաբերում է Սայաթ-Նովային նվիրված մատենագիտությանը, որը տպագրվեց մեծ բանաստեղծի խաղերի՝ Լևոնյանի կազմած ժողովածուի վերջում[1]։ Ժողովածուն Սայաթ-Նովայի երկերի բոլոր հրատարակությունների մեջ ամենալավերից մեկն է, այն լրիվ և առավել արժեքավոր է դառնում նաև այդ մատենագիտությամբ։ Մատենագիտական այս ցանկն, իհարկե, փոքր է, կան բացթողումներ և անճշտություններ, բայց ըստ էության, առաջինն է և հետագայում Սայաթ-Նովային նվիրված մատենագիտական մի քանի մեծ ու փոքր ցանկերի[2] հիմքն է հանդիսացել։ Լևոնյանի կազմած խաղերի այս ժողովածուի մեջ համուտ աշուղագետն ու մատենագետը հանդես են եկել միասին։

Գարեգին Լևոնյանի, իբրև մատենագետի մասին խոսելիս չպետք է մոռանալ նաև նրա «Հայ գիրքը և տպագրության արվեստը» աշխատությունը, որի առաջին հրատարակությունը եղավ 1946 թվականին։ Սակայն քանի որ այս աշխատությունը կապվում է մատենագիտական աշխատանքի այն ճյուղի հետ, որը կոչվում է գրքի պատմություն, ուստի և նրա մասին խոսք կլինի իր տեղում։

***

30-ական թվականներին Հայաստանում կատարված մատենագիտական աշխատանքը բնութագրելիս պետք է նկատի ունենալ նաև տարբեր ձևերով հրապարակված ճյուղային մատենագիտական ցանկերը։ Տարբեր ձևերով ասելով նկատի ունենք այն, որ գիտության ու մշակույթի առանձին ճյուղերի

1 Սայաթ-Նովա Հայերեն խաղերի լիակատար ժողովածու։ Եր., 1931, էջ 190—193։

2 Օրինակ, Մ. Հասրաթյանի կազմած «Խաղերի ժողովածուի» (1945 թ.) վերջում եղած «Բիբլիոգրաֆիայի», Ա. Շահազիզյանի կազմած «Սայաթ-Նովա» գրքի (1963 թ.) մեջ եղած ցանկի և այլն։

նվիրված մատենագիտական ցանկերը լույս էին տեսնում և՛ առանձին գրքույկներով, և՛ ամսագրերի մեջ, և՛ գրքերին կից։ Հիշատակելի է, օրինակ, «Խորհրդային արվեստ» հանդեսի 1933 թվականի թիվ 10-ում տպագրված «Խորհրդային Հայաստանի երաժշտական հրատարակությունները 1932—1933 թթ. տարեշրջանում» մատենագիտությունը, որ կազմել էր Ռ. Թերլեմեզյանը։ Այս ցանկն, ըստ էության, առաջին հայ երաժշտագիտական մատենագիտությունն է։

Պատմության տարբեր հարցերի նվիրված գրականության ցանկեր կային Հ. Մանանդյանի այդ տարիներին լույս տեսած մի քանի աշխատություններին կից, ինչպես, օրինակ, «Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում» (1930 թ.), «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեվտինգերյան քարտեզի» (1936 թ.), «Ֆեոդալիզմի զարգացումը Հին Հայաստանում» (1934 թ.) աշխատությունների վերջում։ Գրականության ավելի ընդարձակ ցանկեր կային Ա. Խաչատրյանի «Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն» (1933 թ.), Ե. Շահազիզի «Հին Երևանը» (1931 թ.) և Ե. Մելիք-Յոլչյանի «Հայաստանի բանվորական շարժման պատմությունից, 1903—1907» (1930 թ.) գրքերում։

Որպես պատմական գրականության մատենագիտության նմուշներ կարելի է հիշել նաև Ա. Սամվելյանի «Հին Հայաստանի կուլտուրան» (1931) գրքի վերջում եղած գրականության ցանկը, ինչպես և Պատմության և Գրականության ինստիտուտի «Տեղեկագրում» տպագրված (1937 թ., գիրք 2) «Ցանկ պատմագիտական գրականության» գրացուցակը, որ ներկայացնում էր 1930 թվականի պատմագիտական հրատարակությունները։

Հ. Աճառյանի «Արմատական բառարանի» 7-րդ, միակ տպագիր հատորում (1935) կան օգտագործված գրականության համառոտագրությունների երկու ցանկեր, որոնցից առաջինը հայ հին մատենագրության, իսկ երկրորդը գերազանցապես լեզվաբանական գրականության արժեքավոր մատենագիտական ցանկեր են։

Կարելի է հիշել նաև 1938-ին տպագրված «Յուցակ մանկական գրականության լագերային ընթերցանության համար» փոքրիկ (19 էջ) ցուցակը։ Սա ուշագրավ է նրանով, որ հայ մանկական գրականության մատենագիտության առաջիններից էր (Մ. Դուրգարյանի վերը հիշված ցանկերի հետ)։

Գրականագիտական ներգրքային ցանկերից կարելի է հիշել Հ. Սուրխաթյանի «Հոմերոս։ Շեքսպիր» գրքում եղած (էջ 167—168) «Շեքսպիրը հայերեն» մատենագիտությունը և Ա. Ռոսկինի «Հեղափոխության մըրկահավը» թարգմանական գրքի (1937) վերջում (էջ 134—135) զետեղված «Գորկու երկերի հայերեն թարգմանություններ» ցանկը։

Գեղարվեստական և գրականագիտական գրականության մատենագիտական ցանկերից հիշատակելի են նաև Ա. Բաբայանի կազմած «Պուշկինը հայ գրականության մեջ», մատենագիտությունը և Մ. Գորկուն նվիրված գրականության ցանկը։ Առաջինը հրապարակվեց Պուշկինի մահվան հարյուրամյակին նվիրված «Ա. Պուշկինին» ժողովածուի մեջ (էջ 317—394) և գեղարվեստական-գրականագիտական գրականության մինչ այդ եղած բոլոր ցանկերից ամենաընդարձակն էր, երկրորդը գտնվում է նույն հեղինակի կազմած և լուսաժողկոմատի ու գրապալատի կողմից լույս ընծայված «Պրոլետարիատի մեծ արվեստագետ Մաքսիմ Գորկին» գրքույկում (1937)։

Բացի այս երկու ցանկերը, Արամ Բաբայանը 30-ական թվականներին հայ մատենագիտության բնագավառում հանդես եկավ նաև մի քանի այլ գործերով, որոնց մեջ ամենից ավելի ուշադրության արժանացավ «Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն թարգմանությունները» մատենագիտական ցանկը[1], որին հարկ է ավելի հանգամանորեն անդրադառնալ։

Առաջաբանում կազմողը գրում է. «Յանկի հիմնական նպատակն է ցույց տալ, թե մինչև այժմ՝ Վ. Ի. Լենինի մահ-

---

1 Ա. Բաբայան Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն թարգմանությունները։ Բիբլիոգրաֆիական ցանկ։ Եր., Կուսհրատ, 1934, 79 էջ (ՀՍԽՀ Մարքսիզմ-լենինիզմի ին-տ)։

վան 10-ամյակը ինչ է թարգմանված և առանձին գրքերով լույս ընծայված նրա երկերից հայերեն լեզվով»։

Մատենագիտության մեջ տեղ են գտել միայն Լենինի այն երկերը, որոնք հայերեն հրատարակվել են առանձին գրքերով։ Այստեղ տեղ չեն գտել հայերեն պարբերականներում հրապարակված մեծաքանակ նյութերը, ինչպես և Լենինի ու նրա աշխատությունների մասին եղած ողջ հայերեն գրականությունը։

Մատենագիտությունը բաղկացած է երկու մասից՝ ա) Վ. Ի. Լենինի երկերի հայերեն թարգմանությունների ժամանակագրական ցանկ և բ) նույնի այբբենական ցանկ։

Առաջին մասը բաղկացած է երեք բաժնից. Լենինի երկերի հայերեն հրատարակությունները 1918—1920 թվականներին, 1921—1930 և ապա՝ 1931—1933 թվականներին։ Յուրաքանչյուր բաժնի մեջ նյութերը դարձյալ դասավորված են ժամանակագրական կարգով, միևնույն տարեթվին լույս տեսած գրքերի անունները տրված են այբբենական կարգով։

Ցանկում ընդգրկված այն գրքերը, որոնցում զետեղված են Լենինի մեկից ավելի աշխատությունները, նկարագրված են բովանդակությամբ հանդերձ, որ հնարավորություն է տալիս իմանալու, թե ինչ նյութեր են պարունակում նրանք։

Մատենագիտությունը աչքի է ընկնում գրքերի նկարագրության ճշգրտությամբ։ Ըստ էության, սա առաջին հայերեն ճյուղային, շատ թե քիչ ծավալուն մատենագիտությունն է, ուր կիրառված են գրքերի նկարագրության ժամանակին ընդունված մատենագիտական կանոնները։ Այս իմաստով մատենագիտությունը կարող է բռնել մասնագիտական ամենախիստ քննությունը։

Ժամանակագրական ցանկը համարակալված է, և այբբենական ցուցակում տրված համառոտ նկարագրությունների դիմաց նշված են հիմնական մատենագիտության մեջ գրքերի ստացած հերթական համարները։

Մատենագիտության վերջում տրված են Լենինի երկերի

չորս հայերեն հրատարակությունների լուսանկարները (ավելի ճիշտ կլիներ, եթե լուսանկարները դրված լիներին մատենագիտության մեջ, համապատասխան գրքերի նկարագրության մոտ)։

Գ. Լևոնյանի մատենագիտության հետ գրեթե միաժամանակ հրապարակված այս ցանկը, իր մասնագիտական մշակվածությամբ, ճշգրտությամբ, անկասկած, խորհրդային Հայաստանում զարգանալ սկսող մատենագիտական աշխատանքի առաջին լուրջ նվաճումներից էր, և իրավացի էր Ա. Մնձիբյանը, երբ նույն 1934 թվականին այդ ցանկի մասին բարձր կարծիք հայտնելով՝ գրում էր, որ Ա. Բաբայանի «բարեխիղճ և մանրակրկիտ որոնումներն արժանի են ամենայն խրախուսանքի»[1]։

Հասկանալի է, որ ցանկը ուներ որոշ թերություններ, որոնցից ամենակարևորը այստեղ ևս բացթողումներն են։ Այս դեպքում ճիշտ չի լինի իբրև թերություն դիտել պարբերական մամուլում եղած նյութերի բացակայությունը ցանկում, ինչպես և այն, որ ընդգրկված չէ Լենինի մասին եղած հայերեն գրականությունը, քանի որ հեղինակը նպատակ է դրել ներկայացնելու միայն առանձին գրքերով հրատարակված նյութը։ Սակայն առանձին գրքերով լույս տեսածն էլ լրիվ չէ ներկայացված։ Նախ չկան մինչև 1918 թվականը Վ. Ի. Լենինի՝ հայերեն հրատարակված գրքերը, ինչպես՝ «Գյուղացիական չքավորությունը» (Ժնև, 1904), «Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական դեմոկրատական դիկտատուրայի մասին» (Թիֆլիս, 1905)։ 1918 թվականից հետո հրատարակված որոշ նյութեր էլ են դուրս մնացել մատենագիտությունից, ինչպես, օրինակ, «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի ամենաբարձր փուլը» (Մոսկվա, 1920), «Ռուսական հեղափոխությունը և բանվոր դասակարգի խնդիրը» (Մոսկվա, 1920) և այլն։

Այստեղ ևս բացերը պայմանականորեն ենք թերություն

---

[1] «Պրոլետար», 1934, № 73։

համարում, քանի որ լուրջ հիմք չունենք հեղինակից պահանջելու, որ անպայման լիակատար լիներ նրա ցանկը, և այդ ոչ միայն այն պատճառով, որ լիակատար ցանկեր չեն լինում, այլև այն, որ Լենինի երկերի մատենագիտության առաջին փորձը կարող էր բացթողումներ ունենալ։

Անշուշտ, լավ կլիներ, եթե մատենագիտությունն ունենար առարկայական ուղեցույց։ Հեղինակը առաջաբանում խոստանում է նման ցանկ-ուղեցույց կցել մատենագիտության երկրորդ հրատարակությանը, որի մեջ ընդգրկված կլիներ նաև Վ. Ի. Լենինի լիակատար երկերի ժողովածուն (որի հրատարակության ավարտից հետո, ըստ հեղինակի խոստման, պետք է լույս տեսներ մատենագիտության երկրորդ հրատարակությունը)։

Ուշագրավ է գրավում գրքույկի վերջին երեսին եղած հայտարարությունը. «Պատրաստ է տպագրության Ա. Բաբայանի Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատությունների հայերեն թարգմանությունները։ Թարգմանությունների պատմություն և բիբլիոգրաֆիական ցանկ»։

Ինչպես այս ցանկը, այնպես էլ Վ. Ի. Լենինի երկերի մատենագիտության երկրորդ հրատարակությունը առարկայական ուղեցույցով հանդերձ լույս չեն տեսել մեզ անհայտ պատճառներով։

Արամ Սահակի Բաբայանը ծնվել է 1904 թվականին, Պարսկահայքի Սալմաստի շրջանի Փայաջուկ գյուղում։ Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը և 1924 թվականին տեղափոխվելով Երևան՝ ընդունվել Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը։ Սովորելուն զուգահեռ նույն 1924 թվականից աշխատել է Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանում և, այնուհետև, ավարտելուց հետո մնացել է աշխատելու այդ գրադարանում։ 1933-ին Մոսկվայում ավարտել է մատենագիտական բարձրագույն եռամյա դասընթացը։

Ա. Բաբայանը զգալի նպաստ ունի Հանրային գրադարանի գրական ունեցվածքի և քարտային գրացուցակների կազմա-

կերպման, ինչպես նաև գրադարանի մատենագիտական բաժնի աշխատանքների ղեկավարման գործում։ Նա աշխատել է գրադարանի մշակման բաժնում, ապա իբրև գիտնական քարտուղար և գրադարանի դիրեկտորի գիտական գծով տեղակալ, եղել է նաև գրապալատի դիրեկտորի տեղակալ։ 1953 թվականին նա թողնելով աշխատանքը Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանում՝ աշխատում է Հայաստանի Գ.Ա. հասարակական բաժանմունքի գրադարանում իբրև դիրեկտոր։ Բաբայանը մի շարք տարիներ գրադարանագիտական-մատենագիտական առարկաներ է դասավանդել Երևանի համալսարանի և Հայկական հեռակա մանկավարժական ինստիտուտի գրադարանային բաժիններում։

Ա. Բաբայանի գրած և թարգմանած գրադարանագիտական ձեռնարկներից մի քանիսը («Հղինակային աղյուսակներ», «Գրադարանային ձեռացպագիր», «Գրադարանային տերմինների բառարան», «Տպագիր երկերի նկարագրության միասնական կանոններ») տարիներ շարունակ օգտագործվում են Հայաստանի գրադարաններում։

Բացի վերը հիշատակված մատենագիտական ցանկերից, Ա. Բաբայանը կազմել է նաև «Մաալինյան սահմանադրություն» (1937, 40 էջ), «Հակաօդային պաշտպանություն» (1942, 47 էջ), «Սովետական ժողովրդի Հայրենական մեծ պատերազմը» (1942, 47 էջ) հանձնարարական ցանկերը, որոնք հրատարակվել են Հանրային գրադարանի կողմից, ինչպես նաև՝ «Библиография по истории древнеармянской литературы» (М. Абегян История древнеармянской литературы, том I գրքում, Եր., 1948, էջ 509—524), «Армянские литературные связи» (Եր., 1960, 152 էջ) և Ֆ. Շիլլերի հայերեն հրատարակություններին նվիրված մատենագիտությունը («Շիլլերը հայ գրականության մեջ և թատրոնում» գրքում, 1959, Գիտությունների ակադեմիայի հրատարակություն), ինչպես և մի քանի այլ փոքր ցանկեր։ Գրել է հայ գրքի պատմությանը նվիրված աշխատություն և հոդվածներ։

***

30-ական թվականներին Հայաստանում զարգացող մատենագիտական կյանքը բնորոշելիս, անշուշտ, պետք է նկատի ունենալ այն կարևոր հանգամանքը, որ գրապալատի կողքին նկատելի էր դառնում Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի մատենագիտական գործունեությունը։ Հատկապես ուշադրության արժանի է 1939 թվականին գրադարանի հրատարակած մատենագիտական ցանկը, նվիրված «Սասունցի Դավիթ» վիպերգին։ Սակայն Հանրային գրադարանի մատենագիտական հրատարակությունների մասին կխոսվի առանձին բաժնում։ Բանն այն է, որ 30-ական թվականներից հետո Հայաստանում մատենագիտական աշխատանքը սկսում է դառնալ այնքան բազմազան և այնպիսի ծավալ ստանալ, որ նրա մասին այլևս անհնար է խոսել ժամանակագրական կարգով։ Յուրաքանչյուր մատենագիտական հիմնարկ ավելի ու ավելի հստակ է որոշում իր գործունեության ուղղությունը, ձևը է բերում իր դեմքը։ Այդ զարգացման հետևանքը եղավ այն, որ այժմ Հայաստանում գործում են երեք գլխավոր մատենագիտական հիմնարկներ՝ գրապալատը, Հանրապետական գրադարանը և Գիտությունների ակադեմիան։ Հանրապետությունում լույս տեսնող մատենագիտական ցանկերն ու աշխատությունները հիմնականում հրատարակվում են այս հիմնարկների կողմից, թեև մի քանի այլ գրադարաններ ևս լույս են ընծայել և ընծայում են մատենագիտական ցանկեր։ Ինչ վերաբերում է ոչ տպագիր, քարտային մատենագիտության կազմմանը, ինչպես և տեղեկատու մատենագիտական աշխատանքին, ապա դրանով զբաղվում են հարյուրավոր գրադարաններ։

Մենք կքննենք նախ վերոհիշյալ երեք մատենագիտական հիմնարկների գործունեությունը և, այնուհետև, ըստ հարկի կանդրադառնանք նաև մյուս գրադարանների մատենագիտական աշխատանքին։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՊԱԼԱՏ

ՏԱՐԵԳՐԵՐ

1922 թվականի դեկտեմբերի վերջից (երբ եղավ գրապալատի հիմնադրման որոշումը) մինչև 1925 թվականը, մոտ երկու տարի գրապալատում, որ կից էր Հանրային գրադարանին, նախապատրաստական աշխատանքներ էին տարվում հայ պետական արձանագրական (հաշվառման-գրանցային)[1] մատենագիտության սկզբնավորման ուղղությամբ։

Պետական արձանագրական մատենագիտական այնպիսի հիմնարկ, ինչպիսին Հայկական ՍԽՀ պետական գրապալատն է, հասկանալի է, հայերը երբևէ չեն ունեցել։ Սակայն ճիշտ չի լինի ասել, թե որևէ կարգի արձանագրական մատենագիտություն հայոց մեջ չի եղել նախկինում։ Ինչպես արդեն ասվել է (նախորդ պրակում), Վիեննայի «Հանդես ամսօրյայի» մեջ անցյալ դարի 80-ական թվականներից սկսած տպագրե-

---

1 *Ռուսերեն* учетно-регистрационная библиография-*ն մեզ թվում է պարտադիր չէ բառացի թարգմանել հաշվառման-գրանցային բիբլիոգրաֆիա, այդ իմաստը վատ չի արտահայտում նաև ավելի պարզ ու հայացի արձանագրական մատենագիտություն անվանումը։*

վող «Մատենագիտական տեղեկությունները» տարեկան հրատարակությունների մասին հենց արձանագրական մատենագիտության նմուշներ էին (անշուշտ, ոչ պետական)։ Այդ տեղեկությունները տպվում էին «Ազգային հրատարակություններ» (այսինչ թվի) և «Մատենագիտական տեղեկություններ» (այսինչ թվի) վերնագրերով և ներկայացնում էին տվյալ տարվա մեջ աշխարհի տարբեր մասերում տպագրված այն հայերեն գրքերը, որոնք ստացվում էին Վիեննայի Մխիթարյանների կողմից։ Ըստ որում, տարբեր վայրերից Վիեննա ուղարկվող հայերեն գրքերի օրինակներն էլ նախնական բնույթի պարտադիր (գուցե՝ կամավոր պարտադիր) օրինակ էին հիշեցնում[1]։

Հայաստանի գրապալատի աշխատանքն, ինչ խոսք, որ ավելի կազմակերպված և որակյալ պետք է լիներ, քանի որ արձանագրման համար հանրապետության տարբեր հրատարակչություններից նրա ստանալիք գրքերի պարտադիր օրինակները ապահովված էին կառավարական օրենսդրությամբ։

ՀՍԽՀ գրապալատի արձանագրական մատենագիտությունը պետք է ընթանար Ռուսաստանի գրապալատի կատարած նույն կարգի աշխատանքի օրինակով։ Ռուսերեն լեզվով հրատարակվող «Книжная летопись»-ները, իսկ հետո նաև լրագրերի ու հանդեսների հոդվածների, գրախոսությունների, ինչպես նաև երաժշտական ու կերպարվեստի «Летопись»-ները իրենց բնույթով և ձևավորմամբ օրինակ դարձան Հայաստանում հրատարակվող տպագիր երկերի արձանագրական նույն կարգի տարեգրեր ստեղծելու համար։

1926 թվականին լույս տեսավ «Տպագրության տարեգրի» անդրանիկ համարը, որն ընդգրկում էր 1925 թվականին Հայաստանում լույս ընծայված տպագիր նյութերը։ Այս հա-

---

1 30-ական թվականներին եղավ ժամանակ, երբ Խորհրդային Հայաստանում տպագրված գրականության պարտադիր օրինակները ստանում էին ոչ միայն Հայաստանի խոշոր գրադարաններն ու գրապալատը, այլև Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան մատենադարանները։

մարը ապակետիպ էր։ Ճակատին ուներ՝ Հայաստանի գրապալատ։ Այնուհետև՝ Տպագրության տարեգիր։ Լույս է տեսնում տարին մեկ անգամ։ № 1, Հայաստանի գրապալատում ցուցակագրված 1925 թվի ընթացքում Հայաստանի ՍԽՀ սահմաններում լույս տեսած տպագրական նյութերի։

Տարեգիրը բաղկացած էր հետևյալ երեք բաժիններից.

I գրքեր (արձանագրված էր 265 միավոր)

II նոտաներ և պատկերագրություն (3 միավոր)

III պարբերական հրատարակություններ

1. Ամսագրեր (18 միավոր)

2. Լրագրեր (13 միավոր)։

Գրքերին նվիրված բաժինը բաղկացած էր հետևյալ յոթ ենթաբաժիններից.

1. Գիտական և ժողովրդական-գիտական գրականություն

2. Ագիտացիոն և քաղաքական գրականություն

3. Դասագրքեր և մեթոդական գրականություն

4. Գեղարվեստական գրականություն

5. Մանկական գրականություն

6. Պաշտոնական և վավերագրական գրականություն

7. Այլ և այլք

Տարեգրերի այս համարը վերջում ուներ հեղինակների այբբենական ցանկ։

Տարեգրի 2-րդ համարը, որ ընդգրկում էր Հայաստանի 1926 թվականի տպագիր արտադրանքը, լույս տեսավ 1927-ին՝ արդեն սովորական տպագրությամբ։

Այս համարում նյութերի դասավորությունը բավական փոխված էր։ Ուներ երկու հիմնական բաժին՝ 1. Գրականություն հայերեն լեզվով և 2. Գրականություն օտար լեզուներով։ Վերջինիս մեջ արձանագրված էր (կամ պետք է արձանագրվեր) ռուսերեն, ադրբեջաներեն և արևմտաեվրոպական լեզուներով գրականություն։

Հայերեն լեզվով գրականության բաժինը ուներ երեք ենթաբաժին. ա) գրքեր, բ) նոտաներ, գ) պարբերականներ։ Գրքերի բաժինը կոտորակված էր 21 թեմատիկ-առարկայական բաժանմունքների։

Այստեղ ավելի հարուստ էին նաև օժանդակ ցանկերը։ Տարեգիրն ուներ՝ 1) Հեղինակների այբբենական ցուցակ, 2) խմբագիրների, թարգմանիչների և նկարիչների ցուցակ, և 3) առարկայական ցուցակ։

Տարեգրի այս կառուցվածքը պահպանվեց նաև նրա հաջորդ մի շարք համարներում։

Տարեգրի 3-րդ համարի (տպվ. 1928 թ.) վերջում կար հավելված՝ «Վիճակագրական տեղեկություններ 1927 թ. (հունվար—դեկտեմբեր) Հայաստանի Սհշ սահմաններում լույս տեսած տպագրական նյութերի մասին»։ Այս տեղեկությունները զետեղվում էին նաև տարեգրերի մի շարք հաջորդ համարներում։ Նշենք, որ ներկայումս, նրանք լույս են տեսնում առանձին գրքույկներով (տարին մեկ)։

1929 թվականից սկսեց լույս տեսնել տարեկան չորս համար տարեգիր, այսինքն՝ «Տպագրության տարեգիրը» դարձավ եռամսյակային մատենագիտական պարբերական։ 1933 թվականին ոչ մի համար լույս չի տեսել, հաջորդ տարին հրատարակվել է երկու համար։

Մատենագիտական այս կարևոր պարբերականի անկանոն հրատարակվելու պատճառներից մեկն էլ տպագրական որոշ դժվարություններ էին։ 1935 թվականից մինչև 1941-ը այդ պարբերականը, որ արդեն կոչվում էր «Գրքի տարեգիր», հրատարակվում էր նաև ապակտիպ (այսինքն՝ որոշ համարներ՝ ապակտիպ, որոշ համարներ՝ սովորական տպագրությամբ)։ «Գրքի տարեգրի» պարբերականությունը նույնպես կայուն չէր։ 1935-ին լույս է տեսնում մեկ համար, ապա դառնում է միամսյա պարբերական (ամիսը մեկ համար), հետո տարին ութ համար է լույս տեսնում և այլն։

Հայրենական պատերազմի տարիներին՝ 1942—1945 թվականներին, երբ գրապալատը նորից միացել էր Հանրային

գրադարանին, նյութական և տպագրական դժվարությունների պատճառով «Գրքի տարեգրի» հրատարակումը դադարում է։ Այդ տարիներին լույս տեսած գրքերը արձանագրման են ենթարկվում միայն 1950 թվականին։

1947 թվականից մինչև այսօր «Գրքի տարեգիրը» լույս է տեսնում կանոնավոր, եռամսյակը մեկ (տարին չորս համար)։

1963 թվականից «Գրքի տարեգիրը» շարունակում է հրատարակվել եռամսյակը մեկ, այսինքն՝ տարին լույս է տեսնում չորս համար, սակայն այդ թվականից տարեկան հրատարակվում են նաև երկու լրացուցիչ պրակներ։ Հիմնական չորս պրակների մեջ զետեղվում են գիտական, գիտա-հանրամատչելի, արտադրական, ուսումնական, տեղեկատու, գեղարվեստական, քաղաքական և այլ բնույթի գրքերը, որոնք նախատեսված են ընթերցողների լայն շրջանի համար։ Լրացուցիչ երկու պրակների մեջ զետեղվում են գերատեսչական, արտադրա-հրահանգչական, նորմավորող, ծրագրա-մեթոդական բնույթի գրքույկներ, որոնք կա՛մ նեղ օգտագործման համար են նախատեսված, կա՛մ էլ խիստ ժամանակավոր բնույթ ունեն։

Հիմնական պրակներում են զետեղվում նաև երաժշտական, կերպարվեստի և գրաքննադատության տարեգրերը։

1930 թվականից գրադալատում գրքերից բացի սկսում են նկարագրել նաև հանրապետության մեջ լույս տեսնող հանդեսների (ժուռնալների) հոդվածները և կազմել այդ հոդվածների տարեգրեր, որոնք նախապես կից էին «Գրքի տարեգրին»։ Տարբեր վերնագրերի տակ՝ («Ժուռնալային հոդվածներ», «Ժուռնալային հոդվածների բիբլիոգրաֆիա»), «Գրքի տարեգրի» վերջում հրապարակվում էին հանդեսների էջերում լույս տեսնող հոդվածների ցուցակները։

1939 թվականից սկսեց լույս տեսնել «Ժուռնալային հոդվածների տարեգիրը» իբրև առանձին մատենագիտական պարբերական։ Հրատարակումը ընդհատվել է 1942 թվականին և

վերսկսվել 1947-ին: Այժմ լույս է տեսնում տարին չորս համար:

1949 թվականից գրապալատը հրատարակում է «Լրագրային հոդվածների տարեգիրը» իրեև առանձին պարբերական, ուր արտացոլվում են հանրապետության թերթերի էջերում հրապարակվող կարևոր հոդվածները: Նախքան այդ, 1934-ին հրապարակվել էին «Լրագրական տարեգրի» ինը համարները, ապա ընդմիջումից հետո՝ 1941-ին լույս էր տեսել «Թերթերի



Հայաստանի պետական գրապալատի տարեգրերը (1965 թ.)

հոդվածների տարեգրի» երկու համար։ Պարբերականը ընդհատվել էր Հայրենական պատերազմի պատճառով։ 1950 թվականից «Լրագրային հոդվածների տարեգիրը» լույս է տեսնում կանոնավոր, տարեկան 12 համար։

1951 թվականից «Դրքի տարեգրի» համարներին կից հրատարակվում են «Երաժշտական գրականության տարեգիրը», «Կերպարվեստի տարեգիրը» և «Գրաքննադատության տարեգիրը»։ Առաջինում արտացոլվում են Հայաստանում տպագրվող նոտաները, երկրորդում՝ տպագիր պատկերները, գեղանկարները, քարտեղները և այլ նյութեր։ Վերջինում նկարագրվում են տարբեր պարբերականներում հրապարակվող գրախոսությունները և քննադատական հոդվածները, նվիրված նոր լույս տեսնող գրքերին։

Ահա սրանք են գրապալատի արձանագրական մատենագիտության պարբերականները, որոնք և այսօր հայկական մատենագիտության կարևոր նվաճումներն են հանդիսանում։

Նյութերի նկարագրությունը տարեգրերի մեջ կատարվում է համաձայն Համամիութենական գրապալատում մշակված և ռուսերեն «Летопись»-ներում կիրառվող միասնական կանոնների։ Այս կանոնները շատ մոտ են «Տպագիր երկերի միասնական կանոնների»[1] մեջ հանձնարարվող մատենագիտական նկարագրությանը։

Ահա մի քանի նմուշ գրքի տարեգրի նկարագրություններից (1965 թ. 2-րդ համարից, էջ 34).

302. Կոթիկյան, Արման։ Ակոսներում։ [Բանաստեղծ., բալլադներ և պոեմներ]։ Եր., «Հայաստան», 1965։ 111 էջ, 1 թ. դիմանկ. 20 սմ. 3.000 օր. 33 կ. Կազմով։— [65—440]

Котикян, Арман. В бороздах. [Стихи, баллады и поэмы].

Ар2

303. Հարությունյան, Վլադիմիր։ Ատլանտիդա։ Վեպ։

---

1 Տպագիր երկերի նկարագրության միասնական կանոններ ոչ մեծ գրադարանների և բիբլիոգրաֆիական ցանկերի համար։ Եր., 1955։

Եր., «Հայաստան», 1965։ 493 էջ։ 20 սմ. 7.000 օր. 82 կ. Կազմով։— [65—291]

Арутюнян, Владимир. Атлантида. Роман.

Ар2

304. Ներսիսյան, Լիպարիտ։ *Կոմիտաս։ Դրամա 3 արարվածքով։ Եր., «Հայաստան», 1965։ 60 էջ։ 17 սմ. 3.000 օր. 10 կ.— [65—279]*

Нерсисян, Липарит. Комитас. Драма в 3-х д.

Ар2

Ինչպես տեսնում ենք, գրքերի նկարագրության մեջ ընդգրկվում են նաև այնպիսի տվյալներ, ինչպես գրքի չափը, տպաքանակը, գինը, կազմը, որոնք հատուկ են պետական տրձանագրական մատենագիտությանը և բնորոշ չեն գրքերի գրադարանային նկարագրությանը (քարտային գրացուցակների համար)։

Նկարագրության վերջում ուղիղ փակագծի մեջ տրվում է տվյալ գրքի պարտադիր օրինակի գույքահամարը, որը այդ գիրքը ստացել է գրապալատում և ըստ որի տեղադրված է այնտեղ։

Յուրաքանչյուր գրքի հայերեն նկարագրության տակ տրվում է ռուսերեն կրճատ նկարագրությունը։

Վերջում (նկարագրության ներքևի աջ մասում) տրվում է գրադարաններում կիրառվող գրքերի դասակարգման նիշը (ինդեքսը)։

Հանդեսների և լրագրային հոդվածների տարեգրերում նյութերի նկարագրությունը կատարվում է վերլուծական, այսինքն՝ հոդվածի կամ պարբերականում տպված որևէ այլ նյութի հեղինակն ու վերնագիրը նշելուց հետո՝ տրվում է աղբյուրը, այսպես[1].

1080. Շահարյան, Ս. *Յոթնամյակի ավարտական տարին։ Լենինյան ուղիով, 1965, № 4, էջ 55—62*

---

1 *«Ժուռնալային հոդվածների տարեգիր», 1965, № 2, էջ 12։*

1081. Պողոսյան, Գ., Թարխանյան, Ա. և Խաչիկյան, Մ. Քաղաք—արբանյակ Արովյան։ [Ապագա քաղաքի մասին]։ Գիտ. և տեխն., 1965, № 5, էջ 30—35

1082. Սարյան, Գուրգեն։ Նվիրական անուններ։ [Հայրենադարձ հայերի մասին]։ Սովետ. Հայաստան, 1965, № 4, էջ 12—14

Գրապալատի տարեգրքերում՝ թե՛ հիմնական, թե՛ լրացուցիչ, թե՛ գրքերի և՛ թե հոդվածների նկարագրությունները խմբավորվում են ըստ գիտության ու մշակույթի բնագավառների (սիստեմատիկ կարգով), բաժին առ բաժին։ Նյութերի դասակարգումը կատարվում է Համամիութենական գրապալատի կողմից մշակված աղյուսակով, որ բաղկացած է 31 գլխավոր բնագավառային բաժիններից՝

1. Մարքսիզմ-լենինիզմ
2. Սովետական Միության կոմունիստական պարտիա
3. Համամիութենական լենինյան կոմունիստական երիտասարդական միություն։ Սովետ. երիտասարդ.
4. Հասարակական գիտություններ
5. Փիլիսոփայություն։ Հասարակական-քաղաքական ուսմունքներ
6. Պատմություն
7. Տնտեսական գիտություններ։ Քաղաքատնտեսություն
8. Միջազգային հարաբերություններ։ Արտասահմանյան երկրների քաղաքական և տնտեսական դրությունը
9. ՍՍՌՄ կոմունիստական շինարարություն
10. Պլանավորում։ Հաշվառք։ Կառավարման կազմակերպում
11. Ֆինանսներ
12. Աշխատանք
13. Պետություն և իրավունք
14. Ռազմական գործ
15. Բնական գիտություններ։ Մաթեմատիկա
16. Տեխնիկա։ Արդյունաբերություն

17. Գյուղատնտեսություն
18. Տրանսպորտ։ Տրանսպորտային մեքենաշինություն
19. Կապ
20. Առևտուր։ Մթերումներ։ Հասարակական սնունդ
21. Կոմունալ գործ։ Բնակչության կենցաղային սպասարկում
22. Առողջապահություն։ Բժշկություն
23. Ֆիզիկական կուլտուրա։ Սպորտ
24. Կուլտուրա։ Լուսավորություն։ Գիտություն
25. Բանասիրություն։ Լեզվաբանություն
26. Գրականագիտություն։ Գեղարվեստական գրականություն։ Ֆոլկլոր
27. Գրականություն մանուկների համար
28. Արվեստ
29. Աբևիզմ։ Գիտություն և կրոն։ Կրոն
30. Մամուլ։ Դրքագիտություն։ Գրադարանային գործ։ Մատենագիտություն։
31. Ընդհանուր բնույթի տեղեկատուներ։ Հանրագիտարաններ։ Օրացույցներ։ Խառը բնույթի ժողովածուներ։

Այնուհետև այս գլխավոր բաժիններն էլ կոտորակվում են առանձին ենթաբաժինների։ «Լրագրային» և «Ժուռնալային» հոդվածների տարեգրերը նախապես երկու մասի են բաժանվում հայերեն և ռուսերեն, ապա յուրաքանչյուր մասի նյութերը խմբավորվում են ըստ բերված դասակարգման աղյուսակի։ Գրքի տարեգրի մեջ ռուսերեն գրքերի նկարագրությունները յուրաքանչյուր բաժնում տրվում են հայերեն գրքերից հետո։

Կերպարվեստի և երաժշտական նյութերի տարեգրերում նյութերի նկարագրությունները չեն դասակարգվում, այլ ուղղակի դասավորվում են այբբենական կարգով (առանձին՝ ըստ լեզուների)։

Բոլոր տարեգրերի մեջ նյութերը համարակալվում են։ Յուրաքանչյուր տարեգիր ունի իր այբբենական անվանացանկը, ուր յուրաքանչյուր անվան դիմաց տրված է այն հա-

մարը, որի տակ տարեգրում գտնվում է տվյալ հեղինակի երկը կամ տվյալ անձին նվիրված գրվածքը։

Մատենագիտական այս տարեգրերի գլխավոր նշանակությունը հանրապետության ընթացիկ տպագիր արտադրանքի վերաբերյալ տեղեկատվությունն է։ Տարեգրերը օգտագործվում են Հայաստանի գրադարաններում, այդ թվում՝ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական, Գիտությունների ակադեմիայի և Երևանի համալսարանի գրադարանների տեղեկատու-մատենագիտական բաժիններում, ինչպես նաև տարբեր մասսայական գրադարաններում՝ ընթերցողներին տեղեկանքներ տալու նպատակով։

Տարբեր ժամանակներում գրապալատի տարեգրերը տարբեր թերություններով պատճառով քննադատվել են։ Այժմ ընդհանուր առմամբ նյութերի նկարագրության և դասակարգման (խմբավորման), ինչպես և ցանկերի կազմման վիճակը վատ չէ, թեև թերությունները դեռևս քիչ չեն։

Օրինակ, հայերեն նյութերի նկարագրության մեջ նկատվում է ռուսերենի կետադրական կանոնների կիրառում. դրվում են հայերենի համար ավելորդ ստորակետներ (ինչպես՝ Տեր յան, Վաճառ կամ՝ Կոթիկյան, Արման), երբեմն էլ հայերեն վերջակետի (երկու կետ) փոխարեն ռուսերեն վերջակետ է դրվում և այլն։ Որոշ դեպքերում հիշտ չեն օգտագործվում ուղիղ փակագծերը (որոնցում պետք է դրվեն միայն կազմողի կողմից տրվող տեղեկանքները)։ Հնից եկող որոշ օտար անվանումներ, որ այժմ արդեն հայերենում չեն գործածվում, տարեգրերում մեքենայաբար շարունակում են օգտագործվել, ինչպես՝ ժուռնալ, պեռսոնալիա, ֆոլկլոր և այլն։

Անճշտություններ են հանդիպում նաև գրադարանների համար գրվող դասակարգման նիշերի մեջ։

Այնուհետև, գրապալատը «Ժուռնալային հոդվածների տարեգրում» վերլուծագրում է պարբերական հանդեսները, ինչպես և շարունակվող հրատարակությունները, այդ թվում՝ շարունակվող ժողովածուները։ Մյուս կարգի ժողովածուները (ո՛չ շարունակվող) «Գրքի տարեգրում» սոսկ արձանագրվում

են իրրև գիրք, նրանց բովանդակությունը որևէ տեղ, որևէ կերպ չի բացվում։ Այդպիսով, տարբեր հեղինակների հաճախ արժեքավոր հոդվածներ կամ ստեղծագործություններ մնում են չբացահայտված։

1958 թվականից, որպես արձանագրական մատենագիտական պարբերականների լրացում գրապալատը տարին մեկ, առանձին գրքույկով սկսեց հրատարակել Հանրապետության մեջ հրատարակվող գրքերի և պարբերականների տարեկան վիճակագրությունները, ըստ որում, 1960 թվականին հրատարակվեցին 40 տարվա վիճակագրական տվյալները[1]։

Ձրի պարտադիր օրինակի ստացման օրենքը, որը Հայաստանում կանոնավոր սկսեց իրականացվել 1925 թվականից, տարբեր տարիների տարբեր չափեր ու ձևեր է ունեցել։ Ձրի պարտադիր օրինակի օրենքը հանգում է այն բանին, որ Հանրապետության մեջ որևէ տեղ, որևէ լեզվով տպագրվող գրքերից կամ գրքույկներից օրենքով որոշված օրինակների քանակ պետք է ձրի հանձնվի համապատասխան հիմնարկի (կամ հիմնարկների), նախքան տպաքանակը վաճառքի հանելը։ Այդ կարգի գրադարանային-մատենագիտական հիմնարկներից գլխավորները միշտ եղել են գրապալատը, Հանրային գրադարանը, ինչպես և գլավլիտը, իսկ մյուսները միշտ փոփոխվել են։

Սկզբում գրապալատը ստանում է Հայաստանում լույս տեսնող յուրաքանչյուր անուն գրքի 35 ձրի պարտադիր օրինակ, որոնցից 25-ը ուղարկում էր Մոսկվա՝ Ռուսաստանի կենտրոնական գրապալատ՝ Միության տարբեր գրադարաններին բաշխելու համար։ Մնացած օրինակները Հայաստանի գրապալատը բաշխում էր հետևյալ կերպ՝ Հանրային գրադարանին 3 օրինակ, համալսարանի, մանկավարժական բանգարանի, Գորիսի գավառային, Լենինականի քաղաքային գրադարաններին, էջմիածնի գիտական ինստիտուտին (մատենադարանին) և իրեն մեկական օրինակ։

1 Գիրքը և պարբերական մամուլը Հայկական ՍՍՌ-ում 40 տարում։ Վիճակագրական տվյալներ), Եր., 1960, 77 էջ։

Այնուհետև, Հայաստանում ձրի պարտադիր օրինակ ստացող գրադարանների թիվը մեծացավ։ Կար ժամանակ, երբ բացի Երևանի խոշոր գրադարաններից ձրի պարտադիր օրինակ էին ստանում նաև 26 շրջանային գրադարաններ, Նախիջևանի հանրապետական գրադարանը, Վիեննայի և Վենետիկի մխիթարյան մատենադարանները և այլն։

Այդպիսով, գրապալատի կողմից ստացվող և բաշխվող գրքերի ձրի պարտադիր օրինակների քանակը ժամանակին տատանվել է 30-ից մինչև 35-ի միջև։ Լրագրերի ձրի պարտադիր օրինակների քանակը նույնպես տարբեր է եղել։ 30-ական թվականներին եղավ ժամանակ, երբ գրապալատը ստանում և բաշխում էր 28 օրինակ հանրապետական յուրաքանչյուր թերթից և 12 օրինակ շրջանային թերթեր, որոնցից 2 օրինակն էր պահում իրեն, մնացածը բաշխում։

Այժմ, գրապալատը ձրի պարտադիր օրինակի բաշխմամբ չի զբաղվում, պարտադիր օրինակները տպարաններից ուղարկվում են ըստ նշանակության։ Գրապահոցային-մատենադիտական հիմնարկներից այժմ Հայաստանի հրատարակությունների ձրի պարտադիր մեկական օրինակ ստանում են գրապալատը և Հանրային գրադարանը։

ՏՊԱԳԻՐ ՔԱՐՏԵՐ

Գրապալատի մատենագիտական աշխատանքի մի կարևոր մասն էլ Հայաստանում տպագրվող գրքերի նկարագրությունները կրող տպագիր քարտերի հրատարակումն է։

Հազարավոր գրադարանների քարտային գրացուցակների որակը բարձրացնելու նպատակով Խորհրդային Միության մեջ կիրառվում է կենտրոնացված գրացուցակավորում (կատալոգավորում)։ Այսինքն՝ բազմաթիվ գրադարանների գրացուցակների համար ընթացիկ գրականության քարտերը կազմվում են մի կենտրոնում, ապա բաշխվում։ Սրա առավելությունն այն է, որ այդ կենտրոնում հնարավոր է ունենալ լավ մասնագետներ, որոնք կկազմեն որակյալ քարտեր և գրադա-

բաններում որակյալ կգտնեն գրացուցակները։ Բացի այդ, դրա շնորհիվ գրադարաններում աշխատանքի խնայողություն կլինի։

Տպագիր քարտերի հրատարակումը միաժամանակ գրադարանների համար տեղեկատու-մատենագիտական նշանակություն պետք է ունենա. գրադարանները ստանալով նոր լույս տեսած գրքերի տպագիր քարտերը, տեղեկանում են նոր հրատարակությունների մասին և համապատասխան միջոցների դիմում գրադարանին անհրաժեշտ գրքերը ձեռք բերելու համար։

Մոսկվայում ռուսերեն տպագիր երկերի համար տարբեր հիմնարկների կողմից հրատարակվում են մի քանի տեսակ տպագիր քարտեր, ինչպես՝ մասսայական գրադարանների համար (անոտագրված), գիտական գրադարանների համար, նոտաների, կերպարվեստի նյութերի, ինչպես և ստանդարտների տպագիր քարտեր և այլն։

Հայաստանում հրատարակվում են միայն գրքերի, այն էլ մի տեսակ տպագիր քարտեր՝ նախատեսված մասսայական գրադարանների համար. (Թեև նրանցից կարող են օգտվել նաև գիտական գրադարանները)։

Հասկանալի է, որ տպագիր քարտեր կարող է հրատարակել միայն այնպիսի մի հիմնարկ, որ ստանում է տպագիր արտագրանքի պարտադիր օրինակ և ունի որակյալ մատենագետ-գրադարանագետ աշխատողներ։ Այդպիսի հիմնարկներ Հայաստանում երկուսն են՝ մեկը Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանը, մյուսը՝ գրապալատը։ Հենց սկզբից այդ պարտականությունը դրվեց գրապալատի վրա։

Գրապալատը քարտեր սկսել է թողարկել 1926 թվականից (ընդգրկելով նաև 1925 թվականին տպագրված գրականությունը)։ Ըստ որում, մինչև 1930 թվականը հատուկ քարտեր չէին տպագրվում։ Քարտեր պատրաստելու նպատակով հատուկ ձևով (միայն թղթի մի երեսին) տպագրվում էին «Տպագրության տարեգրի» էջերը։ Այնուհետև, առանձին գրքերի նկարագրությունները կտրվում էին էջերից և սոսնձով

փակցվում քարտերի վրա։ Այդպես կազմել են 1925—1929 (ներառյալ) թվականներին հրատարակված գրքերի քարտերը։

1930 թվականից գրապալատը սկսեց տարեգրերից անկախ կազմել քարտեր և առանձին տպագրել, դա շարունակվեց մինչև 1932-ի վերջերը։ Այնուհետև, քարտերի տպագրման գործը ըստ տարիների հետևյալ պատկերն է ունեցել. 1936-ին քարտեր տպագրվել են, 1937-ին չեն տպագրվել, 1938—1941 թվականներին հողարկվել են ապակետիպ քարտեր, 1942—1946 թվականներին չեն տպագրվել, 1947—1948 թվականներին՝ ապակետիպ, 1949—1950 թվականներին չեն տպագրվել։ 1951 թվականից մինչև այսօր գրապալատը իր քարտերը կանոնավոր կերպով կազմում և տպագրությամբ բազմացնում է։

Ներկայումս հայերեն գրքերի քարտերը հետևյալ տեսքն ունեն։ Քարտերի վրա եղած գրառումները հինգ մասից են բաղկացած. Ա.) Գրքի նկարագրությունը (հեղինակ, վերնագիր, հրատարակման տվյալներ և այլն), որը քարտի հիմնական մասն է և կատարվում է համաձայն վերն արդեն հիշատակված ոչ մեծ գրադարաններում տպագիր երկերի նկարագրության միասնական կանոնների (որոշ լրացումներով ու շեղումներով)։ Այդ միասնական կանոնները մշակվել են Վ. Ի. Լենինի անվան համամիութենական գրադարանի կողմից։ Բ) Քարտերի վրա եղած գրառումների երկրորդ փոքր հատվածը լինում է միայն այն դեպքում, երբ նկարագրված գիրքը մեկից ավելի հեղինակ է ունենում կամ նվիրված է լինում որևէ անձի։ Այսպիսի դեպքերում գրքի հիմնական նկարագրության տակ հատուկ թվանշանների մոտ բերվում են այն աղգանունները (հեղինակակիցների, կամ այն անձանց, ում նվիրված է գիրքը), որոնց տակ պետք է լրացուցիչ քարտեր դրվեն գրադարանի այբբենական գրացուցակում։ Գ) Քարտերի վրա եղած գրառումների երրորդ մասը գրքի ռուսերեն համառոտ նկարագրությունն է։ Դ) Չորրորդ մասը, որ գտնվում է քարտի ներքևի աջ անկյունում և հասարակ կոտորակի ձև ունի, գրքի դասակարգման նիշն է (ինդեքսը) ըստ մասսա-

յական գրադարաններում կիրառվող դասակարգման աղյուսակի, ինչպես և հեղինակային նիշը ըստ երկանիշ հեղինակային աղյուսակի։ ե) Նշումների վերջին խումբը տեղադրված է քարտի ներքևի ձախ անկյունում, բաղկացած է քարտի հերթական համարից (թե տվյալ տարում դա որերորդ քարտն է), գրապալատում գրքի ստացած գույքահամարից (գրվում է քառակուսի փակագծերում) և տարեգրի մեջ գրքի ստացած դասակարգման նիշից (ըստ տարեգրի դասակարգման աղյուսակի)։

Կատարո՞ւմ են արդյոք գրապալատի տպագիր քարտերը իրենց դերը։ Պետք է ասել, որ հիմնականում կատարում են։ Այսօր գյուղական, շրջանային, քաղաքային բազմաթիվ գրադարանների գրացուցակներում դասավորված են գրապալատի հաղարավոր տպագիր քարտեր, թեթևակի հայացք ձգելով անգամ կարելի է տեսնել, թե որքան են նրանք բարձրացնում գրացուցակների որակը, մանավանդ, եթե հաշվի առնենք գրադարանների մեծ մասի գրացուցակներում եղած ձեռագիր քարտերի ցածր որակը (սխալ նկարագրություններ, վատ ձեռագիր և այլն)։

Սակայն գրադարանների գրացուցակները նայելիս դժվար չէ նկատել նաև, որ երբեմն նոր հրատարակությունները ներկայացված են ոչ թե տպագիր, այլ ձեռագիր քարտերով։ Եվ ահա սա տպագիր քարտերի կիրառման խնդրում եղած կարևոր թերություններից մեկն է, որի մասին շատ է խոսվել և որը ոչ մի կերպ չի վերացվում։ Բանն այն է, որ տպագրական դժվարությունների պատճառով հաճախ տպագիր քարտերի լույս ընծայումը ուշանում է։ Գրքի պարտադիր օրինակի ստացումից մինչև նրա տպագիր քարտի լույս ընծայումը ամենաքիչը տևում է մեկ ամիս, երբեմն էլ ավելի։ Համեմատելով մեկ ամսից շուտ տպարանը ի վիճակի չի լինում քարտեր տպագրել։

Լինում է այնպես, որ նոր հրատարակված գիրքը գրադարան մուտք գործելուց բավական անց է գրադարան հասնում նրա տպագիր քարտը։ Գրադարանավարը պետք է ստացված

գրքերը առանց հապաղելու արտացոլի գրացուցակում, և նա ստիպված ինքն է ձեռքով քարտագրում գիրքը՝ չսպասելով ուշացող տպագիր քարտին։



Գրապալատի տպագիր քարտերը (1965 թ.)

Քարտերի այս ուշացումը վերացնելու մի ելք կա միայն՝ քարտեր տպագրող հատուկ հարմարանք ունենալը, որը օգտագործվի միայն գրապալատի քարտերի տպագրման համար։

Այնուհետև, նշելի է, որ Երևանի խոշոր, գիտական բնույթի գրադարանների գրացուցակներում գրապալատի տպագիր քարտերը քիչ են գործածվում։ Դուցե դեռևս գտնված չէ քարտերի կազմման մի այնպիսի ձև, որը գոհացներ ոչ միայն մասսայական, այլև գիտական գրադարաններին։

Տարբեր ժամանակներում գրապալատի քարտերը քննադատվել են նաև նկարագրության և դասակարգման հարցերում եղած այլևայլ թերություններների համար։ Այդ քննադա-

տությունները, ինչպես և քարտերի պարբերական գրախոսումը, որ կազմակերպում է գրապալատի ղեկավարությունը, մեծապես օգնում են աշխատակիցներին՝ բարելավելու քարտերի որակը։

Տպագիր քարտերի որակի մասին գրապալատում հատկապես լրջորեն սկսեցին մտածել 1958—1959 թվականներից, երբ Համամիութենական գրապալատի կողմից քննադատվեցին քարտերի մի շարք թերություններ։

Հատկապես վերջին տասնամյակում լուրջ աշխատանք տարվեց գրապալատի տպագիր քարտերի որակը բարձրացնելու համար, որ և տվեց իր արդյունքները։ Օրինակ, վերջին տարիների տպագիր քարտերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այն առավել կոպիտ սխալները, որոնք հաճախ էին տեղ գտնում նկարագրությունների և դասակարգման մեջ նախկինում, շատ դեպքերում հաղթահարվել են և քննադատության հիմնական առարկան աստիճանաբար սկսում են դառնալ ավելի երկրորդական բնույթի թերություններ։

Պատկերացում տալու համար մի քանի տարի առաջ գրապալատի քարտերում եղած թերությունների մասին՝ ստորև բերում ենք 1963 թվականին հրատարակված տպագիր քարտերի մեջ տեղ գտած հիմնական անճշտությունները և սխալները։

Նախ գրքերի նկարագրության մասին։ Մի շարք դեպքերում սխալ է կատարված ողջ նկարագրությունը։ Օրինակ. Մանուկ Աբեղյանի աշխատությունների մատենագիտությունը (№ 346 քարտ) նկարագրված է վերնագրի տակ, թեև հայտնի է, որ ըստ միասնական կանոնների մատենագիտության, բառարանի, ինչպես և առակների, առածների ժողովածուների և նման այլ տպագիր երկերի կազմողները հեղինակ են համարվում։ Հիշյալ մատենագիտությունը, որ պետք է նկարագրվեր կազմողի (հեղինակի) տակ, ոչ միայն սխալմամբ վերնագրային ձևով է նկարագրված, այլև կազմող (հեղինակ) Ռ. Բաբայանյանը լիովին անտեսված է, նույնիսկ լրացուցիչ քարտ չի նախատեսված այդ ազգանվան տակ։ Ուստի և գրադարանի գրացուցակում այդ հեղինակը բնավ տեղ չի ունենա։ Նման

կարգի սխալ է թույլ տրված նաև ՀՍԽՀ ԳԱ հրատարակությունների մատենագիտության նկարագրության մեջ (քարտ 389)։ Այստեղ էլ կազմողի ազգանվան փոխարեն նկարագրության խորագիր է ընտրված կոլեկտիվ հեղինակը (ՀՍՍՌ ԳԱ), որ նույնպես սխալ է (թեև այստեղ բարեբախտաբար կազմողի տակ լրացուցիչ քարտ նախատեսված է)։

Բազմաթիվ են նկարագրությունների խորագրերը (հեղինակ) ձևակերպելու հետ կապված անճշտությունները։ Օրինակ, ոչ մի կարգ չկա հեղինակների անունները (և հայրանունները) գրելու հարցում։ Մերթ անունները գրվում են լրիվ, ինչպես Զոլա Էմիլ (ք. 366), Խաչատրյան Պատվական (ք. 347), Հովակիմյան Աբտավազդ (ք. 376), Սարոյան Արշալույս (ք. 500), Բևռնա Պոլ (ք. 399), Հովհաննիսյան Սիկար (ք. 490), Չապեկ Կարել (ք. 260), Դորկի Մաքսիմ (ք. 279) և այլն։ Մերթ էլ միայն անունների սկզբնատառերն են տրված, ինչպես Իսակով Ի. (ք. 433), Լենին Վ. Ի. (ք. 371), Դիդրո Դ. (ք. 229), Աթայան Ռ. (ք. 302), Տոլստոյ Լ. Ն. և այլն։

Վերջապես մերթ անուն հայրանունն է նշվում, մերթ միայն անունը, ըստ որում թե՛ անունը, թե՛ հայրանունը կրճատելու հարցում էլ որևէ միակերպություն չկա։

Քարտերում սխալ են օգտագործված ուղիղ (քառակուսի) փակագծերը։ Ըստ միասնական կանոնների այդ փակագծերը ներկայումս օգտագործվում են միայն այն դեպքում, երբ քարտում գրանցվող տեղեկանքը տրվում է նկարագրողի (այս դեպքում՝ գրապալատի աշխատակցի) կողմից և չկա գրքում։ Այս կանոնը անտեսելու հետևանքով բազմաթիվ անհարկի ուղիղ փակագծեր են դրված։ Նրանցում տրվում են, օրինակ, թարգմանիչը (ք. 294, 537 և այլուր), նկարիչը (ք. 338, 445 և այլուր), նույնիսկ՝ կազմողը (ք. 417), որոնց մասին եղած տեղեկանքները նկարագրողը, հասկանալի է, որ վերցրել է գրքից։

Մինչդեռ ուր իրոք պետք են ուղիղ փակագծերի մեջ նկարագրողի կողմից տրվելիք տեղեկանքներ, այդպիսիք չեն տրվում։ Օրինակ, ընթերցողին ոչինչ չասող այնպիսի վերնագրե-

րի համար, ինչպես «Անդունդի կանչը» (ք. 461), «Սուսերամարտ» (ք. 306), «Անձրև» (ք. 481) և այլն, ըստ կանոնի պետք է տրվեն մատենագետի մեկնիչ ենթավերնագրերը (ընթերցողին պատկերացում տալու համար, թե խոսքն ինչի մասին է), որպիսիք, սակայն, որպես կանոն չեն տրված քարտերում։

Հայերեն գրքերի նկարագրությունների տակ տրվում են նաև ռուսերեն համառոտ նկարագրությունները, մինչդեռ ռուսերեն գրքերի նկարագրությունը տրվում է միայն ռուսերեն, որ ճիշտ չէ, պետք է տալ ռուսերեն գրքերի նաև հայերեն համառոտ նկարագրությունը։

Շատ են անճշտությունները հեղինակային նշաններում։ Այստեղ էլ ամենալուրջ սխալը, որի դեմ միշտ բողոքում են գրադարանավարները, և որը ուղղակի հակառակ է գրադարանային տեխնիկային նվիրված բոլոր ձեռնարկների ցուցումին, այն է, որ որևէ անձին նվիրված գրքի հեղինակային նիշը, փոխանակ այդ անձի ազգանունից որոշվի, որոշվում է գրքի հեղինակի ազգանունից։ Դրա հետևանքով միևնույն անձին նվիրված գրքերը հնարավոր չի լինում դարակում դնել իրար մոտ։ Օրինակ, Սայաթ-Նովային նվիրված մի շարք գրքեր ամենատարբեր հեղինակային նիշերն են ստացել, ինչպես՝ Մ99 (ք. 258), Ք82 (ք. 419), Թ95 (ք. 432) և այլն։ Շիրվանզադեին նվիրված գիրքը ստացել է Թ83 (ք. 457), Փավստոսին նվիրվածը՝ Մ47 (ք. 441), Ա. Աբովյանին նվիրվածը՝ Մ99 (ք. 322), Է. Միրզոյանին նվիրվածը՝ Ա82 և այլն։ Այս պատճառով դրադարանում հիշյալ հեղինակներին նվիրված գրքերը չեն հավաքվի իրար մոտ, այլ կցրվեն տարբեր դարակներում։

Գրադարանային, մատենագիտական անվանումները երբեմն հայերեն չեն տրվում, օրինակ, պուտտրե (փոխանակ՝ դիմանկար), իլյուստրացիա (փոխանակ՝ նկար) և այլն։ Կետադրական սխալներից աչքի է ընկնում այն, որ նախադասությունը թվանշանով ավարտվելու դեպքում դրվում է ոչ թե

վերջակետ, այլ մի կետ, որ ճիշտ չէ հայերենի կետադրության կանոնների տեսակետից։

Ներկայումս, թվարկված գրեթե բոլոր այս թերությունները հաղթահարված են։ Այսպես. հայ հեղինակների գրքերի նկարագրության խորագրերում տրվում են հեղինակի ազգանունը և անունը (լրիվ)։ Այս կերպ են ձևավորվում նաև բոլոր այն նկարագրությունների խորագրերը, երբ գրքի հեղինակը, ըստ իր ազգային պատկանելիության, հայրանուն չի գործածում (օր.՝ Լոնդոն Ջեկ, Տվեն Մարկ, Ֆլոբեր Գուստավ և այլն)։ Ռուս, ուկրաինացի և բելոռուս հեղինակների գրքերի նկարագրություններում տրվում են հեղինակի ազգանունը, անունը և հայրանունը (լրիվ)։

Այնուհետև, ճշտվել են հեղինակային և վերնագրային նկարագրությունները միմյանցից տարբերելու հարցերը։ Ռուսերեն գրքերի նկարագրությունների տակ այժմ տրվում է հայերեն համառոտ նկարագրությունը։ Հայերեն բոլոր նկարագրություններում հիմնականում պահպանվում են հայոց լեզվի բառօգտագործման, ուղղագրական և կետադրական կանոնները։ Ճիշտ են դրվում կենսագրական գրքերի հեղինակային նշանները (կենսագրվողի ազգանվան տակ)։

Այժմ ակնհայտորեն գրապալատի քարտերը բարձրորակ են դարձել։ Կարելի է վստահորեն ասել, որ ներկայումս Հայաստանի գրապալատի կողմից հրատարակվող տպագիր քարտերը լավագույններից են միութենական հանրապետություններում հրատարակվող քարտերի մեջ։

***

Գրապալատը փաստորեն սկսեց աշխատել իբրև Հանրային գրադարանի մի բաժին, երկու-երեք աշխատակցով։ Պետք է ասել, որ գրապալատի տարեգրերի կազմման, ձևավորման, նյութերի նկարագրության կանոնների ճշտման և դասակարգման գործում նպաստ են բերել Հանրային գրադարանի մաս-

նագետները, այդ թվում գրադարանի հին աշխատող, դիրեկտորի գիտական գծով նախկին տեղակալ Ա. Հովվյանը։

1937 թվականի սեպտեմբերին գրապալատը Հանրային գրադարանից անջատվեց իբրև ինքնուրույն հիմնարկ։ Այդ ժամանակ էլ գրապալատի դիրեկտոր նշանակվեց Հովհաննես Պետրոսյանը։

1941—1942 թվականներին որոշ ժամանակ գրապալատի դիրեկտոր է աշխատում Վահան Հովսեփյանը (Պետրոսյանի բանակ մեկնելու կապակցությամբ), իսկ 1942-ի օգոստոսից գրապալատը նորից միացվում է Հանրային գրադարանին։ Գրապալատը վեր է ածվում Հանրային գրադարանի պետական մատենագիտության (բիբլիոգրաֆիայի) բաժնի, որպես վարիչ նախ աշխատում է գրապալատի դիրեկտորի նախկին տեղակալ Վաչե Կարմենյանը, ապա՝ Եվգինե Սարգսյանը։

1947 թվականին գրապալատը դարձյալ անջատվում է գրադարանից և նորից դիրեկտորի պարտականությունը ստանձնում է Հ. Պետրոսյանը։

Ներկայումս գրապալատն ունի 14 աշխատակից, այդ թվում գրապալատի հնագույն աշխատող (1931-ից) Հայկանուշ Սարգսյանը, որ ներկայումս գրապալատի գրքային ունեցվածքի (հավաքված պարտադիր օրինակների) վարիչն է։

Տարեգրերի կազմմանը հսկում է Մարատ Սահինյանը, «Գրքի տարեգրի» համար գրքերը նկարագրում է Հրանուշ Հովհաննիսյանը, «Լրագրային հոդվածների տարեգրի» նյութերը մշակում է Ջննի Թագվորյանը, «Ժուռնալային հոդվածների տարեգրի» նյութերը մշակում է Արփիկ Հարությունյանը։ Այս վերջին երկու տարեգրերը խմբագրում է Գրետա Մինրիջանյանը։

Տպագիր քարտերի կազմման վրա աշխատում է Հեղինե Բաղդասարյանը։

Գրքի և մամուլի վիճակագրությամբ զբաղվում է Գրետա Գրիգորյանը, որը միաժամանակ վարում է ռուսերեն քարտային գրացուցակները (այբբենական և սիստեմատիկ)։

Գրապալատն այժմ ունի Հայաստանում 45 տարվա ըն-

Բացքում հրատարակված գրքերի քարտային գրացուցակներ։ Դրանց մեջ մեծ մասամբ օգտագործված են իր՝ գրապալատի հրատարակած տպագիր քարտերը։ Այն տարիների գրքերը, որոնց համար տպագիր քարտեր չեն տպագրվել, գրացուցակում արտացոլված են ձեռագիր նկարագրություններով։

Բացի վերը հիշված ռուսերեն գրացուցակներից, գրապալատն այժմ ունի հայերեն գրքերի երեք գրացուցակներ, որոնք ամենախոշորն են։ Դրանք են՝ այբբենական, սիստեմատիկ և գույքահամարային (վերջինը՝ գրապալատի գրքային ունեցվածքի գույքահամարային դասավորությանը համապատասխանող)։ Այնուհետև կան նաև գրաքննադատական հոդվածների, երաժշտական նյութերի և կերպարվեստի նյութերի քարտային գրացուցակներ։



Հայաստանի պետական գրապալատ, 1966 թ.

Բացի այդ, գրապալատը Միության բոլոր գրապալատներից ստանում է տարբեր լեզուներով հրատարակված հայագիտական (Հայաստանին և հայ ժողովրդին վերաբերող) նյութերի քարտերը և կազմում քարտարան։

Այս գրացուցակներն ու քարտարանը ղեկավարում ու լրացնում է Խաչիկ Մաթևոսյանը, որը խմբագրում է նաև «Գրքի տարեգիրը»։

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՅԱՆԿԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ

Երբ հիմնադրվեց գրապալատը, այն դիտվում էր իբրև ոչ միայն արձանագրական, այլև ամեն տեսակ ազգային մատենագիտության կենտրոնը Հայաստանում։ Եվ իրոք, գրապալատը երկար ժամանակ միակ մատենագիտական հիմնարկն էր հանրապետությունում։ Սակայն իր գոյության առաջին տարիներին գրապալատի աշխատանքը խստորեն սահմանափակվում էր «Տպագրության տարեգրի» համարները կազմելով ու հրատարակելով։ Եվ միայն տարեգիրն էր, ըստ էության, հանրապետությունում հրապարակվող մատենագիտական լուրջ արտադրանքը մինչև 30-ական թվականները, մինչև Գ. Լևոնյանի աշխատության լույս տեսնելը։

1933 թվականի հունվարին Ա. Բաբայանը գրապալատի աշխատանքի հարցերին նվիրված իր հոդվածում գրում էր. «Մեզ մոտ Հայաստանում բիբլիոգրաֆիան այն բնագավառներից է, որի վրա շատ քիչ ուշադրություն է դարձվում։ Անուշադրության է մատնված այն թե՛ համապատասխան մարմինների և՛ թե մամուլի կողմից»[1]։ Այս դիտողությունն, անշուշտ, արվում էր Հայաստանում կատարվող մատենագիտական աշխատանքը Մոսկվայում և Լենինգրադում ծավալված այդ կարգի աշխատանքների հետ համեմատելուց հետո։

Այնուհետև, հոդվածի հեղինակը իբրև լուրջ թերություն էր նշում այն, որ գրապալատը մինչ այդ սահմանափակվել էր միայն պետական արձանագրական մատենագիտության աշ-

1 «Գրական թերթ», 1933, № 2։

խատանքով, թեև այդ գծով էլ ամեն ինչ չէ, որ արվել էր։ Այսպես. մինչև 1925 թվականը Հայաստանում լույս տեսած և մինչև 1930 թվականը հանդեսներում տպագրված հոդվածները մնում էին չարձանագրված, գրապալատի արձանագրական մատենագիտության մեջ չէր ընդգրկվում Խորհրդային Միության այլ վայրերում հայերեն լույս տեսնող տպագիր արտադրանքը։

Ապա հոդվածում նշվում էր, որ գրապալատի աշխատանքը չպետք է սահմանափակվի ընթացիկ գրականության մատենագիտական արձանագրմամբ։ Գրապալատի առջև դրված առաջնահերթ խնդիրներն էին համարվում. ա) գիտական (դիտաժողովածու) հյուղային մատենագիտության հրատարակումը՝ գիտնականներին տեղեկացնելու համար իրենց մասնագիտությանը վերաբերող գրականության մասին, բ) հայ տպագիր գրքի լրիվ մատենագիտության կազմումը, գ) հայ պարբերական մամուլի հոդվածների մատենագիտության կազմումը։

Հոդվածում խոսվում էր նաև հանձնարարական մատենագիտությունը զարգացնելու մասին։ «Այս 12 տարվա ընթացքում մեզ մոտ հանձնարարական բիբլիոգրաֆիայի գծով համարյա ոչինչ չի արված», գրում էր հոդվածագիրը։ Հոդվածում այս բնագավառում եղած թերությունների գլխավոր պատճառներից էր համարվում գրադարանային մասնագետ կադրերի բացակայությունը։

Ա. Բաբայանի հոդվածը հետաքրքրական է՝ այն օրերին հանրապետությունում մատենագիտության վիճակը պատկերացնելու, ինչպես և դրանից հետո արվածը գնահատելու տեսակետից։ Կյանքը ցույց տվեց, որ ինչպես գիտաժողովածուի, այնպես էլ հանձնարարական մատենագիտության կազմումը գրապալատի վրա դնելը ճիշտ չի եղել, որ այդ աշխատանքը պահանջում է գրքային ավելի մեծ և հարուստ հավաքածուներ, այսինքն՝ մատենագիտական աշխատանքի ավելի լայն հիմք, ինչպես և գրադարանային քարտարանների և գրացուցակների լուրջ համակարգ, որպիսիք կարող են լինել միայն խոշոր գրադարաններում, բայց ոչ երբեք գրապալա-

տում։ Բացի այդ, պետական արձանագրական մատենագիտության մեջ մասնագիտանալը, այդ աշխատանքի վրա կենտրոնանալը գրապալատին ազատ հնարավորություն չէր կարող տալ զբաղվելու մատենագիտության այլ տեսակներով, մանավանդ՝ հանձնարարական մատենագիտությամբ։

Այդ է պատճառը, որ հանձնարարական և գիտաժանրակ մատենագիտության կազմումը սկսեց ավելի ու ավելի կենտրոնանալ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական և Գիտությունների ակադեմիայի կենտրոնական գրադարաններում։

Նույնը պետք է ասել նաև հայ տպագիր գրքի մատենագիտության մասին, որը պետք է ընդգրկեր նաև նախախորհրդային շրջանի, ինչպես և ԽՍՀՄ այլ վայրերում հրատարակված և սիյուռքահայ գիրքը. գրապալատը իր գրքային ունեցվածքով (միայն Հայաստանի մեջ խորհրդային շրջանում տպագրված գրականությունը) այդ գործն ինքնուրույն անել չէր կարող[1]։

Հայ պարբերական մամուլի հոդվածների ընդհանուր մատենագիտությունը նույնպես գրապալատը ինքնուրույն գլուխ բերել չէր կարող, քանի որ դրա համար էլ չուներ համապատասխան հիմք։

Սակայն գրապալատը, այնուամենայնիվ, ձեռնարկեց հիշյալ խնդիրների կատարմանը։

Նախ փորձեր արվեցին հանձնարարական մատենագիտության զարգացման ուղղությամբ, դրա առաջին նմուշներից էր 1935 թվականին հրատարակված «Ինչ կարդալ նոյեմբերյան հեղափոխության մասին» և 1937-ին հրատարակած «Պրոլետարիատի մեծ արվեստագետ Մաքսիմ Գորկին» հանձնարարական գրականության ցանկերը։ Այնուհետև, 1940 թվականին լույս տեսավ «Համկ(բ)կ պատմության համառոտ դասընթացը» ուսումնասիրողներին օգնող հիմնական սկզբնաղ-

---

1. Վրաստանի գրապալատն էր միայն, որ Միության մեջ կարողացավ կազմել վրաց գրքի ընդհանուր մատենագիտությունը։

բյուրների գրականության ցանկը» (կազմողներ՝ Հ. Պետրոսյան և Վ. Կարմենյան)։

Սակայն այս ոչ մեծ հրատարակություններով էլ ավարտվեցին գրապալատի փորձերը հանձնարարական մատենագիտության ուղղությամբ։

Ավելի լուրջ էին գիտաժողովակ և պարբերական մամուլի հոդվածների մատենագիտություն կազմելու ուղղությամբ արված ջանքերը։ Դրանք նկատելի դարձան 1937 թվականից հետո, երբ գրապալատում իբրև դիրեկտոր սկսեց աշխատել Հովհաննես Պետրոսյանը, որի ջանասիրությունը մեծ եղավ մատենագիտական մի շարք աշխատություններ կազմելու և հրատարակելու գործում։

Հովհաննես Մնացականի Պետրոսյանը ծնվել է Երևանում 1892 թվականին, արհեստավորի ընտանիքում։ Ավարտել է Երևանի թեմական դպրոցը։ 1910—1919 թվականներին ուսուցչություն է արել Հայաստանի դպրոցներում։ 1920 թվականին Ալեքսանդրապոլում մասնակցել է Մայիսյան ապըստամբությանը։ Հայաստանի խորհրդայնացումից հետո վարել է կուսակցական և վարչական պաշտոններ։ 1937 թվականին նշանակվել է գրապալատի դիրեկտոր, այդ պաշտոնում էլ մահացել է 1961 թվականին (ապրիլի 10-ին)։

Գրապալատում աշխատելու չորրորդ տարին՝ 1941 թվականին Պետրոսյանը հրատարակում է իր «Հայ հին և միջնադարյան գրականության բիբլիոգրաֆիան»։ Նույն թվականին տպագրվում է Հ. Պետրոսյանի և գրապալատի երկու այլ աշխատողների՝ Վ. Կարմենյանի և Շ. Հովակիմյանի կազմած «Հայկական սովետական գրականություն» վերնագրով գրականության ցանկի առաջին պրակը (112 էջ), որը նվիրված էր արձակագիրներ՝ Դեմիրճյանի, Արապու, Զորյանի և այլոց մատենագիտությանը։ Ավելի ուշ՝ 1949 թվականին գրապալատը հրատարակեց Հ. Պետրոսյանի կազմած «Սովետահայ գեղարվեստական գրականության բիբլիոգրաֆիան» (771 էջ), որի մեջ ընդգրկվեցին նաև վերոհիշյալ առաջին պրակի նյութերը։

Պետրոսյանի սկսած այս մատենագիտական աշխատանքը ամբողջական դարձավ 1953 թվականին, երբ լույս տեսավ նրա «Հայ գրականության բիբլիոգրաֆիան», որը ընդգրկում էր հայ նոր գրականությունը (1900—1920):

Այդպիսով, գրապալատը հասարակայնությանը հանձնեց հայ գեղարվեստական գրականությունը սկզբից մինչև 1940-ական թվականների վերջը ներկայացնող մի ստվարածավալ մատենագիտություն:

Թեև աշխատության երեք գրքերը երեք տարբեր վերնագրեր ունեն և հրատարակված են ոչ հաջորդաբար, բայց նրանք, ըստ էության, միևնույն աշխատության՝ հայ գեղարվեստական և գրականագիտական գրականության մատենագիտության երեք տարբեր հատորներն են, այսպես.

Հատոր 1. Հայ հին և միջնադարյան գրականության բիբլիոգրաֆիա (V—XIX դար): Եր., 1941. 251 էջ:

Հատոր 2. Հայ գրականության բիբլիոգրաֆիա: (XIX դարից մինչև Հայաստանում Սովետական կարգերի հաստատումը): Եր., 1953. 401 էջ:

Հատոր 3. Սովետահայ գեղարվեստական գրականության բիբլիոգրաֆիա: Եր., 1949.

Տեսնենք, թե ինչ կառուցվածք և ընդգրկում, ինչպես նաև ինչ արժանիքներ ու թերություններ ունի այս ծավալուն մատենագիտության հատորներից յուրաքանչյուրը:

Երեք հատորներն էլ բաղկացած են առանձին գրողների, քննադատների և գրականագետների նվիրված բաժիններից, սակայն այդ բաժինները երկու տարբեր ձևով են դասավորված:

Նախ վերցնենք «Հայ հին և միջնադարյան գրականության բիբլիոգրաֆիան»: Այստեղ ընդգրկված է 121 հեղինակ: Սրանց նվիրված բաժինները դասավորված են ժամանակագրական կարգով:

Մատենագիտությունն սկսվում է Մեսրոպ Մաշտոցին նվիրված բաժնով (ուր, սակայն, միայն նշված է գրականություն Մաշտոցի մասին) և վերջանում է Հարություն Ալամդարյանով:

Ամեն մի հեղինակին նվիրված բաժինը հետևյալ կառուցվածքն ունի։

Սկզբում տրվում է կարճ տեղեկանք տվյալ հեղինակի մասին (կազմողի խոսքով՝ անոտացիա)՝ կենսագրական տվյալներ, կարծիքներ կյանքի ու գործի վերաբերյալ և այլն։ Ապա Տպագրվել են վերնագրի տակ տրվում է տվյալ հեղինակի երկերի հրատարակությունների ցանկը, ըստ որում այստեղ հայերենից բացի տրվում են նաև ռուսերեն հրատարակությունները, իսկ եվրոպական և այլ լեզուներով հրատարակված երկերը սովորաբար չեն տրվում։ Հաջորդ մասը կոչվում է Ուսումնասիրություններ, այս վերնագրի տակ տրվում է գրականություն տվյալ հեղինակի ու նրա երկերի մասին։

Երբեմն այս կառուցվածքը խախտվում է՝ կա՛մ ավելի կրճատվում (չեն լինում վերնագրերից մեկը կամ մյուսը), կա՛մ էլ ավելի ընդարձակվում (նոր մասեր են ավելանում), օրինակ, Մովսես Խորենացուն նվիրված բաժնում կա ութ մաս, ութ վերնագիր։

Այսպես, թե այնպես, Հ. Պետրոսյանի այս աշխատությունը հայ մատենագիրների (մինչև 1800 թ.) մատենագիտություն է։

Այդ բնույթի մատենագիտական ցանկեր հայոց մեջ եղել են ամենահին ժամանակներից, հիշենք, որ հատկապես 10-րդ դարից սկսած հայ մատենագիրները (Հովհաննես Դրասխանակերտցին, Ստեփանոս Ասողիկը, Մխիթար Անեցին, Կիրակոս Գանձակեցին և ուրիշն.) սովորաբար իրենց երկերում ներկայացնում էին նախորդ պատմիչներին։ Կարելի է հիշել նաև Հովհաննես Սարկավագի մատենագիտությունը կամ Վարդան Բաղիշեցու և Ղազար Ջահկեցու ցանկերը, որոնց մասին արդեն խոսվել է (Ա. պրակ)։ 19-րդ դարում այդ կարգի մատենագիտական ցանկերի կազմումը ավելի գիտական բնույթ ստացավ. հիշենք Գ. Զարբհանալյանի «Պատկեր հայ դպրության», Ալիշանի ցուցակը և այլն։

Եվ ահա երկար ընդմիջումից հետո երևան եկավ Հ. Պետրոսյանի կազմած այս մատենագիտությունը։

Պետրոսյանը թեև իր աշխատությունը հրապարակեց իբրև

հայ գեղարվեստական գրականության մատենագիտություն, բայց այն հեշտությամբ կարող է դիտվել իբրև հայ հին մատենագրության (ընդհանուր) նվիրված մատենագիտություն, քանի որ հեղինակների զգալի մասը գեղարվեստական գրականության ասպարեզից չեն, այլ, օրինակ, պատմիչներ են,



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

բժիշկներ և այլն։ Պետրոսյանն, իհարկե, ճիշտ է վարվել Կորյունին, Խորենացուն, Փավստոսին, Փարպեցուն, Դրասխանակերտցուն և շատ ուրիշ հայ պատմիչների ընդգրկելով իր մատենագիտության մեջ, քանի որ հայ հին գեղարվեստական գրականությունը պատմագրությանը միաձույլ է եղել, բայց հենց դրանով էլ այս մատենագիտությունը դարձել է ոչ միայն գեղարվեստական, այլ ընդհանրապես հայ հին գրականության մատենագիտություն։

Հայ հին գրականության մասին տեղեկանքներ տվող, անցյալում կազմված մատենագիտական աշխատությունները 40-ական թվականներին հազվագյուտ երևույթ էին. Խորհրդային Հայաստանի բազմաթիվ գրադարաններում, գիտական հիմնարկներում այդ կարգի ոչ մի տեղեկատու մեծ մասամբ չկար։ Հասկանալի է, թե որքան կարևոր էր հայ հին և միջնադարյան գրականությունը ներկայացնող մի մատենագիտության ստեղծումը։ Սրանով էլ շատ գրական երևույթ էր Հ. Պետրոսյանի մատենագիտության հրատարակումը։

«Կալմոդից» վերնագրված առաջաբանում Պետրոսյանը խոսում է մատենագիտությունը ստեղծելու հանգամանքների մասին, ասում, որ նյութերի մի մասը նկարագրված է առանց տեսնելու, տարբեր աղբյուրների տվյալներով և այլն։ Ապա գնահատում է Ա. Ղազիկյանի և Գ. Զարբհանալյանի մատենագիտությունները։ «Առաջինը,— գրում է նա Ղազիկյանի գործի մասին,— մնացել է անավարտ (Ա.—Մ տառն է մշակվել), անսիստեմ է, աշխարհիկ գրականությամբ աղքատ, նշումների մեջ շատ սխալներ կան։ Զարբհանալյանի «Մատենագիտությունը» հնացել է, ավելի շուտ աղքատ է աշխարհիկ և նորագույն գրականությամբ, նկարագրություններում նույնպես շատ սխալներ կան»։ Հայ դասական մատենագետների, մանավանդ Ա. Ղազիկյանի հրաշալի աշխատանքը այսպես խիստ գնահատողը, թվում է, թե պետք է լավ մշակված մատենագիտության նմուշ ներկայացներ։ Այդպե՞ս է արդյոք, չկա՞ն լուրջ թերություններ Պետրոսյանի այս աշխատության մեջ։ Ցավոք, նրանք բավական շատ են այնտեղ և երբեմն՝ բա-

վականին լուրջ։ Տեսնենք, որոնք են այդ թերություններից պլխավորները [1]։

Առաջինը հեղինակների պակասն է։ Նախ, եթե հայ հին պատմագրությունն ընդգրկվել է ցանկում, ապա այն հնարավորին չափ լրիվ պետք է ընդգրկված լիներ, մինչդեռ դուրս են մնացել բավական շատ հեղինակներ, այդ թվում նշանավորները, ինչպես, ասենք, Մխիթար Այրիվանեցին և Հովհաննես Կոզեռնը։ Այնուհետև, քանի որ մատենագիտությունը ըստ իր անվան նախ գեղարվեստական գրականությունը պետք է ներկայացներ, չէր կարելի այնտեղ լրիվ չընդգրկել հայ հոգևոր բանաստեղծությունը։ Այնինչ, օրինակ, շարականների կամ հոգևոր գանձերի մասին հիշատակություն չկա գրքում։ Բոլորովին տեղ չեն գտել շարականների և գանձերի այնպիսի հայտնի հեղինակներ, ինչպես Սահակ Պարթևն է, Ստեփանոս Սյունեցին, Կոմիտաս Արագածաոտնեցին, Հակոբ Սսեցին և այլոք։ Մեսրոպ Մաշտոցին նվիրված հատվածում չեն նշվել նրա հեղինակած շարականները։

Հեղինակների կյանքին ու գործին նվիրված հատվածներում մի շարք լուրջ սխալներ կան։ Երբեմն Պետրոսյանը որպես միակ ճշմարտություն ընթերցողին հրամցնում է բանասիրության մեջ ավյալ հեղինակի կամ նրա որևէ գործի մասին եղած այս կամ այն կարծիքը, որոշ դեպքերում էլ՝ ամենաքիչ հավանականը։

Անուհետև, առանձին հեղինակներին նվիրված բաժիններում «Տպագրվել են» ենթավերնագրի տակ շատ դեպքերում չեն տրվում ավյալ մատենագրի երկերի բոլոր տպագրությունները, իսկ որոշ դեպքերում բնավ չի տրվում նման վերնա-

---

1 Ինչպես Պետրոսյանի մատենագիտական ցանկերի, այնպես էլ այլ մատենագիտությունների մեջ եղած թերությունները նշելիս օգտագործել ենք նախ մեր քննությունները, ինչպես և մեր հրապարակած գրախոսականներում արված դիտողությունները։ Հաշվի են առնված նաև տարբեր հեղինակների գրախոսականներում արված որոշ դիտողություններ։ Օգտագործված գրախոսությունները նշված են տողատակի ծանոթություններում, ինչպես նաև պրակի վերջում տրված գրականության ցանկի մեջ։

գիր։ Օրինակ, Եղնիկին նվիրված բաժնում չկա «Եղջ աղանդոց»-ի հայտնի առաջին (1763 թ., Ջմյուռնիա) հրատարակությունը։

Մատենագիտության մեջ յուրաքանչյուր հեղինակին հատկացված բաժնում, ինչպես ասվեց, նշված են այդ հեղինակի կյանքին ու գործին նվիրված ուսումնասիրությունները։ Այստեղ ևս շատ լուրջ բացթողումներ կան, չեն նշված Եղնիկի, Խորենացու, Եղիշեի, Դավիթ Անհաղթի, Շիրակացու, Շնորհալու և շատ ուրիշների մասին եղած բազմաթիվ ուսումնասիրություններ, այդ թվում նշանավոր հայագետների՝ Մակլերի, Լանգլուայի, Դյուլորիեի, Կարիերի, Կոնիբերի, Բրոսսեի և այլոց մի շարք աշխատությունները։ Հատկապես դուրս են մնացել պարբերական մամուլում լույս տեսած բազմաթիվ արժեքավոր նյութեր։

Մամուլում Պետրոսյանի այս աշխատությունը գրախոսվեց[1]. նշվեցին բազմաթիվ թերություններ, այդ թվում խոսվեց հեղինակային և տպագրական վրիպակների ու սխալների որակ կազմող առատության մասին։

Գրախոսություններից մեկի մեջ (Ա. Մխիթարյանի) բերված են մի շարք այդպիսի արտառոց վրիպակներ։ Օրինակ, ըստ Պետրոսյանի մատենագիտության ստացվում է, որ Հովնաթան Նաղաշի որդի Հակոբը ծնվել է Հոր մահից յոթ տարի անց, որ Վարդան Մեծը ծնվել է 1238 թվին և հինգ տարեկան հասակում (1243 թ.) մասնակցել է Սսի ժողովին և այլն։

Ավելացնենք նաև, որ մատենագիտությունը բացի բովանդակությունից ուրիշ որևէ տեղեկատու-օժանդակ ցանկ չունի, որ շատ լուրջ բաց է այս բնույթի մի աշխատության համար։

Երկրորդ հատորի՝ «Հայ գրականության բիբլիոգրաֆիայի» մեջ 19-րդ դարի և 20-րդի սկզբի հայ հեղինակներին նվիրված բաժինները դասավորված են այլ կերպ՝ այբբենա-

---

1 «Սովետ. գիրք», 1942, № 2 (Ա. Կարինյանի գրախոսութ.), «Սովետ. գրականություն», 1942, № 1 (Ա. Մխիթարյանի գրախոսութ.)։

կան կարգով (հեղինակների ազգանունների այբբենով)։ Հավելվածում տրված են «Հայ ժողովրդական էպոս», «Սրվանձտյան Գարեգին» հատվածները, այնուհետև, հայ գրականությանը նվիրված ընդհանուր աշխատությունների ցանկը, ինչպես նաև հայ բանահյուսության, աշուղների և հրապարակախոսների (Ա. Աբրահամյան, Գ. Արծրունի, Ս. Նազարյան, Հ. Սվաճյան) մատենագիտությունը։

Մատենագիտությունն ունի այբբենական անվանացանկ և հիշատակված պարբերականների ցանկ։

Յուրաքանչյուր հեղինակին նվիրված ամեն մի բաժին հիմնականում երկու մասից է բաղկացած՝ ա) հեղինակի ստեղծագործությունները և բ) գրականություն նրա մասին։

Հեղինակի ստեղծագործությունների ցանկն էլ երկու հիմնական մասի է բաժանվում՝ երկերը, առանձին գրքերով հրատարակված և հրապարակումներ պարբերական մամուլում։ Առանձին վերնագրերի տակ տրվում են հեղինակի կատարած թարգմանությունները և հեղինակի երկերի թարգմանությունները։

Մատենագիտության մեջ (չհաշված հավելվածը) ընդգրկված է 56 հեղինակ։ Բացի գրողներից և գրաքննադատներից, այստեղ ներկայացված են նաև Ս. Շահումյանի և Ս. Սպանդարյանի ավելի քան 600 հասարակական-քաղաքական բնույթի հոդվածները, լեռն իր գեղարվեստական, գրականագիտական երկերով և պատմագիտական աշխատությունների մի մասով (ընտրությունը անկանոն է)։

Մատենագիտության լույս ընծայումը անկասկած, դրական երևույթ էր, մանավանդ, եթե հաշվի առնենք, որ հայ գրականության ամենաբեղմնավոր շրջանը՝ 19-րդ դարը և 20-րդի առաջին երկու տասնամյակը ընդգրկող ոչ մի մատենագիտական աշխատություն հրապարակի վրա չկար (այժմ էլ չկա)։

Առաջաբանում կազմողը խոսում է իր աշխատանքի դժվարությունների մասին։ Չի կարելի չհամաձայնվել հեղինակի այն մտքին, որ թեև ռուս գրականությունը ծավալով հայկա-



Հ. Պետրոսյանի «Հայ գրականության բիբլիոգրաֆիայի» առաջին հատորը

Դանից շատ մեծ է, բայց մի շարք պատճառներով ավելի դժվար է հայ գրականության մատենագիտություն կազմելը։

Ցավոք, այստեղ էլ մխիթարյան մատենագետները կշտամբանքի բաժին են ստանում. «Մխիթարյանների կազմած բիբլիոգրաֆիանները,— գրում է Հ. Պետրոսյանը,— արատավոր են իրենց մեթոդոլոգիական սկզբունքներով, շատ աղքատիկ պատկերացում են տալիս մեր աշխարհիկ գրականության մասին...» և այլն։ Հասկանալի է, որ Զարբհանալյանի և Ա. Դաղիկյանի մատենագիտական աշխատություններին ծանոթ ամեն մեկը գիտի, որ այդ ցանկերում թվարկված են այն բոլոր գրքերը, ինչ կազմողները կարողացել են ընդգրկել, աշխարհիկ գրականության մեկ նմուշ անգամ, որ ծանոթ է եղել նրանց, դուրս չի մնացել ցանկերից, այլ խոսքով ասած, որևէ խտրականություն աշխարհիկ գրականության նկատմամբ չի եղել։

Առաջաբանին հաջորդում է ներածությունը, որը, ըստ էության, մի ինքնուրույն հոդված է «Հայ գրականության պատմության ուսումնասիրության մասին» վերնագրով։

Պակասները նույնպես ավելի քան շատ են այստեղ։ Նախ՝ մի շարք արևելահայ և արևմտահայ հեղինակներ (այդ թվում շատ նշանավոր) բոլորովին տեղ չեն գտել մատենագիտության մեջ։ Ճիշտ է, մեղքը միայն կազմողինը չէ (օրինակ, նա չէր կարող այն ժամանակ տեղ տալ Սիամանթոյին, Լ. Շանթին, Ռ. Զարդարյանին և այլոց, բայց մի շարք դեպքերում էլ առարկայական պատճառներ չունեն բացթողումները և հեղինակի աշխատանքի բնույթից են գալիս։ Օրինակ, որևէ արդարացում չունի այն, որ մատենագիտության մեջ չկան Լ. Բաշալյանը, Օ. Չիֆթի-Սարաֆը, Հար. Թումանյանը, Ե. Տեմիրճիպաշյանը, Տ. Չյոկյուրյանը և հայտնի ու անհայտ ուրիշ շատ հեղինակներ։

Ընդգրկված հեղինակների երկերը և նրանց մասին եղած գրականությունը նույնպես շատ արատավոր պակասներ ունեն, օրինակ, չկան Հ. Թումանյանի, Րաֆֆու, Հ. Պարոնյանի, Մ.

Մեծարենցի և այլոց երկերի մի շարք հանրահայտ հրատարակությունները։

Մատենագիտության մեջ տրվում են նաև հայ հեղինակների կատարած թարգմանությունների ցանկերը, սակայն այստեղ ևս լուրջ են բացթողումները։

Հետաքրքրական է այս առիթով գրախոսականներից մեկում[1] արված մի դիտողությունը. «Հատիկներ» դասագրքի մեջ (1915 թ.) եղած թարգմանություններից մեկը (լ. Տոլըստոյի «Կամակոր սայլապանները» Դ. Աղայանի թարգմանությամբ) տեղ է գտել մատենագիտության մեջ, իսկ նույն «Հատիկներում» եղած ուրիշ թարգմանական գործեր, գլխավորապես Ա. Ծատուրյանի թարգմանությունները, դուրս են մնացել մատենագիտությունից։

Մատենագիտության մեջ, ինչպես ասվեց, տրվում են նաև հայ հեղինակների երկերի ռուսերեն թարգմանությունները, ինչպես և հայ գրողների և հայ գրականության մասին եղած աշխատությունները ռուսերեն (456 նյութ)։ Սակայն այստեղ ևս պակասները շատ-շատ են, նույնիսկ իրականում եղածի կեսից էլ շատ պակաս է ընդգրկվածը։ Հետաքրքրական է, որ գրախոսողներից մեկը՝ Ս. Արշարունին գտնում է, որ այդ բացթողումները Պետրոսյանի այս մատենագիտության մեջ ամենից ավելի լուրջ բնույթ ունեցողներն են[2]։ Հիշենք մի քանի հանրահայտ հրատարակությունների բացթողումներ։ Օրինակ, Բումանյանին նվիրված հատվածում չկա գրողի «Աղբատի պատիվը», ռուսերեն թարգմանված Ս. Շահումյանի կողմից, չկա Վ. Բրյուսովի հոդվածը Հ. Թումանյանի մահվան առիթով («Красная Нива», 1923, № 14), չկան Թումանյանի երկերի վրացերեն թարգմանությունների 1932, 1937, 1948 թվականների հրատարակությունները։ Չկան նաև Հ. Հովհաննիսյանի, Հ. Թումանյանի, Ա. Ծատուրյանի և այ-

---

1 Լ. Մելիումյան *Դիտողություններ «Հայ գրականության բիբլիոգրաֆիայի» մասին։— «Սովետ. գրակ.», 1953, № 11, էջ 152—153։*

2 «Советская библиография», *1953*, вып. *2 (35)*, *էջ 104։*

լոց ստեղծագործությունների ռուսերեն այն թարգմանությունները, որոնք զետեղված են Բրյուսովի կազմած «Պոեզիա Արմենիի» մեջ և այլն։

Հայոց վիպերգին և բանահյուսությանը նվիրված մասում (հավելված) չեն ընդգրկվել այնպիսի հայտնի բանահավաքներ և բանագետներ, ինչպիսիք են Լալայանը, Սամվելյանը, Լիսիցյանը, Քաջբերունին և ուրիշներ։ Իսկ որոշ հեղինակներ կրկնված են, օրինակ, Սայաթ-Նովան և Նահապետ Քուչակը տեղ են գտել թե «Հայ հին և միջնադարյան գրականության բիբլիոգրաֆիայում» և թե այստեղ, ըստ որում, Քուչակը առաջին դեպքում հեղինակների շարքում է դրված, երկրորդ դեպքում՝ բանահյուսության մեջ։ Կան նաև այլ կրկնություններ, օրինակ, առաջին հատորը վերջանում է Հ. Ալամդարյանով, բայց երկրորդ հատորում նույն Ալամդարյանը հինգերորդ հեղինակն է։

Մատենագիտության երրորդ հատորը՝ «Սովետահայ գեղարվեստական գրականության բիբլիոգրաֆիան» նույնպես այբբենական կառուցվածք ունի, գրքի վերջում կա լրացում՝ հայրենական պատերազմում զոհված հայ գրողների մատենագիտությունը։

Ունի օգտագործված աղբյուրների ցանկ, անվանացանկ և բովանդակություն։

Թերությունները նույն բնույթի են, ինչ և նախորդ հատորներում՝ աղավաղումներ, սխալներ, բացթողումներ։

Այս մատենագիտության արժեքը լրջորեն ընկնում է նաև խորհրդային հայ ամենախոշոր հեղինակների բացակայության պատճառով, որի համար, սակայն, մեղավորը կազմողը չէ։ 1949 թվականին Պետրոսյանը չէր կարող Ե. Չարենցի, Ա. Բակունցի, Վ. Թոթովենցի, Գ. Մահարու և այն ժամանակ արգելված այլ հեղինակներին ներկայացնել իր մատենագիտության մեջ։ Բայց անկախ այդ առարկայական հանգամանքից, թերությունը մնում է թերություն. առանց այդ հեղինակների դժվար է անգամ պատկերացնել խորհրդային շրջանի հայ գրականությունը։

Հայ գրականության մատենագիտության ղեկավարը Հ. Պետրոսյանը կազմում էր նաև հայ պարբերական մամուլի մատենագիտությունը: Ավարտելով առաջինը՝ Պետրոսյանն ամբողջովին նվիրվեց երկրորդի ավարտման և հրատարակման գործին:

Պետրոսյանի կազմած ամենից ավելի ծավալուն գործը «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիան» է, որ բաղկացած է երեք ստվարածավալ հատորից, հետևյալ ընդգրկումով.

Առաջին հատորում ներկայացված է հայոց պարբերական մամուլը 1794-ից մինչև 1900 թվականը՝ 745 երկսյուն էջ, 7 բերթ նկ.: Լույս է տեսել 1956 թվականին:

Երկրորդ հատորում 1900—1956 թվականների հայոց պարբերական մամուլն է (չհաշված բոլշևիկյան նախախորհրդային և խորհրդային հայ մամուլը): Այստեղ է նաև սիլեզահայ մամուլը: 624 երկսյուն էջ: Լույս է տեսել 1957-ին:

Երրորդ հատորում հայ բոլշևիկյան մամուլն է (1902—1920 թվականների) և խորհրդային հայ մամուլը (1920—1954): 688 երկսյուն էջ, 6 թերթ նկ.: Լույս է տեսել 1954 թվականին:

Առաջին և երկրորդ հատորների մեջ նյութերի դասավորությունը ընդհանուր առմամբ միևնույն բնույթի է: Ամեն մի պարբերականի հատկացված է առանձին բաժին, այս բաժինները դասավորված են ժամանակագրական կարգով, ավելի հիշատ, ըստ պարբերականների հիմնադրման տարեթվերի: Յուրաքանչյուր պարբերականի հատկացված բաժինը սկսվում է այդ պարբերականի մատենագիտական նկարագրությամբ (տրվում է նաև տուսերին կրճատ նկարագրությունը), ապա ծանոթություններ են տրվում պարբերականի մասին (ուղղության, հրատարակման հանգամանքների, խմբագրի կյանքի ու գործի մասին և այլն): Դրանից հետո տրվում է ամսագրերի, երբեմն էլ շարաթաթերթերի ու երկշաբաթաթերթերի մեջ տպագրված հոդվածների մատենագիտությունը:

Նշենք, որ մատենագիտության առաջին հատորը թեև մինչև 1900 թվականի պարբերականներն է ընդգրկում, բայց հոդվածների վերլուծությունը չի դադարում այդ տարեթվով. եթե տվյալ պարբերականի հոդվածները վերլուծագրվում են, ապա 1900-ից հետո շարունակվող պարբերականների նյութերն էլ շարունակում են վերլուծագրվել:

Երրորդ հատորի կառուցվածքը քիչ տարբեր է: Նախ այն բաղկացած է երկու մասից: Առաջին մասը (մոտ 100 էջ), որ նվիրված է նախախորհրդային շրջանի բոլշևիկյան հայ մամուլին, կառուցվածքով նման է առաջին երկու հատորներին (ժամանակագրական և այլն), երկրորդ՝ խորհրդային հայ մամուլին նվիրված մեծածավալ մասը (ավելի քան 500 էջ) իր հերթին երկու հատվածից է բաղկացած, առաջինը՝ «Սովետահայ լրագրեր: 1920—1954» ժամանակագրական կառուցվածք ունի, առանց հոդվածների վերլուծագրության, երկրորդը՝ «Սովետահայ ժուռնալներ (1920—1954)»: Այստեղ հոդվածները վերլուծագրված են, կառուցվածքը թեմատիկ է, այսինքն՝ հանդեսները խմբավորված են առարկայական-թեմատիկ սկզբունքով. (կան այսպիսի բաժիններ՝ «Հայաստանի կոմունիստական պարտիա», «Հայաստանի լենինյան կոմունիստական երիտասարդական միություն», «Հասարակական քաղաքական բնույթի ժուռնալներ», «Փիլիսոփայություն», «Պատմություն», «Տեխնիկա», «Արդյունաբերություն», «Գյուղատնտեսություն» և այլն): Բաժինների ներսում առանձին հանդեսներին նվիրված հատվածները մերթ ժամանակագրական կարգով են դասավորված, մերթ առանց որևէ կարգի:

Ուշադրություն է գրավում նաև այն, որ մատենագիտության առաջին երկու հատորներում պարբերականները համարակալված չեն, (միայն հոդվածներն են համարակալված), մինչդեռ երրորդում համարակալված են թե՛ պարբերականները (հոմոնական թվանշաններով) և թե՛ հոդվածները (արաբական թվանշաններով):

Դնահատելով Հ. Պետրոսյանի այս աշխատությունը՝ հենց



Հ. Պետրոսյանի «Հայ գրականության բիբլիոգրաֆիայի» երկրորդ հատորը (կազմը)

սկզբից պետք է ասենք, որ նորությունն ու արժեքավորն այստեղ գլխավորապես ամսագրային հոդվածների վերլուծությունն է, հայ հանդեսների հարուստ բովանդակության բացումը ընթերցողների առջև։ Մինչ այդ ոչ մի մատենագետ այդպիսի փորձ չէր արել։ Հայ պարբերական մամուլի մատենագիտություն կազմողները սահմանափակվել են միայն պարբերականների, բայց ոչ բնավ նրանցում եղած հոդվածների ցուցակագրմամբ։

Այնուհետև, իբրև Պետրոսյանի աշխատության բերած նորություն կարելի է նշել այն, որ Գ. Լևոնյանի մատենագիտությունից հետո հիմնադրված պարբերականների մի զգալի մասը տեղ է գտել այստեղ։

Այլ տեսակետներից Հ. Պետրոսյանի այս մատենագիտությունը նկատելի նորություն չբերեց։ Օրինակ, կարելի էր սպասել, որ Գ. Լևոնյանի մատենագիտության լուրջ բացթողումները այստեղ նկատելիորեն համալրված կլինեին։ Սակայն նման բան չի դիտվում։ Եթե չհաշվենք մի երկու բացառություններ, Հ. Պետրոսյանի աշխատության մեջ հայոց պարբերականների ցանկը ընդհանուր առմամբ Գ. Լևոնյանի ցանկի կրկնությունն է, ավելացրած 1930—1934 թվականներից հետո հիմնադրված պարբերականների մի մասը՝ հիմնականում, Խորհրդային Միության մեջ հիմնադրվածները։

Ավելին, Գ. Լևոնյանի մատենագիտության մեջ եղած անճշտությունների մի մասը պարբերականների ընդհանուր ցուցակի հետ անցել է Հ. Պետրոսյանի աշխատության մեջ։

Ահա նաև՝ այդ հարցն ուսումնասիրած երկու մասնագետների եզրակացությունը. «Մեր մանրակրկիտ ուսումնասիրությունը և ուշադիր ստուգումը ցույց տվեցին, որ այն պարբերականները, որոնք դուրս են մնացել Գ. Լևոնյանի կազմած «Հայոց պարբերական մամուլը» գրքից, ինչպես նաև այն պարբերականները, որոնց հրատարակման սկզբնական և դադարեցման վերջին տարեթվերն ու լույս ընծայված համարների քանակը ճիշտ չեն գրանցված, այդ բոլորը նույնությամբ

եղել են (և այժմ էլ կան) Միության տարբեր գրապահոցներում ,ինչպես, օրինակ, «Կոչ Դևեթ» (Բաքու, 1906), «Տեղեկատու» (Բաքու, 1918), «Կոմունա» (Թիֆլիս, 1918), «Կարմիր բանվոր» (Աստրախան, 1920), «Կարմիր բանակ» (Երևան, 1920), «Կոմունիստ» (Ալեքսանդրապոլ, 1920) և այլն [1]։

2. Պետրոսյանի այս աշխատությունը ուրեմն գնահատելի է գլխավորապես այնտեղ ներկայացված հոդվածների մատենագիտության համար։

Յուրաքանչյուր հատորի վերջում կա այբբենական անվանացանկ հեղինակների, թարգմանիչների և գրախոսողների [2], որի նպատակն է նշել, թե այս կամ այն հեղինակից կամ թարգմանչից ինչ նյութեր կարելի է գտնել հայ պարբերական մամուլում կամ այսինչ հեղինակի հոդվածները ո՛ր պարբերականի, ո՛ր համարում են տպագրված։ Ցանկը պետք է տեղեկանք տա նաև այն մասին, թե այս կամ այն անձի վերաբերյալ ինչ հոդված կարելի է գտնել հայ պարբերականներում։ Այս տեղեկանքները անվանացանկը տալիս է համարների միջոցով (անվանացանկում յուրաքանչյուր անվան դիմաց նշված է այն համարը (կամ համարները), որի տակ մատենադիտության մեջ նկարագրված է համապատասխան հոդվածը (հոդվածները) կամ որևէ այլ նյութ։

Միայն այս կարգի տեղեկանքներ տալու համար մի մատենագիտություն կարելի է համարել մեծ ու չափազանց օգտակար աշխատություն։ Սակայն որոշ պայմանով։ Նախ՝ հիշյալ տեղեկանքները պետք է մոտենան լրիվ լինելուն կամ գոնե հեղինակը պետք է ձգտած լինի դրանք լրիվ դարձնելու։ Իսկ դրա համար հեղինակը պետք է ձգտեր կազմելու հայոց ողջ պարբերական մամուլի հոդվածների մատենագիտությունը։ Անպայման պակասներ կլինեին, բայց ձգտելով լրիվության՝ մատենագետը հնարավորը արած կլիներ աշխատանքը ավելի կատարյալ դարձնելու ուղղությամբ։

1 Մանրամասն տե՛ս Խ. Բարսեղյանի նշվ. աշխատութ. մեջ, էջ XI։

2 Երրորդ հատորում՝ նաև խմբագիրների։

եղել են (և այժմ էլ կան) Միության տարբեր գրապահոցներում ,ինչպես, օրինակ, «Կոչ Դևեի» (Բաքու, 1906), «Տեղեկատու» (Բաքու, 1918), «Կոմունա» (Թիֆլիս, 1918), «Կարմիր բանվոր» (Աստրախան, 1920), «Կարմիր բանակ» (Երևան, 1920), «Կոմունիստ» (Ալեքսանդրապոլ, 1920) և այլն [1]:

2. Պետրոսյանի այս աշխատությունը ուրեմն գնահատելի է գլխավորապես այնտեղ ներկայացված հոդվածների մատենագիտության համար:

Յուրաքանչյուր հատորի վերջում կա այբբենական անվանացանկ հեղինակների, թարգմանիչների և գրախոսողների [2], որի նպատակն է նշել, թե այս կամ այն հեղինակից կամ թարգմանչից ինչ նյութեր կարելի է գտնել հայ պարբերական մամուլում կամ այսինչ հեղինակի հոդվածները ո՛ր պարբերականի, ո՛ր համարում են տպագրված: Ցանկը պետք է տեղեկանք տա նաև այն մասին, թե այս կամ այն անձի վերաբերյալ ինչ հոդված կարելի է գտնել հայ պարբերականներում: Այս տեղեկանքները անվանացանկը տալիս է համարների միջոցով (անվանացանկում յուրաքանչյուր անվան դիմաց նշված է այն համարը (կամ համարները), որի տակ մատենագիտության մեջ նկարագրված է համապատասխան հոդվածը (հոդվածները) կամ որևէ այլ նյութ:

Միայն այս կարգի տեղեկանքներ տալու համար մի մատենագիտություն կարելի է համարել մեծ ու չափազանց օգտակար աշխատություն: Սակայն որոշ պայմանով: Նախ՝ հիշյալ տեղեկանքները պետք է մատենան լրիվ լինելուն կամ գոնե հեղինակը պետք է ձգտած լինի դրանք լրիվ դարձնելու: Իսկ դրա համար հեղինակը պետք է ձգտեր կազմելու հայոց ողջ պարբերական մամուլի հոդվածների մատենագիտությունը: Անպայման պակասներ կլինեին, բայց ձգտելով լրիվության՝ մատենագետը հնարավորը արած կլիներ աշխատանքը ավելի կատարյալ դարձնելու ուղղությամբ:

1 Մանրամասն տե՛ս Ս. Բարսեղյանի նշվ. աշխատութ. մեջ, էջ XI:

2 Երրորդ հատորում՝ նաև խմբագիրների:

Ահա այս պայմանն է, որ Պետրոսյանի մատենագիտության մեջ չի պահպանված։ Պետրոսյանի աշխատությունը, ճիշտ է, վերոհիշյալ տեղեկանքները տալիս է, սակայն հայ պարբերական մամուլի միայն մի մասի, այն էլ փոքր մասի համար։ Բանն այն է, որ Պետրոսյանը կազմել է հայ պարբերականների միայն մի մասի՝ հանդեսների (այն էլ ոչ բոլոր) հոդվածների մատենագիտությունը։ Հայ լրագրերի, ինչպես նաև ոչ քիչ ամսագրերի ու այլ հանդեսների հոդվածներ չեն վերլուծագրվել։ Ավելին, նույնիսկ վերլուծագրված պարբերականների բոլոր հոդվածները չէ, որ մտել են մատենագիտության մեջ, շատ բան չի վերցված. «Պարբերականների բոլոր նյութերը չէ, որ նկարագրել ենք,— գրում է մատենագետը առաջին հատորի առաջաբանում,— արժեքազրկված, աննկարևոր, շատ հնացած, նաև կրոնական-եկեղեցական, դավանաբանական-վարքագրական նյութերը չենք նկարագրել»։ Հասկանալի է, որ նման պիտակները կազմողն ինքն է ազատորեն օգտագործել այս կամ այն հոդվածի համար՝ դուրս թողնելով այն մատենագիտությունից։ Ուշագրավ է նաև, որ մատենագիտության երրորդ հատորը գրախոսող Խ. Բարսեղյանը մի շարք օրինակներ է բերում, թե ինչպես խորհրդային շրջանի պարբերականների հոդվածները վերլուծագրված են առանց որևէ ընտրության. մատենագիտության մեջ տեղ չեն գտել բազմաթիվ արդիական նշանակություն ունեցող հոդվածներ, այդ թվում խորհրդային Հայաստանի հասարակական կյանքի հրատապ հարցերին վերաբերող [1]։

Երրորդ հատորի առաջաբանում ևս Պետրոսյանը գրում է, որ ինքը չի վերլուծագրել «այժմեականությունը կորցրած անկարևոր և հնացած որոշ նյութեր», մինչդեռ փաստերը ցույց են տալիս, որ բացթողումները որևէ սկզբունքով չեն արված։

Սակայն ամեն դեպքում, թեկուզ լուրջ բացթողումներով վերլուծագրված պարբերականները դեռևս ամենաերջանիկ-

---

1 Խ. Բարսեղյան Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա։—«Պարտիական կյանք», 1954, էջ 60։

Ներչն են, քանի որ, այնուամենայնիվ, շատ թե քիչ վերլուծադրվել են, մինչդեռ հարյուրավոր պարբերականներ, ինչպես ասացինք, ոչ մի հոդվածով չեն ներկայացված։ Բավական է ասենք, որ չեն վերլուծագրվել հայ հասարակական-գիտական կյանքում մեծ դեր կատարած այնպիսի պարբերականներ, ինչպես «Մշակը», «Նոր-Դարը», «Բյուզանդիոնը» և շատ ուրիշներ։

Թեև Հ. Պետրոսյանը ասում է, որ միայն լրագրերի հոդվածները չեն ներկայացված մատենագիտության մեջ, սակայն պարզվում է, որ չի բացված նաև մի շարք հանդեսների, այդ թվում տարեգրքերի բովանդակությունը։ Օրինակ, չեն վերլուծագրված Կ. Պոլսում երկար ժամանակ հրատարակված այնպիսի տարեգրքի համարներ, ինչպես Ազգային հիվանդանոցի հայտնի «Տարեցույցներ»-ն են։ Չեն վերլուծագրված նաև «Տաթև», «Ժողովրդական», «Հայուն», «Հայկաշեն» և այլ տարեգրքեր, ինչպես նաև 1932 թվականին Երևանում լույս տեսած «Հոկտեմբեր-Նոյեմբեր» տարեգրքի առաջին համարը։

Նկատվում է, որ հեղինակը չի ձգտել հնարավորին չափ լրիվ տալ հայ պարբերական մամուլի հոդվածների մատենագիտությունը։

Այդպիսով, հայ պարբերականների հոդվածների Հ. Պետրոսյանի ներկայացրած մատենագիտությունը շատ պակասավոր է, կիսատ, ուստի և հեղինակների, նրանց հոդվածների, թարգմանիչների, ինչպես և կենսագրվողների մասին եղած նյութերի նրա տված տեղեկանքները նույնպես շատ պակասավոր են։ Օրինակ, ըստ Հ. Պետրոսյանի մատենագիտության մինչև 1900 թվականը հայ պարբերական մամուլում ոչինչ չի տպվել այնպիսի հեղինակների գործերից կամ նրանց մասին, ինչպիսիք են Պլատոնը, Արիստոտելը, Սոֆոկլեսը, Մոնտեսքյոն, Վալտեր Սկոտը և շատ ուրիշներ, այն ժամանակ, երբ անցյալի հայ պարբերականներում բազմաթիվ են այդ հեղինակների մասին հոդվածները, ինչպես և քիչ չեն նրանց առանձին ստեղծագործությունների կամ գործերի հատվածների հրապարակումները։

Պետք է նկատի ունենալ, որ հայ պարբերական մամուլի մատենագիտության առջև նաև այլ պահանջներ են դրվում, այն է՝ առարկայական, թեմատիկ տեղեկանքներ տալ։ Ընթերցողը, օգտվողը պետք է կարողանա տեղեկանք ստանալ, թե իրեն հետաքրքրող հարցի մասին ինչ կարող է կարդալ հայոց պարբերական մամուլում։ Այս դժվար խնդրի լուծումը Հ. Պետրոսյանը բնավ չի դրել իր առջև։

Այժմ հարց է առաջանում՝ հեղինակների, նրանց հոդվածների, թարգմանիչների, ինչպես և կենսագրվողների վերաբերյալ այն ոչ լրիվ տեղեկանքները, որ տալիս է այս մատենագիտությունը, գոնե վստահելի՞ են և ստո՞ւգ։ Բանից պարզվում է, որ այդ կողմից էլ աշխատությունը կաղում է։

«Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա» աշխատության մասին տպագրվեցին տասից ավելի ծավալուն հոդվածներ, որոնք ամենախիստ քննադատության ենթարկեցին աշխատությունը։ Մատենագիտության մասին գրվեց նաև Մոսկվայում, ինչպես և սիյուռքի մամուլում։

Բոլոր թերությունների ամենից ավելի աչքի են ընկնում անձնանունների և վերնագրերի շփոթեցնող, ապակողմնորոշող, անհամար աղավաղումները, որոնք տեղ են գտել և՛ բուն մատենագիտության մեջ, և՛ անվանացանկերում։ Բերենք դրանցից մի քանի նմուշներ. Ինճիճյանը դարձել է Ինճիկյան, Պատուրյանը՝ Պոսատուրյան, Բլկասինցին՝ Բլկարինցի, Բըլկաթիցին՝ Բլկասիցի, Առանձարը՝ Առանձուր, Վարուժնակը (Արիս Շաքլյան)՝ Վարուժան, Սուրխաթյանը՝ Սուրխաթյան, Զոպանյանը՝ Զուգալյան, Մոպասանը՝ Մոպասյան, Սաադին՝ Սաատ, Գոթիեն՝ Կոթի, Քիաթը՝ Քիյաճաւ, Պաստեորը՝ Բոսթեոս, Գոլդոնին՝ Կոլդոն, Ռոսին՝ Ռոսիննի, Օկտավ Միրբոն՝ Ակտավ Միրբո, Ֆլամարիոնը՝ Ֆլամիրոն, Մաքս Ռոժեն՝ Մարքս Ռոժե, Լեոպարդին՝ Լեոբարտ և այսպես շարունակ։

Վերնագրերից՝ «Հյուծյալ աղջիկ»-ը դարձել է «Հնծյալ աղջիկ», «Բարիզյան նոթերես»-ը՝ «Բարիզյան նորերսի», «Գայլ ծպտյալ»-ը «Գայլ ժպտյալ», «Հրատ մոլորակ»-ը՝ «Հրանտ մոլորակ»,«Երբայական մեղեդիներ»-ը՝ «Եղբայրական մեղե-

դիներ», «Նամակ Կարսից»-ը՝ «Նամակ կայսրից», «Քուն և դարման քնատուության»-ը՝ «Քուն և դարման քննադատության» և այլն։

Այսպիսի աղավաղումները, անշուշտ, իրրև վրիպակներ կարող են լինել ամեն մի աշխատության, մասնավորապես՝ մատենագիտության մեջ, սակայն «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիայի» մեջ այդ աղավաղումները չափազանց շատ են, ուղղակի ոճի, գրելակերպի արժեք ունեն և վրիպակ կարող են կոչվել մեծ վերապահությամբ։

Գրախոսություններում բազմաթիվ նմուշներ բերվեցին հատկապես գրաբարյան վերնագրերի և բառերի աղավաղման։ Օրինակ, շատ դեպքերում գրաբարյան ուղղագրությամբ սեռական հոլովի ձայնավորից հետո դրվող յ-ն դարձել է ց։ Ինչպես՝ Երուսաղեմցւոյ դարձել է Երուսաղեմացվոց, մերոյ՝ մերոց և այլն։ Կան և այսպիսի աղավաղումներ՝ Անճատական՝ դարձել է Անճատական, եկեղեաց (գավառ)՝ դարձել է եկեղեցիաց և այլն [1]։

Ի դեպ, աղավաղումները նույնքան առատ են նաև ռուսերեն գրված անուններում և բնագրերում։ Աշխատությունը ռուսերեն գրախոսող մատենագետ Մ. Մաշկովան բերում է սխալների մի շարք նմուշներ[2]։

Արձակագիր Հ. Խանդամուրյանը, որն իր գրախոսականում, թերևս, ամենից շատ է բերում աղավաղումների և սխալների օրինակներ, հոգվածը վերջացնում է այսպես. «Մենք սահմանափակվեցինք «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա» աշխատության մեջ եղած սխալների փոքրաթիվ նշումով, որովհետև մտադիր չենք բիբլիոգրաֆիայում եղած սխալների բիբլիոգրաֆիան կազմել» [3]։

Մատենագիտության մեջ շատ են նաև պարբերականների

---

1 Նման օրինակներ շատ են բերված Հ. Խանդամուրյանի գրախոսության մեջ, «Սովետ. գրականություն», 1958, № 6, էջ 156։

2 «Советская библиография», 1958, № 51, էջ 132։

3 «Սովետ. գրականություն», 1958, № 6, էջ 156։

և նրանց նյութերի նկարագրություններում տեղ գտած սխալները։ Կան անճիշտ ու թերի նկարագրություններ[1]։ Շատ են պարբերականների հիմնադրման և փակման տարեթվերի, ինչպես և նրանց անունների գրության մեջ թույլ տրված սխալները։ Ն. Գասապյանը 73 միայն այդ կարգի լուրջ սխալներ է ճշտում իր վերը հիշված գրախոսության մեջ[2]։ Այստեղ նշված են նաև մի շարք պարբերականներ, որոնցից յուրաքանչյուրը Հ. Պետրոսյանի մատենագիտության մեջ մեկից ավելի անգամ է բերվել, իբրև երկու պարբերական։ Օրինակ, այդպես երկու անգամ են տրված «Արևմուտքը» Փարիզ, 1859—1865 (առաջին հատորի 172 և 256 էջերում), հունգարերեն «Արմենիան» (առաջին հատորի էջ 505 և երկրորդի էջ 229), «Հայաստանի կոչնակը» և շատ ուրիշներ։

Բազմաթիվ են ծանոթագրություններում (անոտացիաներում) տարբեր անձանց կենսագրական տեղեկանքներում տեղ գտած սխալները[3]։

Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ այս կամ այն ամսագրի բովանդակության մեջ բերված հոդվածները իրականում չկան տվյալ ամսագրի նշված համարում։ Օրինակ, երրորդ հատորի անվանացանկի այդպիսի անճշտությունների մասին Խ. Բարսեղյանը գրում է. «Հաճախ ոչ միայն նույն ամսագրում տպագրված հոդվածների ամսաթվերն են աղավաղված, այլ մի ամսագրում տպագրված այս կամ այն հոդվածը վերագրված է մի այլ ամսագրի։ Այսպես, օրինակ, 142-րդ էջում «Պարտիական կյանք» ամսագրի 1948 թվականի № 4-ում ցույց է տրված, որ լույս են տեսել Ե. Մելքոնյանի՝ «Լուրջ ուշադրություն պարտիական տնտեսությանը» (3638), Վ. Մնացականյանի (՞) «Լենինյան դաղափարների ամենահաղթ ուժը» (3640) և Վ. Սարգսյանի՝ «Պարտշրջկոմի տեսադաշտից հե-

---

1 Օրինակներ տե՛ս Ն. Գասապյանի հոդվածում, «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 3—4, էջ 308։

2 Նույն տեղում, էջ 309—314։

3 Նույն տեղում, էջ 315—316։

ռու» (3641) խորագրով հոդվածները։ Այնինչ դրանցից և ոչ մեկը հիշատակված համարում չենք գտնի։ 456-րդ էջում ցույց է տրված, որ «Սովետական մանկավարժ» ամսագրի 1953 թվականի № 1-ում լույս է տեսել «Պատանի ստեղծագործողների մոտ» (12972), իսկ № 4-ում Ռ. Բազդասարյանի «Դպրոցի մանկավարժական կաբինետը» (13001) հոդվածները, բայց դրանցից և ոչ մեկը հիշատակված համարներում նույնպես չեք գտնի։ Եվ այսպես անվերջ»[1]։

Մատենագիտության ամենակարևոր բերուբյուններից է օժանդակ ցանկերի պակասը։ Այսպիսի մեծ մատենագիտությունը նախ պետք է ունենար երեմ հատորների նյութերը ընդգրկող մի շարք օժանդակ ցանկեր, այդ թվում՝ ա) պարբերականների անունների ընդհանուր այբբենական ցանկ, բ) պարբերականների հրատարակության վայրերի այբբենական ցանկ, գ) նյութերի առարկայական կամ սիստեմատիկ ուղեցույց։

Մինչդեռ հատորների վերջում կցված են սոսկ այբբենական անվանացանկեր, յուրաքանչյուր հատորի համար։ Ճիշտ է, հայ պարբերական մամուլի նյութերը պակասավոր և անկանոն են ներկայացված մատենագիտության մեջ, բայց և այնպես երեք հատորներում ընդգրկված են շուրջ 50.000 նյութեր։ Եթե դրանք ճիշտ ու նպատակասլաց մատուցվեին ընթերցողին, դարձյալ քիչ օգուտ չէր տա կատարված աշխատանքը։ Սակայն նկարագրված նյութերի այդ քանակը առանձին հատորներին կցված անվանացանկերով հնարավոր չէ լրիվ ներկայացնել մատենագիտությունից օգտվողին։ Թեև, ինչ խոսք, որ այս անվանացանկերն էլ, այնուամենայնիվ, բավականին օգնություն կարող էին ցույց տալ աշխատությունից օգտվողներին, պայմանով, եթե փոքր ի շատե որակով լինեին։ Ցավոք, այս ցանկերը նույնպես ցածրորակ են։

Նախ՝ մատենագիտության մեջ ընդգրկված շատ հեղինակների ազգանուններ առհասարակ դուրս են մնացել անվա-

---

1 «Պարտիական կյանք», 1954, № 11, էջ 58—59։

նացանկերից։ Ասպա՝ միևնույն ազգանունն ու անվան առաջին տառն ունեցող մարդիկ շատ դեպքերում նույնացվել են։ Օրինակ, առաջին հատորում Հրանտ Ասատուրը նույնացված է մե՛րթ «Բաղմավեպի» աշխատակից Հ. Ասատրյանի, մերթ էլ Հրանտ կեղծանունով հանդես եկած Ստեփան Ոսկանի և Մկրտիչ Պեշիկթաշլյանի հետ։ Այնպես է ստացվում, որ Հրանտ Ասատուրը 1855 թվին, այսինքն՝ իր ծննդից առաջ գրել է «Մխիթարյան ուխտին նպատակը» հոդվածը, իսկ երկու տարեկան հասակում՝ «Առ դեփյուտն Ալեմտաղի» բանաստեղծությունը (Մ. Պեշիկթաշլյանի)։ Ըստ որում, ինքը՝ Հրանտ Ասատուրը անվանացանկում մե՛րթ ներկայացված է իբրև Հրանտ Ա.սատուր, մերթ՝ Հրանտ Ա.ս., մերթ էլ Ասատրյան Հր.։ Կամ՝ Ա.ճարոճ անվան տակ նույնացված են «Շեմմարան» պարբերականի (Կալկաթա, 1821) աշխատակից Ահարոնը և ժամանակակից գրող Ահարոն Տատուրյանը։ Հովհաննես Թումանյանի հետ նույնացվել է մի այլ Հ. Թումանյան, և ստացվել է այնպես, որ բանաստեղծը հայ կաթոլիկների պարբերականում արևմտահայերեն լեզվաբանական հոդված է տպագրել։ Մի մարդ են դարձել Ռուբեն Զարդարյանը և Ռաֆայել Զարդարյանը, արևմտահայ բանաստեղծ Ա. Հարությունյանը և Արտաշես Հարությունյանը (երկրորդ հատոր), կամ հասարակական-քաղաքական թեմաներով հոդվածներ գրող Ս. Ստեփանյանը նույնացել է արվեստաբան Ս. Ստեփանյանի հետ և այլն։ Այս կարգի օրինակները չափազանց շատ են։

Այլ դեպքերում էլ մի մարդն է երկու կամ ավելին դարձել։ Օրինակ, առաջին հատորի անվանացանկում Կ. Բասմաջյանը և՛ Բ տառի մեջ է տեղ գտել, և՛ իբրև Պասմաջյան Պ-ի մեջ, նույնը և Պոլ Բուրժեն (Բուրժե և Պուրժե), երկրորդ հատորում՝ Գ. Հաուպտմանը երեք հեղինակի է վերածվել՝ Կ. Հաուպտման, Գ. Հաուպտման և Հ. Հաուպտման, երկու հեղինակ են դարձել նաև Ռ. Կիպլինգը, Ն. Զորոյանը և ուրիշներ։

Այս կարգի թյուրիմացություններն էլ շատ են, և նրանց պատճառը հոդվածների նկարագրությունը մեքենայորեն կա-

տարբեր է։ Տպագիր երկերի նկարագրության միասնական կանոնները պահանջում են մի հեղինակի անուն ազգանունը միշտ միևնույն ձևով գրել՝ անկախ այն բանից, թե ինչ ձևերով են նրանք գրված տարբեր հրատարակությունների կամ պարբերականների մեջ (անվանացանկում մյուս անվանաձևերից հղումներ են տրվում դեպի մատենագիտության մեջ ընդունված ձևը)։ Հ. Պետրոսյանը թեև իր առաջաբաններում ասում է, որ ինքը պահպանել է նկարագրության ընդհանուր, խորհրդային կանոնները, սակայն իրականում շատ դեպքերում է մի կողմ թողել այդ կանոնները։

Կեղծանունների մեծ մասը հեղինակը չի բացել և այնպես է ստացվել, որ այս պատճառով էլ միևնույն անձնավորությունը անվանացանկում ներկայացվում է մի քանի անգամ՝ տարբեր անուններով։ Օրինակ, Ռ. Պատկանյանի ստեղծագործությունները ներկայացված են իբրև մի քանի մարդու գործեր, քանի որ չեն բացված բանաստեղծի Գամառ Քարիպա, Ախտամերկյան, Սյոլլուկ և այլ կեղծանունները, նույնը կարելի է ասել Րաֆֆու և ուրիշ հեղինակների մասին։

Գրախոսողները շատ օրինակներ են բերել նաև ցույց տալու համար, թե ինչպես անվանացանկերում ազգանունների դիմաց նշված համարները մատենագիտության համարակալմանը չեն համապատասխանում։ Օրինակ, նույն 3-րդ հատորի անվանացանկում Սևյան Վ.-ի դիմաց կա 7894, մատենագիտության մեջ այդ համարի տակ է Тонян Ц. Р. կամ՝ ցանկում Տեր-Գրիգորյան Գ.-ի դիմաց կա 18456—57, մատենագիտության մեջ այս 18456-ի տակ բոլորովին այլ բան է («Քառասուն տարվա ծառայություն...») և այլն։

Խիստ քննադատվեց նաև ռուսերեն նյութերի անվանացանկը, որը որակվեց իբրև «լիովին անպիտան», ասվեց, որ այդ ցանկը «օգտագործելիս պարզվում են ոչնչով չհիմնավորված բացթողումներ և կառուցվածքի խառնաշփոթություն»[1]։ Ռուսերեն անվանացանկում չի պահպանված ազ-

---

1 «Советская библиография», *1958, № 51, էջ 130.*

գանունների խիստ այբբենական կարգը, ցանկում նշված համարները չեն համապատասխանում մատենագիտության համարներին և այլն։

Առհասարակ քննադատությունը շատ խիստ գտնվեց Հ. Պետրոսյանի այս եռահատոր աշխատությունը գնահատելու հարցում, գուցե և չափից ավելի խիստ։ Մոռացության տրվեց նույնիսկ այն պարզ հանգամանքը, որ թեկուզ սխալաշատ ու թերի այդ մատենագիտության սոսկական առկայությունն արդեն գրական երևույթ է, որ եթե այն չստեղծվեր, հայ մշակույթը ոչինչ շահած չէր լինի։ Որքան էլ շատ էին ազավաղումներն ու թերինները, միևնույն է, մի բան անուրանալի է, որ Պետրոսյանի «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիան» ամսագրային հոդվածների, ինչպես և 1930-ից հետո հիմնադրված պարբերականների մասին իր ամած տեղեկանքներով որևէ փոխարինող առայժմ չունի։ Եթե նույնիսկ 10 տեղեկանքից մեկը ճիշտ լինի, դարձյալ մատենագիտությունը օգտակար է։

Այս պարզ ու հասկանալի հանգամանքը մոռացության տրվեց աշխատության մեջ եղած աղավաղումների անհավատալիորեն մեծ առատության տպավորության տակ։

Գուցե և քննադատության մերժողական խստությունը ծայրահեղ ու անցանկալի չափերի չհասներ, եթե ինքը՝ Պետրոսյանը ավելորդ խստություն չցուցաբերեր իրեն նախորդող հայ մատենագետների հանդեպ։ Իր առաջաբաններում, ինչպես տեսանք, Պետրոսյանը պարբ է համարում անպայման «ջախջախել» մխիթարյանների մատենագիտական աշխատանքը։ «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիայի» առաջին հատորի (1794—1900) առաջաբանում հեղինակը նույնպես չի մոռացել այդ մասին և այս անգամ էլ քննադատության է ենթարկել պարբերական մամուլի մատենագիտությամբ զբաղվող մխիթարյաններին։ Այստեղ չի կարելի չնկատել մի հակասություն։ Առաջաբանում կարդում ենք. «Նույնիսկ մխիթարյանները, որ իրենց գրապահոցներում են կենտրոնացրել հայ պարբերական մամուլի հարուստ ժա-

ռանգությունը, մինչև այժմ չեն հրատարակել հայ մամուլին նվիրված որևէ բիբլիոգրաֆիա» (Առաջաբան, էջ XIV)։ Այսպես հեղինակը գրում է այն բանից հետո, երբ մի քանի էջ առաջ (էջ VI) խոստովանել էր, որ օգտվել է Մ. Պոտուրյանի, Ռ. Կարապետյանի (Քոսյանի) և Գ. Գալեմքյարյանի կազմած մատենագիտական աշխատություններից։ Ըստ որում, դեռ Գալեմքյարյանի «Պատմություն հայ լրագրության» էլ պիտակել էր իբրև «Կղերա-ֆեոդալական ուղղությամբ» գրված գործ։

Պետրոսյանի այս մատենագիտության երկրորդ հատորի առաջաբանում (էջ XV) էլ հեղինակը փորձում է ցույց տալ, որ դասակարգային պայքարը ընթացել է նաև հայկական մատենագիտության ասպարեզում։ Այդ պայքարը, ըստ Պետրոսյանի, արտահայտվել է այն բանով, որ Մխիթարյանները իրենց մատենագիտական աշխատություններում տեղ չեն տվել առաջադեմ և նույնիսկ սոսկ աշխարհիկ հեղինակներին։ Հ. Պետրոսյանը գրում է. «Իհարկե, ամեն ինչ խաղաղ չի ընթացել։ Դասակարգային պայքարը երևան է եկել նաև մամուլում ու գրականության անդաստանում։

Օրինակ, Մխիթարյանները, Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի (1512—1912)» գրքի հատորներում տեղ չեն տվել ոչ միայն ռևոլյուցիոն դեմոկրատ հեղինակներին, այլև նաև մեր հանճարեղ աշխարհիկ գրողների մեծամասնությանը՝ Նար-Դոսին, Վ. Տերյանին, Դ. Դեմիրճյանին, Ստ. Զորյանին, Սիամանթոյին և ուրիշներին»։

Հարկ կա՞ ասելու, որ Ղազիկյանը իր մատենագիտության մեջ տեղ է տվել հեղափոխական դեմոկրատների բոլոր այն երկերին, որոնք եղել են նրա ձեռքի տակ, որ Միքայել Նալբանդյանին սովորականից ավելի շատ տեղ է տրված և բերված են նրա մասին չերմորեն գրված աշխատություններից ընդարձակ հատվածներ։ Հարկ չկա, անշուշտ, փաստեր բերել՝ ցույց տալու համար, որ Ղազիկյանի մտքով անգամ չի անցել ինչ-որ խորականություն ցուցաբերել աշխարհիկ գրողներին

նկատմամբ։ Նաև մի կողմ թողնենք «հանճարեղ» բառի չարաշահումը բերված հատվածում, ասենք միայն, որ Նար-Դոսը, Դեմիրճյանը և Սիամանթոն (Տարճանյան-ի տակ) տեղ գտել են Դպիկյանի մատենագիտության մեջ (ուշագրավ է, որ Սիամանթոն տեղ չի գտել հենց իր՝ Պետրոսյանի «Հայ գրականության բիբլիոգրաֆիայում»), իսկ Վ. Տերյանը տեղ չէր կարող գտնել Դպիկյանի գրքում այն պարզ պատճառով, որ Ն տառի վրա ընդհատված է գիրքը, Ս. Զորյանն էլ տեղ չի գտել, քանի որ իր առաջին գիրքը տպագրել է Դպիկյանի մատենագիտության հրատարակումից հետո։

1950 թվականին լույս տեսավ մի ստվարածավալ մատենագիտություն՝ «Հայկական ՍՍՌ գյուղատնտեսական գրականության բիբլիոգրաֆիա», Եր., Կուլտուրհրատ, 537 էջ։

Տիտղոսաթերթին կարդում ենք՝ Մատենագետ-խմբագիր դոկտ., պրոֆ. Գ. Խ. Աղաջանյան և դոկտ., պրոֆ. Ա. Ա. Ռուխիկյան։ Տիտղոսաթերթի դարձերեսին՝ Բիբլիոգրաֆիայի գրականության ճկարագրումը և անոտացիաները կատարել են՝ հողագիտության մասը՝ դոկտ., պրոֆ. Խ. Միրիմանյանը, դաշտավարության, անասնաբուծության, անասնաբուժության մասերը՝ Ս. Թաղևոսյանը, կազմումը և բիբլիոգր. խմբ. Հ. Պետրոսյանի։

Այս մատենագիտական ցանկը, անշուշտ, խմբային աշխատանքի արդյունք է, սակայն հայտնի է, որ Հ. Պետրոսյանը եղել է նրա նախաձեռնողը, աշխատանքն առաջ մղողը և վերջնական տեսքի բերողը։ Ուստի և այս աշխատությունը, եթե ոչ ամենից ավելի, ապա, անպայման, ամենից առաջ Հ. Պետրոսյանի անվան հետ է կապվում և նրա մասին արժե խոսել Պետրոսյանի առնչությամբ։

Նկատի ունենանք նաև, որ մատենագիտության գլխավոր աղբյուրներից են եղել գրապալատի կազմած տարեգրքերը։

Մատենագիտությունն ընդգրկում է 1850—1948 թվականների ընթացքում լույս տեսած գյուղատնտեսական, անասնաբուժական և նման կարգի գրքեր ու հոդվածներ։ Ընդգրկված

են նաև անտիպ նյութեր (դիսերտացիաներ, զեկուցումներ և այլն), ընդամենը 1700 նյութ։

Հիմնականում երեք մասից է բաղկացած. ա) Դաշտավարություն, բ) Անասնապահություն, գ) Անասնաբուժություն։ Այս մասերի մեջ են ընդգրկված հողագործության, գյուղատնտեսության մեքենայացման, անտառաբուծության և գյուղատնտեսության շատ ուրիշ բնագավառների գրականության ցանկերը։

Գյուղատնտեսության տնտեսվարության (էկոնոմիկայի) և մի քանի այլ հարցերի վերաբերյալ գրականություն մատենագիտության մեջ չի ընդգրկված։

Ցանկում բերված նյութերի մեծ մասը ծանոթագրված է (անոտագրված)։

Գրքի սկզբում տրված է աղբյուրների ցանկը, վերջում՝ հեղինակների անվանացանկ և առարկայական ցանկ։

Մատենագիտությունը Հայաստանի վերաբերյալ և հայ մասնագետների կողմից գրված ողջ գյուղատնտեսական գրականությունը, իհարկե, չի ներկայացնում։ Բայց ներկայացնում է մինչև 1948 թվականը եղածի գուցե և մեծագույն մասը։

Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ գյուղատնտեսությունը ոչ գեղարվեստական գրականություն է, ոչ էլ բանասիրություն, և շատ գյուղատնտեսական աշխատություններ գիտական տեսակետից արագ հնանում են։ Այդ իմաստով այս մատենագիտության նյութերի մեծ մասն այսօր գյուղատնտեսների համար գործնական հետաքրքրություն ունենալ չի կարող։ Մատենագիտության նշանակությունն, այդպիսով, այժմ ոչ այնքան մասնագիտական է, որքան պատմական։

Դրանով հանդերձ «Հայկական ՍՍՌ գյուղատնտեսական գրականության բիբլիոգրաֆիան» մինչև այժմ էլ մնում է ամենածավալուն, ամենահարուստ հայերեն մատենագիտությունը գյուղատնտեսության վերաբերյալ։

1958 թվականին լույս տեսավ Հ. Պետրոսյանի «Հայկական

Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա»։ (Բիբլիոգրաֆիական ծանոթություններով)» մատենագիտության առաջին հատորը (268 էջ), ուր ընդգրկված էր հանրապետության աշխարհագրության, երկրաբանության, հնէաբանության, օդերևութաբանության և կլիմայագիտության, ինչպես նաև Սևան—Զանգվի պրոբլեմի ու ջրային ռեսուրսների վերաբերյալ եղած գրականությունը։

Աշխատության հաջորդ հատորը, հեղինակի առաջաբանի համաձայն, պետք է ընդգրկեր գյուղատնտեսական գրականությունը։ Ըստ երևույթին, Հ. Պետրոսյանը 1950 թ. հրատարակված վերոհիշյալ «Հայկական ՍՍՌ գյուղատնտեսական գրականության բիբլիոգրաֆիան» լրացնելուց հետո պետք է հրատարակեր իբրև այս աշխատության երկրորդ հատոր։

Առաջաբանում Հ. Պետրոսյանը բավականին խոսում է գավառագիտական մատենագիտության մասին, պատմում, թե Ռուսաստանի տարբեր մարզերում ու գավառներում ինչպիսի մատենագիտական աշխատանք է տարվել երկրի տվյալ շրջանին վերաբերող գրականության մատենագիտական ցանկերը կազմելու և հրատարակելու ուղղությամբ։ Ապա գնահատում է, որ Հայաստանում անուշադրության է մատնված գավառագիտական մատենագիտությունը։ Հայտարարում է նաև, որ իր կազմած այս աշխատությունը «առաջին գավառագիտական ծանոթագրված բիբլիոգրաֆիան է» Հայաստանում։

Ցավոք, հեղինակը այստեղ մի շարք հարցեր շփոթում է։ Նախ երկրագիտական մատենագիտությունը նույնացնում է գավառագիտականի հետ։ Ստացվում է այնպես, որ Հայաստանը Ռուսաստանի գավառներից է։ Մինչդեռ Հայաստանի վերաբերյալ գրականությունը ոչ թե գավառագիտական, այլ երկրագիտական է։ Հայաստանի համար գավառագիտական մատենագիտություն ասելով հասկանում ենք Հայաստանի այս կամ այն շրջանին վերաբերող գրականության մատենագիտություն։

Այնուհետև, ճիշտ չէ, որ Պետրոսյանի այս աշխատությու-

նը առաջին երկրագիտական մատենագիտությունն է, նվիրված Հայաստանին։ Ցպետք է մոռանալ, որ հայագիտությունը իր բոլոր ճյուղերով նույնպես երկրագիտություն է, և հայ գրքին ու գրականությանը, հայ բանահյուսությանը, հայ մամուլին նվիրված մատենագիտական աշխատությունները, ի վերջո, երկրագիտական բնույթ ունեն։ Իսկ նման մատենագիտական ցանկեր հայերը հնուց ունեցել են։ Ավելի նոր շրջանում «Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա» իր այս աշխատությունից առաջ հենց ինքը Հ. Պետրոսյանն է կազմել երկրագիտական նշանակություն ունեցող մատենագիտական ցանկեր (որոնց մասին խոսվեց արդեն)։

Այս մատենագիտության մեջ նյութերը դասավորված են սիստեմատիկ կարգով՝ համաձայն գրապալատի դասակարգման աղյուսակի (յուրաքանչյուր բաժնի ներսում պահպանված է ժամանակագրական կարգը)։ Մատենագիտությունը բաղկացած է հետևյալ հինգ մասերից։ I Աշխարհագրություն, II Երկրաբանություն, III Հնէաբանություն, IV Սևան-Զանգվի պրոբլեմը..., V Օդերևութաբանություն և կլիմայագիտություն։

Մատենագիտության մեջ նշված գրականության մեծ մասը ռուսերեն է, որ բացատրվում է ընտրված բնագավառներով (որոնց վերաբերյալ ավելի շատ է ռուսերեն գրականությունը)։

Գրքերի ու հոդվածների նկարագրությունների տակ տրված են ծանոթագրություններ՝ հայերեն հրատարակություններինը հայերեն, ռուսերեն հրատարակություններինը՝ ռուսերեն լեզվով։

Ծանոթագրությունների զգալի մասը (ռուսերեն) կազմել է Ա. Սորոտինսկայան, գիրքը նախ խմբագրել է Կ. Պաֆենգոլցը, ապա՝ ակադեմիկոս Ս. Մկրտչյանը։

Մատենագիտությունը մի շարք նյութեր չի ընդգրկել, մանավանդ՝ եվրոպական լեզուներով եղածը։ Քիչ չեն վրիպակները, անճշտությունները հատկապես հայկական բնագրերում, թեև, առհասարակ, այս մատենագիտությունը Հ. Պետրոսյանի աշխատություններից մեջ ավելի քիչ սխալներ ունեցողներից է։

Պետք է ասել, որ այս հետաքրքրական մատենագիտության հրապարակումը անցավ աննկատ։

1960 թվականին լույս տեսավ Հ. Պետրոսյանի վերջին հրապարակված մատենագիտական աշխատությունը՝ «Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ։ (Կենսաբիբլիոգրաֆիական ծանոթություններով)», հատոր 1, 539 էջ։

Առաջաբանում հեղինակը ասում է, որ ըստ իր ծրագրի աշխատությունը պետք է լինի բազմահատոր, եթե առաջինում ընդգրկված են հրապարակախոսներ, լրագրողներ և հասարակական գիտությունների գծով գիտնականներ, ապա հաջորդ հատորում (կամ հատորներում) հեղինակի ծրագրով պետք է տրվեր բնական և տեխնիկական գիտությունների գծով հայ գիտնականների մատենագիտությունը։

Հրատարակված առաջին հատորը ընդգրկում է 180 դրծիչ։ Հատորը բաժանված է երկու մասի՝ առաջին մասում այբբենական կարգով տրված են նախախորհրդային և սիրուքահայ հեղինակները, իսկ երկրորդում, կազմողի խոսքով ասած, «հիմնականում սովետահայ գիտնականներ, հրապարակախոսներ և ժուռնալիստներ»։ Այս «հիմնականում»-ը, անշուշտ, հատուկ նպատակով է ասված, քանի որ մատենագիտության երկրորդ մասում այնպիսի հեղինակներ են տեղ գտել, որոնք «սովետահայ գիտնական կամ հրապարակախոս» կարող են համարվել մեծ վերապահությամբ կամ որևէ կերպ չեն կարող համարվել։ Օրինակ, այդ շարքի մեջ են Հ. Թումանյանը, Վ. Տերյանը, Ս. Շահումյանը, Մ. Սպանդարյանը, Բ. Կնունյանցը, որոնց գրական կամ հասարակական գործունեությունը կա՛մ հիմնականում, կա՛մ լիովին վերաբերում է նախախորհրդային ժամանակաշրջանին։

Յուրաքանչյուր հեղինակի նվիրված բաժնում նախ տրվում է համառոտ ակնարկ նրա կյանքի ու գործի մասին, ապա՝ մատենագիտությունը, այստեղ էլ՝ սկզբում հեղինակի գործերը, հետո՝ գրականություն նրա մասին։ Քանի որ աշխատության մեջ հեղինակների մատենագիտության հետ տրր-

ված է նաև նրանց կենսագրությունը, ուստի Հ. Պետրոսյանը այս աշխատությունը կոչել է «կենսաբիբլիոգրաֆիա»՝ նշելով, որ իբր դա նորություն է հայ մշակութային կյանքում: Նա մոռացել էր, որ հենց ինքը մոտ քսան տարի առաջ հրապարակել էր նույն բնույթի մի գիրք՝ «Հայ հին և միջնադարյան գրականության բիբլիոգրաֆիան», ուր նույնպես յուրաքանչյուր հեղինակի մատենագիտությունից առաջ տեղեկանք է տրվում նրա կյանքի ու գործի մասին:

Պետրոսյանի այս աշխատությունն ունի տեղեկատվական որոշակի արժեք: Այն ընթերցողին տալիս է կենսագրական և մատենագիտական ոչ քիչ կարևոր տեղեկանքներ մի շարք հայ գործիչների մասին, թեև ոչ միշտ վստահելի և ստույգ:

Առաջաբանում դարձյալ անճիշտ վերաբերմունք կա մխիթարյան գիտնականների նկատմամբ: Այնտեղ կարդում ենք. «Գրքում եղած Վենետիկի և Վիեննայի մխիթարյանների կենսագրական ծանոթագրություններն ավելի համառոտ են, որովհետև մենք հարկ չենք համարել մանրազնին նկարագրել նրանց հոգևոր և կրոնա-եկեղեցական աշխատությունների բիբլիոգրաֆիան: Այդ գործիչներից ընտրված են միայն նրանք և նրանց այն աշխատությունները, որ հայագիտության բնագավառում ներկայացնում են որոշ գիտական հետաքրքրություն»: Ստացվում է, որ Ալիշանի, Այտնյանի, Ալգերյանի, Բագրատունու, Ջամչյանի, Տաշյանի և հայագիտության մյուս խոշոր ներկայացուցիչների երկերը «ներկայացնում են» սոսկ «որոշ գիտական հետաքրքրություն» և մատենագետը պիտի արել՝ նրանց տեղ տալով իր գրքի մեջ՝ հայ գիտնականների շարքում:

Մինչդեռ բավական է ծանոթանալ այս մատենագիտությանը, որպեսզի պարզ դառնա, որ այնտեղ կան որոշ հեղինակներ (հին և նոր), որոնց առհասարակ չի հարմարվում գիտնական, նուապաբակախոս կամ «ժուռնալիստ» անուններից որևէ մեկը:

Ամենից առաջ աչքի է ընկնում այն, որ «Հայ գրականության բիբլիոգրաֆիա» և «Սովետահայ գեղարվեստական

գրականության բիբլիոգրաֆիա» աշխատությունների մեջ տեղ գտած մի շարք հայ գրողներ տեղ են գտել նաև այստեղ, ինչպես օրինակ, Խ. Աբովյան, Պ. Պռոշյան, Ս. Շահազիզ, Ռ. Պատկանյան, Շերենց, Հ. Թումանյան, Շիրվանզադե, Վ. Տերյան, Դ. Դեմիրճյան և ուրիշներ։ Իհարկե, այս հեղինակները ունեցել են նաև հրապարակախոսական գործունեություն, բայց այդ դեպքում ո՞ր գրողն է, որ հրապարակախոսական գործունեություն բոլորովին չի ունեցել. գուցե Պ. Դուրյա՞նը կամ Մ. Պեշիկթաշլյա՞նը, Հ. Հովհաննիսյանը կամ Ա. Իսահակյա՞նը, Զ. Եսայա՞նը կամ Գ. Մահարի՞ն, որոնք և նրանց հետ շատ ու շատ ուրիշ հայ գրողներ դուրս են թողնված մատենագիտությունից։

Ավելին, մատենագիտությունից դուրս են մնացել բազմաթիվ հեղինակներ, որոնք բառի իսկական իմաստով հրապարակախոս և լրագրող («ժուռնալիստ»), մանավանդ պարբերականների խմբագիրներ են եղել, հիշենք միայն արևմտահայերից՝ Հովս. Պարոնյանին, Մ. Գոշունյանին, Վահան Փափազյանին, Մ. Կյուրճյանին, որոնց անունները չկան մատենագիտության մեջ։ Ինչ վերաբերում է գիտնականներին, ապա մատենագիտության մեջ տեղ չեն գտել այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են Ս. Ամատունին, Լ. Մանվելյանը, Գր. Վանցյանը, Յ. Խանզադյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը և շատ ուրիշներ, որոնք զուտ գիտնականներ են և՛ իրենց կոչմամբ, և՛ գրական արտադրանքով։

Այսպիսով, հենց նյութի ընտրությունն այս աշխատության մեջ անտրամաբան է, անհեռանկարային։ Անշուշտ, սխալ է հայ գրողներին այստեղ երկրորդ անգամ ներկայացնել, իսկ ոմանց՝ երրորդ (օրինակ Հ. Ալամդարյանը բացի «Հայ գրականության բիբլիոգրաֆիայի» 1-ին և 2-րդ հատորներից, տեղ է գտել նաև այս գրքի մեջ), և բազմաթիվ իսկական խմբագիրների, լրագրողների ու գիտնականների մոռացության մատնել։

Սկզբում թվում է, թե գրողների մատենագիտության մեջ նշվում են միայն նրանց հրապարակախոսական գործերը, սա-

կայն պարզվում է, որ այստեղ էլ հետևողականություն չկա. մերթ բերվում են և՛ գեղարվեստական, և՛ հրապարակախոսական գործերը, մերթ էլ միայն վերջիններս։ Երբեմն էլ դուրս են թողնվում հենց հրապարակախոսական բնույթի գործերը (օրինակ, Պ. Պռոշյանի և Դ. Աղայանի երկերի մատենագիտության մեջ չկան նրանց հուշագրական երկերը)։ Այլ կերպ ասած մատենագետը իր նախորդ աշխատություններին առանձին հատվածները մի՛րթ նույնությամբ է տեղադրել այստեղ, մի՛րթ էլ կրճատումներով։

Բայց արդյո՞ք միայն իր նախորդ աշխատություններից է այս նոր աշխատության մեջ «տեղադրումներ» արել Հ. Պետրոսյանը։ Պարզվում է, որ ոչ։ Այդտեղ «տեղադրված» են նաև ուրիշների ջանքերով ստեղծված մատենագիտական աշխատություններ, գլխավորապես Գիտությունների ակադեմիայի և Հանրային գրադարանի հրատարակություններից։

Առաջաբանում Հ. Պետրոսյանը գրում է. «Մի շարք գործիչների բիբլիոգրաֆիաներ մենք օգտագործել ենք Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի և Ալ. Մյասնիկյանի անվան պետական ռեսպուբլիկական գրադարանի հրատարակություններից»։

Պետրոսյանը չի նշում որոշակիորեն, թե որ գործիչներին նվիրված մատենագիտական աշխատություններն է «օգտագործել»։ Դրա պատճառն, ըստ երևույթին, այն է, որ նման նշումները շատ կլինեին, մինչդեռ առաջաբանում արված այդ ընդհանուր հայտարարությունը ապահովագրում է կազմողին առանձին հեղինակների բողոքների դեպքում։

Նկատվում է, որ Հ. Պետրոսյանը այս գրքում պատրաստի նյութեր է վերցրել գիտությունների ակադեմիայի կողմից հրատարակված այն մատենագիտական ցանկերից, որոնք նվիրված են Հ. Աճառյանին, Գ. Զափանցյանին, Մ. Աբեղյանին («Գրական-բանասիրական հետախուզումներ» գրքից, Եր., 1946), Ա. Բակունցին («Ակսել Բակունցի ստեղծագործությունը» գրքից, Եր., 1959), ինչպես և Հանրային գրադարանի «Եղիշե Չարենց», «Դերենիկ Դեմիրճյան», «Ալեքսանդր

Մյասնիկյան», «Սահփան Շահումյան» մատենագիտություններից [1]:

Մամուլում նշվեց, որ իր աշխատության մեջ «օգտագործելով» ուրիշների կազմած մատենագիտական ցանկերը՝ Հ. Պետրոսյանը վերցրել է նաև այդ ցանկերում տեղ գտած անճշտությունները:

Այժմ նշենք մատենագիտության մեջ տեղ գտած մի քանի այլ թերություններ: Իբրև այդպիսին կարելի է հիշել այն, որ մի շարք դիտնականների երբեմն ավելի երկրորդական աշխատությունների կողքին տեղ չեն գտել կարևորները: Հատկապես դա նկատվում է մխիթարյան դիտնականներին նվիրված բաժիններում: Օրինակ, Ղ. Ալիշանի երկերի ցանկում չկա «Սիսուան» հայանի գիրքը, իսկ Ն. Ակինյանի աշխատությունների ցանկում չկա եղիշեին նվիրված նրա եռահատոր հայանի ուսումնասիրությունը, ինչպես և «Երեմիա Քյոմուրճյան» աշխատությունը: Այս երկերը իրբև «կրոնա-եկեղեցական» պիտակելու և ցանկից դուրս թողնելու հիմք, հասկանալի է, չկա:

Աշխատության մեջ առանձին հեղինակների կյանքի ու գործի մասին շատ են սխալ, երբեմն հակասական տեղեկությունները: Օրինակ, Ա. Բակունցին նվիրված բաժնի նյութերից մե՛րթ սաացվում է այնպես, որ գրողի առաջին գործը տպագրվել է «Տարազում», մերթ՝ «Աղբյուրում» կամ՝ ըստ աշխատության այդ գործը մերթ տպվել է 1913-ին, մերթ՝ 1911-ին: Սրա պատճառն այն է, որ Բակունցի կենսագրությունը հեղինակը վերցրել է մի աղբյուրից, մատենագիտությունը՝ մի այլ և դոնե չի համեմատել, հակասությունները վերացնելու նպատակով:

Այս աշխատության մեջ նույնպես կան աղավաղումներ: Բերենք մի քանի օրինակ. Ա. Մյասնիկյանի «Գաղթային հար-

---

1 *Տե՛ս, օրինակ,* Ա. Մարգարյան *Ունկնդրել քննադատության ձայնին:— «Լենինյան ուղով», 1960, № 10, էջ 106, նաև «Գրական թերթ», 1960, № 32:*

յը» դարձել է «Գաղութային հարց», Գ. Դափանցյանի «Հայաստան հայերի բնօրրան»-ը՝ «Հայաստան հայերի բնօրյան», Ս. Նազարյանի «Առաջին հոդեղեն կերակուր»-ը դարձել է «Առաջին հոդեղեն կերակուր», Ա. Բակունցի «Աշխատենք այնպես կրթոտ...»-ը դարձել է «Աշխատենք այնպես կոնկրետ...», Ալիշանի «Բա՛մ փորոտան»-ը՝ «Բամբ որոտան», «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ն դարձել է «Բառարան հայկազեան լեզուի», «Թադէի երիցու պատմական մեկ գործը» դարձել է «Դադեի եկեղեցու պատմական մեկ գործը» և այսպես շարունակ։

Այստեղ ևս շատ են հատուկ անունների աղավաղումները. ինչպես՝ Ջ. Բայրոն-ը դարձել է Լ. Բայրոն (լորդ բառի առաջին տառը դիտվել է իբրև անվան սկզբնատառ), Ռոխմենե-ը՝ Ռոմմեն, Սյուրմեյան-ը՝ Սյուրմելյան, Գորիե-ն՝ Գյոթե, Անբիլիաս-ը՝ Աբիլաս և այլն։ Նույնիսկ խմբագիր Ա. Ոսկերչյանի անունը աղավաղվելով՝ գրքի վրա դարձել է՝ Ս. Ոսկերչյան։ Գրքի տիտղոսաթերթին, վերնագրում անգամ սխալներ են տեղ գտել. ռուսերեն տիտղոսաթերթում փոխանակ «Армянские ученые», «составил» կարդում ենք «Армянские ученные», состовил»։

Աշխատությունը գրախոսողները բազմաթիվ այլ թերություններ էլ նշեցին, սակայն նաև բավական խիստ խոսքեր հնդինակի հասցեին[1]։

«Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ» մատենագիտության 1-ին հատորի հրապարակումով ավարտվեց, ավելի ճիշտ, ընդհատվեց Հ. Պետրոսյանի բավական եռանդուն մատենագիտական գործունեությունը։

Այժմ, երբ քառորդ դար է անցել Հ. Պետրոսյանի առաջին աշխատությունների, և ավելի քան վեց տարի վերջին մատենագիտության հրապարակման օրից, երբ արդեն անցյալ են

---

1 Ս. Շահիկյան «Երբ հաշվի չի առնվում քննադատությունը»։—«Սովետ. գրակ.», 1961, № 1, էջ 172։ Հ. Դավթյան Հայ նշանավոր մարդկանց նվիրված մատենագիտություն։— «Գրադարանավար», 1960, № 5, էջ 30։

դարձել մատենագետի աշխատանքը խաչաձև կրակի տակ առնող գրախոսականների հրապարակումները, կարելի է ավելի ճիշտ գնահատական տալ Պետրոսյանի թողած ժառանգությունը։

Ինչպես տեսանք, ինքը՝ Հ. Պետրոսյանը առիթը բաց չի թողել ամենախիստ խոսքերով պիտակելու իրեն նախորդած հայ մատենագետներին և նրանց աշխատությունները։ Ու թեև նա շատ անարդար է եղել Ա. Ղազիկյանի, Գ. Ջահուկյանի, Գ. Գալեմքյարյանի և իրենից առաջ ապրած ու գործած ուրիշ երախտավորների նկատմամբ, այսօր ճիշտ չի լինի անարդար լինել նաև իր՝ Հ. Պետրոսյանի նկատմամբ և չխոստովանել, որ որոշ դեպքերում նրա քննադատները չափից ավելի խիստ, իսկ երբեմն էլ անարդար են եղել։

«Այս աշխատանքը կատարվել է միանգամայն ծանր պայմաններում»,— գրել է Հ. Պետրոսյանը հայ պարբերական մամուլի իր կազմած մատենագիտության առաջին հատորի առաջաբանում (էջ V)։ Միայն մատենագիտական ծանր աշխատանք կատարած մարդը կարող է հասկանալ անկեղծորեն ասված այս խոսքը։

«Քսան տարի է, մենք աշխատում ենք հայ գրականության և պարբերական մամուլի բիբլիոգրաֆիայի վրա»,— գրել է Պետրոսյանը նույն առաջաբանում։ Այո՛, քսան տարիների տքնաջան աշխատանք Երևանի հանրային գրադարանի և Մատենադարանի նկուղներում, հին քարտարանների առջև, քարտագրման, հազարավոր քարտերի ու թերթիկների դասավորման և վերադասավորման դժվարին, տաղտկալի աշխատանք... Քսան տարում հազիվ թե մեկ ուրիշը հասցներ կազմելու մատենագիտական ցանկերի այն ութ ստվար հատորները, որոնք այսօր կրում են Հ. Պետրոսյանի անունը, դեռ չենք հաշվում մի քանի հատոր կազմող նրա չհրապարակված գործերը, ինչպես նաև նրա գործուն աջակցությամբ կազմված «Հայկական ՍՍՌ գյուղատնտեսական գրականության բիբլիոգրաֆիան»։

Անկասկած է, որ Պետրոսյանի աշխատությունների մեջ

տեղ գտած այն բոլոր թերությունները, որոնց մասին խոսվել է ու գրվել բազմիցս, իրական են (որոշ բացառություններով)։ Սակայն դրանցով հանդերձ Պետրոսյանի կազմած մատենագիտական աշխատությունների հատորները շատ լուրջ ներդրում են հայ բազմադարյան մատենագիտության ասպարեզում, և նրանց կարևոր նշանակությունն այսօր անուրանալի է։

Տողերիս հեղինակը ոչ քիչ դիպքերի է ականատես եղել, երբ ընթերցողը զայրացել է, քննադատել Պետրոսյանի որևէ մատենագիտական աշխատության կոպիտ սխալները, ջղային խփել է գիրքը սեղանին ու հեռացել, սակայն ժամանակ անց նորից սաիպված է եղել դիմելու նույն մատենագիտությանը և օգտվել նրանից։

Այսօր Պետրոսյանի կազմած մատենագիտական աշխատությունները իրենց տված տեղեկանքներով, որոշ իմաստով, անփոխարինելի են։ Նրանք հեռու են լրիվ տեղեկանքներ տալուց, նրանք սխալաշատ են, սակայն իրենց տեսակի մեջ միակն են, քանի որ գոնե ոչ լրիվ տեղեկանքներ տալիս են, գոնե ինչ-որ հունի մեջ գցում են ընթերցողին, ուսումնասիրողին, որից հետո նա ինքը շարունակում է իր որոնումները։

Հայոց հսկա պարբերական մամուլը թերթել որևէ տեղեկանքի համար անիմաստ ու անհնար բան է, իսկ Պետրոսյանի աշխատությունը, ինչպես ցույց է տալիս փորձը, որևէ, թեկուզ թերի տեղեկանք տալիս է, որի հետքերով գնալու դեպքում որոնողը արդեն ինքնուրույնաբար նոր նյութեր է հայտնաբերում։ Ինքը՝ Հ. Պետրոսյանն էլ կյանքի վերջում այդպես է պատկերացրել իր աշխատությունների դերը. «Մեր հիմնական նպատակն է տեղեկատու-բիբլիոգրաֆիական նյութեր տրամադրել գիտական աշխատողներին, ուսանողությանը, որոշ օգնություն, ուղղություն ցույց տալ նրանց իրենց հետագա պրպտումների, լրացումների համար»[1]։ Ահա այս որոշ, բայց հաճախ չափազանց կարևոր օգնությունը Հ. Պետ-

1 «Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ», էջ VI,



Հ. Պետրոսյանի «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիայի» առաջին հատորը

րոսյանի աշխատությունները ցույց են տվել և շարունակում են ցույց տալ հազարավոր ընթերցողների։

Փաստ է, որ տարիների ընթացքում բացի Պետրոսյանից ուրիշ ոչ ոք չուզեց կամ չհամարձակվեց իր ուսերի վրա վերցնել ընթերցողների լայն զանգվածներին այնքան անհրաժեշտ հայ մեծ մատենագիտության ստեղծման ծանր բեռը։ Մա-

տեղագիտություն քննադատելն, անշուշտ, հեշտ է, քանի որ դա այն բնագավառն է, ուր ամենից մեծ է սխալներ, վրիպակներ թույլ տալու հնարավորությունը, սակայն մատենագիտություն կազմելը (թող լինի սխալաշատ մատենագիտություն) ծանր, շատ ծանր գործ է, և համենայն դեպս, կարող գիտնականները խուսափում են այդ գործից։

Հ. Պետրոսյանի աշխատությունները խստագույն քննադատողներից մեկը՝ իրավացիորեն գրում էր. «Բիբլիոգրաֆիա կազմողն ամենից առաջ պետք է լինի խիստ համբերատար, ծայր աստիճան բարեխիղճ անձնավորություն։ Նա պետք է լինի էնցիկլոպեդիստ, որովհետև բիբլիոգրաֆիա, հատկապես մամուլի բիբլիոգրաֆիա կազմողից պահանջվում է ճիշտ գնահատել և բարեխղճորեն բացատրել, ծանոթագրել այն բազմազան հարցերը, որ շոշափված են տվյալ ժամանակաշրջանի մամուլում»[1]։

Սա մատենագիտական աշխատանքի միանգամայն ճիշտ, լիարժեք բնորոշում է, սակայն դա սոսկ տեսություն է, գործնականից հեռու։ Անցած 45 տարվա ընթացքում քա՞նի այդպիսի «էնցիկլոպեդիստ», այդքան բարեխիղճ և գիտական այդպիսի մեծ պաշար ունեցող մարդ է իրեն նվիրել մատենագիտությանը։ Եթե հաշվենք, պատկերը բնավ մխիթարական չի լինի։ Այն ժամանակ, երբ հայ մատենագիտության բնագավառում հսկայական գործ կա անելու և Հայաստանի գիտական հիմնարկներում էլ այսօր բիչ չեն հենց զարգացած ու բարեխիղճ գիտնականները, սակայն նրանք գերադասում են գիտական ուսումնասիրություններ գրել և լսել չեն ուզում մատենագիտական աշխատանքին նվիրվելու մասին։ Ի դեպ, ասենք նաև, որ այդ գիտնականներից ոմանք մատենագիտական աշխատանքը համարում են երկրորդական կարգի, ոչ բավականաչափ բարձր գիտական գործ։

Ուշագրավ է այն, որ Հակոբ Անանյանը, ամեն տեսակետից օրինակելի մի մատենագետ, գիտական աստիճան ստա-

---

1 «Սովետ. գրականություն», 1958, № 6, էջ 158։

ցավ ոչ թե իր «Հայկական մատենագիտության» հոյակապ հատորի, այլ պատմական մի ուսումնասիրության համար։

Հ. Պետրոսյանը ուներ աշխատելու մեծ կորով և համբերատարություն, սակայն նրան պակասում էին վերևը բերված քաղվածքում ասված որոշ հատկություններ (էնցիկլոպեդիստ և այլն)։ Մի՞թե դա նշանակում է, որ Պետրոսյանը չպետք է զբաղվեր մատենագիտությամբ։ Բարեբախտաբար, ինքը Պետրոսյանը այդպես չի մտածել, հակառակ դեպքում, այսօր մենք չէինք ունենա ընթերցողների ամենօրյա օգտագործմանը դրված այն սուվար հատորները, որոնց բացակայությունը շատ նկատելի կլիներ հայ մատենագիտության մեջ։

Ամեն մի մատենագիտության սխալները, անշուշտ, պետք է նշել անողոքաբար, առանց որևէ բան թաքցնելու, բայց և պետք է կարողանալ գնահատել հոգնատանջ, դժվարին, որոշ դեպքերում արհամարհված աշխատանքի արդյունքը, կարողանալ տեսնել նրա փաստական օգնությունը սովորողներին, գիտնականներին, բոլոր ընթերցողներին։

Ասենք նաև այն, որ Հ. Պետրոսյանի աշխատությունների մեջ եղած անհամար թերությունների մի զգալի մասը չէր լինի, եթե այդ աշխատությունները մասնագիտորեն, մանավանդ բարեխղճորեն խմբագրվեին։

Բազմիցս է առաջ քաշվել այն հարցը, որ մատենագիտությունը պետք է երկու խմբագիր ունենա. մեկը տվյալ բնագավառի (գրականություն, տեխնիկա և այլն) մասնագետ, մյուսը՝ մատենագետ և, որ ամենակարևորն է, մատենագիտական աշխատանքի խմբագրումը պետք է վստահվի միայն շատ բծախնդիր ու բարեխիղճ մարդկանց։

Քիչ կարևոր չէ նաև սրբագրչի հարցը։ Պետրոսյանին քննադատող գրախոսականներից մեկում նշվում է հատկապես այդ մասին. «Բիբլիոգրաֆիական աշխատանքի տեխնիկական և գիտական մասերն այնքան սերտ ձուլված են իրար, որ հաճախ մի տառասխալը, մի թվանշանը կարող են տվյալ բացատրությունը վիժեցնել այնպես, ինչպես բառարանում կամ թվաբանական խնդրում եղած «վրիպակը»։ Հետևաբար, լայն

ցավ ոչ թե իր «Հայկական մատենագիտության» հոյակապ հատորի, այլ պատմական մի ուսումնասիրության համար։

Հ. Պետրոսյանը ուներ աշխատելու մեծ կորով և համբերատարություն, սակայն նրան պակասում էին վերևը բերված քաղվածքում ասված որոշ հատկություններ (էնցիկլոպեդիստ և այլն)։ Մի՞թե դա նշանակում է, որ Պետրոսյանը չպետք է զբաղվեր մատենագիտությամբ։ Բարեբախտաբար, ինքը Պետրոսյանը այդպես չի մտածել, հակառակ դեպքում, այսօր մենք չէինք ունենա ընթերցողների ամենօրյա օգտագործմանը դրված այն սուվար հատորները, որոնց բացակայությունը շատ նկատելի կլիներ հայ մատենագիտության մեջ։

Ամեն մի մատենագիտության սխալները, անշուշտ, պետք է նշել անողոքաբար, առանց որևէ բան թաքցնելու, բայց և պետք է կարողանալ գնահատել հոգնատանջ, դժվարին, որոշ դեպքերում արհամարհված աշխատանքի արդյունքը, կարողանալ տեսնել նրա փաստական օգնությունը սովորողներին, գիտնականներին, բոլոր ընթերցողներին։

Ասենք նաև այն, որ Հ. Պետրոսյանի աշխատությունների մեջ եղած անհամար թերությունների մի զգալի մասը չէր լինի, եթե այդ աշխատությունները մասնագիտորեն, մանավանդ բարեխղճորեն խմբագրվեին։

Բազմիցս է առաջ քաշվել այն հարցը, որ մատենագիտությունը պետք է երկու խմբագիր ունենա. մեկը տվյալ բնագավառի (գրականություն, տեխնիկա և այլն) մասնագետ, մյուսը՝ մատենագետ և, որ ամենակարևորն է, մատենագիտական աշխատանքի խմբագրումը պետք է վստահվի միայն շատ բծախնդիր ու բարեխիղճ մարդկանց։

Քիչ կարևոր չէ նաև սրբագրչի հարցը։ Պետրոսյանին քննադատող գրախոսականներից մեկում նշվում է հատկապես այդ մասին. «Բիբլիոգրաֆիական աշխատանքի տեխնիկական և գիտական մասերն այնքան սերտ ձուլված են իրար, որ հաճախ մի տառասխալը, մի թվանշանը կարող են տվյալ բացատրությունը վիժեցնել այնպես, ինչպես բառարանում կամ թվաբանական խնդրում եղած «վրիպակը»։ Հետևաբար, լայն

պատրաստականություն պետք է ունենա նաև բիբլիոգրաֆիական աշխատանքի սրբագրիչը։ Ինչպես որ բիբլիոգրաֆիական ուսումնասիրությունն կազմելը տեխնիկական աշխատանք չէ, տեխնիկական աշխատանք չէ նաև գիտական աշխատանքի սրբագրությունը. այս է պատճառը, որ բարեխիղճ դիտնականները մեծ մասամբ իրենք են կատարում իրենց գրքի սրբագրությունը»[1]։

«Հայ գրականության բիբլիոգրաֆիա»-ն, օրինակ, ավելի սխալաշատ կլիներ, եթե նախնական սրբագրիչը բանիմաց չլիներ և չուղղեր բազմաթիվ սխալներ։ Թեև կարևոր է նշել, որ լեզվական սխալների, ինչպես և անունների ու վերնագրերի աղավաղումների ուղղումը ոչ թե նախնական, այլ վերստուգող սրբագրիչի պարտականությունն է (նախնականը նույնիսկ իրավունք չունի բնագրի մեջ կամ բնագրին հակառակ ուղղումներ անելու)։

Առհասարակ, մատենագիտական աշխատությունների վերստուգող սրբագրիչի հարցը մեզանում անուշադրության է մատնված։ Երբեմն մատենագիտական աշխատությունները, իբրև սովորական բնագրեր հանձնարարվում են փորձառություն չունեցող, սրբագրություն լավ չիմացող մարդկանց, մինչդեռ մատենագիտություն սրբագրելը հատուկ ուշադրության առարկա պետք է լինի։

Ըստ հարկի դնահատելով Հ. Պետրոսյանի թողած մատենագիտական ժառանգությունը, միաժամանակ անհրաժեշտ ենք համարում նշել, որ հայ պարբերական մամուլի, հայ գեղարվեստական գրականության ամբողջական մատենագիտություն կազմելու խնդիրը դեռևս լուծված չէ։ Մանավանդ, չլուծված է մնում նախախորհրդային հայ պարբերական մամուլի հոդվածների մատենագիտության խնդիրը։

---

1 «Սովետ. գրականություն», 1958, № 6, էջ 158։

պատրաստականություն պետք է ունենա նաև բիբլիոգրաֆիական աշխատանքի սրբագրիչը։ Ինչպես որ բիբլիոգրաֆիական ուսումնասիրություն կազմելը տեխնիկական աշխատանք չէ, տեխնիկական աշխատանք չէ նաև գիտական աշխատանքի սրբագրությունը. այս է պատճառը, որ բարեխիղճ դիտնականները մեծ մասամբ իրենք են կատարում իրենց գրքի սրբագրությունը»[1]։

«Հայ գրականության բիբլիոգրաֆիա»-ն, օրինակ, ավելի սխալաշատ կլիներ, եթե նախնական սրբագրիչը բանիմաց չլիներ և չուղղեր բազմաթիվ սխալներ։ Թեև կարևոր է նշել, որ լեզվական սխալների, ինչպես և անունների ու վերնագրերի աղավաղումների ուղղումը ոչ թե նախնական, այլ վերստուգող սրբագրիչի պարտականությունն է (նախնականը նույնիսկ իրավունք չունի բնագրի մեջ կամ բնագրին հակառակ ուղղումներ անելու)։

Առհասարակ, մատենագիտական աշխատությունների վերստուգող սրբագրիչի հարցը մեզանում անուշադրության է մատնված։ Երբեմն մատենագիտական աշխատությունները, իբրև սովորական բնագրեր հանձնարարվում են փորձառություն չունեցող, սրբագրություն լավ չիմացող մարդկանց, մինչդեռ մատենագիտություն սրբագրելը հատուկ ուշադրության առարկա պետք է լինի։

Ըստ հարկի գնահատելով Հ. Պետրոսյանի թողած մատենագիտական ժառանգությունը, միաժամանակ անհրաժեշտ ենք համարում նշել, որ հայ պարբերական մամուլի, հայ գեղարվեստական գրականության ամբողջական մատենագիտություն կազմելու խնդիրը դեռևս լուծված չէ։ Մանավանդ, չլուծված է մնում նախախորհրդային հայ պարբերական մամուլի հոդվածների մատենագիտության խնդիրը։

---

1 «Սովետ. գրականություն», 1958, № 6, էջ 158։

***

Գրապալատը իր գոյության ավելի քան չորս տասնամյակի ընթացքում հսկայական գործ է կատարել հայկական մատենագիտության բնագավառում: Գրապալատը եղավ առաջին մասնագիտացած մատենագիտական հիմնարկը Հայաստանում և արձանագրման ու հաշվառման ենթարկեց հանրապետության տպագիր արտադրանքը անցած 46 տարիներում:

Գրապալատի աշխատանքը ծավալվեց երեք հիմնական ուղղություններով. Հայաստանի տպագիր ողջ արտադրանքի արձանագրական մատենագիտության, կենտրոնացված դրացուցակավորման և առանձին մատենագիտական աշխատությունների լույս ընծայման:

Ամենից կարևորն, անշուշտ, արձանագրական մատենագիտությունն է, տարբեր տարեգրերի հրատարակումը: Դրա շնորհիվ ստեղծվեց մատենագիտական մեծածավալ մի գրականություն, որը որոշ լրացումներից հետո լրիվ կներկայացնի Խորհրդային Հայաստանի ամբողջ տպագիր արտադրանքը՝ գրքեր, պարբերականներ, հոդվածներ: Այսօր գրապալատի հրատարակած տարեգրերի բազմաթիվ համարների միջոցով է, որ կարելի է ամենատարբեր մատենագիտական տեղեկանքներն ստանալ Հանրապետությունում լույս տեսած շուրջ 30 հազար գրքերի և բազմաթիվ պարբերականների վերաբերյալ: Բացի այդ, գրապալատի տարեգրային մատենագիտությունը մի պատրաստի հիմք է, որի վրա կարելի է կառուցել Խորհրդային շրջանի հայ տպագիր գրքի և պարբերականների հոդվածների ապագա սիստեմատիկ լիակատար մատենագիտությունը (բազմահատոր), որի կարիքը այնքան մեծ է:

Կարևոր եղավ նաև կենտրոնացված գրացուցակավորման կազմակերպումը տպագիր քարտերի հրատարակման միջոցով: Տպագիր քարտերը զգալի օգնություն ցույց ավեցին Հայաստանի գյուղական, շրջանային և քաղաքային գրադարաններին՝ քարտային գրացուցակների կազմակերպման և բարե-

***

Գրապալատը իր գոյության ավելի քան չորս տասնամյակի ընթացքում հսկայական գործ է կատարել հայկական մատենագիտության բնագավառում։ Գրապալատը եղավ առաջին մատենագիտացած մատենագիտական հիմնարկը Հայաստանում և արձանագրման ու հաշվառման ենթարկեց հանրապետության տպագիր արտադրանքը անցած 46 տարիների։

Գրապալատի աշխատանքը ծավալվեց երեք հիմնական ուղղություններով. Հայաստանի տպագիր ողջ արտադրանքի արձանագրական մատենագիտության, կենտրոնացված գրացուցակավորման և առանձին մատենագիտական աշխատությունների լույս ընծայման։

Ամենից կարևորն, անշուշտ, արձանագրական մատենագիտությունն է, տարբեր տարեգրերի հրատարակումը։ Դրա շնորհիվ ստեղծվեց մատենագիտական մեծածավալ մի գրականություն, որը որոշ լրացումներից հետո լրիվ կներկայացնի Խորհրդային Հայաստանի ամբողջ տպագիր արտադրանքը՝ գրքեր, պարբերականներ, հոդվածներ։ Այսօր գրապալատի հրատարակած տարեգրերի բազմաթիվ համարների միջոցով է, որ կարելի է ամենատարբեր մատենագիտական տեղեկանքներն ստանալ հանրապետությունում լույս տեսած շուրջ 30 հազար գրքերի և բազմաթիվ պարբերականների վերաբերյալ։ Բացի այդ, գրապալատի տարեգրային մատենագիտությունը մի պատրաստի հիմք է, որի վրա կարելի է կառուցել խորհրդային շրջանի հայ տպագիր գրքի և պարբերականների հոդվածների ապագա սիստեմատիկ լիակատար մատենագիտությունը (բազմահատոր), որի կարիքը այնքան մեծ է։

Կարևոր եղավ նաև կենտրոնացված գրացուցակավորման կազմակերպումը տպագիր քարտերի հրատարակման միջոցով։ Տպագիր քարտերը զգալի օգնություն ցույց տվեցին Հայաստանի գյուղական, շրջանային և քաղաքային գրադարաններին՝ քարտային գրացուցակների կազմակերպման և բարե-

լավման գործում: Ավելացնենք նաև, որ տպագիր քարտերից գրապալատում այժմ կազմված գրացուցակը նույնպես լրջորեն կարող է օգնել հայ տպագիր գրքի մատենագիտության կազմմանը:

Առանձին մատենագիտական հրատարակություններից, իհարկե, ամենակարևորը Հ. Պետրոսյանի աշխատությունների հրատարակումն էր: Դեռևս ոչ մի հայ մատենագետ այդպիսի ծավալուն արտադրանք չի տվել: Ինչ վերաբերում է հանձնարարական մատենագիտությանը, ապա թեև նրա կազմման պարտականությունը նույնպես նախապես դրված էր գրապալատի վրա, սակայն վերջինս մեկ-երկու այդպիսի ցանկեր հրատարակելուց այն կողմ չգնաց: Նույնը եղավ նաև Համամիութենական և մյուս հանրապետությունների գրապալատներում: Դրա պատճառը միանգամայն պարզ է. գրապալատը չունի ոչ գրքային, ոչ գրացուցակային համապատասխան հիմք, ոչ էլ ընթերցողներ, որոնց համար հատկացվում են հանձնարարական թեմատիկ ցանկերը:

Հանձնարարական ցանկեր կարող էր կազմել հանրապետական գրադարանը, որն ունի և՛ գրքային, և՛ գրացուցակային հիմք, և՛ ընթերցողների ամենատարբեր խմբեր:

լավման գործում։ Ավելացնենք նաև, որ տպագիր քարտերից գրապալատում այժմ կազմված գրացուցակը նույնպես լրջորեն կարող է օգնել հայ տպագիր գրքի մատենագիտության կազմմանը։

Առանձին մատենագիտական հրատարակություններից, իհարկե, ամենակարևորը Հ. Պետրոսյանի աշխատությունների հրատարակումն էր։ Դեռևս ոչ մի հայ մատենագետ այդպիսի ծավալուն արտադրանք չի ավել։ Ինչ վերաբերում է հանձնարարական մատենագիտությանը, ապա թեև նրա կազմման պարտականությունը նույնպես նախապես դրված էր գրապալատի վրա, սակայն վերջինս մեկ-երկու այդպիսի ցանկեր հրատարակելուց այն կողմ չգնաց։ Նույնը եղավ նաև Համամիութենական և մյուս հանրապետությունների գրապալատներում։ Դրա պատճառը միանգամայն պարզ է. գրապալատը չունի ոչ գրքային, ոչ գրացուցակային համապատասխան հիմք, ոչ էլ ընթերցողներ, որոնց համար հատկացվում են հանձնարարական թեմատիկ ցանկերը։

Հանձնարարական ցանկեր կարող էր կազմել հանրապետական գրադարանը, որն ունի և՛ գրքային, և՛ գրացուցակային հիմք, և՛ ընթերցողների ամենատարբեր խմբեր։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Ա.Լ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Մատենագիտական աշխատանք սկսելու համար Հանրային գրադարանին ամենից առաջ պետք էին երեք նախադրյալ՝ ա) գրքերի ու պարբերականների հարուստ ունեցվածքի ստեղծում, բ) վստահելի քարտային գրացուցակների կազմում, գ) որակյալ մատենագետ-մասնագետներ։

20-ական թվականների առաջին կեսին այս երեք նախադրյալներից ոչ մեկն էլ Հանրային գրադարանը չուներ։

Մինչև 1925 թվականը գրադարանի գրքային ունեցվածքը համալրվում էր հիմնականում տարբեր նվիրատվությունների շնորհիվ։ 1924 թվականի մայիսից Հանրային գրադարանին իրավունք տրվեց Խորհրդային Միության մեջ հրատարակվող բոլոր տպագիր երկերից ստանալ մեկական ձրի պարտադիր օրինակ։ Նախքան այդ Հանրային գրադարանը ձրի պարտադիր օրինակ էր ստանում միայն Հայաստանում բոլոր լեզուներով լույս տեսնող տպագիր երկերից։ Միութենական ձրի պարտադիր օրինակը Հանրային գրադարանը ստացավ մինչև 1959 թվականը։ Այնուհետև, մինչև օրս գրադարանը ձրի պարտադիր օրինակ շարունակում է ստանալ Հայաստանում հրատարակված գրականությունից, իսկ Միության մեջ հրատարակված ռուսերեն գրքերը ստանում է Մոսկվայի գիտական գրադարանների կոլեկտորից, իբրև գնովի պարտադիր օրինակ։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Ա.Լ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Մատենագիտական աշխատանք սկսելու համար Հանրային գրադարանին ամենից առաջ պետք էին երեք նախադրյալ՝ ա) գրքերի ու պարբերականների հարուստ ունեցվածքի ըստեղծում, բ) վստահելի քարտային գրացուցակների կազմում, գ) որակյալ մատենագետ-մասնագետներ։

20-ական թվականների առաջին կեսին այս երեք նախադրյալներից ոչ մեկն էլ Հանրային գրադարանը չուներ։

Մինչև 1925 թվականը գրադարանի գրքային ունեցվածքը համալրվում էր հիմնականում տարբեր նվիրատվություններն շնորհիվ։ 1924 թվականի մայիսից Հանրային գրադարանին իրավունք տրվեց Խորհրդային Միության մեջ հրատարակվող բոլոր տպագիր երկերից ստանալ մեկական ձրի պարտադիր օրինակ։ Նախքան այդ Հանրային գրադարանը ձրի պարտադիր օրինակ էր ստանում միայն Հայաստանում բոլոր լեզուներով լույս տեսնող տպագիր երկերից։ Միութենական ձրի պարտադիր օրինակը Հանրային գրադարանը ստացավ մինչև 1959 թվականը։ Այնուհետև, մինչև օրս գրադարանը ձրի պարտադիր օրինակ շարունակում է ստանալ Հայաստանում հրատարակված գրականություն, իսկ Միության մեջ հրատարակված ռուսերեն գրքերը ստանում է Մոսկվայի գիտական գրադարանների կոլեկտորից, իբրև գնովի պարտադիր օրինակ։

Գրադարանի գրքերի, պարբերականների և այլ տպագիր երկերի քանակական աճը հետևյալ պատկերն ունի. 1921 թվականին՝ 40.000 միավոր, 1925-ին՝ 200.000, 1929-ին՝ 500.000, 1940-ին՝ 1.600.000, 1947-ին՝ 2.100.000, 1959-ին՝ 4.453.615, 1965-ին՝ մոտ 6.000.000։

Ոչ մի խոշոր գրադարան չի կարող աշխատել առանց իր գրքային ունեցվածքն արտացոլող գրացուցակների։ Ընթերցողների ամենօրյա սպասարկումն անգամ անհնար է առանց գրացուցակների, էլ չենք ասում տեղեկատու-մատենագիտական որևէ աշխատանքի մասին։ Միայն գրացուցակներն են հնարավորություն տալիս օգտագործելու խոշոր գրադարանի հարուստ գրականությունը։

Հանրային գրադարանը ստեղծվեց մի քանի գրադարանների միավորումից, որոնցից ամենախոշորը Երևանի արական և իգական դիմնազիաների գրադարանն էր՝ 18000 միավոր գրականությամբ։ Դիմնազիայի գրադարանն ունեցել է իր քարտային գրացուցակները, սակայն Հանրային գրադարանին պետք էին բոլորովին նոր գրացուցակներ, այնտեղ հավաքվող ողջ գրականությունն արտահայտող։

1923 թվականին Հանրային գրադարանում աշխատանքներ են սկսվում օրավուր աճող գրականության գրադարանային մշակման և քարտային գրացուցակներ ստեղծելու ուղղությամբ։ Գրականությունը դասակարգվում է ըստ գիտության և մշակույթի ճյուղերի, տասնորդական համակարգով, նախ կազմվում է այբբենական գրացուցակ։

Նոր կազմվող գրացուցակի համար սկզբում օգտագործվում էին գիմնազիայի գրացուցակի քարտերը, որոնց հակառակ երեսներին գրանցվում էին գրքերի նոր նկարագրությունները։ Դրանք մեծ (13×10) և անհարմար քարտեր էին, որոնք օգտագործվում էին կանգնած վիճակում։ Շուտով պարզ է դառնում, որ անհրաժեշտ է գրացուցակներ ստեղծել նոր եղանակով։

1929 թվականին գրադարանի գիտական խորհուրդը որոշում է ընդունում ստեղծել բոլորովին նոր այբբենական և

սիստեմատիկ գրացուցակներ՝ օգտագործելով գրքերի նկարագրության ավելի նոր, միջազգային դարձած կանոններ և ամենուրեք ընդունված միասչափ քարտեր (7,5×12,5 սմ)։



Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի ընթերցողական գրացուցակները

1926 թվականից Հայաստանի պետական գրապալատը սկսեց թողարկել հանրապետությունում լույս տեսնող գրականության տպագիր քարտեր (տարեգրերի նկարագրությունները փակցված քարտերի վրա)։ Երբ 1929 թվականին Հանրային գրադարանում լուրջ աշխատանքներ են ծավալվում գրքերի մշակման և նոր ու լիարժեք գրացուցակներ ստեղծելու ուղղությամբ, գրադարանում սկսում են օգտագործել նաև գրապալատի քարտերը (ընթացիկ գրականության քարտերից բացի, գրապալատից հնարավոր է լինում ձեռք

էրել 1926-ից մինչև 1929 թվականը պատրաստված քարտերը)։

1940 թվականից սկսեցին կազմվել գրադարանի ընթերցողական գրացուցակները, որոնք 1950 թվականից դրվեցին ընթերցողների տրամադրության տակ, գրացուցակների և քարտարանների սենյակում։ Միաժամանակ նախկին այբբենական և սիստեմատիկ գրացուցակները դրվեցին մշակման բաժնում, որպես գլխավոր ծառայողական գրացուցակներ։ Ներկայումս դրանք օգտագործվում են գրադարանի աշխատակիցների կողմից մատենագիտական տարբեր տեղեկանքները տալու, ցանկեր կազմելու, գրականության համալրման, նոր ստացված գրքերի մշակման և այլ նպատակներով։

Գրադարանում 1959 թվականից սկսվեցին ռուս պարբերական մամուլի գրացուցակ կազմելու աշխատանքները, որոնք այժմ ավարտված են։ Սկսված է նաև հայ պարբերական մամուլի գրացուցակի կազմումը (առայժմ գրացուցակի դեր է կատարում պարբերականների գրանցման բարտարանը)։

Ընթերցողական գրացուցակները երբեմն չեն բավարարում ընթերցողներին, քանի որ նրանք կազմվել են այն ժամանակ, երբ իշխում էր մի տեսություն, ըստ որի գրադարանի ընդհանուր գրապահոցում եղած գրքերի մի մասը, որը գրադարանավարի կարծիքով հնացած է կամ անօգտակար, չպետք է ցույց տրվի ընթերցողին, ուստի և չպետք է արտացոլվի ընթերցողական գրացուցակներում։ Այս տեսակետը մի շարք գրադարաններում աշխատակիցները օգտագործում էին պաշտպանելու համար իրենց մեղքով անբարեխիղճ, կիսատ-պռատ կազմված գրացուցակները։ Հետագայում, երբ այդ տեսակետը վերանայվեց, հանրային գրադարաններում որոշ աշխատանք արվեց ընթերցողական գրացուցակների լուրջ բացերը լրացնելու համար, թեև շատ բան այնպես էլ մնաց խիստ անկատար։ Այդ է պատճառը, որ շատ դեպքերում պահանջկոտ ընթերցողին հարկ է լինում թույլ տալ օգտվելու ծառայողական գրացուցակներից։

Ինչ վերաբերում է գրադարանի մատենագիտական աշխատանքին, ապա այն իր շատ կողմերով հիմնվում է ծառայողական գրացուցակների վրա։

Ներկայումս Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանն ունի Հայաստանում գրադարանային գրացուցակների ամենածավալուն և ամենաբարդ համակարգը, որը տարբեր ձևերով արտացոլում է գրադարանի բազմաբնույթ ու բազմատեսակ հարստությունները։

Բոլոր մեծ ու փոքր գրացուցակները հանրապետական գրադարանում այժմ շուրջ 50 անուն են։ Դրանք երկարամյա մատենագիտական աշխատանքի արդյունք են և այսօր բավական արժեքավոր նյութ են պարունակում։

Հանրապետական գրադարանի գրացուցակներից են. հայերեն գրքերի ա) այբբենական գլխավոր (ծառայողական), բ) սիստեմատիկ գլխավոր (ծառայողական), գ) այբբենական ընթերցողական, դ) սիստեմատիկ ընթերցողական, ե) այբբենական արխիվային գրականության, զ) այբբենական հնատիպ գրականության, է) ժամանակագրական հնատիպ գրականության, ը) սիստեմատիկ հնատիպ գրականության։

Ռուսերեն գրքերի ա) այբբենական գլխավոր (ծառայողական), բ) սիստեմատիկ գլխավոր (ծառայողական), գ) այբբենական ընթերցողական, դ) սիստեմատիկ ընթերցողական, ե) այբբենական ռուսերեն հայագիտական գրականության, զ) այբբենական ռուսերեն կովկասագիտական գրականության, է) այբբենական մանր նյութերի.

Եվրոպական լեզուներով գրքերի (հիմնականում անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն). ա) այբբենական գլխավոր, բ) սիստեմատիկ գլխավոր, գ) այբբենական ծառայողական, դ) սիստեմատիկ ծառայողական։

Գրադարանն ունի նաև ատրբեջաներեն և վրացերեն գրքերի, ինչպես և կերպարվեստի նյութերի, նոտաների, տեխնիկական հատուկ տեսակի նյութերի (գյուտերի նկարագրություններ, տեխնիկական տարբեր փաստաթղթեր և այլն), առանձին հավաքածուների (Լևոի, Մանանդյանի և այլոց) գրացուցակներ և այլն։

Հանրային գրադարանում գրացուցակները ղեկավարվում և լրացվում են հիմնականում մշակման բաժնի կողմից, սակայն որոշ գրացուցակներ էլ (օտար լեզուներով գրականության, նոտային և կերպարվեստի նյութերի, տեխնիկական հատուկ տեսակի նյութերի, հնատիպ գրականության) ղեկավարում են համապատասխան բաժինների և բաժանմունքների աշխատողներ։



Գրապահոց (Ալ. Մյասնիկյանի անվ. գրադարան)

Մատենագիտական տեղեկատու և հրատարակչական աշխատանքներն էլ գրադարանում տարբեր բաժիններ են իրականացնում, ինչպես, օրինակ, ընթերցողներին մատենագիտական տեղեկանքներ տալիս են մշակման, տեխնիկական հատուկ տեսակի գրականության, հայկական մատենագիտության, օտար լեզուներով գրականության, նոտային, կերպարվեստի նյութերի, հնատիպ և արխիվային գրականության, մեթոդական բաժիններն ու բաժանմունքները, բստ որում, այս բոլորն էլ (բացի մշակման բաժնից) մատենագիտական ցանկեր են կազմում հրատարակման համար։

Սակայն գրադարանի մատենագիտական ամեն կարգի աշխատանքի կենտրոնը, այդ աշխատանքի հիմնական մասը կատարողը տեղեկատու մատենագիտական բաժինն է։

ՏԵՂԵԿԱՏՈՒ-ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Այս բաժինը կազմակերպվել է 1932 թվականին և սկզբում բաղկացած էր երեք աշխատակցից, որոնք բացի ընթերցողներին ընթացիկ տեղեկանքներ տալուց զբաղվում էին նաև մատենագիտական քարտարաններ կազմմամբ։ Օրինակ, աշխատանք էր տարվում պարբերականներից Լենինի և Լենինիզմի վերաբերյալ նյութեր քաղելու ուղղությամբ։

Բաժնում կազմվում էին նաև ուրիշ թեմատիկ քարտարաններ, ինչպես «Հայաստանի արտադրական ուժերը», «Գեղարվեստական թարգմանական գրականությունը հայ պարբերական մամուլում» (երկուսն էլ նախախորհրդային մամուլի նյութերի հիման վրա) և այլն։

1932 թվականից էլ բաժնում սկսվեցին վերլուծագրվել հայ կարևորագույն թերթերի ու ամսագրերի հոդվածները։ Այդ աշխատանքը շարունակվեց մինչև 1948 թվականը։ Կազմվեցին մոտ 50 անուն պարբերականների հոդվածների քարտարաններ, որոնք և այժմ դրված են բաժնում ընթերցողների սպասարկության տակ։ Այդ արժեքավոր քարտարանները ընդգրկում են հետևյալ պարբերականները։

ՆԱԽԱՀՐԱՏԱՐԱԿՉԻՆ

1. «Ազգագրական հանդես»		Շուշի—Թիֆլիս	1896—1916[1]
2. «Արարատ»	(թերթ)	Թիֆլիս	1850—1851
3. «Արարատ»	(հանդես)	Էջմիածին	1868—1918
4. «Արաքս»	(հանդես)	Պետերբուրգ	1887—1890 1892—1895, 1898
5. «Արեւելյան մամուլ»	(թերթ)	Զմյուռնիա	1871—1909
6. «Արձագանք»	(թերթ հետո հանդես)	Թիֆլիս	1882—1884 1886—1893 1896—1897
7. «Արոր»	(հանդես)	Թիֆլիս	1904—1912
8. «Գեղարվեստ»	(հանդես)	Թիֆլիս	1908, 1913, 1917, 1921 (կան պակաս համարներ)
9. «Գեղուհի»	(հանդես)	Վենետիկ	1901—1906, 1909, 1927
10. «Թատրոն»	(հանդես)	Թիֆլիս	1893—1905
11. «Լույս»	(թերթ)	Նոր-Նախիջևան	1910—1914
12. «Լումա»	(հանդես)	Թիֆլիս	1896—1911
13. «Կոռնկ հայոց աշխարհին»	(հանդես)	Թիֆլիս	1860—1863
14. «Հանդես գրական, պատմական»		Մոսկվա	1888—1896
15. «Հյուսիսափայլ»	(հանդես)	Մոսկվա	1858—1863
16. «Հայկական աշխարհ»	(հանդես)	Թիֆլիս	1865—1879
17. «Հովիտ»	(հանդես)	Թիֆլիս	1910—1913

[1] Թվականները ցույց են տալիս, թե ամբողջ պարբերականը ո՛ր թվականից մինչև որն է քարտագրված։

18. «Մեղու Հայաստաճի»	(թերթ)	Թիֆլիս	1858—1882
19. «Մշակ»	(թերթ)	Թիֆլիս	1872—1920
20. «Մուրճ»	(հանդես)	Թիֆլիս	1889—1907
21. «Տարազ»	(հանդես)	Թիֆլիս	1890 —1919
22. «Փորձ»	(հանդես)	Թիֆլիս	1876—1881
23. «Նոր դար»	(թերթ)	Թիֆլիս	1884—1903
24. «Արևելք»	(թերթ)	Կ. Պոլիս	1884—1910
25. «Մասյաց աղավնի»	(հանդես)	Փարիզ	1855—1865
26. «Բյուզանդիոն»	(թերթ)	Կ Պոլիս	1896—1914
27. «Անահիտ»	(հանդես)	Փարիզ	1898—1911 1927—1928
28. «Հայրենիք»	(թերթ)	Կ. Պոլիս	1891—1909
29. «Կայծ»	(թերթ)	Թիֆլիս	1906
30. «Նոր խոսք»	(թերթ)	Թիֆլիս	1906
31. «Հայրենիք»	(հանդես)	Կ. Պոլիս	1920—1930
32. «Մասիս»	(հանդես)	Կ. Պոլիս	1884—1908
33. «Հորիզոն»	(թերթ)	Թիֆլիս	1909—1918
34. «Մաղիկ»	(հանդես)	Կ. Պոլիս	1886—1911
35. «Թատրոն և երաժշտություն»	(հանդես)	Թիֆլիս	1910—1917
36. «Հայ գրականություն»	(հանդես)	Զմյուռնիա	1911—1914
37. «Հանդես ամսօրյա»		Վիեննա	1887—1900
38. «Պրոլետարիատի կռիվը»	(թերթ)	Թիֆլիս	1902—1905

39. «Խորհրդային Հայաստան»	1921—1949
40. «Գրական թերթ»	1932—1951
41. «Ավանգարդ»	1923—1941, 1946—1950
42. «Բանվոր» *(Լենինական)*	1923—1940
43. «Կոմունիստ» *(Բաքու)*	1920—1950
44. «Մարտակոչ» *(Թիֆլիս)*	1923—1928
45. «Պրոլետար» *(Թիֆլիս)*	1928—1938
46. «Սովետական Վրաստան» *(Թիֆլիս)*	1939—1942, 1946—1950

Հայ պարբերականների այս քարտարանները շատ են օգնել տարբեր մասնագետների, ինչպես և գիտական աշխատողների անհրաժեշտ նյութեր որոնելու ուղղությամբ։ Քարտարաններից շատ է օգտվել, օրինակ, Հ. Պետրոսյանը իր մատենագիտական ցանկերը կազմելիս։

1950-ական—60-ական թվականներին բաժինը իր ուժերը կենտրոնացրեց հիմնականում թեմատիկ (այս կամ այն հարցին, թեմային նվիրված գրականության) քարտարաններ կազմելուն։ Ներկայումս բաժնում կան մի շարք այդպիսի քարտարաններ, որոնցից կարելի է հիշել՝ «Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման 5-ամյա և 7-ամյա պլանները» (1928 թվականից մինչև այժմ), «Հայկական ՍՍՀ շրջանները» (ուր հավաքված են հանրապետության շրջաններին և գյուղերին վերաբերող բազմաթիվ հոդվածների քարտեր), կազմվում է 1963 թվականից, «Վլադիմիր Իլյիչ Լենինը սովետահայ պարբերական մամուլում» (ընդգրկված են 1954 թվականից մինչև այժմ հրապարակված նյութերը), «Վլադիմիր Իլյիչ Լենինը հայ գեղարվեստական գրականության մեջ», «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 5-ամյակների և 7-ամյակի պլանները» (ընդգրկված են 1946 թվականից հրապարակված նյութերը), «Անդրկովկաս», հիմնադրվել է 1961 թվականին, ընդգրկում է երեք հանրապետություննե-

րին վերաբերող մի շարք նյութեր, «Աշխարհի երկրները», հիմնադրվել է 1963-ին և այլն։

Այս թեմատիկ քարտարանները այժմ էլ շարունակում են լրացվել։

Բաժնում տարբեր կարգի տեղեկանքներ տալու համար շատ է օգտագործվում «Անհատական քարտարանը» («Պերսոնալիա»), որը հիմնադրվել է 1958-ին։ Քարտարանում հավաքվում են տարբեր ազգության գրողների, գիտնականների, մշակութային գործիչների ստեղծագործությունների, աշխատությունների և նրանց նվիրված գրականության քարտերը (ընդգրկվում են մամուլում հրապարակված նյութերը)։

1955 թվականից տեղեկատու-մատենագիտական բաժինը ձեռնամուխ եղավ Խորհրդային Հայաստանի երկրագիտական քարտարանի կազմման աշխատանքներին։

Այս քարտարանի հարցը մի քանի անգամ քննության նյութ դարձավ։ Պարզվեց, որ հայ ժողովրդի պատմության յուրահատկությունը այնպիսին է, որ հնարավորություն չի տալիս նյութերի ընտրության շրջանակները միայն հանրապետության ներկայիս սահմանները համարել։ Առանց ողջ պատմական Հայաստանի և հայ սփյուռքի մշակութային կյանքի ընդգրկման, ուղղակի անհնար էր դառնում նման քարտարան կազմելը։ Դրանից ելնելով՝ որոշում ընդունվեց քարտարանը կոչել «Հայաստան և հայ ժողովուրդ»՝ ընդգրկելով այնտեղ ներկայիս և պատմական Հայաստանին ու առհասարակ հայ ժողովրդին, նրա լեզվին ու մշակույթին վերաբերող բոլոր նյութերը։

Մշակվեց նաև նյութերի դասակարգման հատուկ աղյուսակ և պարբերականներից նյութեր ընտրելու հրահանգ։

Ներկայումս «Հայաստանը և հայ ժողովուրդը» քարտարանը բավական հարստացել է, այնտեղ կա մոտ 100.000 քարտ։

Քարտարանը շարունակում է համալրվել 1960 թվականին տեղեկատու-մատենագիտական բաժնում ստեղծված երկրագիտական բաժանմունքի աշխատողների կողմից։

Բավական մեծ թիվ են կազմում նաև տեղեկատու-մատենագիտական բաժնի հրատարակած մատենագիտական ցանկերը։

Առհասարակ, Հանրային գրադարանի հրատարակչական աշխատանքը սկսվել է 1937 թվականից, երբ տպագրվեց «ԽՍՀՄ Գերագույն խորհրդի և աշխատավորների պատգամավորների խորհրդի ընտրությունները» հանձնարարական գրականության ցանկը (33 էջ)։

Հաջորդ տարին Տ. Շևչենկոյի ծննդյան 125-ամյակի առթիվ (լրանում էր 1939-ին) գրադարանը լույս ընծայեց «Տարաս Գրիգորևիչ Շևչենկո։ 1814—1939։ Բիբլիոգրաֆիական տեղեկատու»-ն (47 էջ)։

1939 թվականին «Սասունցի Դավիթ» վիպերգության 1000-ամյակի կապակցությամբ գրադարանը լույս ընծայեց «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական էպոս» մատենագիտության առաջին պրակը (170 էջ)։ Մատենագիտությունը կազմել էին այն ժամանակ տեղեկատու-մատենագիտական բաժնի վարիչ Մարջիկ Բաբայանը և բաժնի աշխատակից Սուրեն Միքայելյանը։ Խմբագրել էր և ներածությունը գրել Մանուկ Աբեղյանը։ Նյութերի հավաքմանը մասնակցել են մատենագիտական բաժնի աշխատակիցներ Աստղիկ Բազդասարյանը, Էդուարդ Խոնդկարյանը և Գուրգեն Գալստյանը։

Մատենագիտությունը բաղկացած է երեք բաժնից. ա) Նյութերի ժամանակագրական կարգ, բ) Նյութերի սիստեմատիկ կարգ, գ) Ցանկեր։

Առաջին բաժինը («Նյութերի ժամանակագրական կարգ») մատենագիտության հիմնական մասն է։ Այստեղ ժամանակագրական կարգով, սկսած 1874 թվականից, այսինքն՝ Գաբրիել Սրվանձտյանի «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գրքի լույս ընծայումից, մինչև 1939 թվականի հունիսի 15-ը՝ իրար հետևից տրված են «Սասունցի Դավիթ» տարբեր պատումների և վիպերգությանը նվիրված բանագիտական ուսումնասիրությունների ցուցակը։

Այստեղ ընդգրկված են 400 տարբեր նյութեր, առանձին գրքերով և պարբերականներում հրապարակված։

Ժամանակագրական այս ցանկը հնարավորություն է տալիս հետևելու «Սասունցի Դավիթ» պատումների հավաքման և նրանց ուսումնասիրման ժամանակագրական ընթացքին։

Այս հիմնական ցանկում նկարագրված նյութերը համարակալված են։

Հաջորդ բաժինը (նյութերի սխստեմատիկ կարգ) հինգ հիմնական հատված ունի. 1. էպոսի հրատարակությունները, 2. Հետազոտություններ, հոդվածներ և հիշատակություններ այլ աղբյուրներում, 3. էպոսի մշակումները, 4. Գրախոսականներ և 5. Նյութեր էպոսի հաղարամյակի տոնակատարության առթիվ։

Այս վերջին հատվածը 14 ենթագլուխ ունի, որոնց մեջ խմբավորված են վիպերգության 1000-ամյակի կապակցությամբ հրապարակված տարբեր նյութերը (որոշումներ, «Սասունցի Դավիթ» տարբեր հրատարակություններ, ցուցահանդեսների, նկարազարդումների մասին տեղեկատվություններ և այլն)։

Յանկերի բաժնում կան պատումների վերնագրերի և հեղինակների այբբենական ցանկեր։

Առհասարակ, մատենագիտությունը բավական որակով է կազմված։ Նկարագրությունները կատարված են ժամանակին ընդունված մատենագիտական կանոններով։ Հենց միայն նյութերի համարակալումը և երկու օժանդակ ցանկերի առկայությունը վկայում են, որ այս մատենագիտությունը ավելի որակյալ է, քան նույն բաժնի կողմից ավելի ուշ կազմված այլ գիտաօժանդակ մատենագիտական ցանկեր, որոնք զուրկ են թե՛ համարակալումից, թե՛ օժանդակ ցանկերից։

Կազմողները հարկ են համարել նույնիսկ աստղանիշով ցույց տալ այն նյութերը, որոնք իրենք չեն տեսել (նկարագրությունը վերցրել են այլ աղբյուրից), մի բան, որ վկայում է կազմողների բարեխղճության և պատասխանատվության զգացումի մասին։ Հիշենք, որ ոչ քիչ մատենագետներ նման

շատ կարևոր նշումներ չեն արել իրենց մատենագիտական աշխատություններին մեջ։

Արժեքավոր է Մ. Աբեղյանի ներածությունը՝ «Մատենադրություն «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպի մասին», ուր տրվում է վիպերգության պատումների հավաքման ու հրատարակման, ինչպես և նրա ուսումնասիրման հետաքրքրական պատմությունը (իբրև զեկուցում այս ներածականը կարդացվել է ԽՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի հոբելյանական նստաշրջանում, 1939 թ. օգոստոսի 22-ին և 23-ին)։

Մատենագիտության կազմողներն իրենց նախաբանում խոստանում են 1939 թվականի հունիսի 15-ից հետո լույս տեսած, ինչպես և միութենական հանրապետությունների լեզուներով հրատարակված բոլոր նյութերը ամփոփող մատենադիտության երկրորդ պրակը հրատարակել 1940 թվականին։ Այդ պրակը պետք է ընդգրկեր նաև երկու պրակների համար օգտագործված պարբերականների այբբենական ցանկը (ի դեպ, այս ցանկի անունը նշված է Ա պրակի բովանդակության մեջ, թեև ինքը չկա)։

Սակայն, ցավոք, նախատեսված այդ երկրորդ պրակը այնպես էլ լույս չտեսավ և աշխատությունը մնաց անավարտ։

Մատենագիտությունն ունի նաև թերություններ, հատկապես վրիպակներ, ինչպես և բացթողումներ։ Սակայն ամեն դեպքում այն մնում է Հանրային գրադարանի մատենագիտական լավագույն հրատարակություններից մեկը։

***

Ուշադրության առնելով Հանրային գրադարանի վերը քննված առաջին երեք հրատարակությունները նկատում ենք, որ արդեն դրանց բնույթի մեջ կանխագծվում է գրադարանի հետագա ամբողջ մատենագիտական-հրատարակչական գործունեության ուղին։

Ընտրությունների կապակցությամբ 1937-ին հրատարակ-

ված ցանկը հանձնարարական էր, առանձին քաղաքական միջոցառման տեսքով կազմված և նախատեսված ընթերցողների (ընտրողների) լայն շրջանակի համար։

Շևչենկոյին նվիրված մատենագիտական ցանկը կիսով չափ էր հանձնարարական, քանի որ այնտեղ նշված էին նաև այնպիսի նյութեր, որոնք ավելի նեղ գրականագիտական արժեք ունեին և հարմար չէին ընթերցողների լայն շրջանակներին հանձնարարելու համար։ Այս ցանկը ինչ-որ չափով հիշեցնում էր գիտաժողովական մատենագիտություն, բայց այդպիսին էլ չէր, քանի որ այնտեղ խնդիր չէր դրված Շևչենկոյի ոչ միայն ռուսերեն, այլև հայերեն հրատարակությունները հնարավորին չափ լրիվ ընդգրկելու (էլ չենք ասում ուկրաիներենի մասին)։

Ինչ վերաբերում է «Սասունցի Դավիթին» նվիրված մատենագիտության առաջին պրակին, ապա այն գիտաժողովական մատենագիտության իսկական նմուշ էր։

Հետագայում Հանրային գրադարանի մատենագիտական բոլոր հրատարակությունները կամ հանձնարարական բնույթ ունեին, կամ գիտաժողովական և կամ դրանց միջին տեղը գրավող։

1940 թվականին եղավ Համկ(բ)կ կենտկոմի որոշումը «Գրական քննադատության և մատենագիտության մասին»[1]։ Այստեղ ճշտվում էր գրապալատների դերը իբրև ընթացիկ գրականության պետական տպագրական մատենագիտության և վիճակագրության կենտրոնների։ Հատկապես շեշտվում էր հանձնարարական գրականության զարգացման անհրաժեշտությունը։ Ըստ որոշման Վ. Ի. Լենինի անվան գրադարանը Միության մեջ դառնում էր հանձնարարական մատենագիտության կենտրոն։ Լրագրերի և ամսագրերի վրա պարտականություն էր դրվում պարբերաբար հրատարակել նոր

---

[1] Համկ(բ)կ կենտկոմում. Գրական քննադատության և բիբլիոգրաֆիայի մասին։— «Պարտիական և սովետական մամուլի մասին։ Փաստաթղթերի ժողովածու» գրքում։ Եր., 1955, էջ 674—678։

լույս տեսած գրքերի ցուցակներ և այդ գրքերին նվիրված գրախոսություններ։

Այս որոշման օրինակով 1940 թվականի նոյեմբերին համապատասխան որոշում ընդունեց Հայաստանի Կ(բ)Կ կենտկոմը [1]։ Որոշմամբ Հայաստանում հանձնարարական մատենագիտության կենտրոն դարձավ Ալ. Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարանը։

Այս որոշման առաջին արդյունքը եղավ Հանրային գրադարանում «Բիբլիոգրաֆիական ամսագրի» հիմնադրումը (Լուսժողկոմատի «Բյուլետենի» վերակազմմամբ)։ Այս ամսագրի նպատակն էր ընթերցողներին ծանոթացնել նոր հրատարակվող գրքերին և տարածել մատենագիտական գիտելիքները։ Ամսագրի առաջին և միակ համարը լույս տեսավ 1941 թվականի մայիսին (79 էջ)[2]։

Համարը հիմնականում նվիրված էր տարբեր գրքերի բովանդակության բացմանը։ Հոդվածներ կային հայ գրի ու գրականության և հայ հին արվեստի մասին։ Որոշ հոդվածներից հետո արվում էին գրականության համառոտ ցանկեր։ Համարում հոդվածներ ունեին Հ. Աճառյանը, Գ. Լևոնյանը, Կ. Ղաֆադարյանը, Ա. Աբրահամյանը, Հ. Պետրոսյանը և ուրիշներ։

1942 թվականին Հանրային գրադարանի տեղեկատու-մատենագիտական բաժինը լույս ընծայեց Ա. Բաբայանի կազմած «Սովետական ժողովրդի Հայրենական մեծ պատերազմը» և «Հակաօդային պաշտպանություն», իսկ 1943-ին Բ. Ասատվածատրյանի կազմած «Ժողովրդի ռազմական ուսուցումը» հանձնարարական գրականության ցանկերը։ Ցանկերից վերջին երկուսը ապակեհատիպ էին։ Աչքի է ընկնում նաև այն, որ նրանցում հիմնականում ընդգրկված է ռուսերեն գրականություն, հայերեն համապատասխան նյութերի պակասի պատճառով։

---

1 Հ(բ)Կ կենտկոմում. Գրական քննադատության և բիբլիոգրաֆիայի մասին։— «Գրական թերթ», 1941, № 2։

2 Երկրորդ համարը շարված էր և գրեթե պատրաստ տպագրության, սակայն չհրատարակվեց պատերազմական վիճակի պատճառով։

Հանձնարարական մատենագիտության գծով հրատարակությունները նկատելիորեն շատանում են 1950 թվականից, երբ փոքրիկ գրքույկ-թերթիկների ձևով սկսում են հրատարակվել հանձնարարական գրականության ցանկեր՝ «Օգնություն արդյունաբերության և գյուղատնտեսության առաջավորներին»



Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի գիտխորհրդի նիստը (1947 թ.)

մատենաշարով։ Այդ ցանկերից էին՝ «Բարձրացնենք անասնապահության մթերատվությունը», «Խաղողի վազի մշակությունը», «Հացաբույսերի մշակությունը», «Պայքար բարձր բերքի համար» և այլն (ընդամենը 10 ցանկ)։ Սրանք յուրաքանչյուրը չորս էջից բաղկացած փոքրիկ հրատարակություններ էին. ընդգրկում էին շուրջ 20 անուն գիրք և գրքույկ։ Այս ցանկերի նպատակն էր գլխավորապես գյուղատնտեսության աշխատողներին հանձնարարել գրականություն, որպեսզի նրանք կարդան այդ և ավելի բարելավեն իրենց աշխատանքները։

1951 թվականին բաժինը սկսեց ցանկեր հրատարակել «Օգնություն ինքնակրթությամբ զբաղվողներին» մատենաշա-

րով, նվիրված՝ Ա. Իսահակյանին, Շիրվանզադեին և այլոց (յուրաքանչյուր ցանկը 4 էջից բաղկացած)։

Նույն թվականին երեք փոքրիկ պրակներով (8-ից 12 էջանոց) հրատարակվեցին «Ինչ կարդալ խաղաղության վերաբերյալ» մատենաշարի հանձնարարական ցանկերը և «Ինչ կարդալ սովետական գրատարանների ընթերուցողների վերաբերյալ» հանձնարարական ցանկը (8 էջ)։

Այս թվականներին Հանրային գրադարանը հրատարակում էր նաև տարբեր գրողների և այլ գործիչների հոբելյաններին նվիրված պլակատներ և դրքույկներ, որոնցում տարբեր տեղեկանքներ էին տրվում հոբելյարների կյանքի և գործի մասին, իսկ վերջում դրվում էին հանձնարարվող գրականության ոչ մեծ ցանկեր։ Այդ պլակատներից էին Ե. Արովյանին, Գ. Սունդուկյանին, Մ. Նալբանդյանին, Հ. Հովհաննիսյանին, Հ. Թումանյանին, Պ. Ադամյանին, Ա. Պուշկինին, Ն. Չերնիշևսկուն և այլոց նվիրվածները։ Դրքույկներից էին Վ. Բելինսկուն, Ա. Ռադիշչևին, Լեոնարդո դա Վինչիին և այլոց նվիրվածները։

Հանձնարարական մատենադիտական ցանկերի կազմումը աստիճանաբար ավելի կատարելագործվում է։ Մատենագիտական բաժինը հասարակական-քաղաքական բնույթի ցանկերից բացի սկսում է կազմել նաև այլ բնագավառների գրականության հանձնարարական ցանկեր։

Ուշադրության են գրավում գյուղատնտեսական գրականության ավելի ծավալուն հանձնարարական ցանկերը, որոնք բաժինը կազմում և լույս էր ընծայում 1950 թվականից սկսած։ Դա մի ամբողջական հրատարակություն էր «Ինչ կարդալ գյուղատնտեսության մասին» ընդհանուր վերնագրով, բաղկացած 8 պրակից, որոնցից առաջինը 1950, իսկ վերջինը 1959 թվականին են լույս տեսել։

Առաջին և երկրորդ պրակները, որ նվիրված են գյուղատնտեսության և անասնաբուծության տարբեր ճյուղերին, կազմել են գրադարանի մեթոդական կաբինետի աշխատողները (Ա. Շահազիզյան և Հ. Դավթյան), իսկ հաջորդ 6 պրակ-

ները, որոնցից յուրաքանչյուրը նվիրված է գյուղատնտեսության մի բնագավառի, կազմել են տեղեկատու-մատենագիտական բաժնի աշխատողները։

Ահա այդ պրակների անունները.

Պր. 3. Գյուղատնտեսության մեխանիզացիա. *1954, 35 էջ։*

Պր. 4. Եգիպտացորեն. *1955, 15 էջ։*

Պր. 5. Այգեգործություն. *1956, 29 էջ։*

Պր. 6. Անասնաբուծություն. *1958, 95 էջ։*

Պր. 7. Պտղաբուծություն. *1958, 45 էջ։*

Պր. 8. Բամբակագործություն. *1959, 38 էջ։*

Պատկերացում տալու համար մատենագիտական այս ցանկերի մասին՝ համառոտակի անդրադառնանք նրանցից երկուսին, որոնք, ըստ ամենայնի, առավել հաջողվածներն են։

6-րդ պրակը, որ նվիրված է անասնաբուծությանը, բոլորից ավելի ծավալուն է։ Այն բաղկացած է մի շարք առանձին թեմատիկ գլուխներից, ինչպես, օրինակ, «Կերհայթայթում և կերակրում», «Անասնաբուծության աշխատատար պրոցեսների մեքենայացումը», «Տավարաբուծություն», «Ոչխարաբուծություն», «Խոզաբուծություն», «Ձիաբուծություն», «Թռչնաբուծություն» և այլն։

Առանձին գլուխներ են նվիրված կաթնատնտեսությանը և անասնաբուծությանը, իսկ առաջին գլխում բերված է ընդհանուր անասնաբուծությանը նվիրված գրքերի ու հոդվածների ցանկը։

Մատենագիտության մեջ ընդգրկված են հայերեն և ռուսերեն գրքեր ու հոդվածներ։

Գրքերի նկարագրությունների տակ տրված են ծանոթագրություններ (անոտացիաներ), որոնց նպատակն է մատենագիտությունից օգտվողին համառոտակի ծանոթացնել կարդալու համար առաջարկվող ամեն մի գրքի բովանդակությանը։

Այս մատենագիտության նյութերը հավաքել ու նկարագրել են տեղեկատու-մատենագիտական բաժնի աշխատողները, իսկ եղած նկարագրություններից ցանկի համար ընտրությու-

նը կատարել է, խմբավորել և ծանոթագրել գյուղատնտես Ստեփան Աթոյանը, որը միաժամանակ գրքի խմբագիրն է: Աթոյանը լավ աշխատանք է կատարել մատենագիտությունը բովանդակությամբ և տեսքով ընթերցողների համար օգտակար ու հրապուրիչ դարձնելու համար: Մանոթագրությունները կարճ են, նպատակասլաց, տրված են մի շարք գրքերի պատկերները, նկարազարդ է գրքի շապիկը:

Մատենագիտությունն, անշուշտ, ունի նաև թերություններ, որոնցից ամենակարևորը, օժանդակ այբբենական ցանկի բացակայությունն է: Չկան ոչ վերնագրերի, ոչ էլ հեղինակների այբբենական ցանկեր:

«Ինչ կարդալ գյուղատնտեսության մասին» մատենագիտության 7-րդ պրակը նվիրված է պտղաբուծությանը:

Այս ցանկում բերված են պտղաբուծության վերաբերյալ հայերեն և ռուսերեն 126 գրքերի ու հոդվածների անունները: Մասնավորապես հայերեն հրատարակություններից ցանկում ընդգրկված են պտղաբուծության վերաբերյալ 1950—1958 թվականների ընթացքում լույս տեսած գրքերը, պարբերականներից հոդվածները վերցված են սկսած 1955 թվականից:

Հանձնարարական գրականության ցանկը բաղկացած է 5 բաժնից. 1) «Պարտիայի և կառավարության որոշումները պտղաբուծության հետագա զարգացման միջոցառումների մասին», 2) «Ընդհանուր հարցեր և ագրոտեխնիկա», 3) «Պտղատու կուլտուրաներ», 4) «Պտղատու կուլտուրաների սելեկցիան և սորտերը», 5) «Հիվանդությունները, վնասատուները և նրանց դեմ տարվող պայքարի միջոցները»:

Բոլոր գրքերի անուններին կցված են ծանոթագրություններ (անոտացիաներ), որոնցում հակիրճ տեղեկություններ են տրվում գրքերի բովանդակության վերաբերյալ:

Ցանկի համար նյութերը հավաքել ու նկարագրել են տեղեկատու-մատենագիտական բաժնի աշխատողները, իսկ նյութերի ընտրությունը, դասակարգումը և խմբագրումը այստեղ ևս կատարել է գյուղատնտես Ս. Աթոյանը, որ կազմել է նաև գրքերի ծանոթագրությունները: Պետք է ասել, որ

Ս. Աթոյանը այս անգամ ևս շնորհակալ աշխատանք է կատարել։ Ցանկը կազմված է բարեխղճությամբ, այնտեղ սպառիչ կերպով ընդգրկված է այն ժամանակ եղած ողջ հայերեն գրականությունը, որը կարող էր օգտակար լինել հանրապետության պաշտպաններին, ինչպես և համաձայնությամբ ընտրված է հանձնարարվող ռուսերեն գրականությունը։

Պատշաճ է ցանկի մասնագիտական-մատենագիտական մակարդակը. նկարագրությունները կատարված են ճիշտ, տրամաբանական է նյութի դասակարգումը, հաջող են ծանոթագրությունները։ Ցանկում հաճելի տպավորություն են թողնում և ընթերցողի հետաքրքրությունն առաջացնում նշված մի շարք գրքերի լուսանկարները։

Այս մատենագիտությունը ևս չունի որևէ օժանդակ ցանկ, որ և փոքր-ինչ գցում է նրա արժեքը։ Սակայն օժանդակ ցանկերի բացակայությունը մի թերություն է, որ երկար ժամանակ բնորոշ էր հանրապետական գրադարանի մատենագիտական հրատարակություններին ընդհանրապես։

Տեղեկատու-մատենագիտական բաժինը գիտա-տեխնիկական գրականության մատենագիտության գծով կազմել և հրատարակել է հետևյալ հանձնարարական ցանկերը.

1956-ին՝ «Что читать по технике», բաղկացած երեք պրակից (համապատասխանաբար 20, 14 և 15 էջերից բաղկացած)։ Այստեղ ընդգրկված են Հանրապետական գրադարանի գրապահոցում եղած ռուսական գրականության տեխնիկական բաժնի մի շարք գրքեր։ Դրանով էլ այս ցանկը գրադարանային գրացուցակ է հիշեցնում, մանավանդ, որ յուրաքանչյուր նկարագրության դիմաց գրված է գրքի դարականիշը (շիֆրը), որով ընթերցողը կարող է պատվիրել այդ գիրքը և ստանալ։

Պրակները հրատարակվել են իբրև ռուսերեն գրքույկներ, նրանցում ընդգրկված են միայն ռուսերեն գրքեր (ոչ մի հայերեն գիրք չկա), ուստի և այս ցանկերը հայկական մատենագիտության նմուշներ համարվել չեն կարող։

1958-ին՝ Մանիկ Բաբայան, «Սինթետիկ նյութեր և դրանցից պատրաստվող առարկաներ»։ 30 էջ։

Կան գրքերից մի քանիսի լուսանկարները։ Յուրաքանչյուրում ներկայացնում է ռուսերեն գրքեր և հոդվածներ, կան շատ քիչ քանակով նաև հայերեն նյութեր։

1959-ին՝ «Ինչ կարդալ երկրի արհեստական արբանյակների մասին»։ 48 էջ։

Ընդգրկված են մեծ մասամբ ռուսերեն և մասամբ էլ հայերեն գրքեր ու հոդվածներ։ Գրքերը ծանոթագրված են ցանկի խմբագիր էդ. Տեր-Մինասյանի կողմից։

Երկու հանձնարարական ցանկերն էլ նախատեսված են ընթերցողների լայն շրջանների համար և կազմված են մատենագիտական պատշաճ մակարդակով, խմբագրված են համապատասխան մասնագետների կողմից (քիմիկոսի և ինժեների)։ Վատ է որ այս մատենագիտությունները նույնպես չունեն օժանդակ ցանկեր, նյութերը համարակալված չեն և մանավանդ անդարդ, անհրապույր տեսք ունեն։

1965-ին բաժինը լույս ընծայեց «Հայաստանի մեծ Հիմիան» գրականության հանձնարարական ցանկը, որը կազմել է Մ. Բաբայանը Վ. Կանտունու օգնությամբ։

Եվգինե Սարգսյանը և Վ. Կանտունին կազմել են «Խաղողագործությունը Հայաստանում» հետաքրքրական մատենագիտությունը։

Ինչ վերաբերում է հասարակական-քաղաքական գրականության հանձնարարական ցանկերին, ապա այդպիսիք վերջին տասնամյակում մի քանի անգամ ավելի շատ են հրատարակվել բաժնի կողմից։ Բաժնի կազմած մի շարք այդպիսի ցանկեր կցվել են գրադարանի գրադարանագիտական-մեթոդական կաբինետի (այժմ բաժին) կողմից կազմված հետևյալ մեթոդական ձեռնարկներին։

1905—1907 pp. *ռուսական առաջին ռևոլյուցիայի վերաբերյալ գրականության պրոպագանդան։ 1955, 58 էջ։*

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի 40-րդ տարեդարձը։ 1957, 168 էջ։ (Գրականության ցանկը կազմել է Ե. Սարգսյանը)։

Լենինյան կոմերիտմիության 40-ամյակը։ 1958, 59 էջ։

Սովետական Հայաստանի 40 տարին։ 1960, 158 էջ։

Վ. Ի. Լենինի աշխատությունների և նրա մասին եղած գրականության պրոպագանդան գրադարաններում։ 1960, 87 էջ։

ՍՄԿՊ 22-րդ համագումարի որոշումների և նյութերի պրոպագանդան գրադարաններում։ 1962, 103 էջ։

Բացի այս, բաժինը ինքնուրույն հրատարակել է հանձնարարական ցանկեր, նվիրված համաշխարհային ֆեստիվալներին (1957, 19 էջ), ալկոհոլիզմի վնասներին և նրա դեմ պայքարելուն (կազմել է Ե. Սարգսյանը, 1959, 31 էջ), Հայաստանի գյուղատնտեսության առաջավորներին (1962) և այլն։

Այս շարքից բաժնի հրատարակած առավել ուշագրավ հանձնարարական ցանկերից է «Սովետական Հայաստանի արդյունաբերությունը 40 տարում» մատենագիտությունը (1962, 187 էջ)։

Տնտեսագիտական-տնտեսվարական հայերեն և ռուսերեն հարուստ գրականություն ընդգրկող այս ցանկը բաղկացած է 5 գլխից՝ «Պարտիայի և կառավարության որոշումները», «Ժողովրդական պլանները և նրանց կատարումը», «Հայաստանի արդյունաբերության ընդհանուր հարցերի վերաբերող աշխատություններ» և «Արդյունաբերության առանձին ճյուղեր»։ Այս վերջին գլխում տրված է գրականություն Հայաստանի արդյունաբերության տարբեր ճյուղերի մասին (լեռնահանքային, մետաղագործական, քիմիական, մեքենաշինական և այլն)։

Այս ցանկի մատենագիտական-մատենագիտական մակարդակը նախորդների համեմատ ավելի բարձր է՝ նյութերը համակարգված են (վերջին համարը՝ 1643), տրված են հայերեն և ռուսերեն անվանացանկեր։

Մատենագիտության վերջում կա Հայաստանի գործարանային թերթերի ցուցակ։

***

Մատենագիտական բաժնի հրատարակությունները գիտաօժանդակ մատենագիտության բնագավառում սկիզբ են առել 1940 թվականին, երբ լույս տեսավ «Սասունցի Դավիթ» մատենագիտական ցանկը։ Սակայն բաժինը հետագայում մասնագիտացավ գիտաօժանդակ մատենագիտության մի տեսակի, այն է՝ անհատական մատենագիտության, այսինքն՝ առանձին անհատների (գրողների, երաժիշտների, հեղափոխական գործիչների և այլն) նվիրված մատենագիտության մեջ։

Պետք է ասել, որ անհատական գիտաօժանդակ մատենագիտությունը տեղեկատու-մատենագիտական բաժնում փաստորեն ծնունդ առավ հանձնարարական մատենագիտությունից։

1954 թվականին մեթոդական կաբինետի հետ տեղեկատու-մատենագիտական բաժինը լույս ընծայեց Մ. Նալբանդյանի ծննդյան 125-ամյակին նվիրված մի գրքույկ.

Միքայել Նալբանդյան։ 1829—1954։ Ակնարկ կյանքի ու գործունեության մասին և համառոտ բիբլիոգրաֆիա։ 45 էջ։

Գրքույկը բաղկացած է Մ. Նալբանդյանի կյանքին ու գործին նվիրված ակնարկից (հեղ.՝ Ն. Մուրադյան) և մատենագիտությունից, որը իր հերթին երկու հիմնական բաժնից է բաղկացած. ա) Նալբանդյանի գործերը, բ) գրականություն Նալբանդյանի և նրա երկերի մասին։

Նալբանդյանին նվիրված այս գրքույկն, ահա, սկիզբ դրեց հայ գրողներին, մշակութային ու քաղաքական գործիչներին նվիրված այն մատենագիտական ցանկերի սերիային, որոնք, ի վերջո, Հանրային գրադարանի լավագույն մատենագիտական հրատարակությունները դարձան։ Այս գրքույկի մեջ ցանկը մոտ է հանձնարարականին, այսինքն՝ շատ բան բաժինը դուրս էր թողել այնտեղից, որպես սովորական ընթերցողին չհետաքրքրող։ Սակայն սովորական իմաստով այն հանձնարարական ցանկ էլ չէր, նախատեսված սոսկ ընթեր-

ցողների լայն շրջանների համար։ Այստեղ որոշ նյութեր նեղ գրականագիտական արժեք ունեին (օրինակ, պարբերականներում հրապարակված նյութերի մի մասը)։ Այդպիսով, աղս հրատարակությունը կիսով չափ նալբանդյանին նվիրված հոբելյանական գրքույկ էր, հանձնարարական ցանկով, կիսով չափ էլ՝ գիտաօժանդակ մատենագիտություն։ Այստեղ Նալբանդյանի կյանքին ու գործին նվիրված ընդարձակ հոդվածը կարծես գլխավորն էր կամ, համենայն դեպս, հավասարակշիռ մատենագիտության հետ։

Երկու տարի անց, 1956 թվականին լույս տեսավ մի այլ գրքույկ ,նվիրված Խաչատուր Աբովյանին։ Գրողի կյանքն ու գործը լուսաբանող հոդվածը գրել էր և մատենագիտությունը խմբագրել արուվյանագետ Պիոն Հակոբյանը։

Սա արդեն իսկական անհատական մատենագիտություն էր, գիտաօժանդակ բնույթի, ուր գրողի կյանքին ու գործին նվիրված հատվածը արդեն առաջարան էր համարվում, այսինքն՝ գրքույկում գլխավորը դառնում էր մատենագիտությունը։

Նույն թվականին հրատարակվեց Ալեքսանդր Մյասնիկյանին նվիրված մատենագիտությունը, որ նույնպես անհատական մատենագիտություն էր, և նույնպես գիտաօժանդակ բնույթի։

Այդպես հանձնարարական մատենագիտությունից Հանրային գրադարանում ծնունդ առավ անհատական գիտաօժանդակ մատենագիտությունը։

Նախքան հայ գրողների անհատական գիտաօժանդակ մատենագիտության գծով առավել հետաքրքրական աշխատությունների հրատարակումը, տեղեկատու-մատենագիտական բաժինը մեթոդական կաբինետի հետ լույս ընծայեց (1954—ին) Վ. Մայակովսկու երկերի հայերեն թարգմանությունները և նրա մասին եղած հայերեն գրականությունը ներկայացնող մի ցանկ՝ «Վլադիմիր Մայակովսկի։ Բիբլիոգրաֆիա» վերնագրով (44 էջ)։ Ցանկը կազմել էին Հ. Գրիգորյանը, Լ. Մելքումյանը և Ե. Սարգսյանը։

Գրքույկի տիտղոսաթերթին կա այսպիսի ենթավերնագիր.

«Հայերեն հրատարակություններն առանձին գրքերով։ Երկերի հայերեն թարգմանությունները պարբերական մամուլում և երկերի ժողովածուներում։ Մայակովսկու մասին (առանձին հրատարակություններով, ժողովածուներում և պարբերական մամուլում)» [1]։

Մատենագիտության մեջ նյութերը համարակալված են, կա անձնանունների այբբենական ցանկ։

Հայ գործիչներին նվիրված գիտաժանդակ անհատական ցանկերը, որոնք կազմվել են տեղեկատու-մատենագիտական բաժնի կողմից, երկու խմբի են բաժանվում՝ ա) հայ գրողներին նվիրված և բ) հայ հեղափոխական-պետական գործիչներին նվիրված։ Իրենց մատենագիտական բնույթով, կառուցվածքով նրանք բոլորն էլ բավական նման են միմյանց, տարբեր են թեմայի, առարկայի տեսակետից։

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խաչատուր Աբովյան։ *1805—1955*։ Համառոտ բիբլիոգրաֆիա։ Առաջաբանով և խմբ. Պ. Հակոբյանի։ 1956, 88 էջ։

2. Գևորգիկ Դեմիրճյան։ *1877—1958*։ Բիբլիոգրաֆիա։ Խմբ. և առաջաբանով Հր. Մուրադյանի։ Եր., 1957, 96 էջ։

3. Եղիշե Չարենց։ *(1897—1937)*։ Բիբլիոգրաֆիա։ Խմբ. և առաջաբան Է. Ջրբաշյանի։ 1957, 95 էջ։

4. Ալեքսանդր Շիրվանզադե։ *(1858—1958)*։ Բիբլիոգրաֆիա։ Խմբ. և առաջաբան Հ. Թումանյանի։ 1959, 244 էջ։

5. Հովհաննես Թումանյան։ *(1869—1923)*։ Մատենագիտություն։ Խմբ. և առաջաբան Էդ. Ջրբաշյանի։ Եր., 1961, 388 էջ։

Մատենագիտական այս ցանկերի հրապարակումով հանրապետական գրադարանի տեղեկատու մատենագիտական բաժինը լուրջ քայլ արեց դեպի գիտական բնույթի հայկական

[1] 1950 թվականին այս ցանկի նախնական, ոչ լրիվ տարբերակը լույս էր տեսել Մայակովսկու բնտիր երկերի 2-րդ հատորի վերջում (էջ 473—503)։

մատենագիտության ստեղծումն ու հարստացումը: Ճիշտ է, այս հեղինակներից չորսի (չհաշված Ե. Չարենցինը) մատենագիտությունները տեղ էին գտել Հ. Պետրոսյանի ավելի վաղ հրատարակված «Հայ գրականության բիբլիոգրաֆիա» և «Սովետահայ գրականության բիբլիոգրաֆիա» աշխատություններում, սակայն, ակնառու է, որ տեղեկատու-մատենագիտական բաժնի կազմած ցանկերը թե՛ իրենց ընդգրկած նյութի մեծությամբ և՛ թե որակով նկատելիորեն բարձր են հիշյալ աշխատությունների համապատասխան հատվածներից:

Կարևոր է նշել, որ տեղեկատու-մատենագիտական բաժնի աշխատողների լուրջ ջանքերի շնորհիվ ստեղծված մատենագիտական այս ցանկերը հոդվածաբույմամբ լրացվում և խմբագրվում էին փորձված գրականագետների կողմից: Ըստ որում, յուրաքանչյուր գրողի մատենագիտություն խմբագրում էր այդ գրողի կյանքի ու գործի ուսումնասիրմամբ մասնագիտացած գրականագետ:

Հայ դասական հեղինակների անհատական մատենագիտությունները ստեղծելու այս նախաձեռնությունը, որ ցուցաբերից հանրապետական գրադարանը, աջակցվեց, ջերմորեն խրախուսվեց բանասերների ու բոլոր ընթերցողների կողմից, և անհասկանալի մնաց, թե ինչո՞ւ 1961 թվականից հետո փաստորեն դադարեցվեց այդ օգտակար աշխատանքը, և այլևս ոչ մի գրողի ամբողջական մատենագիտություն չհրապարակվեց, թեև հայ դասական գրողներից շատերի անհատական մատենագիտության սուր կարիքը զգացվում է:

Այժմ երկու խոսք ասենք մատենագիտական վերոհիշյալ հինգ հրատարակությունների նմանությունների մասին: Բոլորն էլ բաղկացած են հետևյալ մասերից: Սկզբում ունեն խմբագրի առաջաբանը, որը ամեն դեպքում ավյալ հեղինակին բնորոշող մի ընդհանուր ակնարկ է, երբեմն կենսագրական որոշ տեղեկություններով:

Այնուհետև, գալիս է մատենագիտությունը իր երկու հիմնական մասով՝ գրողի ստեղծագործություններ և գրականություն նրա մասին: Այս երկու մասերից յուրաքանչյուրը տար-

բեր ցանկերում տարբեր բաժանումներ է ունենում։ Այսպես, հեղինակի ստեղծագործություններին նվիրված մասը ունենում է այսպիսի բաժիններ. հեղինակի ստեղծագործություններ առանձին գրքերով, հեղինակի ստեղծագործություններ պարբերական մամուլում և ժողովածուներում և այլն։ Բաժիններից յուրաքանչյուրի մեջ նյութերը սովորաբար ժամանակագրական կարգով են դասավորվում, մինչդեռ տարբեր հեղինակների նյութերը՝ այբբենական կարգով։

Երկու խոսք նյութերի ընդգրկման մասին։ Ցանկերից ոչ մեկն էլ «հանձնարարական» անունը կրել չի կարող, քանի որ գրեթե միշտ նրանցում ընդգրկված են տվյալ գրողի ստեղծագործությունների այն բոլոր հրատարակությունները, որոնք կարողացել են հավաքել կազմողները կամ ծանոթ են եղել խմբագրին ու ընդգրկվել են նրա ցուցումով։ Այդպիսով, մատենագիտական ցանկերից յուրաքանչյուրում տրվում են գրողի որևէ ստեղծագործության անխտիր այն բոլոր հրատարակությունները, առանձին գրքերով, պարբերականներում ու ժողովածուներում, որոնք եղել են ձեռքի տակ։ Մինչդեռ հանձնարարական ցանկում նման ընդգրկման հարկ չի լինում, այնտեղ տրվում է գրողի այս կամ այն ստեղծագործության որևէ մեկ, լավագույն հրատարակությունը։ Շատ դեպքերում հիշյալ գիտաօժանդակ մատենագիտական ցանկերի մեջ ընդգրկված են անգամ առանձին գրողների գործերի նաև կրճատ, հատվածային հրապարակումները։ Մի խոսքով, կազմողներն ու խմբագիրները այս ցանկերը կազմելիս առաջնորդվել են հնարավոր սկզբունքով՝ հեղինակի գործերից որքան շատ հրատարակություններ ու հրապարակումներ հնարավոր լինի ընդգրկել, այնքան լավ։ Հազվագյուտ դեպքերում միայն տարբեր, ոչ մատենագիտական նկատառումներով դուրս են թողնված որոշ գործեր։ Աբովյանի մատենագիտությունը կոչվում է «Համառոտ»։ Դրա պատճառն ուղղակի այն է, որ կազմողները, մանավանդ, խմբագիրը իմացել են, որ եղած բոլոր նյութերը չէ, որ ընդգրկվել են ցանկում։ Սակայն ընդգրկված-

ները բնավ էլ հանձնարարական ցանկ կազմելու նպատակով կատարված ընտրության արդյունք չեն։

Այս մատենագիտական ցանկերում գրողների մասին եղած գրականության հատվածում նույնպես մեծ մասամբ սկզբունքը նույնն է եղել՝ ողջ հայտնաբերվածը, ձեռքի տակ եղածը ներկայացնել, թեև այստեղ ավելի շատ են եղել տարբեր վերապահություններ։ Ասենք, օրինակ. Դեմիրճյանին նվիրված ցանկում չեն տրվել գրողի դեմ գրված որոշ հոդվածներ։ Երբեմն ցանկերից դուրս են թողնվել առանձին քննադատների և գրախոսների հոդվածներ ու գրքեր այլ պատճառներով։

Ընդհանուր առմամբ Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի տեղեկատու-մատենագիտական բաժնի կազմած այս ցանկերի հեղինակային մասերը (հեղինակի գործերի ցանկը) մոտենում են գեղարվեստական գրականության մատենագիտության այն տեսակին, որը կոչվում է բնագրերի մատենագիտություն (библиография текстов), թեև չեն դառնում այս բնույթի աշխատություններ։

Որևէ գրողի բնագրերի մատենագիտության նպատակն է ներկայացնել այդ գրողի յուրաքանչյուր ստեղծագործության բոլոր հրապարակումները՝ բնագրագիտական ծանոթագրություններով[1]։ Այս դեպքում, ծանոթության մեջ խոսվում է այն մասին, թե այս կամ այն բնագրի յուրաքանչյուր հրապարակումը ինչ արժանիքներ ու թերություններ (հեղինակային ճշտումներ, կրճատումներ, գրաքննական ջնջումներ, աղավաղումներ և այլն) ունի։

Բնագրերի մատենագիտությունը գիտական ավելի լուրջ ու համառ աշխատանք է պահանջում, ինչպես նաև գրականագիտական անհրաժեշտ պատրաստականություն։

---

1 Բնագրերի մատենագիտության կազմված է եվրոպական, այդ թվում ռուս գրեթե բոլոր խոշոր հեղինակների երկերի համար։ Ռուս գրողներին նվիրված բնագրերի բարձրորակ մատենագիտություններ են, օրինակ, **К. Д. Александров** и **Н. А. Кузьмина** Библиография текстов Лермонтова. М.-Л., АН СССР, 1936, **К. Б. Богаевский** Пушкин в печати. 1814—1837. М., 1914, 1938 և այլն։

Ցավոք, հայ գրողներից ոչ մեկի բնագրերի մատենագիտությունը, իսկական իմաստով, դեռևս չի ստեղծված։

Այժմ երկու խոսքով էլ անդրադառնանք Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի հրատարակած մատենագիտական վերահիշյալ ցանկերի տարբերություններին, ինչպես և նրանցից մի երկուսի արժանիքներին ու թերություններին։

Նախ՝ աչքի է ընկնում այն, որ Աբովյանին, Դեմիրճյանին և Զարենցին նվիրված մատենագիտությունները չունեն որևէ կարգի օժանդակ տեղեկատու ցանկեր։ Նյութերը նրանցում համարակալված չեն։ Անշուշտ, այս թերությունը նկատելիորեն իջեցնում է ընդհանուր առմամբ խնամքով կազմված այս մատենագիտական աշխատությունների արժեքը։

Շիրվանզադեին և Թումանյանին նվիրված մատենագիտությունների մեջ նույնպես նյութերը համարակալված չեն, բայց կան օժանդակ ցանկեր՝ յուրաքանչյուրն ունի հետևյալի ստեղծագործությունների այբբենական ցանկ և անվանացանկ։ Օժանդակ այս ցանկերի մեջ բերված ամեն մի վերնագրի կամ ապացանվան դիմաց նշված է ոչ թե համապատասխան նյութի հերթական համարը մատենագիտության մեջ (այդպիսիք չկան), այլ էջը։ Թրա հետևանքով մի շարք վերնագրերի և ապացանունների դիմաց նույն էջն է նշված, քանի որ մի էջում մի շարք նյութեր կան։ Բացի այդ, երբ մի էջում գտնվում են նույն երկի մի քանի հրատարակումներ, այբբենական ցանկում այդ երկի դիմաց սոսկ միևնույն այդ էջի համարն է նըշվում։

Սրանք մատենագիտական բնույթի ոչ էական թերություններ են։

Շիրվանզադեի մատենագիտությունը բավական ընդարձակ է, բավմաթիվ մոռացված կամ հասարակայնությանը անհայտ մնացած հրատարակություններ, հոդվածներ այստեղ նորից ասպարեզ են հանված։ Մեծ աշխատանք է կատարված այդ ողջ նյութը հավաքելու ուղղությամբ։ Հանրապետական գրադարանի կողմից նախքան այս հրատարակված բոլոր մատենագիտական ցանկերի մեջ սա ամենածավալունն է, ամենից

ավելի շատ նյութ պարունակողը. դրանով էլ մատենագիտությունը նշանակալի ավանդ է Շիրվանզադեի կյանքն ու գործը ուսումնասիրելու բնագավառում և արժանի բարձր գնահատականի: Ափսոս միայն, որ այս շնորհակալ աշխատանքը մինչև վերջ չի հասցված. հենց միայն գրքի անհրապույր տեսքը շատ բան է ասում այդ մասին: 244 էջանոց գիրքը ոչ միայն կազմ չունի, այլ շապիկն էլ, քիչ է ասել անշուք, ուղղակի անպետք է: Գրքի մեջ չկան գրողի երկերի հրատարակություններից պատկերներ:

Մի քանի գրախոսականներ գրվեցին այս մատենագիտության մասին, որոնք սովորական, նկարագրական բնույթ ունեին[1], և միայն գրախոսականներից մեկն էր, որ մատենագիտությունը մանրազնին ուսումնասիրության ենթարկելու արդյունք էր[2]: Այստեղ հեղինակը մատենագիտությունն ըստ արժանվույն գնահատելուց հետո մանրամասն ներկայացնում է նրա մեջ, մանավանդ օժանդակ ցանկերում տեղ գտած բազմաթիվ թերությունները: Գրախոսականում կարդում ենք. «Անվանացանկը լի է այնպիսի արտառոց սխալներով, որոնք ընթերցողին շփոթության մեջ միայն կարող են գցել: Մերթ միևնույն ազգանունով միանգամայն տարբեր մարդիկ նույնացվել են, մերթ մի անձնավորություն ներկայացվել է իբրև երկու և ավելի անձնավորություններ, շատ ինիցիալներ չեն բացվել և այլն»:

Ապա բերվում են թերությունների մի շարք օրինակներ, ինչպես՝ Հովհաննես Թումանյանի նշանավոր «Շիրվանզադեի հոբելյանը» հոդվածը անվանացանկում չի նշված Թումանյան Հովհ.-ի դիմաց, այլ նրանից առաջ տպված Թումանյան Հ. մի այլ հեղինակի է վերագրված: Երուխանը դարձել է երկու հեղինակ՝ մեկը Երուխան կեղծանվամբ, մյուսը՝ Սրմաքեշ–

[1] Տե՛ս, օրինակ, «Սովետական Հայաստան» (հանդես), Ե., 1960, № 1, էջ 28, «Գրադարանավար», 1960, № 1, էջ 26 և այլն:

[2] Հ. Դավթյան Ալ. Շիրվանզադեի մատենագիտությունը:— «Սովետ. գրականություն», 1960, № 4, էջ 152—156:

խանլյան Երվանդ: Երկու մարդ են դարձել նաև՝ Ռ. Պատկանյանը (Գամառ-Քաթիպա և Պատկանյան Ռ.), Կարա-Դերվիշը (Գենջյան Հ. և Կարա-Դերվիշ), Գ. Արծրունին (Գ. Ա.-ի և Արծրունի Գր.-ի տակ) և այլն:

Տարբեր մարդիկ մի մարդ են դարձել, ինչպես՝ 1910 թ. «Հորիզոնում» Շիրվանզադեի մասին հոդված տպագրած Ա. Բաբայանը և ժամանակակից կին գրականագետ Ա. Բաբայանը, 1911 թ. Բաքվում դասախոսություն կարդացած Հ. Հովհաննիսյանը և 1958-ին «Կոմունիստ» թերթում հոդված տպագրած Հ. Հովհաննիսյանը, արևմտահայ գրագետ Արտ. Հարությունյանը և արևելահայ ժամանակակից հեղինակ Ա. Հարությունյանը, անցյալի դերասան Մ. Աղայանը և երգահան Մ. Աղայանը, երգահան Կարա-Մուրզան և թարգմանիչ Կարա-Մուրզան և այլն:

Շիրվանզադեի մասին եղած գրականության հեղինակների անվանացանկում տեղ է գտել նաև ինքը՝ Շիրվանզադեն (մի բան, որ անհեթեթություն է), այն էլ տարբեր ստորագրություններով, իբրև մի քանի հեղինակ (Ա. Մ., Շ., Մաղքոս, Մելիտե, Ալեքսանդր, Ալեքսանդր Մովսիսյան):

Անվանացանկում տեղ չեն գտել մատենագիտության մեջ նշված շատ հեղինակներ (Կոմիտաս, Կիրպոտին, Քեչյան Բ., Շարլ Ռիշե և ուրիշներ):

Սխալներ կան նաև «Շիրվանզադեի ստեղծագործությունների և հոդվածների այբբենական ցանկում», ուր միևնույն ստեղծագործությունը մի քանի անգամ է ներկայացված (իբրև տարբեր ստեղծագործություններ) և այլն: Այսպիսով, հայ գրողների անհատական մատենագիտություններից այս մեկն առաջինն է, որ օժանդակ ցանկեր ունի, բայց այդ ցանկերը խիստ անորակ են:

Գրախոսականում մի շարք հետաքրքրական դիտողություններ են արված գրողի թողած գրական ժառանգությունը ճիշտ ներկայացնելու հարցի կապակցությամբ: Օրինակ, քննադատվում է այն, որ մատենագիտության մեջ Շիրվանզադեի գործերի հրապարակումները նախախորհրդային դասա-

գրքերում՝ ներկայացված են, իսկ խորհրդային գաղափարբերում եղածները՝ ոչ, որ չեն ընդգրկվել գրողի երկերի վրացերեն, ռուսերեն, չեխերեն և այլ լեզուներով եղած թարգմանությունների բաղմաթիվ, այդ թվում շատ կարևոր հրատարակություններ և այլն։

«Խստապահանջության պակասի ու անուշադրության հետևանքով,— գրում է գրախոսը,— այս գիրքը լի է սրբագրական սխալներով... գրքի շատ ու շատ էջերում սխալած սխալներից ու անճշտություններից թվում է, թե գիրքը սրբագրված չէ»։

Գրախոսականի դիտողությունները նորից ու նորից մատնանշել են տալիս այն մասին, որ մատենագիտական աշխատանքը միշտ պետք է զուգակցվի բանասիրական-բնագրագիտական աշխատանքով՝ միշտ պետք է զգույշ լինել հեղինակների կեղծանունների, տարբեր ստորագրությունների, տարբեր մարդկանց համանման անուն ազգանունների նկատմամբ։ Մանավանդ, վատ է երբ հեղինակի տարբեր վերնագրերով լույս տեսած միևնույն երկերը կամ նրանց հատվածները չեն ստուգվում և իբրև մի երկ չեն ներկայացվում, այլ գրանցվում են իբրև տարբեր երկեր։

Թերությունների մի պատճառն էլ թվում է այն, որ Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանում անհատական մատենագիտական ցանկերը կազմվում են աշխատողների ոչ փոքր խմբի կողմից (հաճախ 6—7 հոգու)։ Աշխատանքի նման բնույթը, պարզ է, որ հնարավորություն չի տա մատենագիտական-բնագրագիտական մանրակրկիտ համեմատումներ անելու, գրողի մասին ուսումնասիրություններ և հոդվածներ ունեցող մարդկանց ինքնությունը պարզելու, կեղծանունները բացելու համար։ Նման աշխատանք, ըստ երևույթին, հնարավոր է կատարել, եթե անհատական յուրաքանչյուր մատենագիտություն մեկ մատենագետ կազմի, խորհրդակցելով հարցերի մեջ, պատասխանատվություն զգա գործի համար։

Թումանյանին նվիրված մատենագիտությունը նախկին չորսի համեմատ ունի որոշ արժանիքներ։ Նախ ձևավորման

մասին. գրքում տրված են մատենագիտության մեջ եղած մի շարք գրքերի լուսանկարներ, ապա ի տարբերություն նախորդ ցանկերի այս մեկը կազմ ունի, նկարչական ձևավորումով[1]:

Հովհաննես Թումանյանի այս մատենագիտությունը ջերմ ընդունվեց հասարակայնության կողմից, այն իր թերություններով հանդերձ նշանակալից երևույթ էր հայ գրական-գրականագիտական կյանքում: Դա հասկանալի է: Չէ՞ որ Թումանյանը բազմազարյան հայ գրականության խոշորագույն դեմքն է, հայ ամենաժողովրդական բանաստեղծը:

Յուրաքանչյուր ժողովրդի գրականագիտական միտքը ամենից ավելի ծանրանում է իր խոշորագույն հեղինակների կյանքի ու գործի մանրամասն ուսումնասիրության վրա: Թումանյանը այդ տեսակետից բացառություն է կազմում. մինչև վերջերս հրապարակի վրա չկար հայ ազգային մեծ բանաստեղծի կյանքի ու ստեղծագործության տարբեր կողմերը ամենայն խորությամբ գնահատող, նրանց մեծ արժանիքները վեր հանող մի մենագրություն:

Մի մեծ հեղինակի ստեղծագործության ծանրակշիռ և բազմակողմանի ուսումնասիրությունը անպայման պետք է հենվի մատենագիտական, ինչպես ասում են, «սև» աշխատանքի վրա, որը և ուսումնասիրության սկիզբն ու հիմքն է դառնում: Մատենագիտությունն է, որ ի մի է հավաքում ու դասակարգում այս կամ այն հեղինակի գրական ողջ վաստակը, ներկայացնում, իսկ հաճախ նաև գնահատում նրա գործերի տարբեր հրապարակումները, նրա մասին եղած գրականությունը:

Մատենագիտական ճոխ հրատարակություններ են նվիրված շատ ժողովուրդների խոշորագույն գրողներին:

Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի տեղեկատու-մատենագիտական բաժինը անպայման լուրջ ներդրում կատարեց Թումանյանագիտության մեջ՝ հրապարակ հանելով ներկա

---

1 Այս մատենագիտության կազմը բացառություն է գրադարանի մատենագիտական հրատարակությունների մեջ: Դժվարին աշխատանքով ստեղծված մի շարք ծավալուն մատենագիտություններ Հանրապետական գրադարանը հրատարակել է ատանց կազմի, անհրապույր շապիկներով:

մատենագիտությունը, որը մեծապես օգնեց և օգնելու է Թումանյանով զբաղվող բոլոր բանասերներին: Վերջապես ի մի հավաքեց մեծ բանաստեղծի թողած գրական ժառանգության, Թումանյանական երկերի առանձին հրատարակումների հիմնական մասը: Ապա մի ամբողջության մեջ ներկայացվեց նաև այն, ինչ արվել է հայ աղգային հանճարին գնահատելու գործում:

Քսանմեկ բաժիններով տրված են Թումանյանի երկերի տարբեր բնույթի հրատարակությունները՝ առանձին գրքերով, պարբերական մամուլում, Թումանյանի թարգմանությունների, հոդվածների, կազմած դասագրքերի և խաղերի մանրամասն ցանկերը և այլն: Մատենագիտության մեջ հանդիպում են նյութեր, հատկապես մի շարք հոդվածներ, որոնք չեն մտել Թումանյանի երկերի ոչ մի հրատարակության մեջ:

Շատ կարևոր է և հետաքրքրական Թումանյանի մասին եղած գրականության բաժինը: Մեծ բանաստեղծի գրչի արտադրանքը հիմնականում հրապարակված է նրա երկերի ժողովածուներում և, եթե Թումանյանի ստեղծագործությունների վերաբերյալ, թեև դժվարությամբ ու ոչ լրիվ, բայց և այնպես կարելի է տեղեկություններ ստանալ գրողի երկերի տարբեր հրատարակություններից, մանավանդ, ակադեմիական հրատարակությունից, ապա այդ ստեղծագործությունների մասին, ինչպես և բանաստեղծի կյանքի վերաբերյալ եղած գրականության միակ աղբյուրը այժմ մնում է ներկա մատենագիտությունը:

Օրինակ, նախքան այս մատենագիտությունը շատե՞րը գիտեին արդյոք, որ Թումանյանի գրական ասպարեզ իջնելուց ընդամենը մի քանի ամիս հետո (1890-ին) նրա մասին գրվածական խոսք է ասվում մամուլում նշանավոր բանասեր Մ. Աբեղյանի կողմից: Մատենագիտությունը ցույց է տալիս նաև, որ Աբեղյանից անմիջապես հետո Թումանյանի տաղանդի առաջին գնահատողներից են եղել Դ. Ազայանը, Գ. Արծրունին, Լ. Մանվելյանը, Ավ. Արտախանյանը:

Դրական պետք է համարել այն, որ մատենագիտության

մեջ պահեղված են նաև ժամանակին Թումանյանի դեմ գրված հոդվածները (Ռ. Դրամբյանի, Հ. Առաքելյանի և ուրիշների)։ Դրողի անցած ստեղծագործական ուղու մասին հիշյա պատկերացում կազմելու համար գրական հակառակորդների կարծիքները մոռացության տալ չի կարելի։

Ուշադրությունից չի կարող վրիպել նաև Թումանյանին նվիրված արձակ ու չափածո ստեղծագործությունների ցանկը, որ տեղ է գտել մատենագիտության մեջ։ Այստեղ ընթերցողը կարող է իմանալ, օրինակ, որ դեռևս Թումանյանի կենդանության օրոք նրան բանաստեղծություններ են նվիրել Կ. Բալմոնտը, Յու. Վնսկովսկին, Ս. Գորոդեցկին, Հար. Թումանյանը, Ա. Վշտունին, Շ. Ադնավուրյանը և ուրիշներ կամ, օրինակ, այն, որ Թումանյանի մասին ամենից ավելի շատ բանաստեղծություններ գրել է Գուրգեն Մահարին։ Բոլոր նյութերի նկարագրությունները ընթերցողին հղում են դեպի աղբյուրները, ուր կարող է նա գտնել իր ցանկացած նյութը։

Այժմ թերությունների մասին։ Մատենագիտության մեջ, իհարկե, բավական պակասներ կան, թեև պետք է ասել, որ Թումանյանի տպագիր գեղարվեստական առանձին ստեղծագործություններից (խոսքն անունների մասին է) բացթողումները չնչին են։ Պակասները ամենից ավելի վերաբերում են առանձին ստեղծագործությունների տարբեր հրատարակումներին (այդ թվում և այլ լեզուներով), ինչպես և Թումանյանի հոդվածներին ու մանավանդ գրողի մասին եղած գրականության։ Մի շարք պակասներ (օրինակ արտասահմանյան հրատարակումները) հարգելի են այսպիսի մի ծավալուն մատենագիտության մեջ, սակայն կան և այնպիսի բացթողումներ, որոնք չպետք է լինեին։ Օրինակ, շատ լուրջ թերություն է այն, որ մատենագիտությունը պատկերացում չի տալիս դասագրքերի էջերում Թումանյանի գործերի հրատարակումների մասին. տրված են ընդամենը մի երկու այդպիսի նկարագրություններ, բան որում, այնպես է ստացվում, որ խորհրդային շրջանում միայն մի դասագրքի մեջ է դրվել Թումանյանի, այն էլ, մի ստեղծագործությունը («Հոռեցի Սաքոն»)։

Մատենագիտությունից դուրս են մնացել Թումանյանի ստեղծագործությանը նվիրված որոշ կարևոր հոդվածներ, օրինակ, չի նշված Շիրվանզադեի «Լրագրային գիտողություններ» ռուսերեն հոդվածը («Նովոյե օբոզրենիե», 1893), ուր տրված է Թումանյանի տաղանդի առաջին, բարձր գնահատականներից մեկը։ Շատ լուրջ բացեր կան Թումանյանի երկերի ռուսերեն հրատարակումների ցանկում։ Կարելի է վրատահորեն ասել, որ եղած նյութերի կեսն էլ չի ընդգրկված։



Հայ գրողներին նվիրված մատենագիտական ցանկեր
(հրատարակված Ալ. Մյասնիկյանի անվ. գրադարանի կողմից)

Չեն ընդգրկված Թումանյանի չհրապարակված, բայց նրա արխիվում եղած մի շարք կարևոր նյութեր։

Այլ բնույթի բացթողումների մասին խոսում են նաև իրենք կազմողները գրքի սկզբում տրված «Երկու խոսքի» մեջ։ Իհարկե, կարելի էր մատենագիտության հրապարակումը մի քանի տարով էլ հետաձգել և այն ավելի լրիվ դարձնել։ Սակայն հաղիվ թե դա ճիշտ լիներ։ Հավաքված նյութն էլ բավական հա-

բուսա է, իսկ պակասը կարելի է հավաքել և մի նոր, լրացուցիչ հատորի նյութ դարձնել, ինչպես որ սովորաբար վարվում են մատենագիտության մարդում։

Կարելի է նշել նաև այլ բնույթի, հատկապես մատենագիտական թերություններ։ Օրինակ, շատ կարևոր է բոլոր նյութերի համարակալումը, որը, ինչպես բաժնի հրատարակած նախորդ ցանկերում, այստեղ ևս չի արված։

Թումանյանի մասին եղած գրականության ցանկում մի շարք հոդվածներ բերված են կեղծանուններով, որոնց զգալի մասը չի բացվում ոչ մատենագիտության մեջ, ոչ անվանացանկում (ինչպես՝ Մէ-բիս, Մարտո, Իբո, Նեգր և այլն), իսկ ժողովրդական ուսուցիչ Սիմակ Սահակյանը ցանկում հանդես է եկել երեք անունով՝ Սահակյան Ս., Մաճկալ Շ. և ուղղակի Սիմակ։ Այս կարգի թերություններ բավական քանակով կան գրքի անվանացանկում։

Մատենագիտության «Երկու խոսք»-ում նշված են կազմողները՝ Ե. Սարգսյան, Բ. Ասատվածատրյան, Մ. Բաբայան, Վ. Կանաունի, Է. Հովհաննիսյան։

Մեծ մասամբ Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի տեղեկատու-մատենագիտական բաժնի հրատարակություններում չարդարացված կերպով չեն նշվում կազմողները։ Հայ գրողներին նվիրված գիտաժողովական, անհատական մատենագիտական ցանկերից Թումանյանին նվիրվածն առաջինն է, ուր նշված են կազմողները, թեև ոչ իրենց տեղում՝ տիտղոսաթերթի վրա (կամ դարձերեսին), այլ՝ «Երկու խոսքում»։

Աշխարհի բոլոր մասերում հրատարակվող մատենագիտական ցանկերի վրա համապատասխան տեղում նշվում են կազմողները, և Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի տեղեկատու-մատենագիտական բաժինը բացառություն լինել չի կարող։

Կազմողի նշումը մատենագիտության մեջ պատասխանատվության զգացողություն է առաջացնում ցանկի վրա աշխատելիս. գործը հաջող ստացվելու դեպքում խրախուսանքը ոգևորում է կազմողին։ Մատենագիտություն կազմողը հեղի-

նակ է և այդ իրավունքով էլ նա պետք է ներկայացվի իր հեղինակած աշխատության մեջ։

Արդեն ասվեց, որ մատենագիտական ցանկերի խմբումին կազմելը (հաճախ բավական մեծ խմբով) անբաժանելի է անդրադառնում Ալ. Մյասնիկյանի անվան դրադարանի տեղեկատու մատենագիտական բաժնի հրատարակություններին վրա։ Ուշադրություն է դրավում այն, որ խմբումի են կազմվում ամենից ավելի կարևոր մատենագիտություններ։

Արդյոք հնարավոր չէ՞ փորձել այս կամ այն կարևոր պիտաժանդակ ցանկի կազմումը սկզբից մինչև վերջ հանձնարարել աշխատակիցներից մեկին։ Ճիշտ է, այդ աշխատակիցը օգտվելու է բաժնում արդեն եղած նյութերից, սակայն այն իրավունքով, որով օգտվում է ամեն մի ընթերցող։

Սկզբից մինչև վերջ մատենագիտական ցանկը մի հոգու կողմից կազմվելու դեպքում, թվում է, ոչ միայն ցանկի որակը ավելի բարձր կլինի, այլ աշխատանքն էլ ավելի արագ կկատարվի, և որևէ հեղինակային դիմազրկում էլ չի լինի։

Կա մի կարևոր հանգամանք ևս։ Ալ. Մյասնիկյանի անվան դրադարանը լույս է ընծայել մի շարք պիտաժանդակ մատենագիտական ցանկեր։ Դրանց մեծ մասը (եթե ոչ բոլորը) լուրջ պակասներ ունի, ըստ որում, ենթադրվում է բոլոր այդ մատենագիտությունները հետագայում լրացնել՝ պակասներն ընդգրկող պրակների հրատարակմամբ։ Մի քանիսի առաջաբանում (օր.՝ «Հովհաննես Թումանյան», «Մատենագիտություն հայկական մատենագիտության») այդ խոստումը ուղղակի արված է ընթերցողին։ Սակայն մինչև այժմ լրացուցիչ պրակ հրատարակելու կամ մատենագիտությունը լրացումներով վերահրատարակելու և ոչ մի դեպք չկա։ Դրա պատճառն էլ թվում է, որ խմբային, դիմազրկված աշխատանքի բնույթն է։ Եթե այս կամ այն պիտաժանդակ մատենագիտությունն ունենար իր պատասխանատու կազմողը և նրա վրա պարտականություն դրվեր մատենագիտության լույս ընծայումից հետո շարունակել լրացուցիչ նյութերի հավաքումը և, ասենք, մի քանի տարի հետ լույս ընծայել լրացուցիչ պրակը (կամ

մատենագիտությունը վերահրատարակել լրացված), գործը, ըստ երևույթին, գլուխ կկար։ Այդպիսի դեպքեր շատ կան ռուս մատենագիտության մեջ (հիշենք, օրինակ, Պուշկինի և Գոգոլու մատենագիտությունների լրացված վերահրատարակումները կամ լրացուցիչ պրակների հրատարակումը)։

Քանի որ խոսվեց գեղարվեստական գրականության մատենագիտության գծով Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի կատարած աշխատանքի մասին, հարկ է երկու խոսքով էլ անդրադառնալ նույն կարգի նաև մի քանի այլ մատենագիտական ցանկերի, որոնք թեև տեղեկատու-մատենագիտական բաժնի կողմից չեն կազմված, բայց հանրապետական գրադարանի վերը նկարագրված հրատարակությունների մի մասն են կազմում։ Նախ, խոսքը վերաբերում է Ա. Բակունցին նվիրված մատենագիտությանը, որ կազմել է տոդերիս գրողը. («Ակսել Բակունց։ Կենսագրություն։ Մատենագիտություն»։ Եր., 1960, 203 էջ)։

Ընդհանուր կառուցվածքով այս մատենագիտությունն էլ նման է նախորդներին։ Սակայն տարբեր են նրա մի շարք կողմերը ,այդ թվում. ա) Համարակալված են բոլոր նյութերը, բ) Ունի տեղեկատու օժանդակ ցանկեր (1. Բակունցի ստեղծագործությունների, հոդվածների, թարգմանությունների, խմբագրած պարբերականների ու գրքերի այբբենական ցանկ, 2. պարբերականներ, որոնցում տպագրվել են Ա. Բակունցի ստեղծագործությունները ու հոդվածները, 3. Ա. Բակունցի մասին եղած գրականության հեղինակների այբբենական ցանկ), գ) Գրքի շապիկն ունի նկարչական ձևավորում, վրան Բակունցի հայտնի պրոֆիլի պատկերով (գործ Հ. Կոջոյանի), գրքի ներսում կան գրողի երկերի հրատարակությունների մի շարք լուսանկարներ, դ) Մատենագիտական այս ցանկի սկզբում, ի տարբերություն նախորդների, դեռևս գրված է Ա. Բակունցի ընդարձակ կենսագրությունը (կազմում է գրքի մոտ կեսը), որ տարբեր փաստաթղթերի հիման վրա գրված է առաջին անգամ։

Գրախոսականներում[1] հավասար կարևորություն տրվեցին թե՛ գրողի կենսագրությանը, թե՛ մատենագիտությանը: Վերջինիս մեջ ուշադրություն գրավեց նաև այն հանգամանքը, որ Բակունցի մասին եղած գրականության բաժնում նշված էին այն չարամիտ հոդվածները, որոնք ժամանակին գրվել էին գրողին և նրա ստեղծագործությունը վարկաբեկելու միտումով:

Ցավոք, գրախոսականները չէին նշում մատենագիտության մեջ տեղ գտած թերությունները:

Թեև բավական լարված աշխատանքի արդյունք էր այս մատենագիտությունը, բայց այնտեղ էլ տեղ են գտել մի շարք, երբեմն լուրջ թերություններ: Նախ մատենագիտությունից դուրս են մնացել գրողի մի շարք ստեղծագործությունները:

Այսպես, մատենագիտության մեջ տեղ չեն գտել Բակունցի հետևյալ ստեղծագործությունները.

1 «Սաքուշ»: [*Ակնարկ Վսեռուշի մասին*]:— «*Արվեստ, Գրականություն, գիտություն*» (*Թիֆլիս, «Պրոլետարի» հավելված*), *1928, № 1* (*հունվ. 1*):

2 Կապը: [*Պատմվածք*]:— «*Արվեստ, գրականություն, գիտություն*», *1928, № 4* (*հունվ. 22*):

Մատենագիտությունից դուրս մնացածների մեջ են նաև ռուսերեն հրապարակված բակունցյան երեք ակնարկներ, որոնց հայերեն հրապարակումները չգտանք (ըստ երևույթին, միայն ռուսերեն թարգմանությամբ են տպագրվել): Դրանք են.

3 **Один из многих** [*Ակնարկ Յայջի գյուղի գպրոցի մասին*]: «Заря Востока», *1925, № 827, 15* марта.

4. **Багратаван** [*Ակնարկ Բագրատավան (Բաղարշայ) գյուղի մասին*]:— «Заря Востока», *1925, № 841, 3* апреля.

---

[1] *Տե՛ս, օրինակ, «Սովետ. գրականություն», 1961, էջ 154—156, «Ավանգարդ», 1961, № 36, «Գրական թերթ», 1961, № 13:*

5. По следам Зангезура [*երեք ակնարկ*]:— «Заря Востока», *1925, № 891, 3* июня.

Այս նյութերը հայտնաբերել ենք մատենագիտությունը լույս տեսնելուց հետո: Սակայն մատենագիտությունից դուրս է մնացել Բակունցի հայտնի մի գործը՝ «Գավառական նամականի» ակնարկաշարի երկրորդ ակնարկը զուտ անփութության պատճառով: Այն է՝

Ս. Գավառական նամանակի: (2-րդ),— «Մարտակոչ», 1925, № 35, փետր. 12.

Դուրս է մնացել նաև այս ակնարկի ռուսերեն հրապարակումը, որ կոչվում է «БРУН» («Заря Востока», *№ 803, 13* февр.)*:*

Այս վեց գործերը բոլորովին տեղ չեն գտել գրողի ստեղծագործությունների շարքում: Բայց մատենագիտության մեջ տեղ գտած բակունցյան մի քանի գործերի ռուսերեն հրապարակումները (20-ական թվականների) նույնպես դուրս են մնացել ցանկից: Դրանք են.

1. Провинциальные письма *(«Գավառական նամականու» 1-ին անկարկն է, փոխագրված ռուսերենի «Մարտակոչի» 1924 թ. 298 համարից):*— «Заря Востока», *1925, № 768.*

2. **Артелия».**— «Заря Востока», 1925, № 1003.

3. **Мина Биби.**— «Заря Востока», 1925, № 1021.

4. **Хонар.**— «Заря Востока», 1928, № 112.

Նշելի է, որ թվարկված այս թարգմանություններից առաջին երեքի մեջ հայերեն բնագրի համեմատ կան զգալի փոփոխություններ:

Ցանկից դուրս են մնացել նաև Բակունցի մասին գրված որոշ հոդվածներ, որոնք հիմնականում հրապարակվել են արտասահմանում (թեև դուրս մնացածների մեջ կան նաև Հայաստանում հրապարակվածներ):

Այնուհետև, կան այլ կարգի սխալներ: Օրինակ մատենագիտության մեջ անտիպ նյութերի շարքում (էջ 113) նշված է մի ձեռագիր («Տաշքենդ գնացող մարդը»), որը պահվում է

գրականության թանգարանում, մինչդեռ իրականում դա Բակունցի «Կածանով» ակնարկն է, տպագրված նախ «Մարտակոչում» (1927, № 7), ապա Բակունցի երկերի երկհատորյակում (Կազմող՝ Ս. Պայազատ)։ Բակունցի կենսագրությանը նվիրված մասում (էջ 47) բերված է նաև այս ակնարկի ձեռագրի (իբրև անտիպ գործի) մի էջի լուսանկարը[1]։

Մյուս սխալներից ու վրիպումներից է, օրինակ, այն, որ Անդր. Ստեփանյան ստորագրությամբ Բակունցի «Մի գրախոսության առթիվ» հոդվածը լույս է տեսել «Նոր ուղի» հանդեսի 1931 թ. 5-րդ գրքում, բայց մատենագիտության մեջ նշված է իբրև 1932 թվին լույս տեսած հոդված։

Վրիպակներ կան Բակունցի գործերի այբբենական ցանկում և անվանացանկում։ Օրինակ, Ծատուն տղան պատմվածքի դիմաց դրված է 5 համարը, այնինչ այդ համարի տակ մատենագիտության մեջ նման բան չկա (կա 6-ում), անվանացանկում Պետրոսյան Ռուբենը և Պետրոսյան Ռաֆիկը միացված են Պետրոսյան Ռ.-ի տակ իբրև մի մարդ։

Մի շարք վրիպակներ կան Բակունցի կենսագրության մեջ։

1964—1965 թվականներին Հանրապետական գրադարանը հրատարակեց երկու ռուսերեն մատենագիտական ցանկեր, դրանք են.

1. **Л. Мкртчян** Аветик Исаакян на русском языке. Библиография переводов и критической литературы. Ереван, 1964, 155 стр.

2. **С. Меликян** Ваан Терян на русском языке. Библиография переводов и критической литературы. Ереван, 1965, 77 стр.

---

[1] Թյուրիմացությունն առաջինը նկատել է Բակունցի երկերի ժողովածուները կազմող Ս. Պայազատը, որին, առիթն օգտագործելով, հայտնում ենք մեր շնորհակալությունը։

Պետք է նշել նաև, որ «Կածանով» ակնարկի՝ «Մարտակոչում» տպագրված տարբերակի և ձեռագրի (հրապարակված է «Սովետ. գրականություն», 1965, № 3, էջ 103—112) միջև կան բնագրային մի շարք (շուրջ 30) տարբերություններ։

Երկու ցանկերն էլ, ինչ խոսք, օգտակար են հայ երկու մեծ բանաստեղծների գրական երկերի ռուսերեն թարգմանությունները, ինչպես և Իսահակյանի ու Տերյանի մասին եղած ռուսերեն գրականությունը մի հավաքելու և հասարակայնությանը ներկայացնելու տեսակետից։

Կազմողները, մանավանդ Լ. Մկրտչյանը մանրակրկիտ աշխատանք են կատարել նյութը հավաքելու և խմբավորելու տեսակետից։

Երկու ցանկն էլ գրեթե նույն կառուցվածքն ունեն։ Յուրաքանչյուրի առաջին մասում տրված է բանաստեղծի երկերի ռուսերեն թարգմանությունների ցուցակը, իսկ երկրորդ մասում՝ ռուսերեն գրաքննադատական գործերի ցանկերը։ Առաջին մասում նախ թվարկված են առանձին գրքերով լույս տեսած թարգմանությունները, ապա՝ գրողի առանձին գործերը, ըստ որում, տրվում է յուրաքանչյուր երկի հայերեն վերնագիրը կամ սկզբնատողը։ Ամեն մի հայերեն վերնագրի տակ բերվում են տվյալ ստեղծագործության թարգմանությունները, նշվում են սրանց հրատարակման տեղերը։

Երկու մատենագիտություններն էլ համարակալված են և ունեն միևնույն օժանդակ ցանկերը՝ 1) բանաստեղծի գործերի ռուսերեն թարգմանությունների վերնագրերի և սկզբնատողերի այբբենական ցանկ, 2) ստեղծագործությունների հայերեն վերնագրերի և սկզբնատողերի այբբենական ցանկ և 3) անվանացանկ։

Նշելով այս մատենագիտական հրատարակությունների գրական կողմը՝ չի կարելի ուշադրության չառնել նաև բացասականը, որը բավական լուրջ է։

Նախ անընական և անարդարացի է, որ մինչև այժմ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանը հայ գեղարվեստական գրականության գծով իր կազմած մատենագիտական ցանկերի կողքին չի դրել նաև Ա. Իսահակյանի և Վ. Տերյանի (ինչպես և մի քանի այլ հեղինակների) մատենագիտությունները։ Ապա, որևէ հիմնավորում չի կարելի գտնել այն բանին, որ առանց լույս ընծայելու հայ խոշորա-

գույն բանաստեղծներից երկուսի ստեղծագործությունների և նրանց մասին եղած գրականության ամբողջական մատենագիտությունը, առանց ներկայացնելու այդ բանաստեղծների գործերը բնագրի լեզվով, այսինքն՝ հայերեն, հրապարակ է հանվում նրանց թարգմանությունների մատենագիտությունը։ Սա աննախադեպ երևույթ է. ոչ մի ժողովրդի ազգային մատենագիտության մեջ նման դեպք չկա։ Նույնիսկ փոքր-ինչ վավերագական է. բնագրի լեզվով գրողի երկերը, ինչպես և ազգային լեզվով այդ գրողի մասին եղած գրականությունը իրենց ամբողջությամբ չեն ներկայացվում հասարակայնությանը, բայց դրա փոխարեն այդ գրողի հայրենիքում հրապարակ է հանվում նրա երկերի թարգմանությունների մատենագիտությունը։

Հանրապետական գրադարանը, անշուշտ, կարող էր օգտագործել երկու հայ բանաստեղծների երկերի թարգմանությունների այս ցանկերը Խահակյանի և Տերյանի ամբողջական մատենագիտությունների մեջ, բայց ոչ երբեք՝ հրատարակել այդ թարգմանությունների ցանկերը առանձին, ամբողջական մատենագիտություններից առաջ։

Այնուհետև, անհասկանալի է, թե ինչո՞ւ նույնիսկ այս ցանկերը, որոնք կազմվել են ոչ թե մասնագետ մատենագետների, այլ գրականագետների կողմից, խմբագրվել են գործակալ գրականագետների ձեռքով։ Եթե, ասենք, Շիրվանզադեին, Թումանյանին, Չարենցին նվիրված ցանկերի խմբագիրները գրականագետներ են, հասկանալի է (թեև այս դեպքում ևս անհրաժեշտ է մի երկրորդ՝ մատենագետ խմբագիր)։ Սակայն ճիշտ չէ, երբ մատենագիտական ցանկերի ոչ կազմողներն են մատենագետ, ոչ էլ խմբագիրները։ Մանավանդ, որ այս ցանկերը գոյացել են հիշյալ բանաստեղծների երկերի ռուսերեն թարգմանությունների մասին ուսումնասիրություններ գրելու համար նյութեր հավաքելիս, այսինքն՝ այս դեպքում նրանք երկրորդային բնույթ ունեն (առաջնային են ուսումնասիրությունները)։ Թեև պետք է ասել, որ, կազմողները քիչ բան չեն արել, որ ցանկերը լավը լինեն, նրանց աշխա-

տանքը պետք է գնահատել, սակայն նրանց ոչ մատենագետ լինելը իր կնիքն է դրել ցանկերի վրա։

Եվ պատահական չէ, որ այս երկու ցանկերում չի պահպանված տպագիր երկերի նկարագրության ոչ մի կանոն, թույլ են տրված մատենագիտական աշխատանքում ընդունված օրենքների լուրջ խախտումներ։

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿԵՐ

1. Ալեքսանդր Մյասնիկյան։ *1886—1925։ Բիբլիոգրաֆիա։ Կազմ. և առաջաբանով Ա. Ոսկերչյանի։ Եր., 1956, 148 էջ։*

2. Ստեփան Շահումյան։ *1878—1918։ Բիբլիոգրաֆիա։ Կազմ. և առաջաբան. Խ. Բարսեղյանի։ Եր., 1957, 178 էջ։*

3. Սուրեն Սպանդարյան։ *1882—1916։ Բիբլիոգրաֆիա։ Կազմ. և առաջաբան. Խ. Բարսեղյանի։ Եր., 1958, 57 էջ։*

4. Ն. Սարգսյան։ *Կամո։ Սիմոն Տեր-Պետրոսյան։ 1882—1922։ Բիբլիոգրաֆիա։ Ա. Հարությունյան-Հարենցի կազմ. և առաջաբ. Եր., 1964, 74 էջ։*

Մատենագիտական այս ցանկերը իրրև անհատական մատենագիտության նմուշներ, կառուցվածքով, հասկանալի է, որ նման են նախորդներին (նախաբան, գործչի երկերի և նրա մասին եղած գրականության ցանկեր)[1]։

Մամուլում այս ցանկերի հրապարակումը ընկավ իրրև կարևոր երևույթ։ Եվ, հիրավի, նրանք հանրապետական գրադարանի կարևորագույն հրատարակություններից են։

Այդ ցանկերով առաջին անգամ Ս. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ալ. Մյասնիկյանի գործերը, նրանց, ինչպես և Կամոյի մասին եղած գրականությունը հանրագումարի էր բերվում, ամփոփվում մատենագիտական ցանկերում։

---

1 *Բացառություն է կազմում Կամոյին նվիրված մատենագիտությունը, ուր նշվում է միայն գրականություն Կամոյի մասին։*

Հասկանալի է, որ բացթողումներ, վրիպակներ, սխալներ այս ցանկերի մեջ էլ կան, սակայն նրանք որակ չեն կազմում, ընդհանուր առմամբ, ցանկերը մասնագիտական պատշաճ մակարդակ ունեն, միայն այդ մակարդակն իջնում է այն պատճառով, որ առաջին երեք մատենագիտությունների մեջ նյութերը համարակալված չեն և, մանավանդ, չունեն որևէ կարգի տեղեկատու-օժանդակ ցանկեր:

Միայն Կամոյին նվիրված մատենագիտությունն է, որ ունի հեղինակների անվանացանկ (նյութերը համարակալված են):

1962 թվականին Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի տեղեկատու-մատենագիտական բաժինը ձեռնամուխ եղավ երկու մատենագիտական ցանկերի կազմման. դրանցից մեկը 40 տարում հայերեն հրատարակված գրադարանագիտական գրականության ցանկն էր, մյուսը՝ Հայ մատենագիտության մատենագիտությունը:

Ըստ բաժնի նախնական ծրագրի սրանք պետք է լինեին ոչ մեծ ցանկեր, յուրաքանչյուրը միջին հաշվով չորս հեղինակային մամուլ ծավալով: Երկուսն էլ պետք է ավարտվեին նույն 1962 թվականին: Սակայն պարզվեց, որ բաժնի նախնական ծրագիրը այնքան էլ ճիշտ չի եղել: Գրադարանագիտական գրականությանը նվիրված մատենագիտությունը իրոք ավարտվեց նույն թվին՝ ընդգրկելով 191 անուն գիրք և գրքույկ (ուներ 40 էջ, մոտ 2 հեղ. մամուլ), իսկ մատենագիտության մատենագիտությունը ավարտվեց միայն հաջորդ տարվա վերջին, նրա մեջ ընդգրկվեցին ավելի քան 1300 անուն նյութեր, ծավալը մի քանի անգամ գերազանցեց 4 մամուլից (հասավ մոտ 16 հեղ. մամուլի):

Նախ այս ցանկերից առաջինի մասին, որ կոչվում է «Սովետահայ գրականագիտական գրականության բիբլիոգրաֆիան 40 տարում» [1]:

---

1 Ի դեպ, վերնագիրը ճիշտ չի ձևակերպված, ստացվում է այնպես, որ խոսքը վերաբերում է 40 տարվա ընթացքում կազմված «Սովետահայ գրա-

Չնայած մատենագիտության նման անվանը, այն, բատ էության, ընդգրկում է Ալ. Միասնիկյանի անվան հանրապետական գրադարանի բոլոր կարգի (թե գրադարանագիտական, թե մատենագիտական և թե այլ) հրատարակությունները



Հայ հեղափոխական-պետական գործիչներին նվիրված մատենագիտական ցանկեր (հրատարակված Ալ. Միասնիկյանի անվ. գրադարանի տեղեկատու-մատենագիտական բաժնի կողմից)

1937-ից մինչև 1961 թվականը, ինչպես և այլ հրատարակությունների կողմից լույս ընծայված միայն գրադարանագիտական գրքերը:

Գրքույկի առաջին մասը հանրապետական գրադարանի բոլոր կարգի հրատարակությունների ցանկն է, երկրորդը՝ այլ

դարանագիտական գրականության բիբլիոգրաֆիային», թեև կազմողներն ուզել են ասել 40 տարում հրատարակված գրադարանագիտական գրականության «բիբլիոգրաֆիա»: Ճիշտ կլիներ վերնագիրը ձևակերպել այսպես՝ «Խորհրդային հայ գրադարանագիտական գրականություն 40 տարում: Մատենագիտություն»:

հրատարակչությունների լույս ընծայած գրադարանագիտական գրականությունը։

Ստացվել է որոշ հակասականություն, այն իմաստով, որ, օրինակ, հանրապետական գրադարանի մատենագիտական հրատարակությունները ներկայացված են, իսկ այլ հիմնարկներինը (գրապալատ, գիտ. ակադեմիա և այլն)՝ ոչ։ Եթե «գրադարանագիտական» ասելով կազմողները հասկացել են նաև մատենագիտական, ապա ինչո՞ւ մատենագիտական ամենախոշոր հրատարակությունները դուրս են մնացել ցանկից։

Այս ոչ մեծ մատենագիտության լույս ընծայումը միանդամայն գրական երևույթ էր հայ գրադարանային կյանքում։ Գրադարանային մասնագետներից շատերը չէ, որ գիտեին հայերեն հրատարակված բոլոր գրադարանագիտական գրքերի մասին։ Ցանկը ամբողջացրեց 40 տարում գրադարանային գործի տեսության և մեթոդական աշխատանքի ուղղությամբ արված ոչ փոքր աշխատանքը։ Ափսոս միայն, որ մատենագիտության մեջ տեղ չի տրվել գրադարանային հարցերին նվիրված հոդվածներին, որոնք բավական շատ են և հաճախ հետաքրքրական բովանդակությամբ (նշվել է միայն մեկ այդպիսի հոդվածի առանձնատիպ)։

Ցանկում կան նաև այլ թերություններ, այդ թվում՝ պակասներ։ Օրինակ, չի նշված Գ. Մկրտչյանի «Գրադարանային գործի կազմակերպումը» գիրքը (101 էջ), որ լույս է տեսել 1961 թվականին։

Թերություններ կան նյութերի նկարագրությունների մեջ, օրինակ, «Գրադարանային դասակարգման սխեման» և «Տպագիր երկերի միասնական կանոնները» նկարագրված են այդ գրքերը ռուսերենից փոխադրողների տակ (առաջինը՝ Հ. Սիլվանյան և Ռ. Իշխանյան, երկրորդը՝ Ա. Բաբայան), որ ճիշտ չէ, քանի որ փոխադրողները և տեղայնացնողները այս դեպքում հեղինակ համարվել չեն կարող (երկու ձեռնարկներն էլ կազմվել են Մոսկվայում՝ հեղինակների խմբի կողմից)։

Ցանկում ընդգրկված են գրադարանագիտական նյութերի

ժողովածուներ, սակայն դրանց բովանդակությունը չի բացված, որ նույնպես թերություն է։

Կան սխալներ, օրինակ, 1939-ի տակ գրված է «Տարաս Գրիգորևիչ Շևչենկո» մատենագիտությունը, նկարագրության մեջ 1938 թ. նշումով (էջ 4), կամ՝ «Տպագիր քարտերի օգտագործումը մասսայական գրադարաններում» առանձնատիպ հոդվածի դիմաց (էջ 36) նշված է՝ Ապակետիպ, մինչդեռ հոդվածը հրատարակված է սովորական տպագրությամբ։ Սխալներ կան անվանացանկում, օրինակ, նույնացված են Ս. Դավթյանը և Հ. Դավթյանը, առաջինի «Դիլիջանի քաղաքային գրադարանը» գրքույկը (№ 120) անվանացանկում նշված է իբրև երկրորդի հեղինակած գիրք և այլն։

Լավ է, որ այս մատենագիտության նյութերը համարակալված են և կա անվանացանկ։

Մյուս մատենագիտական ցանկը կոչվում է «Մատենագիտություն հայկական մատենագիտության։ (Ուղեցույց)», (1963, 344 էջ)։

Ինչպես անունն է ցույց տալիս, մատենագիտության մատենագիտությունը ցանկերի ցանկ է, մատենագիտական ցանկեր ներկայացնող մատենագիտություն։ Այդպիսի ցանկը կոչվում է նաև երկրորդ աստիճանի մատենագիտություն (առաջին աստիճանի մատենագիտությունը սովորական գրքերի ցանկն է)։

Քաղաքակիրթ շատ ժողովուրդներ վաղուց ի վեր ունեին տարբեր բնույթի երկրորդ աստիճանի մատենագիտական ցանկեր։ Այդ կարգի ուղեցույցներ շարունակում են լույս տեսնել։ Սրանց անհրաժեշտությունը առաջանում է այն ժամանակ, երբ սովորական մատենագիտական ցանկերը այնքան շատ են լինում, որ անհրաժեշտություն է առաջանում նրանց ի մի հավաքել, նրանց մասին տեղեկանքներ տալ ընթերցողներին։ Որոշ ազգեր, ինչպես ասենք անգլիացիք, ռուսները, լեհերը, ամերիկացիք երկրորդ աստիճանի մի քանի կամ մի շարք մատենագիտական ուղեցույցներ ունեն (ընդհանուր, թեմատիկ, ճյուղային), որոնք տարբեր կերպ

ներկայացնում են յուրաքանչյուրի ազգային մատենագիտությունը։

Հայ մատենագիտությունն այսօր, իհարկե, ծավալով այնքան մեծ չէ. հիշյալ ազգերի ունեցածի չափ հայերը չունեն մատենագիտական ցանկեր, ուստի և երկրորդ աստիճանի մի քանի մատենագիտության կարիք այս դեպքում չկա։ Սակայն գոնե մեկ այդպիսի ուղեցույցի կարիք վաղուց էր զգացվում, ուղեցույց, որը ներկայացներ, թե հայերեն ինչ մատենագիտական ցանկեր են լույս ընծայվել մինչև այժմ։

Մատենագիտությունը կազմելուց առաջ անհրաժեշտ էր նախ պարզել, թե ինչ ասել է հայկական (կամ հայ) մատենագիտություն։ Որոշվեց այս դեպքում էլ, ինչպես գեղարվեստական գրականության մեջ, չափանիշ ընդունել լեզվական հատկանիշը։ Հայտնի է, որ հայ գրականության սահմանները որոշվում են հայալեզու գրականությամբ, այսինքն՝ հայ գրականությանը վերաբերող ստեղծագործություն է համարվում միայն նախապես հայերեն գրված գործը։ Հայազգի հեղինակ լինելու կամ հայկական կյանքը արտացոլելու հանգամանքները այս դեպքում որևէ դեր խաղալ չեն կարող, այսինքն՝ հայ գրողներ չեն ոչ հայազգի Մայկլ Առլենը, որ գրում էր անգլերեն օտարների կյանքից, ոչ օտարազգի Ֆրանց Վերֆելը, որ գրել է հայերի կյանքից, բայց գերմաներեն և ոչ նույնիսկ հայազգի Նորա Ադամյանը, որ գրում է հայերի կյանքից, բայց ռուսերեն։ Հիշյալ հեղինակների ստեղծագործությունները ոչ թե հայ գրականության մասն են կազմում, այլ այն ազգերի գրականության, որոնց լեզվով գրում են այդ հեղինակները։

Մատենագիտության համար էլ ընտրվեց լեզվական նույն չափանիշը, որ հասակ է ու որոշակի։ Ըստ ընդունված որոշման, հայկական մատենագիտությունը նախ պետք է ներկայացնի հայալեզու գրականությունը. հայազգի մատենագետի կազմած, բայց ոչ հայերեն գրականություն ներկայացնող ցանկը դուրս է հայկական մատենագիտությունից, եթե նույնիսկ ներկայացվում է ոչ հայալեզու հայագիտական գրականություն,

միևնույն է, այդ մատենագիտությունը հայկական չէ (հայագիտական է)։

Այդպիսով, այս մատենագիտության համար նյութեր ընտրելիս հիմնական սկզբունքը եղել է՝ վերցնել միայն հայերեն գրքերի, պարբերականների, հոդվածների (և ձեռագրերի) մատենագիտական ցանկերն ու աշխատությունները։

Հայերեն հրատարակությունների ցանկերը, պարզ է, որ հայատառ են լինում։ Բայց երբեմն պատահում են ցանկեր, որոնց մեջ հայերեն հրատարակությունները նկարագրված են ռուսական կամ լատինական տառերով և կամ հայերեն գրքերի ու հոդվածների անուններն ուղղակի տրված են թարգմանված, այլ լեզուներով։ Այդպիսի ցանկերը նույնպես ընդգրկված են ներկա մատենագիտական ուղեցույցի մեջ։

Կան մատենագիտական ցանկեր, որոնցում ընդգրկված է տարբեր լեզուներով գրականություն։ Այդ ցանկերից այնպիսիք, որոնց մեջ նշված է գոնե մեկ-երկու հայերեն գիրք կամ հոդված, դիտվել են որպես հայկական մատենագիտության նմուշներ։

Հայերի մասին, բայց ոչ հայերեն լեզվով գրքերի, այսինքն՝ հայագիտական, բայց միայն օտար լեզուներով գրականության ցանկերը, ինչպես և Հայաստանում հրապարակված, բայց ոչ հայերեն գրականության ցանկերը մատենագիտական այս ձեռնարկում տեղ չեն գտել, չհաշված մի քանի բացառություն։ Օրինակ, բացառության կարգով դրված է Սալմասյանի «Bibliographie de l'Arménie»-ն որպես կարևոր հայագիտական մատենագիտություն կամ նշված է Հայաստանում Ալ. Մյասնիկյանի անվ. գրադարանի կողմից հրատարակված «Что читать по технике» գրականության ցանկը, որպես առանձին պրակներով տպագրված մատենագիտություն։ Այդպիսի բացառություն է նաև Ն. Արզումյանի գրադարանի գրացուցակի (ուր ոչ մի հայերեն գիրք չի տրված) նշումը ներկա ձեռնարկում և այլն։

Մատենագիտական այս ձեռնարկում ընդգրկվել են ինչպես առանձին գրքերով հրատարակված, այնպես էլ ներգր-

քային և ներամսագրային մատենագիտական ցանկերը, մասամբ էլ հրատարակված (ձեռագիր) ցանկեր։

Ձեռնարկում բոլորովին չեն ընդգրկված տողատակի և ներհոդվածային ցանկերը։ Հայերեն գրականության ներհոդվածային ցանկերը որպես օրենք չափազանց համառոտ են (հնչին բացառությամբ), թեև այդ ցանկերի ընդգրկումը ինչ-որ չափով կհարստացներ ճյուղային մատենագիտության մի շարք բաժիններ։ Իսկ տողատակի մատենագիտությունները բոլորովին չեն ընդգրկվել։ Եվ դա ճիշտ է արված. նրանց վերցնելը լիովին անիմաստ կլիներ, քանի որ կատարյալ շփոթ կստեղծվեր ձեռնարկում։ Անհամար են տողատակերին աղբյուրների առավել կամ պակաս նշումներ ունեցող գրքերն ու հոդվածները, նրանց ընդգրկումը երկրորդ աստիճանի մատենագիտության մեջ հաղիվ թե որևէ բան տար ընթերցողին, դրանով սոսկ ծանրաբեռնվածություն կստեղծվեր։ Եվ առհասարակ գրքերի մեջ տողատակին նշված աղբյուրները պայմանական առումով են մատենագիտություն։

Այս ձեռնարկի մեջ ներկայացված են հայկական մատենագիտության նմուշները սկսած 19-րդ դարից։ Հին և միջնադարյան հայկական մատենագիտությունը դուրս է թողնված, չնչին բացառությամբ (օրինակ, տրված է Գրիգոր Աբասի որդու «Գիրք պատճառացը», իտալացի տպագրիչ Անտոնիոս Բարտոլիի «Շարաբարդութիւն և ցուցակ գրոց» հրատարակչական գրացուցակը, Վարդան Բազիշեցուն վերագրվող «Պատմագիրք հայոց»-ը։ Լավ կլիներ, անշուշտ, եթե հայ հին և միջնադարյան մատենագիտությունը ավելի լրիվ ներկայացվեր։

Մատենագիտական նյութը հրամցվում է հետևյալ հաջորդականությամբ. ա) Ընդհանուր մատենագիտություն, բ) ճյուղային մատենագիտություն (ուր տրված են գիտության և մշակույթի տարբեր ճյուղերին վերաբերող մատենագիտական ցանկերը), գ) Անհատական մատենագիտական ցանկեր, դ) Գրացուցակներ (գրադարանային, հրատարակչական, ձեռագրացուցակներ), ե) Հայ գրքի և մամուլի պատմություն։

Այս բաժիններն էլ ունեն ենթաբաժիններ։

Այն մատենագիտական ցանկերը, որոնք կարող են վերաբերել եղած բաժիններից երկուսին, արտահայտված են երկու տեղ՝ հիմնական և լրացուցիչ նկարագրությամբ։ Օրինակ, Ե. Չարենցի մատենագիտությունը լրիվ նկարագրությամբ, համարակալմամբ ներկայացված է Անհատական մատենագիտական ցանկեր բաժնում, և լրացուցիչ կերպով (համառոտ նկարագրությամբ, առանց համարակալման) ձյուղային մատենագիտություն բաժնի Հայ գրականության և բանահյուսության մատենագիտություն ենթաբաժնում։

Հարուստ է «Մատենագիտություն հայկական մատենագիտության» ուղեցույցի օժանդակ ցանկերի մասը։ Այստեղ կան. ա) Անվանացանկ (հայերեն, ռուսերեն, օտար լեզուներով), բ) Այբբենական ցանկ հրատարակչությունների, գրադարանների, գրատների, գ) Այբբենական ցանկ մատենագիտական աշխատությունների և ցանկերի վերնագրերի, դ) Ժամանակագրական ցանկ հայկական մատենագիտության։

Այս վերջինը տալիս է պատկերը (մոտավոր) այն բանի, թե որ թվականին քանի մատենագիտական (հայկական) ցանկ է հրատարակվել, նշվում են նրանց համարները (որոնցով կարելի է գտնել համապատասխան ցանկը մատենագիտության մեջ)։

«Մատենագիտություն հայկական մատենագիտության»-ը լավ ընդունվեց ընթերցողների, գիտնականների կողմից, մամուլում եղան մի շարք դրվատական գրախոսություններ [1]։

Մի քանի խոսք աշխատության թերությունների մասին [2]։

---

1 Խ. Բարսեղյան *Մատենագիտական նոր աշխատություններ։*—«Սովետական Հայաստան», *1964, 18 հունիսի*, Ն. Ոսկանյան *Մատենագիտական արժեքավոր ուղեցույց։*—«Երեկոյան Երևան», *1964, № 254*, Գ. Ռոստոմյան *Արժեքավոր մատենագիտություն։*— «Գրական թերթ», *1964, № 30*, Н. Стамболцян В поисках книги.—«Коммунист», *1964, № 67.*

2 *Մատենագիտության կազմողները՝ Մ. Բարայանը, Է. Հովհաննիսյանը, Ս. Անանյանը, Ռ. Ղուկասյանը և խմբագիրը նոանդ չեն խնայել աշխատությունը հնարավորին չափ լրիվ ու սխալազերծ դարձնելու համար։ Սակայն, երբ մատենագիտությունը տպագրվեց, ակնհայտ դարձան մի շարք լուրջ*

Ամենից առաջ շատ են բացթողումները, որոնցից մի քանիսը ուղղակի անթույլատրելի են։ Օրինակ, որքան էլ այդ պարզամանալի թվա, ցանկից դուրս է մնացել այնպիսի կարևոր մատենագիտական պարբերական, ինչպես գրապալատի «Գրաքննադատության տարեգիրքն» է։

Այնուհետև, ձեռնարկում տեղ չեն գտել մատենագիտական այնպիսի ցանկեր, ինչպես Գ. Լևոնյանի «Լիակատար ցուցակ հայ լրագրության», տպագրված «Լույս» ամսագրում 1909 թվականին, Ալ. Խուդաբաշյանի գրացուցակի ռուսերեն հրատարակությունը։ (Ал. Худабашев Каталог печатным книгам и рукописям... СПБ, 1838) և այլն։

Ինչ վերաբերում է ներգրքային ցանկերին, ապա երկրորդ աստիճանի այս մատենագիտության մեջ դրանցից չմրոտածները շատ-շատ են, հիշենք, օրինակ, Գ. Հովսեփյանի «Հիշատակարանք ձեռագրաց»-ի (Հտ. Ա, Անթիլիաս, 1951) մեջ տեղ գտած մի շարք արժեքավոր մատենագիտական ցանկերը (այդ թվում Հովհաննես Սարկավագին նվիրվածը), Հ. Տաշյանի Ձեռագրացուցակի վերջում եղած ընդարձակ մատենագիտությունը, Խորենացու պատմության համեմատական բնագրի հրատարակության մեջ (Թիֆլիս, 1913) եղած ծավալուն մատենագիտությունը և այլն, որոնք նույնպես դուրս են մնացել այս ցանկից։ Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում» մի շարք աղունների տակ հարուստ մատենագիտություն է տրված. այս մասին էլ խոսք չկա ներկա ձեռնարկում։

Դուրս են մնացել մի շարք ձեռագրացուցակներ, այդ թվում Ն. Ակինյանի կազմածները, որոնք լույս են տեսել առանձին գրքով. «Յուցակ հայերեն ձեռագրաց Լվովի Համալսարանի մատենադարանի, արքեպիսկոպոսարանի և Ստա-

---

բացթողումներ և որոշ սխալներ։ Բացթողումների հիմնական պատճառը ժամանակի սղությունն էր (առանց այն էլ ցանկը հրատարակվեց նշանակված ժամկետից մի տարի ուշ), հնարավոր չեղավ հանգամանորեն նայել մի շարք հրատարակություններ և գրադարանային գրացուցակներ։



Ա. Մյասնիկյանի անվան գրադարանի տեղեկատու-մատենագիտական բաժնի հրատարակություններից

Նիսալավովի» (1961, 60 էջ), «Յուցակ հայերեն ձեռագրաց Հռոմի հայոց հյուրանոցի ի Ս. Վլաս և քահ. Լևոնյան հայ վարժարանի» (1961, 76 էջ), «Յուցակ հայերեն ձեռագրաց Նիկոսիայի ի Կիպրոս» (1961, 140 էջ)[1]:

Հայ տպագիր գրքի պատմության բաժնից դուրս են մնացել մի շարք կարևոր աշխատություններ, այդ թվում՝ Ա. Ալպոյաճյանի «Տպագրության արվեստը և հայք» ծավալուն աշխատությունը, որի մի մասը (առաջին 8 գլուխը) հրատարակված է Թիֆլիսի «Արոր» հանդեսում հավելվածի ձևով, 1913 թվականին:

Մի խոսքով, մեզ թվում է, թե բացթողումները այնքան շատ են, որ հնարավոր է հրատարակված այս հատորի մեկ երրորդի չափ մի լրացուցիչ պրակ էլ հրատարակել՝ ներկայացնելու համար դուրս մնացած մատենագիտական ցանկերը: Ի դեպ, ասենք, որ տեղեկատու-մատենագիտական բաժինը ըստ իր ծրագրի շարունակում է լրացնել «Մատենագիտություն հայկական մատենագիտության» ցանկից դուրս մնացած նյութերի քարտարանը, որը առաջիկայում պետք է հրատարակի:

Ամեն դեպքում, երկրորդ աստիճանի այս մատենագիտության հրատարակումը ոչ քիչ պակասներով ճիշտ էր: Լրացումների հետևից ընկնելով բաժինը կարող էր անվերջ ձգձգել ձեռնարկի հրատարակումը: Բաժինը իրավացի է եղել լույս ընծայելով ներկա հատորը, պակասների համար նախատեսելով մի նոր պրակ (դուցե և հարկ լինի ներկա հատորը վերահրատարակել լրացումներով):

Մատենագիտության արժանիքներից մեկն էլ այն է, որ այնտեղ ներկայացված որոշ ցանկերի նկարագրություններից հետո տրվում են մամուլում հրապարակված գրախոսությունները նրանց մասին. սակայն բավական թվով այդպիսի գրախոսություններ նույնպես դուրս են մնացել:

---

1 Ուղեցույցի մեջ տեղ են գտել նույն ձեռագրացուցակների հրապարակումները «Հանդես ամսօրյայում»:



Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի լավագույն ծառնագիտներից՝ ԲՅՈՒՐԵՂ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Մատենագիտությունն ունի նաև ուրիշ կարգի թերություններ։ Նախ սիստեմատիկ կառուցվածքը, կարծես թե, փոքրինչ խրթին է, ընթերցողի օգտագործման համար ոչ բավականաչափ հարմար։ Դուցե և նյութերի ժամանակագրական դասավորությունը ավելի նպատակասլաց լիներ։

Քիչ չեն վրիպակներն ու սխալները։ Օրինակ, Գ. Լևոնյանի «Армянская периодическая печать» («Братская помощь», кн. 1—2. М., 1898, стр. 599—606) մատենագիտական ցանկը բերված է իբրև անհեղինակ գործ, չի նշված նաև Ա. Խուդաբաշյանի գրացուցակի հայերեն հրատարակության հեղինակը և այլն։ Իսկ Վարդան Բաղիշեցուն վերագրվող «Պատմագիրք հայոց»-ի հրապարակումը Հ. Այուբյանի կողմից («Ազդարար», 1795) ներկայացվել է իբրև ամբողջովին այս վերջինի հեղինակած աշխատության (№ 344), ոչ մի նշում չկա այն մասին, որ այդ ցանկի հիմնական մասը և ուղեցույցի մեջ Վարդան Բաղիշեցու տակ երեք անգամ (№№ 316, 317, 318) նկարագրված «Պատմագիրք հայոցը» նույն բաններն են (ըստ որում, ցանկը Այուբյանի տակ նկարագրվել է մի բաժնում, իսկ Վարդան Բաղիշեցու տակ՝ մի այլ)։

Կամ, օրինակ, հայտնի է, որ Վիեննայի Մխիթարյաններից Ռ. Քոսյանը միևնույն Ռ. Կարապետյանն է, նրա կազմած ցանկերը ավելի շատ հայտնի են Ռ. Կարապետյանի տակ, սակայն ներկա ձեռնարկում նկարագրությունները միայն Քոսյանի տակ են, և որևէ կերպ չի ասվում, որ դա նույն Ռ. Կարապետյանն է։

Կան անունների ազավաղման դեպքեր, օրինակ, Հ. Անասյանի «Հայկական մատենագիտության» գրախոսողներից Հ. Ոսկյանը դարձել է Հ. Ոսկանյան, Г. Абгарян-ը՝ Г. Абегян և այլն։

Սխալներ և թերիներ կան օժանդակ ցանկերում։ Նախ մատենագիտության մեջ ներկայացված մի շարք մատենագիտական աշխատություններ կամ նրանց հեղինակները բոլորովին չեն մտել օժանդակ ցանկերի մեջ։ Օրինակ, մատենագիտու-

թյան մեջ եղած օտար լեզուներով նյութերի մի մասը դուրս է մնացել օժանդակ ցանկերից։

Կամ, օրինակ, Ք. Պատկանյանի կազմած մի մատենագիտությունը, որ տպագրվել է 1860-ին, սխալմամբ նկարագրվել է իբրև 1960 թ. տպագրություն (№ 358ա), այս սխալը անցել է նաև ժամանակագրական օժանդակ ցանկի մեջ, ուր այն ներկայացվել է իբրև 1960 թ. հրատարակություն, իսկ 1860 թվականը այս ցանկում բնավ տեղ չի գտել։ Կամ նույն ժամանակագրական ցանկում 1834 թվականի դիմաց գտնում ենք 585 համարը, մինչդեռ մատենագիտության մեջ այս համարի տակ նկարագրված է Բաքվի մարդասիրական ընկերության գրադարանի ցուցակը, տպագրված 1894-ին և այլն։

Հասկանալի է, որ այսպիսի թերություններից չէր կարող լիովին զերծ մնալ մի բարդ մատենագիտություն, իր առաջ օժանդակ ցանկերով։ Իսկ ընդհանրապես երկրորդ աստիճանի այս մատենագիտության հրատարակումը ուշագրավ երևույթ էր, այն հանրապետական գրադարանի, եթե կարելի է ասել, մատենագիտական հասունացման մի ցուցանիշ էր։

Հրաչյա Կոստիկյանը այս աշխատության մասին իրավացիորեն գրում էր. «... նա նշանակալի երևույթ է հայկական մատենագիտության պատմության մեջ, գործնական նշանակություն կունենա գիտական աշխատողների լայն շրջանների համար՝ իրենց հետաքրքրող հարցերի վերաբերյալ մատենագիտական աղբյուրներ որոնելու համար»[1]։

Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի տեղեկատու-մատենագիտական բաժինը գիտությունների ակադեմիայի կենտրոնական գրադարանի հետ միասին ներկայումս աշխատում է «Հայաստան» մատենագիտական տարեգրքի հրատարակման վրա։ Տարեգիրքը ընդգրկում է 1963 թվականին աշխարհի բոլոր մասերում, բոլոր լեզուներով հրատարակված հայագիտական (Հայաստանին, հայ ժողովրդին, ինչպես և հայ մշակույթին ու գիտությանը վերաբերող) գրքերն ու հոդվածները։

---

1 Հ. Կոստիկյան *Մատենագիտության հիմունքները*։ Ե., 1963, էջ 217։

ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄ

Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի նոտային-երաժշտական սենյակում մի շարք տարիներ աշխատել է նախկինում երաժիշտ, նվագավար Նիկողայոս Թեյմուրազյանը:

Գրադարանում աշխատած տարիներին նա ամբողջովին նվիրվել էր հայ երաժշտության պատմության վերաբերյալ նյութեր հավաքելուն: Զարմանալի ջանասիրությամբ նա թերթում էր անցյալի հայ պարբերական մամուլի հազարավոր էջեր (սկսած անցյալ դարի երկրորդ կեսից), ինչպես և մի շարք ռուսերեն թերթեր ու ամսագրեր (սկսած այս դարի սկզբի հրատարակություններից): Հայ երաժշտության մասին մամուլում իր գտած բոլոր նյութերը Ն. Թեյմուրազյանը արտագրել է՝ կազմելով մոտ 30 հեղինակային մամուլ ծավալ ունեցող ձեռագիր մի ժողովածու: Դա հայ երաժշտության պատմությանը վերաբերող մի շատ հետաքրքրական հավաքածու է, որ մինչև օրս մնում է անտիպ, թեև ոչ քիչ երաժշտագիտներ են օգտվել այդ ժողովածուից՝ օգտագործելով նրա նյութերը իրենց ուսումնասիրություններում:

Ինչպես որ այս ժողովածուն էր Թեյմուրազյանը կազմել իր նախաձեռնությամբ, այնպես էլ իր նախաձեռնությամբ նա սկսեց կազմել հայ առավել խոշոր երաժիշտների անհատական մատենագիտական ցանկերը: Թեյմուրազյանը այդ նպատակով լիովին օգտագործում էր իր կազմած հոդվածների ձեռագիր ժողովածուն, ապա հարկ եղած դեպքում լրացնում նյութերը ամենատարբեր աղբյուրներից:

Առաջինը հրատարակության հանձնվեց Կարա Մուրզային, ապա Կոմիտասին և վերջում Մ. Եկմալյանին նվիրված, մատենագիտությունները:

Չի կարելի մեծ համակրանքով չհիշել Թեյմուրազյանի անխոնջ, աքնաջան աշխատանքը հայ երգահաններին նվիրված մատենագիտական ցանկերը կազմելիս: Կոմիտասի մատե-

նագիտությունը կազմելու ժամանակ Թեյմուրազյանն արդեն լուրջ հիվանդ էր, ծերությունն էլ իր հերթին էր ընկճել փողային լավագույն նվագախմբերի մի ժամանակ առույգ ու կենսախինդ մաեստրոյին:

Մեծ ճիգ էր գործադրում Թեյմուրազյանը ստիպելով իրեն՝ դողդողացող ձեռքերով գրելու մատենագիտության յուրաքանչյուր նկարագրությունը: Նա մտածում էր մի կերպ վերջացնել իրեն այնքան սիրելի Կոմիտասի մատենագիտությունն էլ և թողնել ամեն տեսակ աշխատանք: Սակայն երբ 1957 թվականին լույս տեսավ անսպասելի չարչարանքով կազմված այս մատենագիտությունը, փոքր դադարից հետո ծերունին սկսեց աշխատել մի նոր գործի, այս անգամ էլ Մ. Եկմալյանի մատենագիտության վրա, իսկ սրա հրատարակումից հետո էլ ձեռք զարկեց Տ. Չուխաջյանի մատենագիտությանը: Ահա այս աշխատանքի ընթացքում էլ վրա հասավ մահը, և գործը մընաց կիսատ: Հետագայում այդ մատենագիտությունն ավարտելու և հրատարակության հանձնելու շնորհակալ աշխատանքը կատարեց Նոտային-երաժշտական բաժանմունքի ներկայիս վարիչ Զեմֆիրա Սեմյոնովան:

Այդպիսով, Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանը հրատարակեց Հայ երաժշտական գրականության հետևյալ մատենագիտական (տեղեկատու) ցանկերը.

Ն. Թեյմուրազյան Քրիստափոր Կարա-Մուրզա: Համառոտ բիբլիոգրաֆիա: Եր., 1956, 95 էջ:

Բովանդ.՝ Առաջաբան (Մ. Մուրադյանի):— Քր. Կարա-Մուրզայի հոդվածները:— Քր. Կարա-Մուրզայի երաժշտական ստեղծագործությունների հրատարակությունները (նոտաները):— Հոդվածներ Քր. Կարա-Մուրզայի մասին:— Առանձին գրքեր:

Նույնի Կոմիտաս: (Սողոմոնյան Սողոմոն Գևորգի): Բիբլիոգրաֆիա: Եր., 1957, 113 էջ:

Բովանդ.՝ Առաջաբան (Մ. Մուրադյանի):— Երկու խոսք (կազմողի):— Կոմիտասի գրի առած և ներդաշնակած ժողովրդական երգերը (տպագրված նոտաները):—Կոմիտասի

Հոդվածները։— Կոմիտասի բանաստեղծությունները և խմբագրած տաղարանները։— Գրքեր Կոմիտասի մասին։— Հոդվածներ Կոմիտասի մասին, 1891—1920։— Հոդվածներ Կոմիտասի մասին, 1921—1957։— Հոդվածներ Կոմիտասի մասին ռուսերեն լեզվով։

Նույնի Մակար Եկմալյան։ Համառոտ բիբլիոգրաֆիա։ Եր., 1959, 51 էջ։

Բովանդ.՝ Առաջաբան (խմբագրի)։—Երկու խոսք կազմողից։— Եկմալյանի կենսագրությունը։— Եկմալյանի ստեղծագործությունները և մշակումները (նոտային հրատարակություններ)։— Եկմալյանի նամակները խմբագրությանը։—Հոդվածներ Եկմալյանի մասին (1887—1920)։—Հոդվածներ Եկմալյանի մասին ռուսերեն լեզվով։

Ն. Թեյմուրազյան և Զ. Սեմյոնովա Տիգրան Չուխաջյան։ Մատենագիտություն։ Եր., 1964, 51 էջ։

Բովանդ.՝ Երկու խոսք կազմողից։—Զ. Սեմյոնովա Տ. Չուխաջյան։ (Կյանքն ու գործը)։— Տ. Չուխաջյանի երաժշտական ստեղծագործությունների հրատարակությունները (նոտաները)։— Գրականություն Տ. Չուխաջյանի մասին։— Հեղինակների անվանացանկ։

Այսպիսով, Ն. Թեյմուրազյանի հրաշալի նախաձեռնության ու եռանդի շնորհիվ հրատարակվեցին հայ չորս խոշորագույն երգահաններին նվիրված մատենագիտական ցանկեր։ Սրանով, բայ էության, ակզբնավորվեց հայ երաժշտության գիտական մատենագիտությունը (նախքան այդ կար միայն արձանագրական բնույթի երաժշտական մատենագիտություն)։

Մատենագիտական այս բոլոր ցանկերն էլ ջերմորեն ընդունվեցին երաժիշտների ու երաժշտագետների կողմից, արժանացան շատ բարձր գնահատականի։ Մամուլը նույնպես բարձր գնահատեց այս ցանկերը [1]։

---

1 *Տե՛ս, օրինակ, «Գրական թերթ», 1956, № 43, «Սովետ. արվեստ»,*

Մատենագիտական այս աշխատությունների շնորհիվ ի մի հավաքվեցին հայ չորս խոշոր երաժիշտների երաժշտական ստեղծագործությունների հրատարակությունները, հոդվածները, ինչպես և նրանց մասին եղած գրականությունը, և դրանով մոռացությունից փրկվեցին մի շարք հետաքրքրական նյութեր, որոնք այնուհետև օգտագործվեցին և օգտագործվում են հայ երաժշտագետների կողմից։

Շատ հետաքրքրական, համառ անսպասելի նյութեր կգտնի մատենագիտական այս ցանկերում Կարա-Մուրզայի, Կոմիտասի, Եկմալյանի և Չուխաջյանի կյանքով ու գործով հետաքրքրվողը։ Վերցնենք թեկուզ «Կոմիտաս» մատենագիտության Կոմիտասի հոդվածները փոքրիկ բաժինը։ Այստեղ հայ ժողովրդական ու եկեղեցական երաժշտությանը նվիրված հոդվածների կողքին գտնում ենք նաև Ֆ. Լիստի, Ջ. Վերդիի, Ռ. Վագների մասին Կոմիտասի գրած հոդվածների ցանկը, ինչպես նաև մի քանի գրախոսականներ։ Զարմանքով իմանում ենք Կոմիտասի և Եկմալյանի մի շատ փոքր, բայց և շատ սուր բանավեճի մասին հայկական պատարագի երաժշտության շուրջ։ Եվ երբ համապատասխան պարբերականներում կարդում ենք մատենագիտության մեջ նշված այդ հոդվածները, զարմանքով ենք համակվում, թե ինչպես հայ հոգևոր երաժշտության նոր շրջանի այդ երկու խոշորագույն գիտակները միմյանց ներկայացրել են հայ հոգևոր երաժշտություն չիմանալու և այն աղավաղելու լուրջ մեղադրանքներ։

Այսուհանդերձ հայ երաժշտության տեսությամբ և պատմությամբ զբաղվող ամեն ոք չի կարող աշխատել, առանց ձեռքի տակ ունենալու մատենագիտական այս չորս ցանկերը։

Ցանկերում կան, իհարկե, ոչ քիչ թերություններ։ Նախ դուրս են մնացել բազմաթիվ նյութեր, որոնք գտնվում են սփյուռքահայ, ինչպես և նախախորհրդային այնպիսի պարբերականների էջերում, որոնք տարբեր պատճառներով (մեծ

1958, № 2, էջ 80, «Հառաջ» (Փարիզ), 1958, № 3913, «Գրական թերթ», 1958, № 2, «Գրադարանավար», 1960, № 1, էջ 28 և այլն։

մասամբ Հայաստանում չլինելու պատճառով) չեն նայվել կազմողի կողմից։

Քիչ չեն նկարագրություններում, նյութերի դասավորման



Ա. Մյասնիկյանի անվան գրադարանի նոտային-երաժշտական բաժանմունքի հրատարակած մատենագիտական ցանկերը

մեջ եղած անճշտությունններն ու վրիպակները: Մատենագիտական այս աշխատություններից երեքը չունեն օժանդակ ցանկեր, նյութերը համարակալված չեն:

Վերջին մատենագիտությունը (Զուխաջյան) ունի և՛ համարակալում, և՛ հեղինակների անվանացանկ: Ի դեպ, գովելի է նաև այն, որ այս մատենագիտության սկզբում կա Զուխաջյանի կյանքին ու գործին նվիրված գեղեցիկ ակնարկ, որ գրել է Զ. Սեմյոնովան: Սրանով «Տիգրան Զուխաջյան» մատենագիտությունը մոտենում է կենսամատենագիտական բնույթի ցանկերին, որպիսիք ներկայումս դիտվում են իբրև անհատական մատենագիտության լավագույն նմուշներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԵՍԱԿԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1956 թ. Հանրապետական գրադարանում կազմակերպվեց նոր բաժին, որի հիմնական նպատակը պետք է լիներ տեխնիկայի նորություններին, նոր գյուտերին նվիրված գրականությունը հասցնել արտադրություն և ընթերցողներին[1]:

Բաժնում պահվելիք գրականության և առհասարակ բաժնի աշխատանքների մասին սկզբում հստակ պատկերացում չէր: Նախապես (ըստ [illegible] հրամանի) [illegible] դա պետք է լիներ պատենտային բաժին, այսինքն՝ այդտեղ պիտի պահվեին և ընթերցողներին տրվեին գյուտերի նկարագրությունները, որոնք կոչվում են նաև պատենտներ[2]:

---

1 Բաժինը բացվեց համաձայն ՍՍՀՄ կուլտուրայի մինիստրության 1956 թվականի ապրիլի 12-ի հրամանի:

2 Պատենտը տեխնիկայի բնագավառում կատարված այս կամ այն նոր գյուտի իրավական ընդունումն է պետության կողմից գյուտի հեղինակի անունով: Հեղինակը ստանում է հատուկ փաստաթուղթ, որը հաստատում է գյուտի նկատմամբ նրա հեղինակային իրավունքը: Պատենտավորված գյուտի համար տպագրվում է նաև տվյալ գյուտի նկարագրությունը, որը պահվում է գրադարաններում:

Այնուհետև, առաջարկ եղավ բաժինը դարձնել ընդհանուր տեխնիկական, նրան հանձնել գրադարանի ողջ տեխնիկական գրականությունը։

Ի վերջո, որոշվեց ստեղծել տեխնիկական հատուկ տեսակի գրականության բաժին, ուր պիտի հավաքվեին, գրադարանային մշակման ենթարկվեին և ընթերցողներին տրամադրվեին՝ գյուտերի նկարագրություններ, ստանդարտներ, մեքենաների ու սարքերի նկարագրություններ, նրանց հավաքման, խնամքի և շահագործման մասին հրահանգներ, գնացուցակներ, տեխնիկական փորձի փոխանակման պարբերականներ, տեխնիկական նորույթներ և այլ տեղեկատու նյութեր։

Միաժամանակ բաժինը ստանձնեց մատենագիտական աշխատանք ընդհանուր տեխնիկական գրականության գծով։

Մատենագիտական աշխատանքը տարվում էր բանավոր և գրավոր։ Տեղեկատու-մատենագիտական բաժինը տեխնիկական գրականությանը վերաբերող տեղեկանքների համար դիմողներին պետք է ուղարկեր այս նորաբաց բաժինը։ Այս կարգը միաժամանակ պահպանվեց, հետո ստահեանաբար խախտվեց և հիշյալ տեղեկանքները շարունակեց հիմնականում տալ տեղեկատու-մատենագիտական բաժինը։

Տեխնիկական հատուկ տեսակի գրականության բաժինը նախաձեռնություն վերցրեց նաև հրատարակելու տեխնիկական գրականության հանձնարարական ցանկեր։ Ցանկերը պետք է լինեին թեմատիկ՝ տեխնիկայի առանձին ճյուղերի, առանձին հարցերի նվիրված և պետք է ընդգրկեին ամենատարբեր տեսակի տեխնիկական գրականություն։

Երկու տարվա ընթացքում հրատարակվեցին երեք ցանկեր. 1957-ին՝ «Ինչ կարող է կարդալ շոֆերը իր մասնագիտության մասին» (37 էջ), 1958-ին՝ «Ինչ կարող է կարդալ էլեկտրամոնտյորը իր մասնագիտության մասին» (57 էջ) և «Օգնություն գյուղատնտեսության մեխանիզատորներին» (65 էջ) [1]։

---

1 Այս ցանկերից երրորդը կազմել է տեխնիկական հատուկ տեսակի

Սրանք ոչ միայն տեխնիկական գրականության հայերեն առաջին հանձնարարական ցուցակներն էին, այլև պետական հայ տեխնիկական գրականության մատենագիտության առաջին նմուշները (նախքան այդ հանրապետական գրադարանը տպագրել էր ռուսերեն տեխնիկական գրականության ցանկեր, որոնց մասին վերն ասվել է)։

Մատենագիտական այս ցանկերը ունեն նաև մի քանի այլ, հիշելու արժանի հատկանիշներ։ Ի տարբերություն գրադարանի կողմից նախքան այդ հրատարակված հանձնարարական ցանկերի, սրանք տեսքով ավելի հրապուրիչ են՝ նկարազարդ են շապիկները, ներսում տրված են նկարագրված գրքերի մի զգալի մասի լուսանկարները և այլն։

Ցանկերի մեջ նյութը դասավորված է ըստ թեմատիկ գլուխների, յուրաքանչյուր մատենագիտություն ունի օժանդակ ցանկ՝ ընդգրկված գրեթե այբբենական ցուցակ։ «Ինչ կարող է կարդալ շոֆերը իր մասնագիտության մասին» ցանկում նյութերը համարակալված չեն, իսկ մյուս երկուսում համարակալված են։

Երեք ցանկերում էլ ընդգրկված են հայերեն և ռուսերեն գրքեր (հոդվածներ չկան), ըստ որում, ցանկերում ներկայացված են ավտոգործի, էլեկտրատեխնիկայի և գյուղմեքենայացման մասին հայերեն մինչև ցանկերի հրատարակումը եղած գրեթե բոլոր գրքերը։ Այդ տեսակետից ցանկերը փոքրինչ ավելի ընդլայնված են (տրված է նաև որոշ հնացած գրականություն), որով շեղում է կատարված հանձնարարական գրականության ցանկերի բնույթից։

Երեք ցանկերի մեջ էլ գրքերը ծանոթագրված են (անոտագրված)։ Ըստ որում, թե՛ հայերեն, և՛ թե ռուսերեն գրքերի մատենագիտական ծանոթագրությունները տրված են հայերեն, քանի որ մատենագիտությունները նախատեսված են հայ ընթերցողի համար։

գրականության բաժնի նախկին աշխատող Ն. Ոսկանյանը, առաջին երկուսը՝ տողերիս գրողը։

Պետք է ասել, որ այս ցանկերի մի քանի հատկանիշները (շապիկների և ներսի նկարազարդումը, ռուսերեն գրքերի հայերեն ծանոթագրումը և այլն) օգտագործեց գրադարանի տեղեկատու-մատենագիտական բաժինը իր որոշ հրատարակություններում (օրինակ՝ անասնաբուծությանը և պաղաբուծությանը նվիրված ցանկերում)։

Իհարկե, ամենից կարևորը, վերջիվերջո, այն էր, որ այս ցանկերը ընդունվեին ավտոերթևեկի աշխատողների, էլեկտրամոնտյորների և գյուղատնտեսության մեքենավարների կողմից։

1958 թ. «Ղեկի մոտ» լրագիրը գրում էր. «Ավտովարորդի որակավորումը բարձրացնելու գործին մեծապես նպաստում է մասնագիտական գրականությունը։ Յուրաքանչյուր տարի տարբեր լեզուներով լույս են տեսնում բազմաթիվ գրքեր, որոնց, սակայն, շատ դեպքերում վարորդները ծանոթ չեն։ Չգիտեն, երբ, ինչ գրքեր են հրատարակվել։

Այս տեսակետից պետք է ասել, որ Ալ. Մյասնիկյանի անվան պետական ռեսպուբլիկական գրադարանի տեխնիկական գրականության բաժինը շնորհակալ աշխատանք է տարել, հրատարակելով «Ինչ կարող է կարդալ շոֆերը իր մասնագիտության մասին» հանձնարարական գրականության ցուցակը։

...Չնայած մասնակի թերություններին, պետք է նշել, որ տվյալ բիբլիոգրաֆիական ձեռնարկը մեծ արժեք է ներկայացնում և ակնհայտ է, որ գրադարանի տեխնիկական գրականության բաժինը նման հանձնարարական ցանկերով մեթոդական լուրջ օգնություն կարող է ցույց տալ ավտոտրանսպորտի և ընդհանրապես տեխնիկայի բնագավառում աշխատողներին՝ գրականություն ընտրելու գործում»[1]։

Դժվար է ստուգել, թե իրականում որքանով հիշյալ ցանկերը նպաստեցին համապատասխան մասնագիտության տեր աշխատողներին անհրաժեշտ գրքեր ընտրելու գործում։

Հանրապետական գրադարանի տեխնիկական հատուկ տե-

---

1 «Ղեկի մոտ», 1958, № 3։

սակի գրականության բաժինը այնուհետև հրատարակեց մի քանի մատենագիտական ցանկեր ևս։ Դրանք են.



Ալ. Մյասնիկյանի անվ. գրադարանի տեխնիկական հատուկ տեսակի գրականության բաժնի կազմած մատենագիտական ցանկերը

Մ. Աբգարյան Ինչ կարող է կարդալ ձուլողը իր մասնագիտության մասին։ (Հանձնարար. գրակ. ցանկ)։ Եր., 1959, 34 էջ։

Մ. Աբգարյան Բնական գազը և նրա օգտագործումը։ (Հանձնարար. գրակ. ցանկ)։ Եր., 1960, 27 էջ։

Հաղորդիչներ և կիսահաղորդիչներ։ (Հանձնարար. գրակ. ցանկ)։ Եր., 1961, 91 էջ։

Այս ցանկերում նախորդների համեմատ նորությունն այն էր, որ գրքերից բացի ընդգրկված էին նաև հոդվածներ պարբերականներից։

Այնուհետև, այս ցանկերում, ի տարբերություն նախորդների, ռուսերեն գրականության գերակշռությունը հայերենի նկատմամբ խիստ զգալի է։ Օրինակ, եթե «Ինչ կարող է կարդալ շոֆերը...» ցանկում ընդգրկված էին 15 հայերեն և 39 ռուսերեն գրքեր, ապա «Ինչ կարող է կարդալ ձուլողը...» ցանկում կային 10 հայերեն և 143 ռուսերեն գրքեր ու հոդվածներ։ Ավելացնենք, որ այս վերջինում ռուսերեն գրքերի ծանոթագրություններն էլ հայերեն չէին։ Ռուսերեն նյութերի քանակի գերակշռությունը հայերենի նկատմամբ էլ ավելի մեծ էր «Հաղորդիչներ և կիսահաղորդիչներ» ցանկում։ Այլ խոսքով ասած, տեխնիկական հատուկ տեսակի գրականության բաժինը հայկական հանձնարարական մատենագիտությունից սկսեց անցնել ռուսական հանձնարարական մատենագիտության կազմմանը։

Բայց կա՞ արդյոք դրա կարիքը։ Բանն այն է, որ Մոսկվայում Լենինի անվան համամիութենական գրադարանը և Լենինգրադում Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարանը, ինչպես նաև Ռուսաստանի մի շարք մարզային գրադարաններ (Գորկու, Ռոստովի, Կույբիշևի և այլն) հրատարակում են ռուսերեն գրքերի հրաշալի հանձնարարական ցանկեր, նվիրված ամենատարբեր թեմաների, այդ թվում տեխնիկական թեմաների։ Հարկ կա՞ Հայաստանում էլ կազմակերպել ռուսերեն հանձնարարական մատենագիտության հրատարակում, մանավանդ, որ որակով այն չի հասնելու ռուսաստանյան հրատարակություններին։

Այս հանգամանքը հաշվի չառնելով՝ տեխնիկական հատուկ տեսակի գրականության բաժինը աստիճանաբար հեռացավ հայկական մատենագիտությունից և, ի վերջո, հրատարակեց հայերեն որևէ գիրք կամ հոդված չպարունակող մի մատենագիտություն. «Печатные схемы, применяемые в электротехнике и в электронике» *(1963, 120 էջ)*։

1962 թվականին բաժինը հրատարակեց մի հանձնարարական ցանկ ևս՝ «Հայկական ՍՍՌ արդյունաբերության փարոսները» (24 էջ), որը արձագանք էր այն ժամանակ ծավալվող քաղաքական միջոցառմանը։ Ցանկը արդյունաբերությանն էր վերաբերում, բայց ոչ արդյունաբերության տեխնիկային, ուստի և տեխնիկական գրականության մատենագիտություն չէր. այնտեղ ընդգրկված նյութերը արդյունաբերության անտեսվարությանն (էկոնոմիկային) էին վերաբերում, ուստի և այնքան էլ բնական չէր այդ ցանկի կազմումը տեխնիկական հատուկ տեսակի բաժնի կողմից։

ՋԱՆՔԵՐ ՀԱՅ ԳՐՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Որքան էլ շատ ջանքեր թափվեն առանձին հիմնարկների ու անհատների կողմից հայ գրքի կամ պարբերական մամուլի առանձին մատենագիտական ցանկեր կազմելու ուղղությամբ, միևնույն է, կատարված ամեն մի աշխատանք առավել կամ պակաս չափով մի մասնիկը կլինի այն մեծ գործի, որ կարելի է կոչել Հայկական ընդհանուր մատենագիտություն։ Այսինքն՝ այնպիսի մի մատենագիտություն, որը կընդգրկի. ա) հայերեն ամբողջ տպագիր արտադրանքը՝ գրքեր, պարբերականներ, այս վերջիններիի մեծ եղած նյութերը, ինչպես և նոտաներ, տպագիր պատկերներ և այլն, բ) հայ հին ձեռագրերը։

Այսպիսի մի հսկայական մատենագիտություն կազմելը դուցե և անիրականանալի թվա, սակայն, եթե հանենք ձեռագրերը և մատենագիտության ծրագրի մեջ թողնենք միայն տպագիր արտադրանքի մատենագիտության կազմումը, ապա նպատակը փոքր-ինչ ավելի իրականանալի կթվա։ Էլ ավելի իրական կլինի նպատակը, եթե գործը մասնավորեցնենք միայն հայ գրքի կամ միայն հայ մամուլի ընդհանուր մատենագիտության վրա։ Այսինքն՝ եթե առանձին-առանձին կազմ-

վեն աշխարհում երբևէ տպագրված բոլոր հայերեն գրքերի մատենագիտությունը, ինչպես և բոլոր պարբերականների ու նրանց մեջ եղած նյութերի մատենագիտությունը։

Ինչպես գիտենք, թե՛ մեկի, թե՛ մյուսի կազմման փորձեր եղել են, օրինակ, հայ գրքի ընդհանուր մատենագիտության գծով Գ. Ջարբհանալյանի և Ա. Դազիկյանի աշխատությունները, պարբերական մամուլի ընդհանուր մատենագիտության գծով Գ. Գալամքերյանի, Գ. Լևոնյանի, Մ. Պոտուրյանի և այլոց գործերը։

Դեռևս 30-ական թվականներին Գրապալատն ու Հանրային գրադարանը ծրագրում էին հայ տպագիր գրքերի ընդհանուր մատենագիտություն կազմելու աշխատանքը։ Սակայն ծրագրելուց և ընդհանուր խոսակցություններից այն կողմ գործը չէր գնում։

Մինչդեռ այդպիսի մատենագիտության անհրաժեշտությունը ակնհայտ էր, և հայ գրքի հետ գործ ունեցող ամեն ոք նրա կարիքը զգում էր։ Ավելին, հայ տպագիր գրքի ընդհանուր մատենագիտության ստեղծմամբ կարող էր վերանալ մի շարք տարբեր բնույթի մատենագիտական ցանկեր ստեղծելու անհրաժեշտությունը, քանի որ խելացի կազմված ընդհանուր մատենագիտությունը կփոխարիներ բազմաթիվ այդպիսի ցանկերի։

1946 թվականին Հանրային գրադարանը նպատակադրվեց իր 5-ամյա ծրագրի մեջ մտցրեց հայ տպագիր գրքի մատենագիտության առաջին հատորի կազմման գործը։ Հատորը պետք է ընդգրկեր 1512—1850 թվականներին տպագրված հայերեն գրքերը։

Աշխատանքները սկսվեցին, սակայն առանց նախապատրաստման, առանց աշխատանքի ծավալը և ձևը պատկերացնելու։ Բավական է ասել, որ չկար նույնիսկ գրքերը նկարագրելու մի միասնական հրահանգ։

Աշխատանքն ի վերջո փակուղու մեջ մտավ և դադարեցվեց։

Այնուհետև, հայ տպագիր գրքի մատենագիտության մա-

սին նորից լրջորեն սկսեցին խոսել 50-ական թվականների կեսերից։ Միանգամայն պարզ էր, որ Հայաստանի մատենագիտական հիմնարկները, տասնյակ մասնագետներով իրենց բարձրության վրա չէին լինի, եթե չակավեր նման մի կարևոր աշխատության ստեղծումը։ Ո՛չ առանձին ճյուղային և անհատական մատենագիտությունները, ո՛չ տարեգրերն ու հրատարակչական բնույթի գրացուցակները չէին կարող փոխարինել հայ տպագիր գրքի ընդհանուր մատենագիտությանը, այլ խոսքով ասած՝ հայ մեծ մատենագիտությանը։

Ակնհայտ էր նաև, որ Գ. Զարբհանալյանի մատենագիտությունը, որը ընդգրկում է մինչև 1880 թվականը լույս տեսած հայերեն գրքերը, վաղուց ի վեր հայ գրքի ամբողջական մատենագիտություն չէր կարող համարվել, քանի արտացոլում է հայերեն եղած տպագիր գրքերի մի՝ փոքր տոկոսը, ըստ որում, ինչպես իր տեղում տեսանք, այդ ցուցակը հետու է նաև մինչև 1880 թվականը եղած հայերեն գրքերը շատ բեն քիչ լրիվ ընդգրկելուց։

Ա. Ղազիկյանի հոյակապ մատենագիտությունն էլ, հասկանալի է, որ շատ հետու էր հրապարակում եղած հայ գրքերը նույնիսկ կիսով չափ ընդգրկելուց՝ և՛ այն պատճառով, որ այդ մատենագիտությունը մնացել է կիսատ, և՛ այն, որ նրանից հետո տասնյակ հազարավոր հայերեն գրքեր են լույս տեսել։

Բացի այդ, Զարբհանալյանի և Ղազիկյանի ցանկերը այրբենական կառուցվածք ունեն և արդիական չեն (չեն պատասխանում գիտնականներին ամենից ավելի հետաքրքրող այն հարցին, թե այս կամ այն բնագավառից ինչ գրքեր կան հայերեն)։

1958 թվականի սկզբներին եղավ Հայաստանի կուլտուրայի մինիստրության որոշումը հայ գրքի համահավաք գրացուցակ (կատալոգ) կազմելու աշխատանքների մասին։ Մինիստրությունը այդ մեծ գործը դնում էր հայ գրքի հինգ խոշոր գրապահոցների՝ հանրապետական գրադարանի, գրապալատի, մատենադարանի, ինչպես և ակադեմիայի ու համալսարանի

գրադարանների վրա։ Ասվում էր նաև, որ հիմնական աշխատանքները տանելու են գրապալատն ու հանրապետական գրադարանը՝ առաջինը պետք է կազմեր խորհրդային շրջանի հայ գրքի մատենագիտությանը, երկրորդը՝ նախախորհրդային։

Գործնական աշխատանքները սկսելու համար 1958 թվականի սեպտեմբերին հանրապետական գրադարանում ստեղծվեց առանձին բաժին՝ բաղկացած չորս հոգուց, որ նախապես կոչվում էր հայ գրքի համաճավար կատալոգի բաժին, ապա՝ հայկական մատենագիտության բաժին։

Հանրապետական գրադարանի և գրապալատի միացյալ գիտխորհրդի մի շարք նիստերում քննարկվում էին կազմվելիք խոշոր մատենագիտության տարբեր հարցեր։ Նիստերին մասնակցում էին հանրապետության ականավոր մատենագետներն ու գրադարանագետները։

Սկզբում գիտխորհրդին ներկայացվեցին «Թեզիսներ» ու «Կանոնադրություն»՝ հայ գրքի համահավաք գրացուցակ (կատալոգ) կազմելու համար։

Քննարկման ժամանակ պարզվեց, որ թե՛ «Թեզիսները», թե՛ «Կանոնադրությունը» կազմված են առանց հաշվի առնելու լուրջ ու ծանր գործի մի շարք կարևոր հանգամանքներ։ Ավելին, մի շարք կետերում այդ թեզերն ու կանոնադրությունը միմյանց հակասում էին։ Այնուհետև, գիտխորհրդում պարզվեց, որ «Թեզիսների» և «Կանոնադրության» հեղինակների իրական ծրագիրը և նրանց ներկայացրած այդ փաստաթղթերի մեջ գրվածը շատ դեպքերում լրջորեն տարբերվում են։ Այսպես օրինակ. ա) Իրականում ծրագրվում էր կազմել և հրատարակել Հայկական ՍՍՌ-ում 1920—1960 թվականների ընթացքում լույս տեսած գրքերի համահավաք ցուցակը, մինչդեռ վերոհիշյալ փաստաթղթերում այդ բանը որոշակի չէր ասված։ բ) Ծրագրվում էր իր այդ գրացուցակի մեջ հայերեն գրքերի հետ ներկայացնել նաև Հայաստանում լույս տեսած այլ լեզուներով գրքերը (ռուսերեն, ադրբեջաներեն և այլն), այս մասին էլ ոչ մի խոսք հիշյալ փաստաթղթերում

չկար։ գ) Նպատակահարմար էր համարվում մինչև 1800 թ. լույս տեսած հայերեն գրքերի ցուցակը տալ ժամանակագրական կարգով, ընդարձակ ծանոթագրություններով, իսկ 1800—1920 թվականներինը և նրանից հետո հրատարակված գրքերը՝ սիստեմատիկ կարգով։ Մինչդեռ հիշյալ փաստաթղթերում ասված էր, որ նյութերի ժամանակագրական կարգը պետք է կիրառել մինչև 1920 թվականը լույս տեսած գրքերի համար։ դ) Իրականում մատենագրություն կար Խորհրդային Հայաստանում հրատարակված գրքերի ցուցակը կազմել ըստ «Գրքի տարեգրի» դասակարգման համակարգի, բայց այդ մասին փաստաթղթերում ոչինչ չկար։

Եթե ներկայացված իրական ծրագիրը նկատի ունենանք, ապա պետք է կազմվեր հայ գրքի համահավաք գրացուցակ (կատալոգ), որը բաժկացած էր լինելու հետևյալ հինգ հրատարակություններից.

1) 1512—1800 թվականներին լույս տեսած հայերեն գրքերի ժամանակագրական ցանկ, ընդարձակ ծանոթագրություններով։

2) 1800—1920 թվականներին լույս տեսած հայերեն գրքերի սիստեմատիկ ցուցակ (դասակարգման համակարգը այստեղ չէր ասվում)։

3) Խորհրդային Հայաստանում 1920—1960 թվականներին լույս տեսած բոլոր լեզուներով գրքերի սիստեմատիկ ցուցակ ըստ «Գրքի տարեգրի» համակարգի։

4) 1920—1960 թվականներին Վրաստանում, Ադրբեջանում և Ռուսաստանում լույս տեսած գրքերի սիստեմատիկ ցուցակ (դասակարգման համակարգը չէր նշված)։

5) 1920—1960 թվականների ընթացքում արտասահմանում լույս տեսած հայ գրքի սիստեմատիկ ցուցակ (դասակարգման համակարգը չէր նշվում)։

Այսպիսով, միևնույն բնագավառի հայ գիրքը պետք է ցրվեր հինգ տարբեր գրացուցակների մեջ, այսինքն, եթե հարկ լիներ, օրինակ, որոշելու, թե լեզվաբանության կամ աշխարհագրության վերաբերյալ հայերեն ինչ գրքեր կան և ո՞ր գրա-

դարաններում են գտնվում նրանք, պետք կլիներ ձեռքի տակ ունենալ նշված բոլոր հինգ հրատարակությունները և նայել յուրաքանչյուրի մեջ առանձին։ Կամ, օրինակ, որոշելու համար, թե եղիշեի կամ Խորենացու գրքերը ինչ հրատարակություններ են ունեցել և որ գրադարաններում են գտնվում, պետք կլիներ նայել հիշյալ բոլոր հինգ գրացուցակները, քանի որ միևնույն հեղինակի գրած, միևնույն բնագավառի վերաբերող գրքերի անունները ներկայացված կլինեին հիշյալ հինգ հրատարակություններից յուրաքանչյուրի մեջ։ Ըստ որում, այդ հրատարակությունները չէին ունենա մեկ միասնական համակարգ. մի մասը կազմված կլիներ ժամանակագրական դասավորությամբ, մյուսը՝ տարեգրի դասակարգմամբ, երրորդը՝ մի այլ դասակարգման հիման վրա (հավանաբար տասնորդական)։

Բացի այս ամենը, նախապես ներկայացված ծրագիրը որոշակի չէր նշում, թե ով պետք է ղեկավարի աշխատանքը, ով պետք է գործնականում կատարի այն։ Նախախորհրդային շրջանի հայ գիրքը պետք է ցուցակագրվեր հանրապետական գրադարանի, իսկ խորհրդային շրջանինը՝ գրապալատի կողմից, սակայն սա ընդհանուր խոսք էր. չէր ասվում, թե նյութերի նկարագրությունը, նրանց դասավորությունը այդ տարբեր հիմնարկներում կազմվող գրացուցակներում նո՞ւյնը պիտի լիներ, թե տարբեր, չէր հակացվում, թե արդյոք քարտային վիճակում համահավաք գրացուցակը մի՞ տեղ է պահվելու և լրացվելու, թե՞ երկու տեղ (գրապալատում և հանրապետական գրադարանում), միասնակա՞ն է լինելու այդ գրացուցակը, թե՞ բաղկացած հինգ մասից (կամ երկու, երեք) և այլն։

Ըստ վերոհիշյալ փաստաթղթերի գրքերի նկարագրությունը պետք է կատարվեր «Տպագիր երկերի նկարագրության միասնական կանոնների» համաձայն, սակայն չէր ասվում, թե որ միասնական կանոններն են նկատի առնված՝ խոշոր գրադարանների՞, թե ոչ մեծ գրադարանների։

Առկախ էին թողնված նաև մի շարք այլ կարևոր հարցեր։

«Կանոնադրության» մեջ մեծ տեղ էր տրվում «ղեկավար խորհրդին», որը պետք է բաղկացած լիներ նշանավոր գիտնականներից և ղեկավարեր համահավաք գրացուցակ կազմելու ամբողջ աշխատանքը: Սակայն որոշակի չէր ասված, թե ինչպիսի՞ն պետք է լինի այդ ղեկավար խորհրդի դերը գրապալատի ու Հանրապետական գրադարանի կողմից տարվող աշխատանքները գործնականում ղեկավարելու հարցում:

«Թեզիսներում» և «Կանոնադրության» մեջ չէր ասված, թե Հայաստանի հրատարակություններն ընդգրկող գրացուցակում պե՞տք է նշվի, որ գրադարանում է գտնվում տվյալ գիրքը, թե՞ ոչ:

Այս փաստաթղթերը մերժվեցին: Հարցի քննարկումը շարունակվեց:

Հանրապետական գրադարանի հայկական մատենագիտության բաժինը ներկայացրեց իր կանոնադրությունը, որը շատերի կողմից լուրջ առարկությունների հանդիպեց, ոմանք էլ ամբողջովին էին մերժում այն:

Օրինակ, բուռն վեճերի նյութ դարձավ կազմվելիք մատենագիտության կառուցվածքի հարցը: Ընդհանուր մասնագիտական ցանկերում ներկայացվող գրականության դասավորությունը կարող է լինել այբբենական, սիստեմատիկ կամ ժամանակագրական: Նյութերի դասավորության այս երեք կարգերն էլ տարբեր ժամանակներում, տարբեր մատենագիտությունների համար օգտագործվել են: Այդ կարգերից յուրաքանչյուրն ունի իր արժանիքներն ու թերությունները: Ինչպես հայտնի է, Գ. Զարբհանալյանը և Ա. Ղազիկյանը ընտրել էին նյութերի դասավորության այբբենական կարգը: Դրա արժանիքը մատենագիտության, համեմատաբար, ավելի պարզ կազմությունն է: Սակայն այբբենական մատենագիտությունը սոսկ միակողմանի տեղեկատուի դեր է կատարում: Այն որևէ գրքի մասին կարող է տեղեկություն տալ միայն այն դեպքում, երբ մեզ ծանոթ է գրքի հեղինակի ազգանունը, որոշ դեպքերում էլ՝ գրքի անունը: Այլ խոսքով, այր-

բենական մատենագիտությունը տեղեկանք է տալիս այն մասին, թե մեզ ծանոթ այս կամ այն գիրքը հայերեն կա՞, թե՝ ոչ, կամ որևէ հեղինակ ինչ գրքեր ունի հայերեն, տալիս է այդ գրքերի հրատարակության մասին տվյալներ։ Մինչդեռ այն ամենակարևոր հարցին, թե գիտության ու մշակույթի այս կամ այն բնագավառի վերաբերյալ ի՞նչ գրքեր կան հայերեն, այբբենական մատենագիտությունը չի պատասխանում։ Մատենագիտության մեջ նյութերի այբբենական դասավորությունը նաև այլ լուրջ թերություն ունի, այդ այն է, որ այդպիսի մատենագիտության ամեն մի հատորում ներկայացվում են այբբենի մեկ կամ մի քանի տառով սկսվող հեղինակների գործեր և պետք է ողջ հրատարակությունն ավարտվի, որպեսզի մատենագիտությունն ամբողջանա, իր դերը ամբողջությամբ կատարի։ Ըստ որում, մատենագիտություն ստեղծելու գործը այնքան աշխատատար է ու երկարատև, որ հաճախ տարբեր պատճառներով ընդհատվում է նրա հրատարակությունը։ Նյութերի այբբենական դասավորության դեպքում հրատարակության ընդհատման պատճառով արդեն տպագրված հատորների արժեքը ընկնում է։

Նյութերի ժամանակագրական դասավորությունը շատ հետաքրքրական է գրքի ու տպագրության պատմության ուսումնասիրման տեսակետից, սակայն որպես գրքի հանրագիտարան այդ դասավորությամբ մատենագիտությունը գործ չի արդարացնում։ Ժամանակագրական դասավորության դեպքում նույնպես հնարավոր չէ որոշել, թե որ բնագավառների վերաբերյալ ինչ գրքեր կան հայերեն, քանի որ տարբեր ժամանակներում միևնույն հարցի մասին լույս տեսած գրքերը ցանկի տարբեր տեղերում են ներկայացվում, ցրվում են նաև միևնույն հեղինակի՝ տարբեր ժամանակներում հրատարակված գրքերը։ Նույնիսկ միևնույն գրքի տարբեր հրատարակությունները իրարից անջատվում են։

Գրականության սիստեմատիկ (ըստ բնագավառների) դասավորությունը զերծ է այս թերություններից։ Նրա շնորհիվ տարբեր բնագավառների մասնագետները հեշտությամբ կի-

մանան, թե հայերեն ինչ գրքեր կան իրենց հետաքրքրող հարցի մասին, այնտեղ կներկայացվի հայ տպագիր գիրքը ըստ թեմանների։ Այդպիսի մատենագիտության ամեն մի հատորը միաժամանակ կլինի մի վերջավորված հրատարակություն։ Բացի այդ, յուրաքանչյուր հատորի, ինչպես և ողջ հրատարակության վերջում տրվող հեղինակային-այբբենական ցանկը հիմնականում կփոխարինի այբբենական մատենագիտությանը՝ այս կամ այն հեղինակի անունով հրատարակված գրքերի մասին ամբողջական տեղեկանքներ տալու տեսակետից։ Իսկ 1512—1800 թվականների հայ գրքի ժամանակագրական ցուցակն ընդգրկող լրացուցիչ հատորը, որը բաժինը առաջարկում էր կազմել, անհրաժեշտ տեղեկանքներ կտար հայ գրքի պատմության ամենահետաքրքրքիր շրջանի վերաբերյալ։

Պետք է ասել, սակայն, որ մատենագիտության մեջ նյութերի սիստեմատիկ դասավորություն ստեղծելը բավական դժվար գործ է։ Դրա համար անհրաժեշտ էր լինելու հայերեն բոլոր հրատարակությունները դասակարգման ենթարկել նախօրոք մշակված համակարգի համաձայն։ Հանրապետական գրադարանի հայկական մատենագիտության բաժինը պաշտպանում էր նյութերի սիստեմատիկ կառուցվածքը, թեև հնատիպ գրքերին նվիրված մի հատորի կառուցվածքը անհրաժեշտ էր համարում անել ժամանակագրական։ Այս տեսակետն էլ ի վերջո հաղթեց։

Կարևոր հարց էր նաև գրքերի նկարագրությունը։ Ի՞նչ տեղեկություններ տալ գրքի մասին։ Բավարարվե՞լ արդյոք գրքի հեղինակի, վերնագրի, հրատարակման (տեղ, թիվ) և քանակական (էջեր, նկարներ, չափս) տվյալների նշումով, թե՞ տալ ավելի մանրամասն տեղեկություններ։ Ի վերջո, նպատակահարմար գտնվեց կազմել գրքերի նկարագրության երկու տեսակի կանոններ՝ հնատիպ գրքերի (մինչև 1850 թ. հրատարակված) և նոր շրջանի գրքերի համար։ Հնատիպ գրքերի նկարագրությունները պետք է լինեին ավելի ծավալուն, նոր շրջանի գրքերի նկարագրությունները՝ ավելի պարզ, սակայն

յուրաքանչյուր հրատարակության մասին կարևոր բոլոր տեղեկություններն ընդգրկող։

Քանի որ նախորդ հայ մատենագիտական ցանկերում գրքերի գտնվելու վայրը չի նշվել, որոշ մասնագետներ (օրինակ Ա. Բաբայանը) գտնում էին, որ այդ կարգի տեղեկություններ տալու հարկ չկա նաև կազմվելիք գործում։

Սակայն որոշվեց մատենագիտության մեջ գրքերի գտնվելու վայրը, այնուամենայնիվ, նշել, քանի որ այդ չափազանց մեծ նշանակություն կունենա ընթերցողների, հատկապես գիտական աշխատողների համար, մանավանդ, հայ մատենագիտություն կազմելու հսկայական աշխատանքը կատարելուց հետո անիմաստ կլիներ չանել այդ բանը ևս։

Լուրջ վեճերի առարկա դարձավ նաև այն հարցը, թե կազմվելիքը սովորական իմաստով մատենագիտությո՞ւն պիտի լինի, թե՞ համահավաք գրացուցակ (այսինքն՝ մի շարք գրադարաններում պահվող գրքերի միասնական գրացուցակ)։ Որոշ մասնագետներ չէին ուզում համաձայնել այն բանին, որ ոչ մի վատ բան չի լինի, եթե կազմվի իսկական ընդհանուր մատենագիտություն՝ գրացուցակներին հատուկ որոշ հատկանիշներով (օրինակ՝ գրքերի գտնվելու վայրի նշմամբ)։

Հայկական մատենագիտության բաժնի կողմից ներկայացված կանոնադրության դրույթները ընդունվեցին գիտական խորհրդի կողմից, և կանոնադրությունը 1958 թվականի դեկտեմբերի 30-ին հաստատվեց Հանրապետության Կուլտուրայի մինիստրության կուլտուր-լուսավորական հիմնարկների վարչության կողմից։

Քանի որ այդ կանոնադրության մեջ մանրամասն նկարագրված է հայ տպագիր գրքի ընդհանուր մատենագիտության դերը, նշանակությունը, նրանում ընդգրկվելիք նյութի սահմանները, ունենալիք կառուցվածքը և քանի որ կազմվելիք խոշոր, բազմահատոր հայագիտական աշխատությունը հայ մատենագիտության մեջ իր կարևորությամբ մի բացառիկ հրատարակություն է լինելու, անհրաժեշտ համարեցինք այս-

տեղ մեջ բերել հանրապետական գրադարանի դիտարհրդում ընդունված և համապատասխան մարմնի կողմից հաստատված այդ կանոնադրությունը։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ՏՊԱԳԻՐ ԳՐՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ[1]

Առաջին մաս *(Ընդհանուր սկզբունքներ)*

Ա. Հայ տպագիր գրքի ընդհանուր մատենագիտություն նշանակում է հայ տպագիր առաջին գրքից մինչև մեր օրերը երբևէ և որևէ տեղ լույս տեսած հայերեն բոլոր գրքերի կարգավորված ցուցակ։

Բ. Հայ տպագիր գրքի ընդհանուր մատենագիտությունը կհանդիսանա հայ ամբողջական մատենագիտության մի մասը՝ միայն հայ տպագիր գրքերն ընդգրկող մասը։ *Ամբողջական հայ մատենագիտությունը* հայ տպագիր գրքերի հետ միասին պետք է ընդգրկի հայկական ձեռագրերը, քարտեզները, նոտային գրականությունը, նկարների, պլակատների, տոմսերի մի շարք հրատարակություններ, հայ պարբերական մամուլը, այնտեղ եղած հոդվածների նկարագրությունները, ինչպես և հայերի ու Հայաստանի մասին այլ լեզուներով եղած գրականությունը։

Առայժմ սկսում է կազմվել միայն հայ տպագիր գրքի ընդհանուր մատենագիտությունը։

---

1 *Այս կանոնադրությունը, ինչպես և ստորև բերված «Հայ հնատիպ գրքի մատենագիտության կազմման կանոնները», կազմել է տողերիս հեղինակը հայկական մատենագիտության բաժնի վարիչ աշխատած ժամանակ։*

Գ. Հայ տպագիր գրքի ընդհանուր մատենագիտության դերը կլինի. 1) Ի մի հավաքել և միասնական ցուցակում ներկայացնել տարբեր ժամանակներում, տարբեր տեղեր լույս տեսած հայ տպագիր գրքերի անունները և դրանով ընթերցող հասարակայնությանը, գիտական աշխատողներին, սովորողներին հնարավորություն տալ հեշտությամբ որոշելու, թե որ բնագավառի վերաբերյալ հայերեն ինչ գրքեր գոյություն ունեն, և որտեղ կարելի է օգտվել նրանցից, թե որևէ հայերեն գիրք ինչպիսի հրատարակություններ է ունեցել, թե որևէ հեղինակից ինչ գրքեր կան հայերեն և յուրաքանչյուրը քանի անգամ է տպագրվել: 2) Նպաստել Հայաստանի և ողջ աշխարհի գրադարաններում գտնվող հայերեն գրքերի ֆոնդերի ավելի գործուն և նպատակասլաց օգտագործմանը ընթերցողների կողմից: 3) Օգնել Հայաստանի, ինչպես և ողջ Խորհրդային Միության ու արտասահմանի գրադարաններին իրենց հայկական գրքային ունեցվածքը համալրելու գործում: 4) Հայ գրքի ընդհանուր-մատենագիտությունը մեծապես կնպաստի նաև գրադարանների հայկական գրականության քարտային գրացուցակների կարգավորման գործին: 5) Ընդհանուր-մատենագիտության շնորհիվ ԽՍՀՄ յուրաքանչյուր գրադարան հնարավորություն կունենա ավելի նպատակասլաց օգտագործել այլ գրադարաններից միջգրադարանային աբոնեմենտի միջոցով հայերեն գրքերի ստացման իրավունքը, ինչպես և որոշել, թե ինչ գրքերի ժապավեններ (միկրոֆիլմեր) ո՛ր գրադարանից կարող է ստանալ: 6) Վերջապես, հայ գրքի ընդհանուր մատենագիտության կազմման գործը խոշորագույն մշակութային հրուշք կլինի մեր հանրապետության համար: Նրա շնորհիվ ամենքի առաջ կներկայացվի հայ գրքի և տպագրական արվեստի նշանակությունը, հայերեն լեզվով տպագրված գրականության ողջ հարստությունը:

Հայ գրքի ընդհանուր մատենագիտությունը փաստորեն կլինի տարբեր բնագավառների վերաբերյալ հայերեն լեզվով տպված գրքերի հանրագիտարան, մի խոշոր հայագիտական աշխատություն։

Դ. Հայ գրքի ընդհանուր մատենագիտությունը գրքերի ցուցակի ձև կունենա, այսինքն՝ բաղադրված կլինի հայերեն առանձին գրքերի նկարագրություններից և մի քանի լրացուցիչ նշումներից (համարակալում, գրքերի տեղ, աղբյուրների պայմանական նշաններ և այլն)։

Մատենագիտության մեջ ցույց կտրվեն այն գրադարանները կամ գրադարանը, ուր գտնվում է տվյալ հրատարակությունից։ Գրադարաններում չեղած գրքերի համար կնշվի այն գրավոր աղբյուրը, որտեղից այն առնված է։

Մատենագիտությունը կհրատարակվի գրքի ձևով և բաղկացած կլինի մի քանի սավառ հատորից, ըստ որում, յուրաքանչյուր հատորում ընդգրկված կլինի գիտության և մշակույթի որևէ բնագավառի (կամ մի քանի մոտ բնագավառների) նվիրված հայերեն գրքեր։

Ողջ հրատարակությունը կունենա հետևյալ տեղեկատու ցանկերը՝ հեղինակային, վերնագրային, ժամանակագրական, հայ տպագրության օջախների։

Հայ գրքի տպագրության պատմությունը վեր հանելու համար նպատակահարմար է կազմել նաև մեկ լրացուցիչ (զուգահեռ) հատոր, ուր կտրվի 1512—1800 թվականների ընթացքում լույս տեսած մոտ 670[1] անուն գրքերի ժամանակագրական ցուցակը՝ յուրաքանչյուր հրատարակության ավելի մանրամասն նկարագրությամբ, բովանդակությամբ, բովանդակության ու հրատարակման պատմության վերաբերյալ մանրամասն ծանոթություններով։

---

1 Մինչև 1800 թ. լույս տեսած հայերեն գրքերի այս քանակը տրված է 1960 թ. մեր ձեռքի տակ եղած տվյալներով։ Հետագայում պարզեցինք, որ մինչև 1800 թ. տպագրվել է առնվազն 1000 հայատառ գիրք։

է. Կազմվելիք մատենագիտության մեջ պետք է ընդգրկվեն 1512—1960 թթ. հրատարակված հայերեն տպագիր գրքերը։ Հայերեն տպագիր գիրք նշանակում է հայերեն լեզվով (գրական կամ բարբառ) գրված կամ հայերենի թարգմանված և տպագրության միջոցով որոշակի տպաքանակով բազմացված գիրք։

Ընդհանուր մատենագիտության մեջ պետք է ներկայացվեն նաև հայերեն և որևէ այլ լեզվով (լեզուներով) տպագրված գրքերը, որոնցում հայերեն բնագիրը ծավալով կամ բովանդակությամբ որոշակի ինքնուրույն կշիռ ունի, որի շնորհիվ այն դառնում է հայ գիրք։ Մատենագիտության մեջ որևէ կերպ պետք է ներկայացվեն նաև հայատառ այլ լեզուներով (հայերի համար տպագրված) և լատինատառ հայերեն գրքերը։

2. Հայ գրքի ընդհանուր մատենագիտության մեջ չեն ընդգրկվելու. 1) Այլ լեզուներով (ոչ հայերեն) հրատարակված գրքերը, անկախ այն բանից, թե որտեղ են հրատարակվել նրանք (Հայաստանում, թե՛ այլուր) և ինչ բովանդակություն ունեն (հայագիտական և այլն)։

2) Պարբերական հրատարակությունները և նրանցում տպագրված հոդվածները։

3) Որոշ կարգի գրքային և ոչ-գրքային հրատարակությունները (քննական տոմսակներ, բարեներներ, աֆիշներ, հրավիրատոմսեր և այլն), որոնց ցուցակը պետք է կազմվի առանձին։

Երկրորդ մաս *(Աշխատանքի ընդհանուր ծրագիր)*

Ա. Հայ գրքի ընդհանուր մատենագիտությունը պետք է առեղծվի առանձին գրադարանների հայերեն գրքային ունեցվածքի համահավաք գրացուցակ (сводный каталог) կազմելու և տպա այդ ցուցակը գրադարաններում չեղած, բայց մատենագիտական ցանկերում, կամ այլ աղբյուրներում նշված և կամ անհատների մոտ ու

գրաաններում գտնվող գրքերի անուններով լրացնելու միջոցով։

Մատենագիտություն կազմելու ողջ աշխատանքը բաղկացած կլինի վեց շրջանից. 1) Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի հայկական գրքային ունեցվածքի գրացուցակի կազմում։ 2) Այդ գրացուցակի լրացումը Հայկական ՍԽՀ-ի մյուս գրադարաններում եղած և Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանում բացակայող հայերեն գրքերի անուններով։ 3) Գրացուցակի լրացումը Միության մյուս խոշոր գրադարաններում գտնվող և Հայաստանի գրադարաններում չեղած գրքերի անուններով։ 4) Գրացուցակի լրացումը արտասահմանի գրադարաններում գտնվող և Միության գրադարաններում չեղած գրքերի անուններով։ 5) Գրացուցակի լրացումը գրադարաններում չեղած, բայց գրավոր աղբյուրներում նշված կամ անհատների մոտ և գրաանների գտնվող գրքերի անուններով։ 6) Գրացուցակ-մատենագիտության խմբագրում և հրատարակում։

Բ. Համահավաք գրացուցակը կազմվում է քարտային այբբենական գրացուցակի ձևով։ Ավարտվելուց հետո բաղկացած կլինի շուրջ 60000 քարտից[1]։

Գ. Հայ գրքի համահավաք այբբենական (քարտային) գրացուցակի համար գրքերի նկարագրությունները հիմնականում պետք է կատարվեն ողջ Միության մեջ ընդունված տպագիր երկերի նկարագրության կանոնների համաձայն (մատենագիտական ցանկերի համար կատարվող նկարագրության ձևով), սակայն այդ կանոններում պետք է մտցվեն մի շարք էական ուղղումներ, որոնց ցանկը կկազմվի առանձին։

Քարտերի վրա նկարագրությունները պետք է կա-

---

1 Համահավաք գրացուցակում հավաքվելիք քարտերի քանակը պետք է համապատասխանի հայերեն տպագիր գրքերի քանակին, որն այժմ, անշուշտ, ավելի է 60.000-ից։

տարվեն այնպես, որ նրանք լիովին պիտանի լինեն տպագրվելիք ընդհանուր մատենագիտության համար։

Դ. Համահավաք գրացուցակի թարթերի վրա պետք է գրվեն դասակարգման նիշեր։ Գրքերի դասակարգման հիմքում պետք է դրվի տասնորդական համակարգը։ Այս համակարգի հիման վրա կկազմվի հատուկ աղյուսակ, որի համաձայն էլ համահավաք գրացուցակի համար կկատարվի գրքերի դասակարգումը։

Ե. Յուրաքանչյուր գրքի նկարագրության վրա պետք է գրվի այն գրադարանի կամ գրադարանների պայմանական նշանները, որոնցում որ գտնվում է տվյալ գրքից։ Գրացուցակում՝ գրադարաններում չեղած գրքերն արտացոլելու շրջանում նկարագրության վրա պետք է նշվի այն աղբյուրի պայմանական նշանը, որտեղից որ վերցված է տվյալ գրքի մասին տեղեկությունը։

Զ. Հայ տպագիր գրքի ընդհանուր մատենագիտության կազմումը իրականացնում է Ալ. Մյասնիկյանի անվան պետական հանրապետական գրադարանի հայ գրքի մատենագիտության բաժինը։ Այդ գործում Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանին հնարավոր ամեն տեսակ օգնություն և աջակցություն պետք է ցույց տան Հայաստանի պետական գրապալատը, Մատենադարանի, Գիտությունների ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի գրադարանները։ Հայաստանի պետական գրապալատը պետք է կազմի և Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանին տրամադրի Հայաստանում 1920—1960 թվականներին տպագրված գրքերի լիակատար այբբենական գրացուցակ, ինչպես և հարկ եղած դեպքում իր գույքամատյանները։ Վերոհիշյալ երեք գրադարանները իրենց հայերեն գրքերը և գրացուցակները համապատասխան ժամանակաշրջանում պետք է դնեն Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի հայ գրքի մատենագիտության բաժնի աշխատողների տրամադրության տակ։

է. Հայ տպագիր գրքի ընդհանուր մատենագիտության կազմման աշխատանքների ընդհանուր ղեկավարության համար պետք է կազմվի խորհուրդ, որի կազմի մեջ կմտնեն Ս. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի դիրեկտորն ու գիտ. գծով տեղակալը, Հայաստանի պետգրապալատի դիրեկտորը, Կուլտուրայի մինիստրության ակումբագրադարանային վարչության պետը։ Խորհրդի կազմը հհասատատվի ՀՍԽՀ կուլտուրայի մինիստրի կողմից։ Ցանկալի է, որ խորհրդի կազմում ընդգրկվեն նաև Հայաստանի ականավոր հայագետ գիտնականներ, գրադարանագետներ և այլն։

Ը. Աշխատանքի առաջին շրջանը, այն է՝ Ս. Մյասնիկյանի անվան գրադարանի հայկական ֆոնդերի գրացուցակի կազմումը, պետք է կատարվի գրադարանի հայկական այբբենական գրացուցակի օգնությամբ, այնտեղ եղած նկարագրությունների և գրքերի համեմատման, համապատասխան լրացումներով և փոփոխություններով նոր նկարագրություններ կազմելու միջոցով։ Աշխատանքը հիմնականում պետք է կատարվի գրադարանի հայկական գլխավոր այբբենական, հնատիպ գրականության և առանձին հավաքածուների այբբենական գրացուցակների և արխիվային ու հնատիպ գրքային ունեցվածքի, ինչպես նաև հավաքածուներում եղած հայերեն գրքերի հիման վրա։

Հայկական մատենագիտության բաժնի աշխատողները պետք է ունենան այդ գրացուցակներից և գրականություններից օգտվելու լիակատար իրավունք։

Թ. Սկզբնական շրջանում նպատակահարմար է Հայաստանում 1920—1960 թվականներին լույս տեսած գրքերի նկարագրությունները այբբենական կարգով պահել առանձին (այլ գրադարանների գրքային ունեցվածքի հետ կատարվող համեմատումը հեշտացնելու նպատակով)։ Աշխատանքի 1-ին և 2-րդ շրջանը ավար-

տելուց հետո գրացուցակի այդ մասը կձուլվի ընդհանուրին։

Ժ. Աշխատանքի 2-րդ շրջանը պետք է կատարվի նախ ստեղծված այբբենական գրացուցակը Հայաստանի պետգրապալատի ունեցած այբբենական գրացուցակի հետ համեմատելու և համապատասխան նշումներ, լրացումներ և հղումներ անելու միջոցով։ Ապա ապագա համահավաք այբբենական գրացուցակի առանձին տառերի տակ եղած նկարագրությունները հերթականությամբ կհամեմատվեն Մատենադարանի, Գիտությունների ակադեմիայի, Երևանի համալսարանի, ինչպես և, ըստ անհրաժեշտության, Հայաստանում գտնվող այլ գրադարանների հայկական գրքային ունեցվածքի գրացուցակների հետ։

ԺԱ. ՀՍԽՀ գրադարանների հայ գրքի համահավաք գրացուցակը կազմելու շրջանում չափազանց կարևոր նշանակություն ունի Հայաստանի խոշոր գրադարանների և ամենից առաջ Ալ. Մյասնիկյանի անվան գրադրադարանի հայերեն գրականության ու գրացուցակների կարգավորումը։ Վատ կազմակերպված ֆոնդերի ու գրացուցակների պատճառով համահավաք ցուցակում կարող են տեղ գտնել լուրջ սխալներ և բացթողումներ։ Մասնավորապես անհրաժեշտ է կանոնավորել Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի 1) Արխիվային գրականությունը, խստորեն հշտել գրքերի պատասխանատվությունը և գրապահոցից տեղափոխել ու միացնել այդ գրականությանը բոլոր գրքերի մեկական օրինակները, 2) կանոնավորել հնատիպ գրականության այբբենական գրացուցակը՝ այնտեղ արտացոլելով դեռևս չնկարագրված բոլոր հնատիպ կազմակից և ալիգատ գրքերը։

ԺԲ. Աշխատանքի 3-րդ և 4-րդ շրջանները կատարելու նպատակով հարկ կդրացվի հայկական մատենագիտության բաժնի աշխատակիցներին գործուղել Միու-

Բյան, ինչպես և արտասահմանի մի շարք քաղաքներ (հայ գրքի կենտրոնները)։

ԺԳ. 1959 և հետագա տարիներին լույս տեսած հայկերեն գրքերը համահավաք գրացուցակում արտացոլելու նպատակով Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանում 1959 թվի հունվարից կմտցվի հետևյալ կարգը. մշակման բաժնից հնատիպ և արխիվային գրականության բաժին ուղարկվող գրքերը ուղեգրով նախ կհանձնվեն հայ գրքի մատենագիտության բաժին և ապա այնտեղից հնատիպ և արխիվային գրականության բաժին։ Գրադարանի կոմպլեկտավորման բաժինը այդ գրականության համար կկազմի չորս ուղեգիր։

ԺԴ. Աշխատանքի հինգերորդ շրջանը պետք է կատարվի հիմնականում տարբեր մատենագիտական ցանկերի և համահավաք գրացուցակի համեմատման, գրացուցակում չեղած գրքերի անունների համար նկարագրություններ կազմելու միջոցով։

ԺԵ. Աշխատանքի վերջին՝ վեցերորդ շրջանում համահավաք գրացուցակի քարտերը կվերադասավորվեն դասակարգման նիշերի համաձայն՝ սիստեմատիկ կարգով։ Սուզումից և ճշտումներից հետո կմեքենագրվի (բղթերի վրա) գրացուցակի այն բաժինը, որը ամենից առաջ պետք է տրվի հրատարակության, ապա կմեքենագրվեն մյուս բաժինները։

Ինչպես տեսնում ենք, կանոնագրությամբ վերացվում է հայ գրքի մատենագիտության կազմման գործում նախապես առաջարկված «երկիշխանությունը» (գրապալատ և հանրապետական գրադարան), ողջ գործը հանձնվում է հանրապետական գրադարանի հայկական մատենագիտության բաժնին։ Մյուս գրադարանային-մատենագիտական հիմնարկներին վրա պարտականություն է դրվում բաժնին օգնելու։ Սա հաստատված կանոնագրության մեջ գործնականորեն, թերևս, ամենագլխավորն էր, քանի որ հնարավորություն էր ստեղծում անմիջապես անցնելու աշխատանքի։

Հասկանալի է, որ հետագայում մատենագիտական աշխատանքը պետք է ճշտումներ մտցներ կանոնադրության մեջ, և նման ճշտումներ, իրոք, մտցվեցին, սակայն կանոնադրության հիմնական դրույթները մնացին և մինչև այսօր էլ հանրապետական գրադարանի հայ մատենագիտության բաժնի ուղենիշն են:

Բաժինն իր աշխատանքներն սկսեց միաժամանակ երկու՝ հայ գրքի համահավաք գրացուցակի կազմման և հայ հնատիպ (մինչև 1800 թ. տպագրված) գրքերի ժամանակագրական մատենագիտության հատորի ստեղծման ուղղությամբ:

Նախ՝ կրկնակվեց հանրապետական գրադարանի հայերեն գրքերի այբբենական գրացուցակը, նոր ստացվող գրքերը սկսեցին նկարագրվել բաժնի աշխատողների կողմից համահավաք գրացուցակի համար:

Այս կրկնակված այբբենական գրացուցակը պետք է համեմատվի գրադարանի արխիվային բաժնի հայերեն գրականության հետ՝ նկարագրությունները ճշտելու նպատակով, ապա պետք է համեմատվի նաև Հայաստանի և այլ վայրերի գրադարանների հայերեն գրքերի հավաքածուների հետ, լրացվի և ապա վերածվի սիստեմատիկ կարգի ու հատոր առ հատոր հրատարակվի (ամեն մի հատորը գիտության ու մշակույթի մեկ կամ մի քանի ճյուղ պետք է ընդգրկի):

Ապա՝ համաձայն կանոնադրության առաջին մասի ղ կետի աշխատանքներ սկսվեցին հայ հնատիպ գրքի ժամանակագրական մատենագիտություն կազմելու համար:

Այդ կապակցությամբ էլ բաժնում և գրադարանի գիտխորհրդում լուրջ տարաձայնություններ սկիզբ առան: Որոշ աշխատողներ գտնում էին, որ պետք է հաշվի առնել նման մատենագիտություն կազմելու նախկինում եղած փորձերի անհաջողությունը, ինչպես և բաժնի որոշ փորձը այդ գործում, որ նախքան հնատիպ գրականության մատենագիտություն կազմելը անհրաժեշտ է առնվազն երկու հարց լուծեր. ա) մանրամասնորեն որոշել, թե ինչ ձևով պետք է նկարագրվեն հայերեն հնատիպ գրքերը, այդ գրքերի մասին ինչ տեղեկու-

թյուններ պետք է տրվեն մատենագիտության մեջ։ Այլ կերպ ասած, անհրաժեշտ էր համարվում կազմել հնատիպ գրքերի նկարագրության հրահանգ։ Բ) Նախապես կազմել հայ հնատիպ գրքերի ժամանակագրական մի ցուցակ՝ պարզելու համար հայ հնատիպ գրքերի ընդհանուր քանակը։ Այդ ցուցակը պետք է ուղարկվեր աշխարհի տարբեր գրադարանները, ուր կան հայերեն գրքերի հավաքածուներ՝ լրացումների և ճշտումների համար։ Բանն այն է, որ մինչև 1800 թվականը տպագրված բոլոր հայերեն գրքերը չէ, որ կան Հայաստանում, իսկ եղածների մի մասն էլ պակասավոր է, առանց տիտղոսաթերթերի և հիշատակարանների։ Ըստ այս ծրագրի կազմվելիք նախնական այդ ցուցակը լրացվելուց և ճշտվելուց հետո, պետք է դառնար հայ հնատիպ գրքի մատենագիտության հատորի հիմքը կամ կմախքը։

Այս ծրագրի դեմ կարականապես առարկում էին թե՛ բաժնում, թե՛ գրադարանի գիտխորհրդում։

Նախ մերժվում էր հրահանգը այն պատճառաբանությամբ, որ իբր հնատիպ գրքերի նկարագրության մեջ ոչ մի դժվար բան չկա, ամեն ինչ պարզ է, պետք է միայն սկսել նկարագրությունը, և փորձեր արվեցին առանց միասնական հրահանգի սկսել գրքերի նկարագրման աշխատանքը։

Ի վերջո, սակայն, կազմվեց հանգամանալից հրահանգ, որը բնութագրում էր կազմվելիք հնատիպ մատենագիտության հատորի էությունը, նյութերի դասավորությունը, նկարագրության կարգը և այլն։ Այդ հրահանգը ընդունվեց բաժնի ու գիտխորհրդի կողմից և դարձավ գործնական ձեռնարկ հայկական մատենագիտության բաժնի աշխատողների ձեռքին։ Ահա այդ հրահանգը։

ՀԱՅ ՀՆԱՏԻՊ (1512—1800) ԳՐՔԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ա. ՄԱՍ

1. Մատենագիտության մեջ ընդգրկվում են մինչև 1800 թ. (ներառյալ) տպված հայատառ բոլոր նյութերը՝ գրքեր, պարբերականներ, թարեւզներ և այլն: Ընդգրկվում են նաև հայերեն և որևէ այլ լեզվով տպագրված գրքերը, նույնիսկ այն դեպքում, եթե հայ բնագիրը շատ չնչին է՝ մեկ կամ մի քանի տող, մի բառ (կամ թեկուզ մեկ տառ): Ընդգրկվում են նաև հայատառ, բայց ոչ հայերեն տպագրված նյութերը:

2. Մատենագիտությունն ունենալու է ժամանակագրական կարգ, նյութերի նկարագրությունները դասավորելու են տարեթիվ առ տարեթիվ, յուրաքանչյուր տարեթվի ներսում՝ ըստ տպագրության վայրերի: Տարեթիվ չունեցող այն գրքերը, որոնց տպագրության տարին հնարավոր է ստույգ որոշել, դրվում են ըստ այդ որոշված տարեթվի, երբ հնարավոր է լինում որոշել մոտավոր թվականը, օրինակ, տասնամյակը, դարը և այլն, գրքերը ներկայացվում են համապատասխան տասնամյակի, դարի բաժնի վերջում: Այն գրքերը, որոնց տարեթվերը անհնարին է նույնիսկ մոտավորապես որոշել, տրվում են մատենագիտության վերջում:

3. Մատենագիտությունը բաղկացած կլինի հետևյալ մասերից. ա) նախաբան հայ հնատիպ գրքի մասին, բ) կազմողների կողմից, գ) բուն մատենագիտություն, դ) տեղեկատու ցանկեր:

4. Մատենագիտությունը կունենա հետևյալ տեղեկատու ցանկերը՝ ա) անձնանունների ցանկեր, այդ թվում 1. հեղինակների, 2. թարգմանիչների, 3. հրատարակիչ-տպագրիչների, 4. հովանավորների, գրաշարների, կաթողիկոսների, պատրիարքների, և գրքի տիտ-

դասաթերթում (անվանաթերթում) ու հիշատակարաններում եղած մյուս բոլոր այն անունների, որոնք որևէ կերպ առնչվում են գրքերի տպագրության հետ: Վերջին անվանացանկում յուրաքանչյուր անվան դիմաց կնշվի տվյալ անձի ով լինելը: Բոլոր անվանացանկերում ցույց կտրվեն այն համարները, որոնց տակ նկարագրված են համապատասխան անունները կրող գրքերը: բ) Գրքերի և մյուս նյութերի վերնագրերի անվանացանկ, այսինքն՝ առանձին և տպակից գրքերի, ինչպես և գրքերում եղած այլ առանձին բնագրերի վերնագրերի նաև սկզբնատողերի այբբենական ցանկ: գ) Տեղանունների ցանկ (կտրվեն գրքերի տիտղոսաթերթերում, անվանաթերթերում, հիշատակարաններում և այլ մասերում այն բոլոր տեղեկությունները, որոնք առնչվում են գրքի տպագրության պատմության հետ): դ) Հայ տպագրական կենտրոնների ցանկ: ե) Հիշատակարանների ցանկ: զ) Նյութերի առարկայական ցանկ (առարկաների ու թեմաների անունների տակ կտրվեն համապատասխան գրքերի համարները): է) Հայ հնատիպ գրքերի մասին եղած ուսումնասիրությունների ցանկ:

Բ. ՄԱՍ. ՆՅՈՒԹԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Հայ հնատիպ գրքերի մատենագիտության համար մի գիրք, այսինքն՝ մեկ միավոր գիրք է հաշվվում մեկ հրատարակությամբ լույս ընծայված տպագիր միավորը (գիրքը), անկախ այն բանից, թե քանի առանձին ստեղծագործություն կամ քանի տիտղոսաթերթ կա նրա մեջ: Այդպիսի մեկ տպագիր միավորը մատենագիտության մեջ նկարագրության մեկ միավոր է (ստանում է մեկ համար): Սակայն եթե որևէ տպագրական միավորի՝ գրքի մեջ եղած որևէ առանձին տպակից բնագիր ունի իր տպագրության տարեթիվը,

որը չի համընկնում ողջ միավորի տպագրության տարեթվին, տպա հիշյալ բնագիրը ստանում է լրացուցիչ նկարագրություն մատենագիտության մեջ (համապատասխան տարեթվի տակ արտացոլվելու համար)։ Առանձին տպագրված և հետո միասին կազմված (կազմակից) գրքերը հաշվվում են առանձին միավորներ։

2. Հայ հնատիպ գրքի մատենագիտության համար յուրաքանչյուր գրքի նկարագրությունը կազմված է լինում երկու հիմնական մասից. ա) Գրքի հանրամատչելի, համառոտ նկարագրություն, բ) Գրքի մանրամասն նկարագրություն։

3. Գրքի համառոտ նկարագրության մեջ տրվում են հետևյալ տեղեկությունները. հեղինակ, վերնագիր, տպ. վայրը, տպագրողը, տպարանը, տպ. տարեթիվը։ Գրքի երկար վերնագրերը կրճատվում են հնարավորին չափ շատ, պետք է ձգտել ամեն դեպքում տալ տվյալ գրքի ավելի ճանաչված, ընդունված անունը, անկախ տվյալ հրատարակության տիտղոսաթերթում այդ անվան ձևակերպումից։ Հեղինակը տրվում է ժամանակակից ուղղագրությամբ, վերնագիրը՝ գրաբարյան ուղղագրությամբ, մյուս տվյալները՝ ժամանակակից ուղղագրությամբ՝ հասարակ շարվածքով, թվանշանները ամեն դեպքում արաբական։ Նկարագրության այս մասում նշվում է նաև գրքի թարգմանիչը և այն մասին, թե գիրքը որերորդ հրատարակությունն է։ Հրատարակչության տեղում նշվում են հրատարակիչը և տպագրիչը (տպարանը), եթե դրանք համընկնում են, տրվում է միայն տպագրիչի անունը։ Անհրաժեշտ դեպքում տրվում է նաև ծանոթություն գրքի հրատարակման կամ այլ հարցերի մասին։

4. Նկարագրության երկրորդ մասը բաղկացած կլինի հետևյալ հատվածներից. ա) Գրքի տիտղոսաթերթի (կամ տիտղոսաթերթերի) պատճենը։ Տիտղոսաթերթը պատճենավորվում է լրիվ և անփոփոխ։ Պահպանվում

են ուղղագրությունը, կետադրությունը, գլխատառերի գործածությունը, վրիպակները։ Ջևն պահպանվում միայն հապավումներն ու հապավման նշանները։ Դրվում են տողատման նշաններ։ բ) Գրքի քանակական տվյալները, տեքստի նկարագրությունը, տեղեկանք նկարների մասին։ գ) Գրքի բովանդակությունը, այսինքն՝ գլուխների և մասերի թվարկումը (անհրաժեշտության դեպքում էջերի նշումով)։ Շատ անգամ հրատարակված հանրահայտ գրքերի (օրինակ՝ Աստվածաշունչ) բովանդակությունը կարվի 1-ին հրատարակության նկարագրության մեջ, մյուս հրատարակությունների նկարագրություններում կտրվեն 1-ին հրատարակության բովանդակությունից կատարված շեղումները։ դ) Տեղեկանք տպակից գրքի (գրքերի) մասին։ ե) Հիշատակարանը կամ բաղվածք հիշատակարանից և կամ գրքի որևէ այլ հատվածից՝ գրքի տպագրության, հեղինակի կյանքի, բնագրերի բնույթի հետ առնչվող հարցերի մասին։ զ) Նշումներ այն մասին, թե որ գրադարաններում կան այդ գրքի օրինակներից (տալով յուրաքանչյուր գրադարանում գտնվող լավագույն օրինակներից առնվազն երեքի դարակահիշերը) և կարևորագույն մատենագիտական աշխատությունների ո՛ր էջերում է խոսվում այդ գրքի մասին։ է) Այլ տեղեկություններ գրքի մասին (ծանոթագրություններ)։ ը) Տեղեկանք հազվագյուտ օրինակների վիճակի մասին։ թ) Հատվածներ հնատիպ գրքերի վրա արված ձեռագիր նշումներից և հուշագրերից։

5. Գրքի քանակական տվյալների և բնագրի նկարագրի տակ պետք է հասկանալ հետևյալ տարրերը. ա) տեղեկանք տպագիր թերթերի ծալքերի մասին (քառածալ, ութածալ, տասներկուծալ և այլն), բ) էջերի քանակը և տեղեկանք էջագրության տեսակի (հայկական, արաբական էջագրություն, չհամարակալված էջեր և այլն), առանձնահատկությունների (անջատ, միաս-

նական և այլն) մասին, էջերի տեսքի նշում (զարդափակ, գծափակ, ասեղափակ, երկսյուն և այլն)։ գ) Շարվածքի չափը, գրքերի չափը (լայնք, բարձրություն, հաստություն, առանց կազմի)։ դ) Տեղեկանք գրքում եղած փորագիր նկարների, խորաններների, գլխազարդերի, վերջնազարդերի, լուսանցազարդերի և նրանց քանակի, ինչպես նաև զարդագրերի մասին (անհրաժեշտության դեպքում էջերի նշումով)։ ե) Տեղեկանք գրքի թղթի և կազմի մասին։ զ) Տեղեկանք գրքում գործածված տառատեսակների ու տառերի չափերի մասին։

Էջերի քանակը նշվում է և՛ հայկական, և՛ արաբական թվանշաններով, նայած թե գրանցից որն է գործածված գրքում։ Եթե էջերը նշվում են հայկական թվանշաններով, փակագծում տրվում է նույնը արաբական թվանշաններով։ Անջատ էջագրության ժամանակ նշվում է նաև էջերի իրական քանակը փակագծում։ Ե՛վ արաբական, և՛ հայկական էջագրության դեպքում էջերի ընդհանուր քանակը նշվում է արաբական թվանշաններով, ԺԹ+314 (=327)։

6. Նկարագրություններում ամենուրեք պահպանվում է գրքերի մեջ գործածված ուղղագրությունը։ Ժամանակակից ուղղագրությամբ են գրվում միայն կազմողի կողմից տրված տեղեկությունները, որոնք տրվում են առանձին տառատեսակներով։ Հիշատակարաններից և գրքի այլ մասերից բերված քաղվածքներում պահպանվում է բնագրի ուղղագրությունը, մեծատառերի գործածությունը, կետադրությունը, նույնիսկ սխալները։

Գ. ՄԱՍ

Յուրաքանչյուր գիրք նկարագրելիս պետք է կազմել անհրաժեշտ հետևյալ լրացուցիչ տեղեկանքների ցանկը և նկարագրությունները (օժանդակ ցանկերի և տպակիցները արտացոլելու համար)։

Ա.) Տպակից գրքերի և այլ առանձին բնագրերի նկարագրություններ։

Բ) Գրքի կամ այլ բնագրերի վերնագրերի մասին տեղեկանք։

Գ) Գրքի հեղինակի, թարգմանչի, տպագրիչի մասին տեղեկանք։

Դ) Գրքերի տիտղոսաթերթերում կամ հիշատակարանում հիշված այլ անձնանունների և տեղանունների մասին տեղեկանք։

Բոլոր լրացուցիչ նկարագրությունները պետք է ունենան ժամանակակից ուղղագրություն, բացի գրքերի և բնագրերի վերնագրերից, որոնց գրության եղած ուղղագրությունը պահպանվում է։ Բոլոր այս լրացուցիչ նկարագրությունների հետ կազմվում են նաև անհրաժեշտ հղիչ նկարագրություններ (միևնույն անունների տարբեր ձևերից դեպի ընդունված մի ձևը)։

Այս հրահանգը որոշ ճշտումներով հայկական մատենագիտության բաժնում օգտագործվում է նաև այժմ։

Շատ ավելի լուրջ առարկություններ հանդիպեց հնատիպ գրքի փորձնական (ժամանակագրական) ցուցակի կազմման ծրագիրը։ Հիմնական առարկություններից էր այն, որ բաժինը սահմանվել է իսկական մատենագիտություն կազմելու համար և ոչ թե փորձնական։ Քանի որ փորձնական ցուցակի մեջ պետք է նշվեին նաև տարբեր մատենագիտական աղբյուրներում եղած այն գրքերը, որոնք չկային ձեռքի տակ, նախնական ցուցակի կազմումը մերժողները ասում էին, թե մատենագիտական աղբյուրների տվյալները կարող են սխալ ու շփոթեցնող լինել, որ պետք է մի կողմ դնել այդ աղբյուրները և անմիջապես սկսել նկարագրել ձեռքի տակ եղած գրքերը բուն մատենագիտության համար։

Հակառակ եղած կարծիքների, հնատիպերի նկարագրության կանոնների հետ կազմվեց նաև հայ հնատիպ գրքերի փորձնական ցուցակը։ Սակայն այն մերժվեց։

Հայկական մատենագիտության բաժնում աշխատողների

փոփոխություններ կատարվեցին։ Երբ նորոգված բաժինը սկսեց աշխատել, գործնական աշխատանքների ընթացքում պարզ դարձավ, որ առանց հրահանգի և փորձնական ցուցակի, հնարավոր չէ ստեղծել հայ հնատիպ գրքի լիարժեք մատենագիտություն։ Եվ աշխատանքներ սկսվեցին ցուցակը լրացնելու, խմբագրելու և լույս ընծայելու ուղղությամբ։

Ցուցակը հրատարակվեց 1963 թվականին «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ։ 1512—1800։ Համառոտ նկարագրություններով և ծանոթագրություններով» վերնագրով [1] (308 էջ)։ Խմբագիրն էր Հ. Անասյանը։

Ցուցակի փորձնական լինելը երևում է նրանից, որ այնտեղ նկարագրությունները շատ հակիրճ են, երբեմն վերնագրերն անգամ լրիվ գրանցված չեն, որևէ կերպ չի բացված գրքերի բովանդակությունը, չկան նշումներ գրքերի չափի, ձևավորման, նկարների մասին, չկան անվանաթերթերը (լրիվ), գրքերի հիշատակարանները, ոչ նույնիսկ հատվածները հիշատակարաններից, չեն նշված արտասահմանյան այն գրադարանները, որոնցում պահվում են այդ գրքերից և այլն։ Ցուցակում կան նաև սովորական մատենագիտությանը ոչ հատուկ նշումներ, որոնք սակայն պետք են մի փորձնական ցուցակի մեջ։

Փորձնական այդ ցուցակն, անկասկած, կատարեց և կատարում է իր դերը, այն զարձավ կամուրջ դեպի հայ հնատիպ գրքի մատենագիտությունը տանող ճանապարհին։

Ցուցակի առաջաբանում ասված էր, որ այն «...մի ավարտված ու պատրաստի մատենագիտություն չէ, այլ մի ծառայողական ցուցակ, որի հիմնական դերն է ավելի լրիվ ու սխալներից զերծ դարձնել ներկայումս կազմվող բուն մա-

---

1 Հայ հնատիպ գրքի ժամանակագրական ցուցակը, որ նախապես կազմվել էր (1958—1960 թթ.) մեր կողմից, օգտագործվեց 1963 թվականին հրատարակված «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակում», ուր իբրև կազմողներ նշված էին Հ. Դավթյան, Հ. Սիլվանյան, Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Մ. Մխզոյան, Ա. Սավալյան։

տենագիտությունը»: Թեև նույն առաջաբանում ակնարկներ կային նաև այն մասին, որ այդ ցուցակը մի ավարտուն գործ է, որից կարելի է ազատորեն օգտվել: Դա այն հին տեսակետի արտահայտությունն էր, ըստ որի պետք էր միանգամից կազմել բուն մատենագիտությունը և ոչ թե փորձնական ցուցակ:

Մամուլում հրապարակված գրախոսականներում[1] նույն այդ տեսակետն էր արծարծվում, մի կողմ էր դրվում հրատարակության փորձնական, օժանդակ լինելու հանգամանքը:

Ըստ որում, ցուցակը համարվում է գրեթե անթերի, կատարյալ մի գործ: Ոչ մի շատ թե քիչ լուրջ դիտողություն չարվեց, չնշվեց ցուցակի մեջ տեղ գտած որևէ սխալ կամ բացթողում: Մինչդեռ սխալներ և այլ թերություններ ցուցակը շատ ունի, որոնց մի զգալի մասը բավական լուրջ է: Երկու խոսքով անդրադառնանք այդ սխալներին: Նախ վերցնենք այն, որ ցուցակում տեղ են գտել բազմաթիվ այնպիսի գրքեր, որոնք իրականում գոյություն չունեն և, առհասարակ, երբևէ գոյություն չեն ունեցել:

Ցուցակի սկզբնական տարբերակում նշված էին ձեռքի տակ չեղած, բայց մատենագիտական տարբեր աղբյուրներում եղած այն գրքերը միայն, որոնց գոյությունը հերքել դժվար էր կամ անհնար, այսինքն՝ որոնք կամ հաստատ կային, կամ հավանաբար կային: Այս մոտեցումը այն ժամանակ մերժվեց, քանի որ առհասարակ անթույլատրելի համարվեց ձեռքի տակ չեղած գրքերի նշումը ցուցակի մեջ: Սակայն ահա ցուցակի հրատարակված տարբերակում տեղ էին գտել մատենագիտական աղբյուրներից առնված այնպիսի գրքեր, որոնց անիրական, կամ մտացածին լինելը հեշտությամբ ապացուցվում է: Այդպիսով, մատենագիտության մեջ նկարագրվել են, առանձին համար ստացել բազմաթիվ այն-

---

1 Տե՛ս, օրինակ, «Սովետ. Հայաստան», 1964, № 72, «Երևկոյան Երևան», 1964, № 65 և այլն:

պիսի գրքեր, որպիսիք երբեք չեն հրատարակվել և չկան։ Ավելին, այդպիսի գրքերի մի մասի չլինելը իմացել են նաև կազմողները և չնայած դրան մտցրել են իրենց ցուցակի մեջ, քանի որ նշված են եղել մատենագիտական այս կամ այն աղբյուրում։

Օրինակ, 413 համարի տակ կարդում ենք՝

«Ժամագիրք: Կ. Պոլիս, տպ. Աստվածատուրի, 1735»։ Եվ ապա՝ Գվ 132, որ նշանակում է, թե նկարագրված հրատարակությունը նշված է Գ. Լևոնյանի «Հայ տպագիր գիրքը և տպագրության արվեստը» աշխատության (1958 թ. հրատ.) 132-րդ էջում։ Սակայն բերված նկարագրության տակ կա ծանոթություն՝ «Տես № 439 նկարագրության ծանոթագրությունը»։ Այդ համարի տակ նույնպես Ժամագիրք է նկարագրված, միայն 1738 թվականի հրատարակություն։ Կարդում ենք ծանոթագրությունը. «Սույն հրատարակությունը Լևոնյանը թյուրիմացաբար նշել է որպես 1735 թ. տպագրություն»։

Այսինքն՝ Գ. Լևոնյանի անփութությամբ, թե սրբագրիչի կամ տպարանի մեղքով Լևոնյանի գրքում վրիպակ է տեղի ունեցել։ Ժամագրքի 1738 թվականը տպվել է 1735։ Եվ սա բավական է եղել, որպեսզի ցուցակում այդ նույն Ժամագիրքը իբրև երկու գիրք նկարագրվի՝ 413 համարի տակ իբրև 1735, իսկ 439-ի տակ իբրև 1738 թվականի հրատարակություն։ Եվ այդ արվել է չնայած այն բանին, որ կազմողները իմացել են, որ 1735-ին նման գիրք չի տպագրվել։

Շատ դեպքերում էլ այս կամ այն հեղինակի աշխատության մեջ եղած վրիպակը կամ թյուրիմացությունը բոլորովին չի ստուգվել, այլ իբրև ճիշտ տեղեկանք ընդունվել է, և իրականում չեղած գիրքը դարձյալ տեղ է գտել ցուցակում (նույնիսկ ծանոթություն էլ չի ստացել, որ ինքը չկա)։

Եվ այսպես, ցուցակի մեջ իրական գրքերի կողքին տեղ են գտել նաև բազմաթիվ չեղած, եթե կարելի է ասել, վրիպակ գրքեր, որ միայն վնասակար կարող էր անդրադառնալ փորձ-

նական այս մատենագիտության վրա, ստեղծելով ավելորդ շփոթություններ։

Բերենք ցուցակում նշված այդպիսի չհղած գրքերի մի քանի օրինակ, ցուցակի սկզբի մասից.

Նեռսես Շնորհալի։ Յիսուս որդի։ Վենետիկ, հրատ. Աբդար Դպիր Բոխաթեցի, 1565։

Սաղմոս։ Վենետիկ, տպ. Ջուան-Բատիստա Բովիս, 1666։

Սաղմոս։ Ամստերդամ, հրատ. Կարապետ Անդրիանացի, 1666։

Սաղմոս։ Ամստերդամ, հրատ. Ոսկան Երևանցի, 1666։

Յովհաննէս Պոնա։ Ջևորածութիւն Յերկինս։ Հռոմ, տպ. Ուրբանյան, 1671։

Նարեկ փոքրագիր։ Մարսել, 1674։

Նարեկ փոքր։ Մարսել, տպ. Ս. էջմիածնի և Ս. Սարգսի, 1675։

Տօնացոյց։ Վենետիկ, Միքելանջելո Բարբոնի, 1678։

Ակն հոգեվան։ Մարսել, 1678։

Պատառեզ հոգևոր։ Մարսել, 1678։

Կղեմես Գալանոս։ Միաբանութիւն... Հտ. Ա։ (Միայն հայկերեն բնագիրը)։ Հռոմ, տպ. Ուրբանյան, 1680։

Գիրք ժողովածոյ... Նոր Ջուղա, 1681։

Գայրութեան գիրք։ Վենետիկ, տպ. Միքելանջելո Բարբոնի, 1685։

Գիրք ժողովածոյ... Նոր Ջուղա, 1686։

Խաչատուր Էրզրումեցի Առաքելեան։ Գիրք քերականութեան։ Լիվոռնո, տպ. Ս. էջմիածնի և Ս. Սարգսի, 1691։

Պատմութիւն Կայսրին Փոնցիանոսի։ Կ. Պոլիս, 1693։

Նշված թվականներին։ Նշված քաղաքներում այսպիսի գրքեր չեն հրատարակվել (ոչ էլ սկսել են տպագրվել)։ Այս գրքերը հիշատակող ցանկերում կամ աշխատություններում մեջ ուղղակի սխալ թվական է նշված (երբեմն էլ՝ սխալ վայր)։

Ցուցակում 18-րդ դարի հրատարակությունների մեջ այսպիսի կեղծ «գրքերի» քանակը մի քանի անգամ ավելի է։

Այսպես ստեղծվել է հայ մատենագիտության մեջ տեղ գտած վրիպակների մի մատենագիտություն։

Դուցե, մտածենք, թե կազմողները սկզբունք են ունեցել իրենց գիրք նշելու տարբեր մատենագիտական աղբյուրներում վրիպակի կամ թյուրիմացության պատճառով «առաջացած» ամեն մի «հրատարակություն»։ Ի դեպ, ցուցակի առաջաբանում (էջ X) ուղղակի ասված է, որ ցուցակի մեջ իրենց գիրք է նշված այս կամ այն հեղինակի աշխատություններում թույլ տրված ամեն մի վրիպակը[1]։ Բայց այդ դեպքում նման սկզբունքը պետք է մինչև վերջ պահպանվեր, որ սակայն չի արվել։

Մի բան, որի պակասը չկա հայ մատենագիտության մեջ, այդ վրիպակն է, բայց անհասկանալի ընտրությամբ տարբեր աշխատություններում եղած վրիպակների ու սխալների մի մասը այս ցուցակում դարձել է «գիրք», մյուս մասը՝ ոչ։ Օրինակ, Գ. Զարբհանալյանի «Պատմություն հայկական տպագրության» գրքի (Վիեննա., 1895) վերջում եղած հնատիպերի ցուցակի մեջ նշված է Խորենացու Պատմության և Աշխարհագրության 1685-ի ամստերդամյան հրատարակությունը, որը ներկայացված է իբրև առաջին տպագրություն։ Սա վրիպակ է, որ թյուրիմացաբար անցել է նաև այլ գրքերի մեջ, սակայն ներկա ցուցակում չկա այս չեղած գիրքը։ Կամ՝ նույն Զարբհանալյանի «Հայկական մատենագիտության» մեջ նշված է, որ Հովհաննես Մրքուզի «Գիրք համառօտ վասն իսկապէս ճշմարիտ հաւատոյ» գիրքը իբր լույս է տեսել 1658 թվականին[2], որ թյուրիմացության արդյունք է կամ վրի-

---

1 Այդ անհայտորեն չեղած գրքերը ցուցակում չեն տարբերվել այն գրքերից, որոնք իրականում կան, և միայն չեն գտնվել Երևանի, Թիֆլիսի ու Բաքվի գրադարաններում։ Այդ եղած ու չեղած գրքերը ցուցակում հավասարապես ստացել են նույն տարբերանշանը (երկու աստղ)։

2 Գ. Զարբհանալյանի թույլ աված այս, ինչպես և մի շարք այլ վրիպակներ անցել են հոլանդացի բանասեր Ֆ. Դուրիեզի մի հոդվածի մեջ, որ նվիրված է հայկական տպագրությանը Հոլանդիայում (տե՛ս «Ons Amsterdam» հանդեսի 1961 թ. 6-րդ համարը (էջ 185)։

պակ։ Սա ևս նշված չէ ներկա ցուցակում։ Զարբհանալյանի նույն մատենագիտության մեջ կամ վերոհիշյալ ցուցակում (1895-ի) կան և այլ վրիպակներ, ինչպես, ասենք, 1698-ի «Ժամագիրք»-ը (Ամստերդամ), 1699-ի «Գիրք խոստովանութեանց»-ը (Կ. Պոլիս) և այլն, որոնք նույնպես տեղ չեն գտել ցուցակում։

Այսպիսի դեպքեր շատ-շատ են։ Հիշենք Զարբհանալյանի արտառոց վրիպակներից մեկը. ըստ նրա «Մատենագիտության» (էջ 100) Շուշիում 1730 թվականին տպագրվել է Հովսեփ Արցախեցու «Բառարան համառօտ»-ը, որ ակնհայտ վրիպակ է։ Համաձայն ներկա ցուցակում ընդունված կանոնի, 1730-ի տակ այս «գիրքը» նույնպես պետք է տեղ գտներ, բայց տեղ չի գտել։

Եվ այսպես, հենց միայն Գ. Զարբհանալյանի աշխատություններում եղած բազմաթիվ վրիպակների ու սխալների մի մասը անսկզբունք կերպով իբրև գիրք նշված է ցուցակում, մի մասը՝ ոչ։

Բավական վրիպակներ կան նաև Լեոի, Գ. Լևոնյանի և այլոց աշխատություններում, որոնց նույնպես մի մասն է միայն «գիրք» դարձել այս ցուցակում։

Քիչ վրիպակներ չկան վերջին տարիներս տպագրված մի շարք հոդվածներում, ուր քննվում են գրքի պատմության հարցերը։ Օրինակ, թեկուզ ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագրի» (հաս. գիտ.) 1962 թ. 5-րդ համարի 47-րդ էջում նշված է, որ Կ. Պոլսի հայտնի տպագրիչ Աստվածատուրի առաջին գիրքը, որ մի Շարակնոց է, տպագրվել է 1799-ին (պետք է լինի՝ 1699), ըստ ցուցակում ընդունված կանոնի։ այնտեղ պետք է նշվեր 1799-ի Շարակնոց, որ չի արվել։

Առհասարակ, սխալով ու վրիպակով «ստեղծված» գրքերի մատենանշումը որևէ կարգի (վերջնական, թե փորձնական) մատենագիտության մեջ անթույլատրելի է, այն միայն շփոթեցնել, ապակողմնորոշել կարող է ցանկից օգտվողին։ Եվ վերջապես, եթե, այնուամենայնիվ, որոշվում է վրիպակով ստեղծված «գրքերը» նշել մի ցանկում, ապա պետք է հետևողա-

կան լինել և նշել բոլոր այդպիսի «գրքերը»։ Մի բան, որ չի արված ներկա մատենագիտական ցուցակում։

Ուշադրություն է գրավում նաև այն, որ եթե մատենագիտական տարբեր աղբյուրներում տեղ գտած վրիպակները դարձել են գիրք և նշվել ցուցակում, ապա նույն և մի քանի այլ աղբյուրներում հիշատակված մի շարք գրքեր, որոնք թեև չկան ձեռքի տակ, բայց որոնց գոյությունը հավանական է կամ, համենայն դեպս, հնարավոր չէ ժխտել, դուրս են թողնվել ցուցակից։ Օրինակ, Կ. Դաբիկյանը «Բյուզանդիոնի» 1906 թվականի 2963 համարում գրել է, որ ինքը Սեբաստիայում տեսել է Հակոբ Մեղապարտի Պարզատումար-ի տառերով տպագրված Սաղմոսարան։ Այդ Սաղմոսարան-ը Հակոբի տպագրած գրքերի ցանկի մեջ է մտցրել Գ. Գալեմքյարյանը («Հանդես ամսօրյա», 1913, էջ 712—713), այն հիշատակել են նաև այլ հեղինակներ։ Ոչ ոք չի կարող պնդել, որ Դաբիկյանի պես բարեխիղճ, բծախնդիր մարդը սխալվել է, այսինքն՝ նման հրատարակության հնարավորությունը իրոք կա։ Բայց ցուցակում տեղ չի տրվել այդ Սաղմոսարան-ին։ Եթե նույնիսկ Դաբիկյանի տեղեկությունը ակնհայտորեն սխալ լիներ, այդ գիրքը դարձյալ պետք է տեղ գտներ ցուցակում բուն այնտեղ ընդունված կարգի։

Այնուհետև, նույն Գ. Գալեմքյարյանը իր մի ուրիշ հոդվածում («Հանդես ամսօրյա», 1914, էջ 17—22) խոսում է 1579 թվականին Հռոմում կատարված հայերեն (առաջին) տպագրության մասին և բերում այդ բնագիրը։ Դա ֆրանսիացի Ռ. Գրանժոնի կողմից ձուլված հայկական տառերով կատարված մի փորձնական տպագրություն է, որ նույնպես դուրս է մնացել ցուցակից։

Հիշյալ այս հոդվածները քաջ ծանոթ են եղել կազմողներին, բայց հարկ եղած ձևով չեն օգտագործվել։

Վերջապես, ցուցակից դուրս են մնացել զգալի քանակությամբ հին հրատարակություններ (սուտզատես գոյություն ունեցող), ուղղակի այն պատճառով, որ ծանոթ չեն եղել կազմողներին։ Սա արդեն ասում ենք ոչ իբրև ցուցակի թե-

թյուն, քանի որ խոսքն այնպիսի հրատարակությունների մասին է, որոնք անծանոթ են եղել նաև անցյալի հայ մատենագետներին։ Հասկանալի է, որ բնավ էլ պարտադիր չէ մի փորձնական ցուցակում նման բոլոր տպագրությունների ընդգրկումը (մանավանդ, որ ցուցակի նպատակը նման գրքերի հայտնաբերումն է)։

Ըստ ընդունված հրահանգի (տե՛ս վերևում) հնատիպ գրքի մատենագիտության հատորում պետք է նկարագրվեն ոչ միայն զուտ հայերեն բնագիր ունեցող գրքերը, այլև խառը՝ հայերեն և այլալեզու ունեցողները, ինչպես և օտար լեզվով կատարված ամեն մի տպագրություն, ուր կան հայերեն մեծ, թե փոքր բնագրեր կամ հայկական տառեր։ Այդ կարգի գրքերը, հասկանալի է, որ պետք է տեղ գտնեին նաև փորձնական ցուցակում և իրոք որ մի շարք նման տպագրություններ տեղ գտել են այնտեղ։ Բայց ցուցակից որոշ այդպիսի գրքեր էլ դուրս են մնացել. դրանցից են, օրինակ, Բլեզ Վիժների «Զեռնարկ ծածկագրերի մասին» ֆրանսերեն գիրքը (Փարիզ, 1586) հայկական այբբենի երկու տախտակով [1], դե Բրեյի «Այբբեններ և տառատեսակներ» գիրքը (Ֆրանկֆուրտ, 1596), հայկական տառատեսակների աղյուսակով [2], Պետրոս Գետանոս Պալմայի «Նմուշներ...» լատիներեն գիրքը (Փարիզ, 1596) հայկական բնագրով (այս գրքի երկու օրինակն ունի Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանը), 1548-ին տպագրված «De Ratione communi omnium linguarum...» գիրքը, լատիներեն տառ հայերենի նմուշներով։

Շատ ավելի են ցուցակից դուրս մնացած 17 և 18-րդ դարերի հրատարակությունները։ Հիշենք միայն մի քանի այլալեզու հրատարակություններ, որոնցում կան հայկական տառեր, հայերեն բնագիր (կամ բառեր)։ Այդպիսիք են Դելլա Պորտայի «De Distillatione...» գիրքը, Հռոմ, 1608 և վերահրատարակված Ամստերդամում, 1609 թվականին, Գ. Ռոկկիի

---

1 Տե՛ս, «Տեղեկագիր», ՀՍՀՀ ԳԱ (հաս. գիտ.), 1965, № 6, էջ 87—91։

2 Նույն «Տեղեկագիրը», 1963, № 12, էջ 88։

«Funeralle della Signora Sitti...» *(Հռոմ, 1627)*, *Ա. Կիրխերի* «Prodromus coptus...» *(Հռոմ, 1636)*, *Գ. Ֆոքսի* «A Battle-door for teachers...» *(Լոնդոն, 1660)*, *Ֆրանչեսկո Մարիա Մաչջիի* «Sintagmaton Linguarum orientalium...» *(Հռոմ, 1670)*, *մի հայերեն այբբենարան (Հռոմ, 1673)*, *Պ. Բոդդանուսի* «L' Infallibile verita della cattolica...» *(Վենետիկ, 1691)*, *Ֆաուստուս Նայրոնուսի* «Evoplia fidei...» *(Հռոմ, 1694)*, *էդ. Բեռնարդուսի* «Orbis eruditi...» *(Օքսֆորդ, 1700)*, *Ջ. Էռնեստիի* «Die Wol -eingerichtete Buchdruckeren...» *(Նյուրնբերգ, 1721)*, *Լամել Կլոդի* «ÉpreuVes générales des carakteres...» *(Փարիզ, 1742)*, «Encyclopédie élémentaire...» *(Փարիզ, 1767, հա. 2, մաս 2)*, *Յոհ. Անշնդեի* «Proef van letteren...» *(Հաարլեմ, 1768)*, *Ջ. Բոդոնիի* «Pel Solenne Battesimo Di S. A. R. LudoVico...» *(Պարմա, 1774)*, «Alphabetum Barmanum» *(Հռոմ, 1776)*, *Վ. Կասլոնի* «A Specimen of printing types...» *(Լոնդոն, 1785)*, *Հալէ քաղաքում 1756-ին տպագրված հայերեն մի աղօթք և շատ ուրիշ հրատարակութիւններ* [1]։

Սակայն այսպիսի պակասները, ինչպես ասվեց, ցուցակի թերութիւն համարել չի կարելի, քանի որ գրքերը ուղղակի անծանօթ են եղել կազմողներին և խմբագրին։

Յանկում կան այլ կարգի սխալներ, ահա մի նմուշ. 97-րդ համարի տակ նկարագրված 1676 թվականի Մաշտոց-ը ունի ծանոթագրութիւն, ուր ասված է, թե Մատենադարանի հնատիպ գրականութեան հավաքածուի 1164 համարն ունեցող հիշյալ թվականի Մաշտոցի վրա իբրև տպագրության վայր նշված է Մարսել, իսկ նույն մատենադարանի ձեռագրատանը 2423 համարի տակ պահվող նույն թվականի Մաշտոցի վրա՝ Ջմյուռնիա։ Մինչդեռ դա ճիշտ չէ. Մատենադարանի հիշյալ համարները շփոթված են։

---

1 *Վերը թվարկված հրատարակութիւնների ղեպի մասի վերաբերյալ տեղեկութիւններ մեզ ուղարկել է ամերիկահայ գրասեր-գրահավաք Ալբերտ Նալբանդյանը (Սան-Ֆրանցիսկո)։*

Այնուհետև, գրքերի նկարագրությունների տակ նշվում են ամեն մի գրքի գտնվելու վայրը և այն մատենագիտական աղբյուրները, ուր հիշատակված է գիրքը։ Այստեղ ևս քիչ չեն սխալներն ու շփոթումները։ Կամ՝ ցուցակում նկարագրությունների տակ նշված են միայն Երևանի, Թիֆլիսի և Բաքվի գրադարանները։ Հասկանալի է, որ հայ գրքի արտասահմանյան հարուստ հավաքածուները նշվել չէին կարող, քանի որ ցուցակը կազմելիս նրանց մասին տեղեկություններ չեն եղել։ Բայց մի շարք դեպքերում չեն նշված նաև տվյալ գիրքն ունեցող այն գրադարանները, որոնք Երևանում են։

Ցուցակի թերությունների վրա, թերևս բնավ հարկ չլիներ կանգ առնելու, եթե այն մի ավարտուն, անթերի գործ համարելու հակումը չլիներ ասպարեզում։

Իբրև փորձնական մատենագիտություն, ինչպես նշվեց, ցուցակը հիմնականում կատարում է իր դերը։ Վիեննայից ցուցակի իր լրացումներն ու ճշտումներն է ուղղարկել հայկական մատենագիտության բաժնին Հ. Ոսկյանը, Վենետիկից՝ Ն. Տեր-Ներսիսյանը, Սան-Ֆրանցիսկոյից՝ Ա. Նալբանդյանը, Նոր Ջուղայից՝ Կ. Մինասյանը, Լոնդոնից՝ Մ. Բարիքյանը, Նյու-Յորքից՝ Պ. Պատկյանը և ուրիշներ՝ տարբեր վայրերից։

Ստացված նյութերի հիման վրա ցուցակում արդեն մի շարք ճշտումներ են արվել։ Հայ հնատիպ գրքի մատենագիտության հատորը շարունակում է կազմվել և խմբագրվել։

Ինչ վերաբերում է հայ տպագիր գրքի ամբողջական մատենագիտությանը, ապա պետք է ասել, որ նրա վրա կատարվող աշխատանքը չափազանց դանդաղել է։ Բաժինը իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացրել է հնատիպի հատորի վրա, իսկ ամբողջական մատենագիտությունը առայժմ ինչ-որ չափով ստվերում է մնացել։ Մինչդեռ այստեղ շատ և լուրջ դժվարություններ կան հաղթահարելու։

Նախ անհրաժեշտ է կազմել երեք կարևոր հրահանգներ. ա) նյութերի ընտրության հրահանգ, ուր պետք է նշվի, թե ինչն է համարվում գիրք (քանի էջից սկսած հրատարակու-

թյունն է գիրք դիտվելու, առանձնատիպերը դի՞րք են համարվելու, թե ոչ և այլն), բ) գրքերի նկարագրության կանոններ (կամ լրացում եղած միասնական կանոնների), գ) գրքերի դասակարգման սկզբունք։

Այս հրահանգներից յուրաքանչյուրի կազմումը լուրջ զբաղվարություններ, փորձի ու փաստերի մանրակրկիտ ուսումնասիրման և ընդհանրացման հետ է կապված։

Անկասկած է, որ հիմնական, բազմահարուստ սիստեմատիկ մատենագիտության կազմումը ոչ միայն մի քանի տասնյակ անգամ ավելի աշխատատար է, քան հնատիպ գրքի մատենագիտության հատորի կազմումը, այլև ավելի դժվար ու բարդ, ավելի լուրջ մասնագիտական դիտելիքներ և ուժերի լարում պահանջող աշխատանք։

ԳՐԱԴԱՐԱՆԱԳԻՏԱԿԱՆ–ՄԵԹՈԴԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեղեկատու-մատենագիտական բաժնի աշխատանքի մասին խոսելիս արդեն ասել ենք, որ այդ բաժինը մի շարք հանձնարարական ցանկեր է հրատարակել մեթոդական կաբինետի (հետագայում՝ գրադարանագիտական-մեթոդական բաժին) հետ համատեղ։ Սակայն մեթոդական բաժինը հանձնարարական ցանկեր կազմել և հրատարակել է նաև ինքնուրույն։ Այդպիսի ցանկեր բաժինը հրատարակում է ոչ թե առանձին, այլ՝ իր մեթոդական հրատարակություններին կից։

Գյուղական, շրջանային, քաղաքային գրադարանների աշխատողներին նրանց ամենօրյա գործում օգնելու նպատակով մեթոդական բաժինը հրատարակում է տարբեր բնույթի ձեռնարկներ, ինչպես, ասենք, կազմում է որևէ հոբելյան նշելու կամ որևէ քաղաքական միջոցառման առիթով մեթոդական ցուցումներ։ Կարելի է հիշել, օրինակ, Խ. Աբովյանի, Հ. Թումանյանի, Ս. Սպանդարյանի, Ա. Շիրվանզադեի, Ա. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի հոբելյանների առիթով հրատարակ-

ված գրքույկները, որոնցում գրադարանավարների համար տարբեր նյութեր կան (ցուցահանդես կազմակերպելու, բարձրաձայն ընթերցանության համար և այլն), այդ թվում նաև՝ հանձնարարվող գրականության փոքրիկ ցանկեր։ Այդպիսի մեթոդական ձեռնարկներ ոչ մեծ հանձնարարական ցանկերով հրատարակվեցին նաև Վ. Ի. Լենինի ծննդյան 90-ամյակի, Տ. Շևչենկոյի մահվան 100-ամյակի առիթով և այլն։

Մատենագիտական ցանկեր կան նաև Կոմունիստական կուսակցության 20 և 21-րդ համագումարների առիթով հրատարակված մեթոդական ձեռնարկներում, Հ. Սիլվանյանի կազմած «Գեղարգույն սովետի ընտրությունները» (1954), «Կոմունիստական շաբաթօրյակներից դեպի կոմունիստական աշխատանքի բրիգադները» մեթոդական ձեռնարկներում և այլուր։

Գրադարանավարներին հատկապես օգնում է նշանավոր և հիշարժան տարեթվերի օրացույցը, որը մեթոդական բաժինը հրատարակում է 1957 թվականից (կազմողներ՝ Ալ. Շահազիզյան, Գ. Մկրտչյան, Ս. Կոժինյան, Լ. Մուրադյան, Ս. Ղազարյան և ուրիշներ)։

Սա փաստորեն պարբերականի արժեք է ստացել. ներկայումս հրատարակվում է տարին չորս համար այդ օրացույցից։ Օրացույցների մեջ նշվում են տարվա ամբողջ քառորդում եղած նշանավոր և հիշարժան տարեթվերը՝ նշանավոր մարդկանց ծննդյան և մահվան, ինչպես և կարևոր իրադարձությունների տարեդարձներ։ Յուրաքանչյուր նշվելիք տարեթվի վերաբերյալ տրվում է տեղեկանք՝ այդ թվում նշանավոր մարդկանց՝ պատմական, հասարակական ու մշակութային գործիչների, գրողների, արվեստագետների կյանքի և գործունեության, այս կամ այն պատմական կարևոր իրադարձության մասին և այլն։ Դրանից հետո նշվում է հանձնարարվող գրականությունը։

Այս օրացույցներում կարելի է գտնել գրականության ոչ մեծ ցանկեր, նվիրված Հովհաննես Այվազովսկուն և Գևորգ Բաշինջաղյանին, Ժյուլ-Վեռնին և Ա. Մակարենկոյին, Ա. Չե-

խովին և Ա. Օստրովսկուն, Բաֆֆուն և Հ. Բարբյուսին, Մ. Մեծարենցին և Ֆ. Շոպենին, Սայաթ-Նովային և Ս. Զորյանին, Լ. Տոլստոյին և Ն. Գոգոլին, Պ. Զայկովսկուն և Ֆ. Լիստին, Ֆ. Նանսենին և Գ. Զոհրապին, Կոմիտասին և Դ. Վարուժանին, Ի. Ռեպինին ու Ե. Օտյանին և շատ ու շատ ուրիշների։ Այդ կարգի հանձնարարական ցանկերում սովորաբար նախ բերվում են տվյալ նշանավոր անձի երկերի մի քանի կարևոր հրատարակությունները և ապա մի փոքր գրականություն նրա մասին։ Օրացույցներում կարելի է գրականության ցանկեր գտնել նաև ռադիոյի, մամուլի, շինարարների և երկաթուղայինների, ռազմա-օդային նավատորմի և այլ տոնական օրերի, պիոներական կազմակերպության հիմնադրման, ֆիզկուլտուրնիկի համամիութենական օրվա և այլ տարեթվերի ու հարցերի մասին։

Պետք է ասել, որ մատենագիտական այս ցանկերը թեև ունեն մի շարք թերություններ, սխալներ, բայց օգնում են գրադարանավարներին այս կամ այն տարեթիվը նշելիս՝ ցուցահանդեսներ կազմակերպելու, երբեմն էլ ընթերցողներին գրքեր առաջարկելու գործում։

Այդ ոչ մեծ ցանկերը երբեմն կարող են օգնել նաև որոշ ընթերցողների տարբեր ազգության նշանավոր մարդկանց վերաբերող նախնական գրականություն ընտրելու գործում։

1963 թվականից մեթոդական բաժինը ամեն տարի լույս է ընծայնում «Ինֆորմացիոն հանձնարարական ցանկ դյուզական գրադարանների կոմպլեկտավորման համար» (լույս է տևսել երեք գրքույկ)։ Այս գրքույկների նպատակն է օգնել դյուզական գրադարաններին գրականության համալրման գործում։

Ցանկը կազմվում է տարբեր հրատարակչությունների թեմատիկ պլաններից անհրաժեշտ ընտրություն կատարելու միջոցով, որը և լուրջ շփոթությունների պատճառ է դառնում։ Հայտնի է, որ հրատարակչությունների թեմատիկ պլաններում նշվում են ոչ թե հրատարակված, այլ հրատարակվելիք գրքերը, որոնց մի մասը երբեմն լույս չի տեսնում (մի

մասն էլ նշված ժամկետին լույս չի տեսնում, որոշ դեպքերում էլ փոխված վերնագրով է լույս տեսնում)։ Եվ մեթոդական բաժնի ցանկի մեջ էլ մտնում են ոչ միայն լույս տեսնելիք, այլև լույս չտեսնելիք կամ այլ անունով լույս տեսնելիք գրքեր։ Օրինակ, 1964 թվականին մեթոդական բաժնի կողմից կազմված և տպագրված այդ «Ինֆորմացիոն հանձնարարական ցանկում» գրանցված են Լեոի երկերի (10 հատորով) 1-ին հատորը, Յա. Հաշեկի «Քաջ պինվոր Շվեյկի արկածները», Հ. Մաթևոսյանի «Մենք ենք, մեր լեռները», Ֆ. Ռաբլեի «Գարգանտյուա և Պանտագրյուելը», Պետրարկայի «Սոնետներ և կանցոնները» և շատ ուրիշ գրքեր, որոնք ոչ 1964, ոչ էլ 1965 թվականներին լույս չեն տեսել։

Այսպիսի ցանկը, հասկանալի է, որ կարող է միայն ապակողմնորոշել գրադարանավարին, որին պետք է ոչ թե ենթագրյալ, այլ իրական, արդեն հրատարակված գրքերի ցանկ։ Եթե մեթոդական բաժինը կարողանա նոր լույս տեսնող գրքերի մասին շատ (ավելի արագ, քան տպագիր քարտերն են տեղ հասնում) տեղեկություններ հաղորդել գյուղական գրադարաններին, ապա դա կլինի օգտակար գործ, իսկ եթե այդ բանը հնարավոր չէ անել, ապա ներկա ցանկի կարիքը բոլորովին չկա, այն ձևական, ցուցագրական բնույթ ունի։

Ցանկը լի է մատենագիտական տարբեր սխալներով։ Ցանկի կառուցվածքը սխեմատիկ է, կան բաժիններ ըստ բնագավառների (հասարակական-քաղաքական, գեղարվեստական գրականության և այլն), թեև Գիտա–մասսայական գրականություն վերնագրի տակ (1964 թ. ցանկում) կարդում ենք Թ. Ավդալբեկյան Ռուս-հայերեն տնտեսագիտական բառարան կամ՝ Հայկական ՍՍՀ օրենքների... ժողովածու, այսինքն՝ գրքեր, որոնք հիշյալ բաժնի հետ առնչություն չունեն։

Բաժինների ներսում նշված գրքերը որևէ կարգով չեն դասավորված, անկարգ թվարկված են։ Բոլորովին չկան մի շարք բնագավառների վերաբերող բաժիններ, օրինակ,

1964 թ. ցանկում չկա գրականագիտական կամ լեզվաբանական հայերեն գրականություն և այլն։ Ցանկում անհասկանալի նպատակով ընդարձակ քաղվածքներ են արված Ռուսաստանի տարբեր հրատարակչությունների թեմատիկ պլաններից, որոնցում նույնպես սոսկ տպագրվելիք գրքերն են նշվում։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ Ա.Յ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերն արդեն մենք անդրադարձանք Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի հրատարակած մի քանի այնպիսի ցանկերի, որոնք կազմվել են ոչ թե գրադարանի այս կամ այն բաժնի, այլ որևէ անհատի կողմից և լույս են տեսել իբրև գրադարանի հրատարակություն (ոչ իբրև որևէ բաժնի)։

Համառոտակի բնութագրենք այդ կարգի մատենագիտական ցանկերից մի քանիսը ևս, որոնց մասին դեռևս խոսք չի եղել։

1950 թվականին լույս տեսավ Լ. Մելքումյանի և Վ. Կարմենյանի կազմած «Մարքսի, Էնգելսի, Լենինի, Ստալինի աշխատությունների հայերեն հրատարակությունների բիբլիոգրաֆիա» մատենագիտությունը (501 էջ)։

Այն ընդգրկում էր 1920 թվականից մինչև 1950 թվականի հունվարի մեկը հրատարակված գրքերը։

Պարբերական մամուլի նյութերը և Մարքսի, Էնգելսի, Լենինի, Ստալինի ու նրանց երկերի մասին եղած գրականությունը մատենագիտության մեջ չի ընդգրկված, Չկան նաև նախախորհրդային հրատարակությունները։ Այլ խոսքով, պակասները բավական լուրջ են։

Ըստ առաջաբանի մատենագիտությունը պատրաստ է եղել դեռևս 1939 թվականին։

Մատենագիտությունը կազմվել է հիմնականում Ալ. Մյաս-

Նիկյանի անվան գրադարանի գրքային ունեցվածքի հիման վրա։

Այս աշխատության հիմնական մասը ժամանակագրական ցանկեր են, ինչպես՝ Կ. Մարքսի աշխատությունների հայերեն հրատարակությունների ժամանակագրական ցանկ, Մարքսի և Էնգելսի համատեղ աշխատությունների հայերեն հրատարակությունների ժամանակագրական ցանկ և այլն։

Այնուհետև, կան այբբենական ցանկեր՝ ժամանակագրական ցանկերից յուրաքանչյուրը վեր է ածված այբբենականի (գրքերի նկարագրություններն այստեղ ավելի համառոտ են)։

Ժամանակագրական ցանկերում տրված է մեկից ավելի նյութեր պարունակող հրատարակությունների բովանդակությունը։ Կարելի էր ապասել, որ այբբենական ցանկերում կնշվեր այդպիսի բազմանյութ հատորների մեջ մտնող յուրաքանչյուր երկը։ Սակայն այդ բանը չի արված։ Ժամանակագրական ցանկերում նյութերը համարակալված չեն, և այբբենական ցանկում համապատասխան նյութերի դիմաց չկան համարային հղումներ դեպի հիմնական, այսինքն՝ ժամանակագրական ցանկերը։ Կան նաև մի շարք այլ թերություններ։

Ջնայած բացերին և թերություններին, մատենագիտությունը մի քայլ առաջ էր մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների երկերի հայերեն հրատարակությունները մատենագիտական մի աշխատության մեջ ի մի հավաքելու գործում։

1964 թվականին Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանը հրատարակեց Ռուբեն Ռուբինյանի կազմած «Սովետահայ գրական-գեղարվեստական ժողովածուներ» մատենագիտությունը (XXXXVIII, 311 էջ), որի խմբագիրն է. Հ. Թամրազյան։ Խորհրդային Հայաստանում և Միության այլ վայրերում տպագրվել են հայ գրողների և գրականագետների երկերը ներկայացնող մի շարք ժողովածուներ (ոչ պարբերական)։ Նրանցում կան բազմաթիվ արժեքավոր նյութեր, որոնք սակայն հաճախ մոռացության են տրվում։ Ժողովածուների նյութերը սովորաբար առանձին-առանձին չեն վերլուծագրվում գրադարանային գրացուցակներում (նկարագրվում է միայն

ինքը՝ ժողովածուն), այդ նյութերը չեն բացահայտվում նաև գրապալատի տարեգրերում։ Ուստի Ռ. Ռուբինյանը գտել է մատենագիտական աշխատանքի մի նոր օղակ, ճիշտ է նկատել գրադարանավարների և մատենագետների կողմից աչքաթող արված բնագավառը։

Ռուբինյանը իր մատենագիտության մեջ ընդգրկել է 1924-ից մինչև 1960 թվականը (ներառյալ) հրատարակված ժողովածուները։

Մատենագիտության մեջ բոլոր կարգի գրական-գեղարվեստական ժողովածուները շարված են իրար հետևից և այդպես 274 էջ. նյութը գլուխների չի բաժանված։

Ամեն մի ժողովածուի նկարագրության տակ տրված է նրա բովանդակությունը, այնուհետև, անվանացանկում այբբենական կարգով նշված են ժողովածուներում նյութեր ունեցող հեղինակները։

Բացի հեղինակների անվանացանկերից, մատենագիտությունն ունի նաև՝ գրական-գեղարվեստական ժողովածուների այբբենական ցանկ և երևանից դուրս հրատարակված գրական-գեղարվեստական ժողովածուներ օժանդակ ցանկերը։

Կա՞ն արդյոք թերություններ. անպայման, ինչպես ամեն մի մատենագիտության մեջ։ Մատենագիտության մասին եղան երկու գրախոսականներ[1]. երկուսի մեջ էլ նշվեցին մի շարք թերություններ։ Նախ բերվեցին այնպիսի թերություններ, որոնք բուն մատենագիտության մեջ են տեղ գտել, այդ թվում, նյութերի համարակալման սխալներ (կրկնված և բաց թողնված համարներ), նկարագրությունների սխալներ, անունների աղավաղումներ և այլն։

Ամենից շատ քննադատվեց մատենագիտության անվանացանկը՝ այստեղ ևս միևնույն մարդը երկուս է դարձել (օրինակ, բանվոր Գրոն և Գ. Օհանյանը միևնույն անձն են, բայց ցանկում բերված են իբրև առանձին մարդիկ), ցանկից դուրս են մնացել շատ հեղինակների ազգանուններ, որոնք հոդված-

---

1 Հ. Դավթյան, Սովետահայ գրական գեղարվեստական ժողովածուներ։

ներ ունեն այս կամ այն ժողովածուի մեջ։ Դուրս են մնացել նաև որոշ գրողների և մշակութային գործիչների ազգանուններ, իսկ որոշ ազգանունների դիմաց (օրինակ՝ Շիրվանզադե, Ա. Խահակյան, Ա. Բակունց, Ֆիրդուսի և այլն) չեն նշված այն բոլոր ժողովածուների համարները, որոնցում խոսվում է նրանց մասին։

Հետաքրքրական է այն, որ երկրորդ գրախոսությունը գրված էր ավելի խիստ։ Գրախոս Ն. Հովսեփյանը մատենագիտությունը օգտագործել է գրադարանային աշխատանքի ընթացքում քարտարաններ կազմելու համար և հայտնաբերած սխալներից վրդովվել։ Նա նույնիսկ մեղադրում է առաջին գրախոսին մատենագիտությանը ընդհանուր առմամբ դրական գնահատական տալու համար։

Անշուշտ, ամեն մի գրախոս որքան խստապահանջ լինի, այնքան լավ, և որքան շատ բացահայտվեն գրախոսվող մի աշխատության թերությունները, այնքան ավելի նպատակասլաց կլինի գրախոսությունը։ Սակայն թերությունների նկատմամբ խստությունը օգտակար է լինում, երբ գրախոսվող աշխատության ընդհանուր գնահատականը ճիշտ է տրվում։

Տվյալ դեպքում, թվում է, որ Ն. Հովսեփյանը մատենագիտության թերությունների, թեկուզ և, այո՛, շատ լուրջ թերությունների մասին չափից ավելի խիստ է խոսում, շեշտը դնում աշխատության միայն թերությունների վրա։ Թեև Ն. Հովսեփյանի բոլոր դիտողությունները ճիշտ են, և զգացվում է, որ գրողը գործից հասկացող անձ է, բայց զգացվում է նաև, որ նա մատենագիտական դժվարին աշխատանքը գնահատելու գործում պահանջվածի չափ զգույշ չէ։ Պետք է ասել, որ մատենագիտությունը ուրիշ թերություններ էլ ունի (օրինակ, դուրս են մնացել մի քանի կարևոր ժողովածուներ), բայց ակնհայտ է նաև, որ Ռ. Ռուբինյանի կազմած այս մատենա-

---

«Կուլտուր-լուս. աշխատանք», 1965, № 4, էջ 47—48 և Ն. Հովսեփյան Պատ. հանձնում է արտակարգ բարեխղճություն։— «Գրական թերթ», 1965, № 39։

գիտությունը շահեկան, օգտակար աշխատություն է, որ բացահայտում է շուրջ 200 գրական-գեղարվեստական ժողովածուների բովանդակությունը։

Նույն 1964-ին լույս տեսավ Հ. Դավթյանի «Աշխարհաբար գիրքը հայ տպագրության սկզբից մինչև 1850 թվականը» մատենագիտությունը։

Հեղինակը շնորհակալ գործ է արել՝ նկարագրելով մինչև 1850 թվականը լույս տեսած շուրջ 370 անուն աշխարհաբար գիրք ու պարբերական։

Աշխարհաբար գրքի պատմության վաղ շրջանը լուսաբանող այս մատենագիտությունը, անկասկած, հետաքրքրական բավական նյութ կտա լեզվաբաններին, գրքագետներին, գրականագետներին, հայ գիտության պատմությամբ զբաղվող բոլոր մասնագետներին, քանի որ աշխարհաբար հնատիպ գրքերը ամենատարբեր բովանդակությունն ունեն։

Մատենագիտությունը ընդհանուր առմամբ վատ չէ կազմված, թեև կան մատենագիտական և այլ բնույթի ոչ քիչ թերություններ ու սխալներ։

Իբրև թերություն նախ պետք է նշել այն, որ մատենագիտության մեջ չկա համարակալում, չի կազմված որևէ կարգի օժանդակ ցանկ և այլն։ Բացի այդ, անտարակույս է, որ մինչև 1850 թ. տպագրված աշխարհաբար գրքերը շատ ավելի են, քան բերվել են մատենագիտության մեջ։

Լուրջ առարկություններ է վերցնում գրքույկի առաջաբանը, ուր հեղինակը փորձում է խոսել աշխարհաբարի և աշխարհաբար գրքի պատմությունից։ Այստեղ ոչ ճիշտ մեկնություն է տրվում «աշխարհաբար» անվանմանը և նրա արդի լեզվաբանական ըմբռնմանը։ Մոռացության է տրվում, որ «աշխարհաբար» բառով ներկայումս կոչվում է ժամանակակից հայոց գրական լեզուն իր երկու ճյուղերով։ Առաջաբանում փորձ է արվում, օրինակ, աշխարհաբար համարել Հակոբ Մեղապարտի Տաղարան-ը այն պատճառով, որ այդ գրքում կան աշխարհիկ տաղեր, գրված այն ժամանակ գրաբարից ավելի հասկանալի լեզվով, որ միջին հայերենն է։ Հեղինակը մոռա-

նում է, որ ամեն մի գրական լեզու էլ նախապես հասկանալի է լինում ժողովրդին և միայն ժամանակի ընթացքում սրբագործվելով՝ կարվում է միշտ փոփոխվող խոսակցական լեզվից և վերջինիս մի նոր վիճակի համեմատ դառնում գրաբար, ժողովրդին անհասկանալի։ Եթե աշխարհաբար անունն օգտագործենք հայոց լեզվի բոլոր այն հուշարձանների համար, որոնք ժամանակին հասկանալի են եղել ժողովրդին, ապա անսահման շփոթություն կառաջանա, քանի որ 5-րդ դարում հայերեն գրված ու թարգմանված գործերի լեզուն էլ այն ժամանակ հասկանալի էր ժողովրդին և միայն հետագայում (9-րդ դարից սկսած) դարձավ անհասկանալի, այսինքն գրաբար։ Ի՞նչ կստացվի, եթե «Աստվածաշնչի» մեսրոպյան թարգմանությունը, որ ժամանակին ժողովրդին հասկանալի լեզվով էր արված, այսօր կոչենք աշխարհաբար։

Ոչ հին, ոչ էլ միջին հայերենները մենք այսօր չենք կոչում աշխարհաբար, այլ՝ առաջինը գրաբար, երկրորդը՝ միջին հայերեն, իսկ աշխարհաբար անվանմամբ կոչում ենք սոսկ արդի հայերենը, իր հին ու նոր տարբերակներով։ Եվ սխալ է արել հեղինակը, երբ գրաբար ու միջին հայերեն բնագրերից բաղկացած Տաղարանը (Հակոբ Մեղապարտի) նշել է իր ցուցակում իբրև առաջին աշխարհաբար գիրք։

Ի դեպ, ճիշտ չէ նաև այն, որ առաջաբանում «Արհեստ համարողութեան»-ը բնորոշված է իբրև «Առաջին արևելահայերեն աշխարհաբար գիրք»։ Այդ գիրքը արևելահայերեն չէ (բավական է ասել, որ բայի ներկա ձևերը արևելահայերենի ում-ով չեն կազմվում, այլ արևմտահայերենի կ-ով), թեև այն արևմտահայերեն էլ չէ։ Բանն այն է, որ աշխարհաբարի զարգացման այն վաղ շրջանում (17-րդ դարի երկրորդ կես) լեզվի արևելահայ ու արևմտահայ բաժանումը, ըստ երևույթին, դեռ չէր ձևավորվել, և «Արհեստ...»-ը թարգմանված է մի լեզվով, որ միաժամանակ և՛ արևելահայ, և՛ արևմտահայ աշխարհաբար է։

Տարակույս է առաջացնում նաև այն, որ «Արհեստ համարողութեան»—ի, ինչպես նաև աշխարհաբար տպագրու-

թյան սկզբնավորման հարցերի մասին գրքույկում այնպես է խոսվում, որ կարծես նախքան այդ ոչ ոք չի խոսել այդ մասին։ Արդյո՞ք հեղինակը, ինչպես և խմբագիրը (Ա. Բաբայան) չեն իմացել, որ այդ մասին հանգամանորեն գրված է արդեն[1]։

1964 թ. գրադարանը հրատարակեց Ք. Կորկոտյանի «Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում» ուսումնասիրությունը, շատ արժեքավոր մատենագիտությամբ, որի մասին, սակայն, կխոսվի հայ գրքի պատմությանը նվիրված բաժնում։

Խոսելով Հանրապետական գրադարանի մատենագիտական-հրատարակչական աշխատանքի մասին՝ չի կարելի չհիշատակել հրատարակության պատրաստ մի շատ հետաքրքրական մատենագիտություն, որի կազմման վրա աշխատել են Յողիկ Խաչատրյանը, Աստղիկ Նազիկյանը, Անահիտ Յիցիկյանը։ Այս մատենագիտությունը կոչվում է «Հայ գրողները օտար լեզուներով»։ Այստեղ ներկայացված են հայ գրողների երկերի թարգմանությունները օտար լեզուներով (չհաշված Խորհրդային Միության ժողովուրդների լեզուներով եղած թարգմանությունները)։ Այս ցանկը փաստորեն մի ընդարձակ մատենագիտության երկրորդ հատորն է և ընդգրկում է հայ գրականությունը 1800 թվականից մինչև մեր օրերը (առաջին հատորը պետք է ներկայացնի հայ բանահյուսությունը և հին ու միջնադարյան գրականությունը օտար լեզուներով)։

Հրատարակության երրորդ հատորի մեջ ընդգրկվելու են հայազգի ոչ հայ գրողների (այսինքն՝ հայերեն չգրող հայազգի գրողների) ստեղծագործությունները։

***

Ամփոփելով Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի մոտ 30 տարվա մատենագիտական-հրատարակչական գործունեությունը՝ այժմ արդեն կարելի է որոշ գնահատականներ տալ։

1 Տե՛ս, օրինակ, Ա. Ղազիկյան Հայկական նոր մատենագիտություն, այուռնակ 248, նաև՝ «Բանվոր», 1963, № 200, «Երևան», 1963, № 198։

Նախ պետք է ասել, որ ամենից ավելի արժեքավոր են գրադարանի հրատարակած գիտաօժանդակ բնույթի ցանկերը, նվիրված հայ գրողներին, հեղափոխական գործիչներին, նշանավոր մարդկանց, ինչպես և մյուս ծավալուն մատենագիտական աշխատությունները։

Մատենագիտական այդ ցանկերից և աշխատություններից շատերը գրադարանների մատենագետներ, ինչպես և գիտնականները, ուսումնասիրողները, ընթերցողները մեծապես օգտվում են՝ անհրաժեշտ տեղեկություններ ստանալու համար։ Ուստի այդ մատենագիտական ցանկերի կարևորությունը ակնառու է։

Ինչ վերաբերում է հանձնարարական ցանկերին, ապա մենք բազմիցս հետաքրքրվել ենք ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական ու շրջանային գրադարաններում՝ օգտագործվո՞ւմ են արդյոք այդ ցանկերը ընթերցողների կողմից կամ «ընթերցողների լայն շրջանների կողմից», ինչպես որ սովորաբար ասվում է հանձնարարական ցանկերի դերի մասին։

Մեզ թվում է, որ հանրապետական գրադարանը պետք է ինչ-որ չափով վերանայի հանձնարարական մատենագիտության հրատարակման գծով իր կատարած աշխատանքը, նոր ժամանակների տեսանկյունից գնահատի այն։

Պետք է կարողանալ գտնել աշխատանքային, հասարակական և ուսումնական կյանքում այնպիսի օղակներ, ուր իրոք պետք են հանձնարարական (այսինքն՝ տվյալ թեմայի շուրջ մատենագետի կողմից իբրև լավագույն ընտրված) գրականության ցանկեր։

Բացի այդ, հանձնարարական ցանկերը պետք է հրատարակել շատ ավելի հրապուրիչ, գեղեցիկ նկարազարդմամբ, մացնել այնտեղ հնարավորին չափ լավագույնից լավագույն նյութերը, այն էլ ոչ շատ։ Մի խոսքով, պետք է լուրջ վերաբերվել այս հարցին, և, մանավանդ, հանձնարարական ցանկ հրատարակել այն թեմայի գծով և այն դեպքում, երբ կարիքն ակնառու է։ Պետք է հրաժարվել այն սովորությունից, երբ

հանձնարարական ցանկերը հրատարակվում են միայն «սլաք կատարելու» համար, որպեսզի գրվի, թե այսքան հանձնարարական ցանկեր են հրատարակվել։

Մեր համոզմամբ մերժելի է այն տեսակետը, ըստ որի հանրապետական գրադարանը պետք է հրաժարվի գիտաօժանդակ մատենագիտության կազմման և հրատարակման գործից և ամբողջովին նվիրվի հանձնարարական մատենագիտությանը։ Որքա՜ն աննշան կլիներ այսօր հանրապետական գրադարանի մատենագիտական արտադրանքը, եթե գրադարանը հրատարակած չլիներ Ալ. Մյասնիկյանի և Ս. Շահումյանի, Հ. Թումանյանի և Ե. Չարենցի, Շիրվանզադեի և Դ. Դեմիրճյանի, Կոմիտասի և Եկմալյանի մատենագիտությունները, ինչպես և գիտաօժանդակ մատենագիտության այն բոլոր արժեքավոր աշխատությունները, որ հրապարակ է հանել հանրապետական գրադարանը վերջին 25 տարվա ընթացքում։

Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանը ոչ թե պետք է հրաժարվի գիտաօժանդակ մատենագիտության ստեղծումից կամ նվազեցնի այդ ուղղությամբ կատարվող աշխատանքը, այլ ավելի ծավալի այն՝ առավել լուրջ գիտական հիմքի վրա դնելով։

Հրատարակչական բեղմնավոր աշխատանք է տանում հանրապետական գրադարանը վերջին տարիներին։ Պետք է սակայն նպատակասլաց օգտագործել հայ ազգային մատենագիտության կարևոր կենտրոններից մեկի՝ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի հրատարակչական հնարավորությունները։

Դեռևս հրապարակում չկա հայ խոշոր գրողներից, արվեստագետներից, գիտնականներից, լրագրողներից ու հասարակական գործիչներից շատերի անհատական մատենագիտու-

---

1 Հայաստանի գիտությունների ակադեմիան պատրաստվում է լույս ընծայելու Ա. Սալմասյանի կազմած հայագիտական մատենագիտությունը (2-րդ հրատարակությամբ, առաջինը եղել է 1946-ին)։ Հանրապետական գրադարանի հիշյալ հայագիտական-երկրագիտական քարտարանը տարբեր է

թյունը, պետք է հրատարակման պատրաստել նաև Հայագիտական-երկրագիտական այն քարտարանը[1], որ կազմվում է գրադարանի տեղեկատու-մատենագիտական բաժնում։ Դուցե հնարավոր լիներ հրատարակել հայ պարբերականներից մի քանիսի հոդվածների քարտարանները։ Մի խոսքով, գիտաօժանդակ մատենագիտության գծով անելիք շատ կա։

***

Հանրապետական գրադարանում աշխատանք է տարվում նաև մատենագիտության տեսության ու պատմության ուղղությամբ։

Առհասարակ պետք է նշել, որ հանրապետությունում մատենագիտության տեսության ուղղությամբ տարվող աշխատանքը թույլ է, և դա բացասաբար է անդրադարձել մատենագիտական մի շարք ցանկերի որակի վրա։ Հայ մատենագիտության երկարամյա փորձը՝ նյութերի նկարագրության տարբեր եղանակները, մատենագիտական ցանկերի տարբեր կառուցվածքները և այլ հանգամանքներ երկար ժամանակ տեսական վերլուծության չեն ենթարկվում, չեն գնահատվում։ Ավելին, մինչև վերջերս, ընդհանրապես, որևէ փորձ չէր արվում ամփոփելու, գնահատելու անցյալում, ինչպես և խորհրդային ժամանակաշրջանում կատարված աշխատանքը հայ մատենագիտության բնագավառում։

Մատենագիտության տեսության ու պատմության հարցերը առաջ են քաշվել լրագրային առանձին հոդվածներում և մատենագիտական ցանկերի առաջաբաններում։ Կարելի է հիշատակել միայն Հրաչյա Կոստիկյանի «Տեղեկատու բիբ-

---

[1] Այս մատենագիտությունից, ուր ընդգրկված է միայն օտար լեզուներով հայագիտական գրականությունը (մինչդեռ քարտարանում լեզվական սահման չկա)։ Ի դեպ, Սալմասյանի մատենագիտությունը շատ տարբեր է նաև հանրապետական գրադարանի կազմած «Հայ գրողները օտար լեզուներով» մատենագիտությունից (որի մասին խոսվեց), ուր հիմնականում ընդգրկված է ոչ թե հայագիտական, այլ հայ գեղարվեստական գրականությունը, թարգմանված օտար լեզուներով։

լիոգրաֆիական աշխատանքը գրադարանում» ձեռնարկը, որ առանձին գրքով հրատարակվեց 1951 թվականին (94 էջ) կուլտուր-լուսավորական հիմնարկների կոմիտեի կողմից։ Առանձին գրքույկով հանրապետական գրադարանը լույս ընծայեց նաև Բ. Ասատվածատրյանի և Հ. Սիլվանյանի «Տեղեկատու-բիբլիոգրաֆիական աշխատանքի կազմակերպումը գյուղական և շրջանային գրադարաններում» մեթոդական նամակը։

Շատ ավելի հետաքրքրական էր Հ. Կոստիկյանի ակնարկը, նվիրված խորհրդային շրջանի հայ մատենագիտությանը, որը զետեղված է Վ. Դենիսովի՝ Կոստիկյանի կողմից թարգմանված «Ընդհանուր բիբլիոգրաֆիա» գրքում (1957, էջ 268—298)։ Ակնարկի վերնագիրն է «Հայկական ՍՍՌ պետական բիբլիոգրաֆիան»։

Այնուհետև, այս ակնարկը ընդլայնվեց և տեղ գտավ Հ. Կոստիկյանի «Մատենագիտության հիմունքները» ուսումնական ձեռնարկում[1]։

Այս գիրքը մատենագիտության տեսական և պատմական հարցերին նվիրված հայերեն հեղինակված առաջին ընդարձակ աշխատությունն է։

Գիրքը բաղկացած է տասնհինգ գլուխներից, սակայն դժվար չէ նկատել, որ այն, ըստ էության, բաժանվում է երկու հիմնական մասի. առաջինը (մինչև յոթերորդ գլուխը) նվիրված է խորհրդային մատենագիտության ընդհանուր հարցերին, իսկ երկրորդում հեղինակը խոսում է խորհրդային իշխանության տարիներին Հայաստանում կատարված մատենագիտական աշխատանքի մասին։

Գրքի սկզբում տրված է մատենագիտություն առարկայի բնութագիրը, ապա առանձին բաժնում մանրամասն շարա-

---

1 Հ. Կոստիկյան Մատենագիտության հիմունքները։ Ուսումնական-մեթոդական ձեռնարկ գրադարանային ֆակուլտետի ուսանողների և գրադարանային աշխատողների համար։ Եր., Ալ. Մյասնիկյանի անվ. գրադ., 1963, 277 էջ։

դրված են Լենինի մտքերը մատենագիտական աշխատանքի մասին։ Սրան հաջորդում է «Սովետական Միության կոմունիստական պարտիան մատենագիտության մասին» գլուխը։

Երկրորդ ընդարձակ գլխում խոսվում է խորհրդային մատենագիտության մեթոդների և տեսակների մասին։ Այստեղ խոսվում է նաև գրադարաններում մատենագիտական գործի կազմակերպման և մատենագիտական ցանկեր կազմելու մեթոդների վերաբերյալ։

Գրքում քննված վերոհիշյալ հարցերը, հասկանալի է, նոր չէ, որ մշակված են։ Ռուսերեն լեզվով բավական ընդարձակ գրականություն կա, ուր մանրամասն քննված ու վերլուծված են այդ հարցերը։ Հ. Կոստիկյանը իր գրքի առաջին մասում օգտագործել է արդեն ձեռք բերվածը՝ աննկուլ մի շարք լրացումներ։ Գնահատելի է այն, որ գրքի այս մասում նյութերի ավելորդ ծանրաբեռնվածություն չկա, ամեն հարցի մասին հեղինակը ձգտում է ասել ամենահիմնականը, որ և անհրաժեշտ է այս կարգի մի ուսումնական ձեռնարկում։

Սակայն չի կարելի չնկատել նաև, որ իր այդ ձգտման մեջ հեղինակը երբեմն ծայրահեղության մեջ է ընկնում, որի հետևանքով մի շարք, հաճախ շատ կարևոր, հարցեր ներկայացված են չափից ավելի հակիրճ։ Օրինակ, նման ուսումնական ձեռնարկում լավ կլիներ, որ մանրամասն քննվեին այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ հանձնարարական մատենագիտության նպատակն ու խնդիրները, տարբեր հանձնարարական ցանկերի կազմման մեթոդները և այլն։ Մինչդեռ ընդամենը չորս էջում է խոսվում այնպիսի հարցերի մասին, ինչպիսիք են՝ հանձնարարական ցանկի թեմայի ընտրությունը, ցանկերի ընթերցողական հատկացվածությունը և նյութերի դասավորությունը նրանց մեջ։

Ձեռնարկի առաջին մասում հաջողված գլուխներից է «Մատենագիտական աշխատանքի կազմակերպումը գրադարաններում», ուր հեղինակը լուսաբանել է գրադարաններում (հիմնականում, իհարկե, մասսայական գրադարաններում) կատարվող և կատարվելիք մատենագիտական աշխատանքը։

Գրքի երկրորդ մասը, որ նվիրված է խորհրդային Հայաստանում կատարված և կատարվող մատենագիտական աշխատանքին, նախ ուշագրավ է իբրև այդ ուղղությամբ արված առաջին փորձ։

Այստեղ մատենագիտական արտադրանքը քննվում և գնահատվում է ըստ մատենագիտության տեսակների (հաշվառման-գրանցային, հանձնարարական և այլն)։ Այս մոտեցումը հնարավորություն է տվել հեղինակին ցույց տալու, թե ինչ է արդեն արված մատենագիտության յուրաքանչյուր տեսակի գծով և դեռ ինչ անելիքներ կան։

Առհասարակ նկատելի է, որ Կոստիկյանը չի սահմանափակվում մատենագիտության բնագավառում արդեն կատարվածը վերլուծելով և գնահատելով, այլ խոսում է հեռանկարների մասին։ Օրինակ, նկարագրելով և գնահատելով հայ պարբերական մամուլի մատենագիտության բնագավառում արդեն կատարված աշխատանքը՝ Կոստիկյանը խոսում է այն գլխավոր խնդիրների մասին, որոնք պետք է լուծել այդ մատենագիտության բնագավառում եղած լուրջ բացը վերացնելու համար։

Հայաստանում այժմ շատ կարևոր է և անհետաձգելի այնպիսի մի խնդրի լուծում, ինչպիսին է տարբեր հիմնարկներում կատարվող մատենագիտական աշխատանքի համաձայնեցումը (կոորդինացիան)։ Այստեղ կան շատ լուրջ թերություններ, որոնց վերացման մասին նույնպես խոսվում է Կոստիկյանի գրքում։

Իր տեսակի մեջ առաջինը լինելով՝ այս ձեռնարկը, հասկանալի է, որ ունի և մի շարք թերություններ։ Նշենք մի քանիսը։ Գրքի առաջին մասում հեղինակն իր տեսական դրույթները հաճախ է հիմնում իրական փաստերի վրա, իբրև օրինակներ բերվում են ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում հրատարակված մատենագիտական ցանկերը, որ լավ է։ Բայց որոշ դեպքերում այսպիսի որոշակի օրինակները պակասում են կամ բացակայում (օրինակ, նման փաստերով գրքում չի ներկայացված հանձնարարական մատենա-

գիտության թեմատիկ և կառուցվածքային մեծ բազմազանությունը)։ Լավ կլիներ նաև, եթե վերլուծվեին հանձնարարական ցանկերի օգտագործման, նրանց թեմանների ճիշտ ընտրության, նյութերի ընդգրկման ճիշտ քանակը որոշելու տեսական և շատ պետքական հարցերը։

Նկատվում է նաև, որ այն դեպքերում, երբ Հ. Կոստիկյանը ինքնուրույն է քննում հարցերը իր ընտրած օրինակների հիման վրա, շարադրանքն ավելի հետաքրքրական և ուշագրավ է դառնում։ Ցավոք, գրքի առաջին մասում տեղ-տեղ հեղինակը հարկ եղածից ավելի է նկատի ունենում կամ ասում այլ մատենագետների, մասնավորապես Դենիսովի կողմից արդեն ասվածը։

Երկրորդ մասում որոշ դեպքերում համոզիչ չեն դասակարգված մատենագիտական ցանկերը ըստ տեսակների։ Օրինակ, Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի հրատարակած մի շարք գիտաօժանդակ մատենագիտություններ (Աբովյանին, Դեմիրճյանին, Շիրվանզադեին, Չարենցին, Բակունցին, Կոմիտասին, Եկմալյանին և այլոց նվիրված) դրված են հանձնարարական մատենագիտության մեջ։

Հեղինակը առանձին մատենագիտական ցանկերի գնահատականներ է տալիս, սակայն հաճախ այդ գնահատականները հավասարապես բարձր են, չեն նշվում մատենագիտությունների բնորոշ արժանիքներն ու թերությունները, իսկ որոշ կարևոր ցանկեր մնում են առանց գնահատականի։

Վերջում հարկ է նշել Կոստիկյանի գրքի մի ուշագրավ արժանիքը։ Դա այն է, որ այստեղ առաջին անգամ խորհրդային մատենագիտության մեջ բարձր գնահատական է տրվում Ա. Ղազիկյանի մատենագիտական հայացքներին, տեսակետներին։ Ուրախալի է, որ Կոստիկյանը մի կողմ թողնելով այդ հարցում եղած նվաստացուցիչ, կանխամտածված կարիծքները՝ ճիշտ է գնահատում անցյալի հայ մատենագիտության խոշորագույն դեմքի տեսակետները մատենագիտական աշխատանքի վերաբերյալ։

Հ. Կոստիկյանը իր այս գիրքը ավելի ընդարձակելով և

փաստաթղթից դարձնելով՝ ներկայացրեց իբրև թեկնածուական դիսերտացիա և պաշտպանեց։ Ուշագրավ է նշել, որ Հայաստանում սա առաջին դեպքն էր, երբ իբրև դիսերտացիոն աշխատանք ներկայացվում և պաշտպանվում է մատենագիտությանը վերաբերող մի աշխատություն։ Մինչ այդ մատենագետները գիտական աստիճան ստանում էին ո՛չ մատենագիտական աշխատություններ ներկայացնելով պաշտպանության։

1964 թվականին լույս տեսավ (Կուլտ. մինիստրութ. հրատ.) Հ. Կոստիկյանի կողմից ռուսերենից փոխադրված և կազմված «Հասարակական-քաղաքական մատենագիտություն» ուսումնական ձեռնարկը (366 էջ)։

***

Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի մատենագիտական ողջ աշխատանքը վերը նկարագրվածով չի սահմանափակվում։ Նախ՝ բացի տեղեկատու-մատենագիտական բաժնից ընթերցողներին մատենագիտական տարբեր բնույթի տեղեկանքներ տալիս են նաև մյուս գրեթե բոլոր բաժինները։ Այնուհետև, պետք է հիշել գրադարանի մասսայական բաժնի կազմակերպած ցուցահանդեսները, ինչպես և կոմպլեկտավորման, տեխնիկական հատուկ տեսակի գրականության և օտար լեզուներով գրականության բաժինների «Նոր գրքեր» ցուցափեղկերը։

Ցուցահանդեսներ մեծ մասամբ լինում են հոբելյանական՝ այս կամ այն հիշարժան տարիքի (նշանավոր անձի ծննդյան կամ մահվան, որևէ պատմական իրադարձության տարեդարձի առիթներով և այլն)։ Ցուցահանդեսների մատենագիտական բնույթն այն է, որ նրանցում ցուցադրվում են և ընթերցողներին ներկայացվում թեմային վերաբերող գրքեր ու հոդվածներ պարբերական մամուլից։

Գրադարանում կազմակերպվում են (մասսայական աշ-

խատանքի բաժնի կողմից) նաև նոր գրքերի մատենագիտական բանավոր տեսությունները (ծանոթություն է տրվում գրքերի բովանդակության և գիտական կամ գեղարվեստական արժեքի մասին), որոնցում սակայն դեռևս ընթերցողների մեծ քանակ չի ընդգրկվում: Գրքերի այդ տեսություններին հիմնականում մասնակցում են գրադարանի աշխատողները:

Հանրապետական գրադարանի կատարած մատենագիտական աշխատանքի մի տեսակն էլ այն է, որ տեղեկատու-մատենագիտական բաժնի, ինչպես և այլ բաժինների (գլխավորապես՝ մեթոդական) աշխատողները լինում են շրջանային և գյուղական գրադարաններում՝ օգնում գրադարանավարներին մատենագիտական աշխատանք կազմակերպելու գործում: Շրջանային և գյուղական գրադարանների մատենագիտական աշխատանքը նախ քարտային գրացուցակների կազմումն է, ապա նաև՝ թեմատիկ քարտարանների, գրքերի ցուցահանդեսների և ցուցափեղկերի, գրքի տեսությունների կազմակերպումը:

Ե. Սարգսյանը 1960 թվականին գրում էր. «Պետք է ասել, որ բիբլիոգրաֆիական աշխատանքը տարիներ շարունակ համարյա տեղ չի գտել մասսայական գրադարանների աշխատանքի պրակտիկայում»[1] (խոսքը քարտարանների կազմման և տեղեկատու աշխատանքին է վերաբերում): Հեղինակը գտնում է, որ այդ վիճակը (որը, անշուշտ, չափազանցված է) փոխելու պայմաններից մեկն էլ տեղեկատու-մատենագիտական բաժնի ավելի ներգործուն օգնությունն է շրջանային և գյուղական գրադարաններին:

Ամեն դեպքում անառարկելի է մի բան, որ Հանրապետական գրադարանը ավելի լուրջ ջանքեր կարող է գործադրել հանրապետության տարբեր (այդ թվում նաև գիտական) գրադարաններում մատենագիտական աշխատանքը ուժեղացնելու և բարելավելու, այն ավելի պարզ, մատչելի և մա-

---

1 «Գրադարանավար», 1960, № 3, էջ 20:

նավանդ գործնական դարձնելու համար, քանի որ, վերջի-վերջո, գրադարանային աշխատանքի մասնագիտական կողմը նրա մատենագիտական կողմն է։ Այս դեպքում մատենագիտության տակ պետք է հասկանալ գրքերի մասին կազմակերպվող տեղեկատվության ամեն ձև՝ սկսած գրադարանային քարտային գրացուցակներից և մատենագիտական քարտարաններից մինչև գրքային ցուցահանդեսներ։

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Դեռևս այն տարիներին, երբ Հայաստանում գործում էր ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալը (1936 թվականից), նրա տարբեր ինստիտուտներում սկսել էր տարվել մատենագիտական աշխատանք, որը շարունակվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադրումից (1943 թ.) հետո։

Սակայն այստեղ պետք է տարբերել մատենագիտական աշխատանքի երկու տեսակ։ Գիտությունների ակադեմիան, ինչպես և ամեն մի գիտական հիմնարկ գիտական աշխատանքի իր ծրագիրն ունի։ Յուրաքանչյուր գիտնական աշխատում է իր թեմայի վրա, ըստ որում, այդ աշխատանքն սկսում է նյութերի հավաքմամբ, որ շատ բանով մատենագիտական աշխատանք է։ Այդ աշխատանքի ընթացքում գիտնականի ձեռքի տակ հավաքվում է օգտագործված (ինչպես և չօգտագործված) գրականության հաճախ շատ ընդարձակ ցուցակ տվյալ թեմայի վերաբերյալ։ Աշխատությունը հրատարակելիս հեղինակը հաճախ այդ գրականության ցանկը (ամբողջությամբ կամ մասամբ) կցում է իր աշխատությանը։

Դա, անշուշտ, մատենագիտություն է, սակայն այդպիսի մատենագիտություն կազմում է ամեն մի ուսումնասիրող, գիտնական։ Եվ գիտությունների ակադեմիայի ամեն մի գիտական աշխատակից նման մատենագիտական, աշխատանքով, անշուշտ, զբաղվում է։

Այսպիսի մատենագիտությունը առաջանում կամ ստեղծվում է իբրև հետևանք գիտական աշխատանքի։ Ուստի այն կարելի է կոչել երկրորդային մատենագիտություն, քանի որ այս դեպքում առաջնայինը գիտական աշխատությունն է։ Անշուշտ, այս կարգի մատենագիտությունն էլ տեղեկություն-

ներ տալիս է ընթերցողներին համապատասխան գրականության վերաբերյալ, սակայն երկրորդային մատենագիտական ցանկերը տեղեկատվության նպատակով չէ, որ կազմվում են:

Գիտությունների ակադեմիայում ստեղծվում է նաև առաջնային մատենագիտություն, այսինքն՝ մատենագիտություն սովորական իմաստով, որի առաջնահերթ նպատակը տարբեր բնույթի գրական երկերի մասին տեղեկատվությունն է:

Այս գործով հիմնականում զբաղվում է ակադեմիայի կենտրոնական գրադարանը, թեև որոշ ինստիտուտներ՝ գլխավորապես պատմության և գրականության ինստիտուտները նույնպես զբաղվում են մատենագիտության (առաջնային) կազմմամբ:

Ավելացնենք նաև, որ երկրորդային մատենագիտությունը որպես օրենք լինում է ներգրքային, այն աշխատության կից, որի ստեղծման ժամանակ, իբրև հիմնական աշխատանքի հետևանք գոյացել է: Ինչ վերաբերում է առաջնային մատենագիտությանը, ապա այն հրատարակվում է և՛ առանձին գրքերով, և՛ գրքերին կից, և՛ պարբերականների մեջ:

Ակադեմիայի կողմից լույս ընծայված երկրորդային մատենագիտական լավագույն ցանկերի նմուշներ են մի շարք գիտական աշխատակիցների, այդ թվում, ակադեմիկոսների երկերին կից ցանկերը: Հիշենք, մի քանի օրինակ. պատմության և պատմական օժանդակ առարկաների գծով՝ Կ. Դաֆնարյանի «Հայկական գրի սկզբնատեսակները» գրքում (1939, էջ 89—93): Հ. Մանանդյանի աշխատություններում՝ «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հտ. 2, մաս 2 (1957, էջ 411—432) և հտ. 3, (1952, էջ 393—403), «Տիգրան Բ և Հռոմը» (1940, էջ 217—230) և այլն: Ընդարձակ է Ա. Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» ուսումնասիրության 2-րդ գրքի վերջում եղած մատենագիտությունը (1959, էջ 645—666): Օգտագործված գրականության ցանկեր կան նաև Վ. Հակոբյանի «Մանր ժամանակագրությունների» երկու հատորներում

(Ձևագրացուցակներ են՝ 1951, էջ 402—404, 1956, էջ 590—593), Վ. Գրիգորյանի «Երևանի խանությունը XVIII դարի վերջում» գրքում (1958, էջ 208—211), և այլն։ Մատենագիտական բնույթի աշխատություն է Հ. Ստեփանյանի «Հայ քարտեզագրական հրատարակությունները 260 տարում» գիրքը (1957, 158 էջ)։

Գրական-գրականագիտական ցանկեր կան, օրինակ, Մ. Աբեղյանի կազմած «Գուսանական ժողովրդական տաղեր, հայրեններ և անուններ» գրքում (1940, էջ 27—31), նույն հեղինակի «Давид Сасунский» գրքույկի վերջում (1939, էջ 55—95), Ա. Ղանալանյանի «Առածանու» (1-ին հրատ.՝ («Հայկական առածանի») մեջ (մատենագիտության արժեք այստեղ ունի «Համառոտագրություններ աղբյուրների» ցանկը, 2-րդ հրատ., 1960, էջ 392—396), Ա. Սրապյանի աշխատասիրած «Հովհաննես Երզնկացի» գրքում (1958, էջ 285—308), Ն. Թումանյանի «Հովհաննես Թումանյանը և ռուս գրականությունը» գրքում (1956, էջ 133—138, ռուս գրողներից Թումանյանի կատարած թարգմանությունների ցանկն է)։ Ընդարձակ մատենագիտություն է կետեզված Գ. Հովհաննի «Ռուս-հայ գրական կապերը» աշխատության առաջին և երկրորդ հատորներում (1961, համապատասխանաբար էջ 481—506 և 439—478), Բ. Չուգասզյանի «Հայ-իրանական գրական առնչություններ» գրքում (1963, էջ 227—237) և այլուր։ Լեզվաբանական գրականության՝ Ա. Աբրահամյանի «Բայը ժամանակակից հայերենում» աշխատության մեջ (գիրք 1, 1962, էջ 723—727), Վ. Առաքելյանի «Ներածություն հայերենի շարահյուսության» աշխատության մեջ (1959, էջ 41—42), Ս. Աբրահամյանի «Ժամանակակից հայերենի դերանուններ» գրքում (1956, էջ 348—350) և այլն։ Արվեստաբանության գծով՝ Մ. Ղազարյանի «Վարդգես Սուրենյանց» գրքում (1960, էջ 79—96, հրատարակել է Հայպետհրատը), Ռ. Աբաջյանի «Հայկական խաղային նոտագրությունը» (1960, էջ 280—285), Դ. Դղնունու «Հայկական կինոարվեստը» (1960,

էջ 275—323) աշխատություններում, Ն. Տոկարսկու «Архитектура Армении» գրքի երկու հրատարակություններում (վերջինը՝ 1961, էջ 366—374) և այլն։ Ընդարձակ է Ռ. Զարյանի «Ադամյան։ Արվեստը» և «Ադամյան։ Կյանքը» ուսումնասիրությունների վերջում տրված մատենագիտությունը (համապատասխանաբար՝ 1960, էջ 381—405 և 1961, էջ 473—522)։ Փիլիսոփայության գծով՝ Վ. Չալոյանի գրքերում, ինչպես, օրինակ՝ «История армянской философии» (1959, էջ 362—367), Ս. Արևշատյանի աշխատասիրած հրատարակություններում, ինչպես, օրինակ, Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» գրքում (1960, էջ 166—167) և այլն։

Ներգրքային այս մատենագիտական ցանկերի մեջ կան նաև շատ արժեքավորները, որոնցում հաճախ նշված են լինում քիչ հայտնի կամ նույնիսկ միայն տվյալ հեղինակին հայտնի նյութեր։

Առհասարակ, պետք է ասել, որ գիտական աշխատողների, մանավանդ՝ հայագետների մեջ երբեմն լինում են մատենագիտական զարմանալիորեն մեծ պաշար ունեցողներ։ Չի կարելի, օրինակ, հայ մատենագիտության մասին գրել և չհիշել Աշոտ Հովհաննիսյանին, որի մատենագիտական հիշողությունը հաճախ անհավանական չափերի է հասնում[1]։

Բացի երկրորդային բնույթի մատենագիտական ցանկերից, ակադեմիայի տարբեր ինստիտուտներում կազմվում են

---

1 Այդ բանը զգացվում է ոչ միայն գիտնականի աշխատություններում, այլև նրա հետ այս կամ այն հարցի մասին խոսելիս և այլ առիթներով։ Օրինակ, տողերիս հեղինակը մի շարք անգամ ականատես է եղել, թե ինչպես մատենադարանի տպագիր բաժնում Ա. Հովհաննիսյանը կարողացել է որոշել քայքայված, շապիկը, տիտղոսաթերթը և շատ թերթեր պակաս գրքերի հեղինակը, վերնագիրը, կամ համենայն դեպս, ճիշտ ուղի է ցույց տվել, աղբյուր նշել դրանք գտնելու համար (և այդ այն բանից հետո, երբ գրադարանային փորձված աշխատողները, մի շարք անվանի գիտնականներ անզոր են եղել օգնել այդ գրքերի հեղինակները որոշելու գործում)։

կամ այդ ինստիտուտների կողմից հրատարակման հանձնվում նաև առաջնային մատենագիտական ցանկեր։ Օրինակ, կարելի է հիշել Մ. Աբեղյանի և Ս. Մալխասյանցի աշխատությունների մատենագիտության առաջին հրատարակությունները։ Այդ ցանկերը ներգրքային էին. առաջինը տպված է «Գրական-բանասիրական հետախուզումներ» գրքում (1946, էջ 427—448), երկրորդը (կազմող Ա. Ավագյան)՝ լեզվի ինստիտուտի «Աշխատությունների ժողովածու»-ի 3-րդ հատորում (1948)։ Ա. Բակունցի ստեղծագործությունների մատենագիտությունը նույնպես առաջին անգամ հրատարակեց ակադեմիան՝ գրականության ինստիտուտի կազմած «Ակսել Բակունցի ստեղծագործությունը» ժողովածուի մեջ (1959, էջ 271—294)։

Ակադեմիայի հրատարակությամբ են լույս տեսել նաև Ա. Բաբայանի կազմած մի քանի մատենագիտական ցանկերը, ինչպես, օրինակ, հայ հին գրականության մատենագիտությունը Մ. Աբեղյանի «Հայ հին գրականության պատմության» 1-ին հատորի ռուսերեն հրատարակության մեջ (Եր., 1948, էջ 509—524), ինչպես նաև «Армянские литературные связи (1920—1960). Материалы к библиографии» (Եր., 1960, 152 էջ) մատենագիտությունը առանձին գրքով (թեև անհասկանալի է մնում, թե ինչու հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով նյութեր պարունակող հայ գրական կապերին նվիրված այս ցանկը իբրև հայերեն մատենագիտություն չի հրատարակվել)։

Ակադեմիայի ցանցում կատարվող մատենագիտական աշխատանքի մեջ է մտնում նաև ակադեմիայի հրատարակչության (այժմ՝ «Գիտություն») լույս ընծայած գրքերի տարեկան ցուցակների (կան 1946, 1947, 1949 թվականների այդպիսի ցուցակներ) և հրատարակվելիք գրքերի թեմատիկ պլանների (սկսած 1949 թվականից մինչև այժմ) հրատարակումը։

ԳԱ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ[1] ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ներկայումս Հայաստանի գիտությունների ակադեմիայում կատարվող մատենագիտական աշխատանքի մի զգալի մասը կատարում է կենտրոնական գրադարանի մատենագիտական բաժինը: Տեղեկատու աշխատանքի հիմնական ծանրությունն ընկած է այս բաժնի վրա:

Բաժինն սկսել է գործել 1945 թվականից՝ մեկ աշխատողով: Այժմ ունի 12 աշխատող: Բաղկացած է երկու բաժանմունքից՝ գիտական մատենագիտության, և տեղեկատու-մատենագիտական: Բաժինը իր աշխատանքները տանում է երկու հիմնական ուղղությամբ. ա) մատենագիտական քարտարանների և ցանկերի ստեղծման և բ) գրավոր ու բանավոր մատենագիտական տեղեկատվության:

Ներկայումս բաժինն ունի հետևյալ քարտարանները.

1. Հայաստանում տպագրվող հայերեն և ռուսերեն հանդեսների հոդվածների սիստեմատիկ քարտարան (1945 թվականից):

2. Հայաստանի գիտահետազոտական հիմնարկների հրատարակությունների (գիրք, հոդվածներ, ավտոռեֆերատներ և այլն) այբբենական և սիստեմատիկ քարտարաններ[2]:

3. Կազմվածությունը Հայաստանում. 1920—1965 թթ.:

4. Հայաստանի բնական և կենդանական աշխարհը (ընդգրկում է 1920—1965 թթ. հրատ. նյութերը):

---

1 Կենտրոնական գրադարանի փոխարեն վերջերս գործածում են ֆունդամենտալ գրադարան անվանումը այն պատճառաբանությամբ, որ իր կենտրոնական նշանակում է ենթակա այլ գրադարաններ ունեցող, իսկ ֆունդամենտալ՝ դարձյալ կենտրոնական, բայց ենթակա գրադարաններ չունեցող: Այս պատճառաբանությունը հաշվի չառնելով՝ մենք գործածում ենք ընդունված անունը:

2 Ակադեմիայի հրատարակություններն այստեղ ներկայացված չեն, քանի որ նրանք ընդգրկվում են մատենագիտական տպագիր տարեգրքերում:

5. Հայագիտական գրականությունը ակադեմիայի հրատարակություններում։

6. Նշանավոր հայ գիտնականների, գործիչների և ստեղծագործողների քարտարան (ընդգրկված է միայն գրականություն նրանց մասին)։

7. Քիմիայի և կենսաբանության քարտարան. կազմվում է պարբերական հրատարակությունների հոդվածները ներկայացնող տպագիր քարտերից (ռուսերեն), որ ստացվում են համամիութենական գրապալատից։

Բաժնում կազմված են որոշ գիտնականների և գրողների անհատական մատենագիտական քարտարաններ, այդ թվում՝ Դ. Դեմիրճյանի, Ա. Խահակյանի, Մ. Նալբանդյանի, Հ. Բունիաթյանի։ Այս քարտարաններից առաջինը՝ բաժինը ծրագրում է հրատարակել, թեև անհասկանալի է մնում Դեմիրճյանի մատենագիտությունը երկրորդ անգամ հրատարակելու նպատակը (կա Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի հրատարակությունը), երբ շատ ուրիշ գրողների անհատական մատենագիտությունը դեռևս չկա։

1955 թվականից բաժինը հրատարակում է տպագիր մատենագիտական ցանկեր, որոնք երկու բնույթի են. ա) անհատական կենսամատենագիտություններ և բ) արձանագրական մատենագիտական ցանկեր։

Անհատական մատենագիտության գծով բաժինը իր ցանկերը լույս է ընծայում «Նյութեր հայ գիտնականների կենսագրության և բիբլիոգրաֆիայի համար» (ապա նաև՝ «Սովետական Հայաստանի ականավոր գիտնականները») մատենաշարով։

Այս մատենաշարը և կենսամատենագիտական ուղեցույցների բնույթը ընդօրինակված են միութենական գիտությունների ակադեմիայի համանման ռուսերեն հրատարակություններից։ Նույնիսկ գրքույկների, նրանց շապիկների, տիտղոսաթերթերի ձևավորումը, ցանկերի կառուցվածքը գալիս է հիշյալ հրատարակություններից։ Ըստ որում, այդ կարգի կենսամատենագիտական ուղեցույցներ հրատարակում են

նաև միութենական հանրապետությունների ակադեմիաները, Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիան և այլ գիտական հիմնարկներ։

Հայաստանի գիտությունների ակադեմիայի կենտրոնական գրադարանը կարևոր գործ է կատարում Հայաստանի նշանավոր գիտնականների աշխատությունների և նրանց մասին եղած գրականության կենսամատենագիտական ուղեցույցները հրատարակելով։

Ստորև բերում ենք արդեն լույս տեսած այդ կարգի կենսամատենագիտական ուղեցույցների ցուցակը.

1. **А. Лалаян** Леон Андреевич Оганесян. Ереван, 1955, 50 стр.

2. *Ե. Վլասյան և Հ. Մանասերյան Հրաչյա Հակոբի Աճառյան։ Ներածականը է. Աղայանի՝ «Գիտական գործունեության համառոտ ակնարկ»։ Խմբ.՝ է. Աղայան և Վ. Կարմենյան։ Եր., 1956, 106 էջ։*

3. **Е. Власян и С. Язычян** Виктор Амазаспович Амбарцумян. Вступ. статья Л. Мирзояна. Ред. Л. Мирзоян и В. Карменян. Ереван, 1954, 74 стр.

4. **Иосиф Абгарович Орбели.** Составители: Е. Власян, А. Манасерян, М. Бартикян. Вступ. статья Б. Аракеляна. Ереван, 1957, 76 стр.

5. *Ե. Վլասյան և Ս. Յազիչյան Վիկտոր Համազասպի Համբարձումյան։ Ներած. Լ. Միրզոյանի։ Պատ. խմբ.՝ Լ. Միրզոյան և Վ. Կարմենյան, Եր. 1958, 121 էջ։*

6. *Ե. Վլասյան և Ռ. Բաբաջանյան Գրիգոր Այվազի Զափանցյան։ Ներած.՝ Հ. Կոստանյանի։ Խմբ.՝ Վ. Կարմենյան։ Եր., 1959, 77 էջ։*

7. **Е. Власян и Р. Бабаджанян** Яков Амазаспович Манандян. Вступ. статья Г. Саркисяна. Ереван, 1956, 80 стр.

8. *Ռ. Բաբաջանյան Ստեփան Սարգսի Մալխասյանց։ Ներած. է. Աղայանի։ Խմբ.՝ Վ. Կարմենյան։ Եր., 1962, 79 էջ։*

9. Ռ. Բաբաջանյան *Մանուկ Խաչատուրի Աբեղյան։ Նե-*
րած. և խմբ. Ա. Ղանալանյանի։ Եր., 1963, 72 էջ։

10. Միխայել Գալուստի Թումանյան։ *Կազմել է բաժինը։*
Ներած. Ա. Աղաւյանի։ Եր., 1965, 51 էջ։

11. Հ. Կոստանյան *Նիկողայոս Յակովլևիչ Մառ։ Խմբ.՝*
Ա. Ղարիբյան։ Եր., 1965, 111 էջ։

12. Ռ. Բաբաջանյան *Արսեն Հարությունի Տերտերյան։*
Ներած. Հոդվածը և խմբ. Հ. Թամրազյանի։ Եր., 1966, 72 էջ։

Այս ուղեցույցների մեծ մասի կառուցվածքը նույնն է (աննշան շեղումներով)։ Յուրաքանչյուր գրքույկը բաղկացած է երկու հատվածից. 1) գիտնականի կյանքին և գործին նվիրված մասից և 2) մատենագիտությունից։ Այս վերջինն էլ երեք հիմնական բաժին է ունենում՝ ա) գիտնականի աշխատությունների ժամանակագրական ցանկ, բ) գիտնականի և նրա աշխատությունների մասին եղած գրականության ցանկ, գ) գիտնականի աշխատությունների այբբենական ցանկ (ուր



Հայաստանի ԳԱ կենտրոնական գրադարանի հրատարակած մատենագիտական ցանկերից

յուրաքանչյուր աշխատության դիմաց դրվում է հրապարակման տարեթիվը)։

Սակայն երբեմն այս ուղեցույցների մատենագիտական մասը ունենում է նաև այլ բաժիններ։ Ստորև որպես նմուշ բերում ենք Մ. Աբեղյանի կենսամատենագիտության լրիվ բովանդակությունը.

«Ակադեմիկոս Մ. Խ. Աբեղյանի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը։ Ա. Ղանալանյան Կյանքի և գիտական գործունեության համառոտ ակնարկ։— Աշխատությունների բիբլիոգրաֆիա։— Անտիպ աշխատություններ։— Գրականություն Մ. Խ. Աբեղյանի մասին։— Աշխատությունների այբբենական ցանկ (տարեթվերով)։— Հեղինակակիցների անվանացանկ։— Համառոտագրություններ»։

Բաժնի վերջերս լույս ընծայած կենսամատենագիտությունները այս կառուցվածքն ունեն, բացառություն է կազմում միայն Ն. Մառի կենսամատենագիտությունը, որի կառուցվածքը տարբեր է։

Այդ տարբերությունը բացատրվում է նրանով, որ ուղեցույցը թեև հրատարակվել է իբրև կենտրոնական գրադարանի մատենագիտական բաժնի աշխատություն, սակայն բաժնի աշխատակիցներից որևէ մեկը որևէ կերպ չի մասնակցել նրա կազմմանը։ Այս ուղեցույցի վրա փոխված է նաև մատենաշարի անունը, այն դարձել է՝ «Նյութեր հայագիտների գործունեության և բիբլիոգրաֆիայի համար»։ Այս փոփոխությունը արվել է հասկանալի նպատակով. Ն. Մառի կենսամատենագիտությունը նախորդ մատենաշարին («Սովետական Հայաստանի ականավոր գիտնականները») չէր համապատասխանում, ուստի պետք է եղել «համապատասխանեցնել»։ Ասենք միանգամից նաև այն, որ Ն. Մառի այս կենսամատենագիտությունը լրջորեն քննադատելի է մի շարք այլ տեսանկյուններից։ Ամենից առաջ մատենագիտական նկարագրության տարրական կանոնները ոտնահարված են, ինչպես և անտեսված են հայերենի ուղղագրության և մանավանդ կետադրության մի շարք կանոններ։ Մառի աշխատությունները

բաժանված են երեք խմբի՝ բանասիրական, հնագիտական, լեզվաբանական (կարծես լեզվաբանությունը բանասիրություն չէ), բայց այս բաժանման մեջ հետևողականություն չկա. օրինակ, պատմագիտական որոշ նյութեր դրված են բանասիրության բաժնում, այս բաժնում են նաև Մառի կազմած ձեռագրացուցակները, իսկ հնագիտության բաժնում կան մի շարք լեզվաբանական գործեր և այլն: Մատենագիտական ցանկը հիմնականում կազմվել է Մառի աշխատությունների նախկին մատենագիտությունների հիման վրա, որոնք տպվել են Մառի ընտիր երկերի (ռուսերեն) 1-ին և 5-րդ հատորներում (Մոսկվա—Լենինգրադ, 1933 և 1935 թթ.) և այլուր: Նյութերի մեծ մասը առնված է նախկին ցանկերից: Կազմողը գրեթե նորություն չի բերել: Ինչպես Մառի նախկին մատենագիտությունը (ընտիր երկերում), այնպես էլ այս մեկը ընդհատվում է 1935 թվականով: 1935 թվականից հետո հրապարակված Մառի հայագիտական գործերը բոլորովին դուրս են թողնված, օրինակ՝ չի հիշատակված Մառի անտիպ նամակների հրապարակումը («Բանբեր Հայաստանի արխիվների», 1964, № 1), վերջերս հրապարակված «Միջնադարյան Հայաստանի մատենադարանները» հոդվածը («Երևկոյան Երևան», 1965, № 5), Մառի ընտիր երկերի հայերեն հրատարակությունը (1949 թ.) և այլն:

Անցյալի մի շարք հրապարակումներ նույնպես դուրս են մնացել (օրինակ Վիեննայում 1892 թվականին տպագրված «Ամառային ուղևորությունից...»-ը):

Մատենագիտությունը չունի Մառի աշխատությունների այբբենական ցանկ (որպիսին լինում է և շատ կարևոր է այս բնույթի կենսամատենագիտությունների մեջ): Նյութերի նկարագրություններում պարբերականների անունները հատատապրված են, իսկ «Ձեռագրությունների ցուցակ»-ում չի նշված պարբերականի հրատարակման վայրն ու հրատարակիչը, որով և հրապարակման ճիշտ աղբյուրը մնում է չնշված:

Չկա Մառի մասին գրված աշխատությունների և հոդվածների ցանկը։ Մի խոսքով, պակասավոր և սխալաշատ մատենագիտություն է։

Զարմանալի է նաև, թե ինչու այս ցանկը, որ կազմել է ոչ մասնագետ, գոնե չի խմբագրվել մատենագետի կողմից։

Մատենագիտական կանոնների պահպանման տեսակետից քննադատության չի դիմանում նաև Լ. Հովհաննիսյանի կենսամատենագիտությունը, որի կազմմանը նույնպես բաժինը մասնակցություն չի ցուցաբերել։

Այնուհետև, անհասկանալի է մնում, թե ինչու է Մանանդյանի կենսամատենագիտությունը ռուսերեն հրատարակվել (այսինքն՝ շապիկը, գլխավոր տիտղոսաթերթը և Մանանդյանի կյանքին ու գործին նվիրված ներածականը միայն ռուսերեն են)։

Նույնիսկ Հ. Օրբելու մատենագիտությունը կարելի էր իբրև հայերեն գիրք հրատարակել, մի բան, որ չի արել գրադարանը։ Իսկ Լ. Հովհաննիսյանին նվիրված ուղեցույցի միջից (նաև մատենագիտության մասից) առհասարակ դուրս է վանված հայերենը։

Ակադեմիայի կենտրոնական գրադարանի հրատարակած այս կենսամատենագիտական ուղեցույցներից առավել հաջողներն են Հ. Աճառյանին, Գ. Ղափանցյանին, Վ. Համբարձումյանին (1958 թվականինը), Ս. Մալխասյանցին, Մ. Աբեղյանին և Ա. Տերտերյանին նվիրվածները, որոնց մատենագիտական ցանկերը կազմել են Ելենա Վլասյանը, Հ. Մանասերյանը և Ռ. Բաբաջանյանը։ Վերջինս այժմ հաջողությամբ մասնագիտանում է անհատական մատենագիտական ցանկեր կազմելու բնագավառում։

Կենսամատենագիտական այս ուղեցույցներում մատենագիտական նյութը չի համարակալվում, օժանդակ ցանկեր չկան։ Պետք է ասել, որ դրանց կարիքը շատ խիստ չի էլ զգացվում, քանի որ հիմնական նյութը դասավորված է ժամանակագրական կարգով, տարեթիվ առ տարեթիվ, իսկ գիտ-

նականի երկերի այբբենական ցանկում, յուրաքանչյուր աշխատության դիմաց նշվում է նրա հրապարակման տարեթիվը, որով և հղում է տրվում դեպի ժամանակագրական ցանկը։ Թևև, թվում է, որ վատ չէր լինի, եթե ժամանակագրական ցանկում նյութերը համարակալված լինեին և եթե լիներ այն անձանց անվանացանկը, ում դեմ բանավիճել է տվյալ գիտնականը, եթե լիներ գիտնականի թղթակցած պարբերականների ցանկը և այլն։

Այս ամենի բացակայությունը մատենագիտական բաժնում բացատրում են նրանով, որ իրենք կենսամատենագիտությունները Մոսկվայի նույնակերպ հրատարակությունների օրինակով են կազմում։

Մի դիտողություն ևս։ Սովորաբար ասում են, որ այս կենսամատենագիտությունների մեջ հավասար կարևորություն ունեն թե՛ գիտնականի կյանքին ու գործին նվիրված մասը, և թե՛ մատենագիտությունը (ոմանք նույնիսկ՝ առաջին մասն ավելի կարևոր են համարում)։ Մինչդեռ ճիշտն այն է, որ հիմնականը դրանցում, այնուամենայնիվ, մատենագիտական ցանկն է։ Հենց այն փաստը, որ այս ուղեցույցները կազմվում են գրադարանում, մատենագետների կողմից, արդեն շատ բան է ասում։ Պատահական չէ նաև, որ գիտնականի կյանքին և գործին նվիրված հոդվածը այս ուղեցույցներում կոչվում է Ներածություն, Ներածական խոսք, Ներածական հոդված։ Ինչի՞ ներածություն են դրանք, պարզ է որ մատենագիտության։ Բացի այդ, ասենք, Հ. Աճառյանի, Հ. Օրբելու, Գ. Ղափանցյանի, Վ. Համբարձումյանի և այլոց կյանքի ու գործի մասին հոդվածներ և ուսումնասիրություններ կարելի է կարդալ նաև այլ կերպ՝ գրքերի ու պարբերականների մեջ, առանձին գրքերով, մինչդեռ այդ գիտնականների ամբողջական մատենագիտությունը ակադեմիայի գրադարանի այս ուղեցույցներն են ներկայացնում։ Ճիշտ է, ներածականների հեղինակները սովորաբար ավելի ճանաչված մարդիկ են լինում, քան մատենագիտական ցանկերի հեղինակները, բայց այնուամենայնիվ,

դրանով ուղեցույցի հավասար հեղինակակից չի կարող դառնալ գրքի ներածականի հեղինակը[1]:

Ակադեմիայի գրադարանի մատենագիտական բաժինը կազմում և հրատարակում է նաև ակադեմիայի հրատարակությունների (գրքեր, ժողովածուներ, հանդեսների հոդվածներ և այլն) մատենագիտական ցանկերը, որոնք ըստ էության արձանագրական, գրացուցակային մատենագիտության արժեք ունեն:

Մինչև այժմ լույս է ընծայվել չորս հատոր, որոնք ընդգրկում են Հայաստանի գիտությունների ակադեմիայի 1936—1961 թվականների հրատարակությունները: Ամենից առաջ լույս տեսավ.

В. Карменян, Е. Власян и А. Хачатрян Библиография изданий Академии наук Армянской ССР. Книги и статьи. 1935—1949. Ереван, 1950, 238 стр.

Այս հատորը անհաջող էր, պակասներով և սխալներով լի, ուստի 1957-ին հրատարակվեց մի նոր հատոր, որը ընդգրկում էր նաև այս մեկի նյութերը:

Е. Власян и А. Манасерян Библиография изданий Армфана и Академии наук Армянской ССР. 1936 — 1956 гг. Ереван, 1957, 536 стр.

Ապա լույս տեսավ հաջորդ հատորը.

Е. Власян Библиография изданий Академии наук Армянской ССР. 1957 — 1961 гг., Ереван, 1963, 479 стр.

Այս հրատարակությունների կարևորության մասին խոսելու հարկ չկա. բավական է ասել, որ նրանք ներկայացնում են Հայաստանի գիտական մտքի գլխավոր կենտրոնի արտա-

---

1 *Կենսամատենագիտական այս ուղեցույցներում ներածականի հեղինակը նշվում է իբրև առաջին հեղինակ (սկզբում), մատենագիտության կազմողը՝ իբրև երկրորդ: Սրբ այս անճշտությունը ակնարկեցինք ակադեմիայի գրադարանի մատենագիտության բաժնում, բոլորը համաձայնեցին դրան՝ գտնելով, որ հիշտ կլինի հիմնական հեղինակ համարել մատենագետին, սակայն վկայակոչվեցին Մոսկվայի հրատարակությունները և որոշվեց ուղեցույցների մեջ առաջիկայում պահպանել նախկին կարգը:*

դրանքը։ Գիտաժանդակ մատենագիտության բնագավառում նման հրատարակությունները, հասկանալի է, մեծ դեր ունեն կատարելու։

Կառուցվածքը սիստեմատիկ է՝ նյութը դասավորված ըստ գիտության ճյուղերի։

Այս հրատարակությունների մեջ եղած տարբեր բնույթի թերությունների մասին խոսելը հավիվ թե նպատակասլաց լիներ, քանի որ այնտեղ թույլ է տրված մատենագիտական մի այնպիսի մեծ արատ, որ կարելի է ասել, սովերի մեջ է թողնում մյուս թերությունները։ Դա այն է, որ ակադեմիայի կողմից հայերեն լույս ընծայված բոլոր գրքերը և հոդվածները բնագրի լեզվով չեն նկարագրված, բերված են սոսկ ռուսերեն թարգմանությամբ։ Այս բանն, ըստ երևույթին, աննախադեպ է. մեզ հայտնի չէ, որ մի այլ տեղ հրատարակված լինի այսպիսի ծավալուն մի մատենագիտություն, որի մեջ տվյալ վայրի ազգային լեզվով հրատարակված նյութերը մատենագիտության մեջ ներկայացվեն ոչ այդ լեզվով։ Ավելին, բարձրորակ է համարվում այն մատենագիտությունը, ուր բոլոր նյութերն են ներկայացվում բնագրի լեզվով, այդ թվում տվյալ վայրի համար օտար լեզուներով հրատարակված նյութերը։ Այդպիսի ցանկեր շատ են հրատարակվել տարբեր վայրերում, այդ թվում նաև Հայաստանում, օրինակ, Հ. Անասյանի կազմած մատենագիտական ցանկերը, Հանրապետական գրադարանի հրատարակած մի շարք ցանկեր, (օրինակ՝ «Մատենագիտություն հայկական մատենագիտության»), նույն ակադեմիայի հրապարակած ցանկերից մի քանիսը և այլն։

Պատահական չէ, որ մամուլն էլ նշեց ակադեմիայի գրադարանի թույլ տված այդ լուրջ վրիպումը. «Տարօրինակ է,— գրում էր «Երևան» թերթը,— որ հայերեն լեզվով լույս տեսած գրքերի և հոդվածների նկարագրությունները մատենագիտության մեջ մատուցված են թարգմանաբար՝ ռուսերեն։ Հարց է ծագում, հատորի կազմողները և հրատարակողները ինչո՞ւ օրինակ չեն վերցրել Թեկուզ մեր ակադեմիայի բազմաթիվ այլ հրատարակություններից, որոնցում, եթե հոդվածը գրված է

հայերեն, ամփոփումը տրված է ռուսերեն և հակառակը»[1]։

Պիտք է ասել, որ միութենական մյուս հանրապետությունների ակադեմիաներն էլ են լույս ընծայել իրենց հրատարակությունների բազմահատոր մատենագիտությունը և բոլորի մեջ տվյալ հանրապետության ազգային լեզվով տպագրված գրքերն ու հոդվածները նկարագրված են այդ լեզվով։

Շատ բարձր գնահատականի է արժանացել, օրինակ, Վրաստանի ակադեմիայի հրատարակությունների մատենագիտությունը, ուր պահպանված է նյութերի նկարագրության հետևյալ կարգը՝ վրացերեն գրքերն ու հոդվածները նկարագրված են վրացերեն, ռուսերենը՝ ռուսերեն, ապա տրված է վրացերեն նյութերի նաև ռուսերեն նկարագրությունը, ինչպես և ռուսերեն նյութերի վրացերեն նկարագրությունը։

Առհասարակ, պետք է նշել, որ Հայաստանի ակադեմիայի կենտրոնական գրադարանում հայերենից հնարավորին չափ խուսափելու հակում միշտ նկատվել է, այդ հակումը, ի վերջո, հասավ վերոհիշյալ ծայրահեղության։

1966 թ. լույս տեսավ ակադեմիայի հրատարակությունների մատենագիտական տարեգրքի հերթական հատորը.

Գրիգորյան Ա. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակությունների մատենագիտություն։ 1962—1963։ Խմբ.՝ Վ. Կարմենյան։ Երևան, 1966. 374 էջ։

Վերնագրից սկսած մինչև նկարագրությունների մանրամասները ցույց են տալիս, որ այս հատորի հրատարակումը, անկասկած, առաջընթաց թայլ է նախորդների համեմատ։ Այստեղ գրադարանը հաշվի առնելով քննադատությունը, ինչպես և հետևելով մյուս հանրապետությունների մատենագիտական փորձին՝ հայերեն տպագրված գրքերն ու հոդվածները նկարագրել է հայերեն, ապա տվել նրանց ռուսերեն թարգմանությունները, ռուսերեն գրքերն ու հոդվածները նկարագրել է ռուսերեն, ապա տվել նրանց հայերեն թարգմանու-

---

1 Ռ. Ռուբինյան Ակադեմիայի մատենագիտության նոր հատորը։— «Երևան», 1963, № 272։

թյունները։ Այս կարգը գիտական լայն տեղեկատվության տեսակետից, անշուշտ, շատ ավելի հաջող է։

Մատենագիտությունն ըստ էության մատենագիտական երկու առանձին տարեգրքերի միացություն է՝ սկզբում 1962 թ. տարեգիրքն է, ապա 1963 թվականինը։ Կազմողի նախաբանից պարզվում է, որ այսուհետև ԳԱ կենտրոնական գրադարանը ակադեմիայի յուրաքանչյուր տարվա հրատարակությունների տարեգիրք է հրատարակելու։

Ներկա մատենագիտության մեջ ընդգրկված են նաև 1961 թվականին լույս տեսած մի շարք նյութեր, որոնք դուրս են մնացել նախորդ հատորից։

Մատենագիտությունը բաղադրող երկու տարեգրքերի օժանդակ ցանկերը (հեղինակների այբբենական ցանկ և ցուցակ տարեգրքում նկարագրված պարբերական հրատարակությունների ու ժողովածուների) միացված են։

Իհարկե, մատենագիտական այս տարեգրքի համար լուրջ թերություն է նյութերի համարակալման բացակայությունը (հեղինակների անվանացանկից հղումները տրվում են ոչ թե դեպի առանձին նյութերի համարները, այլ դեպի էջերը)։

Գրադարանի մատենագիտական բաժինը բավական կատարելագործվել է գրավոր տեղեկանքներ տալու գործում։ Տրված բոլոր տեղեկանքների պատճենները պահվում են։ Ստեղծված են տրված տեղեկանքների քարտարան և ցուցակ (կազմում է Մերի Հովհաննիսյանը), որոնք շատ են օգնում նոր տեղեկանքներ տալու ժամանակ։ Հաճախ ընթերցողների մատենագիտական հարցումների մոտ մեկ քառորդը հնարավոր է լինում բավարարել նախկինում տրված գրավոր տեղեկանքների օգնությամբ։

Ստորև որպես օրինակ բերում ենք բաժնի կողմից տարբեր ժամանակ տրված մի քանի տեղեկանքների անուններ, որոնք մտել են «Տրված տեղեկանքների քարտարանի» մեջ։

1. Հայկական հարցի մասին։ 27 անուն (հայ. և ռուս. լեզ.)։

2. Թոնդրակյան շարժման մասին։ 17 անուն (հայ. լեզվ.)։

3. Գործվածքների խոնավության ավտոմատիկ որոշման մասին։ Խոնավաչափեր։ 69 անուն։ (ռուս. և օտար լեզ.)։

4. Արդյունաբերության տեղաբաշխումը ԽՍՀՄ-ում։ 85 անուն (հայ. և ռուս. լեզ.)։

5. Հաշվային տեխնիկայի կիրառումը էներգետիկայի և ջրամատակարարման մեջ։ 110 անուն (ռուս. և օտար լեզ.)։

6. Ա. Երևանլիի երկերը և գրականություն նրա մասին։ 181 անուն (հայ. և ռուս. լեզ.)։

7. Մաշում և շփում։ 448 անուն (ռուս. և օտար լեզ.)։

Պետք է նշել նաև, որ ակադեմիայի գրադարանի մատենագիտական բաժինը իր գրավոր տեղեկանքների մասին փոստով տեղեկություն է ուղարկում Մոսկվա՝ Վ. Ի. Լենինի անվան և Հանրային գիտատեխնիկական համամիութենական գրադարաններին, որոնք այդ տեղեկանքները մտցնում են իրենց մոտ հրատարակվող՝ ԽՍՀՄ գրադարանների կողմից կազմված մատենագիտական ցանկերի ցուցակներում։

Առհասարակ, պետք է ասել, որ որոնումներից և որոշ սայթաքումներից հետո ակադեմիայի կենտրոնական գրադարանի մատենագիտության բաժինը վերջերս աշխատանքի ավելի հիշտ ուղի է ընտրել։ Այժմ այնտեղ կան մատենագիտական աշխատանքում փորձ և հմտություն ձեռք բերած մասնագետներ, որոնց շնորհիվ բաժինը դառնում է հայկական մատենագիտության կարևոր կենտրոններից մեկը։

Ներկայումս բաժինը Երևանի համալսարանի գրադարանի մատենագիտական բաժնի հետ միասին կազմում է «Գիտություն Հայաստանում» բազմահատոր մատենագիտությունը, որը նախատեսվում է հրատարակել 1970 թվականին։

***

Հայաստանի գիտությունների ակադեմիայի մատենագիտական բոլոր հրատարակությունների մեջ իրենց որակով և ընդգրկմամբ առանձնանում են Հակոբ Աննասյանի կազմած-

ները։ Դրանք բոլորը վերաբերում են հայ հին դպրությանը, ներկայացնում են հայ մատենագիրների երկերը, ձեռագիր և տպագիր նմուշներով, ինչպես և գրականություն նրանց մասին։

Հանձին Հ. Անասյանի գործ ունենք հայկական մատենագիտության ամենաանխոնջ երախտավորներից մեկի, հայ հին և միջնադարյան բազմաճյուղ գրականության հմուտ մատենագետի հետ։

Անասյանը ծնվել է 1904 թվականին, Թուրքիայի Էսկիշահիր քաղաքում։ Հաճախել է Քյոթահիայի նախակրթարանը։ 10 տարեկան հասակում մեկնել է Վիեննիկ և ընդունվել Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը, որն ավարտելուց հետո 1919—1924 թվականներին սովորել է Ս. Ղազարի Մխիթարյան ճեմարանում և ավարտել այն։

Այնուհետև, Անասյանը տեղափոխվում է Ֆրանսիա։ Փարիզում նա լսում է պրոֆ. Բասմաջյանի դասախոսությունները Հայաստանի պատմական աշխարհագրության և սեպագրական շրջանի պատմության շուրջ։

Փարիզում Անասյանն օգտվում է Նուբարյան մատենադարանի գրականությունից և սկսում հավաքել առաջին հայագիտական նյութերը իր մատենագիտական ապագա մեծ աշխատության համար։ Այստեղ միաժամանակ նա զբաղվում է 17-րդ դարի հայ ազատագրական շարժումների հարցով։

1936 թվականին տեղափոխվում է Հայաստան և աշխատանքի ընդունվում Երևանի պետական համալսարանի Մաոի անվան կաբինետում որպես գիտական աշխատող։

Անասյանը շարունակում է մեծ եռանդով նյութեր հավաքել իր մատենագիտության համար։ Պետական ձեռագրատունը (այժմ Մաշտոցի անվան մատենադարան), Ալ. Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարանի տպագիր հարստությունները, ինչպես նաև Երևանի ու Խորհրդային Միության այլ քաղաքների գրադարաններում եղած գրականությունը առատ նյութ են մատակարարում միշտ որոնող ու պրպտող մատենագետին։

Այնուհետև, Հ. Անասյանը աշխատել է որպես Երևանի համալսարանի գրադարանի մատենագիտության բաժնի վարիչ, ապա 1947 թվականից գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի Հայաստանի հին և միջնադարյան պատմության բաժանմունքում, իբրև ավագ գիտական աշխատող։

1949 թվականից սկսում են լույս տեսնել Անասյանի հայագիտական հոդվածներն ու հրապարակումները, գրքերն ու մատենագիտական աշխատությունները։

Առաջին շատ թե քիչ ընդարձակ մատենագիտությունը, որ Անասյանը հրապարակեց «Էջմիածին» ամսագրում, նվիրված էր Եղիշեին, այն ուներ «Եղիշե։ Լիակատար մատենագիտություն» վերնագիրը («Էջմիածին», 1950, № 9—10, էջ 67—71)։ Այստեղ թվարկված են Եղիշեի երկերի ժողովածուների, ինչպես և «Վասն պատերազմին Վարդանանց» գրքի տարբեր հրատարակությունները։ Խնամքով կազմված այս մատենագիտության մի մասն է միայն տպագրված։

Այս մատենագիտության նյութերը 1957 թվականին ղեկավարվեցին Եղիշեի «Վասն Վարդանանց և հայոց պատերազմին» գրքի (էջ 204—219) նոր ակադեմիական հրատարակության մեջ, որ կազմվել է Ե. Տեր-Մինասյանի աշխատասիրությամբ։

Մատենագիտությունը այստեղ չորս մասից է բաղկացած. ա) Վարդանանց պատմության բնագրի հրատարակությունները, բ) աշխարհաբար թարգմանությունները, գ) թարգմանություններ այլ լեզուներով և դ) գրականություն Եղիշեի և նրա երկերի մասին։

Առաջին երեք մասերը ժամանակագրական կառուցվածք ունեն, վերջինը՝ այբբենական։

Հիշատակելի են նաև Անասյանի կազմած մի քանի այլ ոչ մեծ մատենագիտական ցանկերը, այդ թվում Կիրակոս Գանձակեցու մատենագիտությունը Գանձակեցու «Պատմութիւն Հայոց»-ի 1961 թ. հրատարակության մեջ (բնագիրը հրատարակված է Կ. Մելիք-Օհանջանյանի աշխատասիրությամբ)։

Այստեղ նույնպես տրված են բնագրի հրատարակությունները, թարգմանությունները և նյութեր ու գրականություն Գանձակեցու մասին։



ՀԱԿՈԲ ԱՆԱՍՅԱՆ

Անասյանի կազմած մատենագիտական ցանկերը զետեղվել են նաև այլ հրատարակությունների մեջ, ինչպես, օրինակ, Փավստոս Բուզանդի մատենագիտությունը հրատարակվել է «История Армении Фавстоса Бузанда» գրքում

(Եր., 1953, էջ 233—237), Մխիթար Գոշի մատենագիտությունը՝ «Армянский судебник Мхитара Гоша» գրքում (Եր., 1954, էջ 249—259), Կոստանդին Երզնկացու մատենագիտությունը նրա «Տաղեր»-ում (Եր., 1962, աշխատասիր.՝ Ս. Սրապյան), Արիստակես Լաստիվերտցու մատենագիտությունը նրա Պատմության 1963 թ. հրատարակության մեջ (աշխատասիր.՝ Կ. Յուզբաշյան):

Դանձակեցու և Լաստիվերտցու գրքերը պատրաստված են Հրատարակության Մաշտոցի անվան մատենադարանի կողմից, Բուլանդինն ու Գոշինը Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի, իսկ Նղիշևինն ու Երզնկացունը գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի կողմից: Բոլորն էլ լույս է ընծայել գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը:

Այսպիսով, Անասյանի մատենագիտական ցանկերը օգտագործվում են հայ մատենագիրների երկերի հրատարակություններում[1]: Բանն այն է, որ շուրջ երեք տասնյակ տարի շարունակ աշխատելով հայ հին բազմաճյուղ գրականության մատենագիտությունը կազմելու վրա՝ Անասյանը նյութեր ունի գրեթե բոլոր հին ու միջնադարյան հայ հեղինակների մասին: Եվ, ըստ էության, առանձին հեղինակների երկերին կից հրատարակված մատենագիտական ցանկերը մի ամբողջական մեծ մատենագիտության մասերն են, որը ինքը՝ Անասյանը կոչում է «Հայկական մատենագիտություն» և որի առաջին հատորը լույս տեսավ 1959 թվականին[2]:

Այս երկի հրատարակումը նշանակալի երևույթ էր հայ պատմագիտական բանասիրության և մատենագիտության

---

1 Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի կապակցությամբ Հ. Անասյանը հրատարակության պատրաստեց մեծ բանաստեղծի մատենագիտությունը, որ պիտի լույս ընծայեր ակադեմիայի գրականության ինստիտուտը: Աշխատությունը մեզ չհրատարակված:

2 Հ. Անասյան Հայկական մատենագիտություն: ե—ժԸ դդ., հատոր Ա—Առաքել Սալաձորեցի: Եր., ԳՀ հրատ., 1959, 1928 սյունակ (997 էջ):

քնագավառում, ուստի հարկ է նրա մասին փոքր-ինչ ավելի մանրամասն խոսել։

Նախ ասենք, որ Անասյանի աշխատությունը ամբողջովին նվիրված է հին և միջնադարյան հայ գրավոր մշակույթին, այսինքն՝ մինչև 1800 թվականը ստեղծված հայ բազմաճյուղ գրականությանը, որ մի խոսքով կոչում են հայ մատենագիտություն։

Հայ հեղինակների կողմից մինչև 1800 թ. գրված և թարգմանված պատմական, աշխարհագրական, տոմարագիտական, փիլիսոփայական, լեզվաբանական, վկայաբանական, վարքագրական, աստղաբաշխական, բժշկական, երաժշտական, դեղարվեստական և այլ բնույթի բազմաթիվ երկեր այսօր գտնվում են ամբողջ աշխարհում ցրված շուրջ 25 հազար հայկական ձեռագրերի և հազարավոր տպագիր գրքերի ու պարբերականների էջերում։ Վաղուց ի վեր շատ գիտնականներ, գրողներ, հասարակական գործիչներ կարիք են զգացել մի ուղեցույց-տեղեկատուի, որը բացահայտեր հայ մատենագրության հարստությունները, առաջնորդեր գիտնականներին նրա բաժիններում։ Այդ կարգի մի ուղեցույցի, այդպիսի բանալիի ստեղծումը մինչև վերջին տարիներս ոչ միայն չափազանց ծանր, այլ անհնար գործ էր թվում։ Նույնիսկ մի ամբողջ գիտական հիմնարկ չէր համարձակվի սկսել այդպիսի մեծ աշխատանք։ Եվ ահա Անասյանը ստանձնել է այդ գործը ու որպես ապացույց, որ ինքն ի վիճակի է անհավանականը իրական դարձնել, հրապարակ է հանել հայ մատենագիտության իր կազմած հանրագիտարանի առաջին ընդարձակ հատորը։

Այս մատենագիտությունը վերջինն է մատենագիտական գործերի այն շարքում, որն սկսվել է դեռևս 5-րդ դարից և շարունակվել ողջ միջնադարում։ Խոսքը վերաբերում է հայ պատմիչների, ինչպես և հայ և օտարազգի մատենագիրների այն ցուցակներին, որոնց մասին արդեն խոսվել է։ Մենք ասացինք նաև, որ խորհրդային շրջանում հայկական մատենագիտության այդ ավանդական տեսակի առաջին նմուշը Հ. Պետրոսյանի «Հայ հին և միջնադարյան գրականության բիբլիոգրաֆիա»-ն էր։

Սակայն Հ. Անասյանի «Հայկական մատենագիտությունը» ոչ միայն այդ շարքի նորագույն գործն է, այլև իր ծավալով, ընդգրկմամբ, մանավանդ, որակով այդ շարքի մատենագիտական աշխատանքի պսակն է:

Մատենագիտության հիմնական կառուցվածքը այբբենական է: Այբբենական կարգով շարված են տարբեր դարերի հեղինակների անուններ, ինչպես նաև այն երկերի, բնագրերի անունները, որոնց հեղինակները հայտնի չեն: Բացի այդ, նույն այբբենական շարքում են հայ մատենագրության մեջ տեղ գտած բազմաթիվ անձնանուններ և տեղանուններ, հին բնագրերի տարբեր խմբերն ու տեսակները բնորոշող անուններ և այլն:

Հիշենք այբբենական կարգի մեջ մտնող անվանաբառերից մի քանիսը՝ Աբգար Թագավոր, Աբգար Ծոխաթեցի, Աբդուլա քահանայ, Աբդիշոյ Ասորի, Աբրահամ Կրետացի, Ագաթանգեղոս, Ագուլիս, Ադամ և Եւա, Ադանայի ժողով, Աչարիա Ջուղայեցի, Աղգաբանութիւն Հին և Նոր կտակարանից, Աղգականութիւն և խնամութիւն, Աղգահամար, «Աղդարար», Ախտարական գրականութիւն, Այբեր Մեծ, Աղեքսանդր Ջուղայեցի, Անանիա Շիրակացի, Անանուններ, Անի, Առաքել Բաղիշեցի և այլն:

Յուրաքանչյուր անվանաբառ մատենագիտության մեջ մի առանձին բաժին է զբաղեցնում իրեև ամբողջական հոդված: Որոշ բաժիններ շատ փոքր են, ընդամենը մի քանի տող, որոշ բաժիններ՝ շատ մեծ, մինչև 150 այուսակ:

Մատենագիտության մեջ տեղ են գտել նաև այնպիսի հեղինակներ, որոնք ընդամենը մեկ անգամ հիշատակված են որևէ մատենագրի կողմից և կամ նրանց երկերից մի երկու պատառիկ է պահպանվել: Օրինակ, Գրիգոր Մագիստրոսը մեկ անգամ հիշատակում է Անդրոնիկոս Հռոդացի հեղինակի երկերից մեկի հայերեն թարգմանությունը և այդ հեղինակն ահա տեղ է գտել մատենագիտության մեջ: Կամ նշված է Ապափիանոս (Ապլփես) անունով հեղինակը, որի երկերից ընդամենը մի երկու փոքր հատված տեղ է գտել Ստեփանոս

Այունեցու «Վան անապականութեան մարմնոյ» երկում։ Մխիթար Սեբաստացուն ուղղված մի նամակում խոսք կա Պիդուի և Գալանոսի «Բնաբանութիւն, այսինքն՝ ֆիզիկա» գրքի մասին, որ այժմ կորած է։ Այս գրքի մասին էլ տեղեկություն է տալիս Անանյանի մատենագիտությունը և այլն։

Մատենագիտության մեջ առանձին բաժինների ներքին կառուցվածքը հիմնականում հետևյալ ձևի է։ Անվանաբառի տակ տրվում է անհարժեշտ բացատրություն։ Եթե հեղինակ է, տրվում են կենսագրական տեղեկություններ, եթե կան այդ հեղինակի անձի կամ կյանքի մասին հակադիր կարծիքներ, խոսվում է այդ մասին, եթե անվանաբառը ներկայացնում է բնագրի կամ բնագրերի խմբի, տեսակի անուն և կամ հայ մատենագրության մեջ գործածված անձնանուն, տեղանուն, ապա նույնպես տրվում են համապատասխան ծանոթություններ։

Այնուհետև, գալիս է մատենագիտական մասը, որ տարբեր բաժիններում երբեմն տարբեր տեսք ունի։ Սովորաբար սկզբում գրված է բնագրային մասը, ուր տրվում են համապատասխան բնագրի վերնագիրը, սկզբնատողը, ցույց են տրվում այն ձեռագրերը և տպագիր գրքերն ու այլ հրապարակումները, ուր գտնվում է տվյալ բնագիրը կամ հատվածներ նրանից։ Ժամանակագրական կարգով թվարկվում են բնագրի հրատարակությունները, ինչպես և այն ընդգրկող ձեռագրերը, տրվում են նաև այդ բնագրի տարբեր լեզուներով թարգմանությունները։ Այնուհետև բերվում է տվյալ հեղինակի և նրա երկերի մասին եղած ուսումնասիրությունների ու հոդվածների ցանկը, ինչպես և գրախոսություններ այդ ուսումնասիրությունների մասին։

Նշված են թվարկվող ձեռագրերի գտնվելու վայրերը, ինչպես նաև համարները։ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերը ներկայացված են հին և նոր համարներով։

«Հայկական մատենագրության» մեջ մեծապես օգտագործված են Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագիր հարստությունները. այդ իմաստով դեռևս որևէ մատե-

նագիտական աշխատություն այնպես մանրամասն ու լրիվ չի բացահայտում հայ ձեռագրերի այդ ամենահարուստ դանձարանի գրչագրերի բովանդակությունը, ինչպես Անասյանի այս գործը։

Շատ կարևոր է այն, որ Անասյանն այստեղ իրրև դուտ արձանագրող մատենագետ չի հանդես գալիս։ Նա վիճելի տեսակետներ է մեջ բերում, իր կարծիքն ասում, բնագրեր է ջոկում միմյանցից, շփոթություններ է փորձում պարզել։ Մի խոսքով, բանասիրական-բնագրագիտական աշխատանքը այստեղ միահյուսված է մատենագիտական գործին և այնպես ամուր ու նուրբ է միահյուսված, որ ոչ ոք չի կարող նշել այնպիսի մի սահման, որն այստեղ բաժանում է մատենագիտությունը բանասիրությունից ու բնագրագիտությունից։

Ահա մի օրինակ։ Ժամանակին Հ. Տաշյանը մի տապի տպ-ների սկզբնատառերից գոյացող բառից որոշել է, որ տապր հեղինակն է Ագգէ անունով մի բանաստեղծ։ Այդ անունը մտել է Հ. Աճառյանի «Անձնանունների բառարանի» մեջ։ Ա-նանյանը Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերից մեկում գտել է այդ տապի իսկական հեղինակի անունը, որը է Ավետիք և դրանով էլ ապացուցել, որ տների սկզբնատա-ռերի Ագգէ (կամ Աիգյէ) խումբը ոչինչ չի նշանակում, ան-կապ հնչյունախումբ է։

Եթե բանասիրական այս ճշտումը Անասյանը չաներ, ապա նա թույլ կտար մատենագիտական սխալ՝ իր աշխատության մեջ կմտցներ մի տաղասացի անուն, որպիսին գոյություն չի ունեցել։

Վերցնենք այլ օրինակ։ Հայ ձեռագրերում հաճախ միև-նույն անձնավորության անունը մի քանի ձևով է գրվում, եր-բեմն՝ տասից ավելի ձևերով։ Բավական է բանասիրական մտքի ուշադրության մի փոքր պակաս և միևնույն մարդը կա-րող է ներկայացվել իբրև երկու կամ ավելի հեղինակ, որով և թույլ կտրվի մատենագիտական լուրջ սխալ։ Անասյանի միտքը սթափ է, նա մի շարք դեպքերում ճշտում է բանասի-

բության մեջ թույլ տրված այնպիսի սխալներ, երբ միևնույն մարդուն երկու կամ ավելի հեղինակ են դարձրել։

Հին և միջնադարյան Հայաստանում ընդօրինակված բնագրերը սովորաբար արտագրվելով, փոփոխվել են, նորանոր տեսքեր ստացել, և միևնույն բնագիրը մեզ է հասել հաճախ բազմաթիվ տարբերակներով։ Բանասիրական լուրջ աշխատանք է պահանջվում միևնույն երկի տարբերակները իրարից անկախ երկերի տեղ չդնելու համար։ Անհրաժեշտ է նաև լավ իմանալ նախորդ բանասերների կատարած աշխատանքը տըվյալ բնագրերի ինքնուրույնությունը պարզելու ուղղությամբ։ Անաստյանը քաջատեղյակ է անցյալի հայ բանասիրությանը, յայնորին օգտագործում է նրա տվյալները՝ ինքն էլ մի շարք ճշտումներ ու լրացումներ մտցնելով։

Հիշենք Անաստյանի բանասիրական այդ կարգի ճշտումներից մի քանիսը։ Մատենադարանի ձեռագրերից մեկում (№ 799) Անաստյանը հանդիպել է տոմարագետ Ազարիա Ջուղայեցու մինչ այդ բանահյուսությանը անհայտ ինքնագիր աշխատություններին (հրապարակված են «Հայկական մատենագիտության» հավելվածում), որոնցից մեկի հիշատակարանից պարզվում է, թե Ազարիան՝ հայ նոր տոմարի առեղծողը ապրել է ոչ թե 17-րդ դարում, ինչպես մինչ այդ կարծում էին, այլ 16-րդ դարի առաջին կեսում, և որ այս Ազարիա Ջուղայեցին ոչ մի առնչություն չունի Ազարիա Սասնեցու հետ, ուստի և սխալ է եղել նախկինում նրանց նույնացումը։

Անանիա Շիրակացուն նվիրված բաժնում Անաստյանը նշում է մեծ գիտնականի գրչի արտադրանքը հանդիսացող երկու երկ («Յաղագս Թ և Ժ երկակաց լուսնի» և «Լուսնացոյց»), որոնք մինչ այդ հայտնի չէին գիտությանը։

Կամ, օրինակ, Անաստյանը պարզել է նաև, որ այնպիսի հայտնի թարգմանական երկեր, ինչպիսիք են Ալբերտ Մեծի «Համառոտ հաւաքումն» և կամ Անտոն Կուվդնի (9-րդին) Փիլիսոփայությունը ունեն ավելի վաղ (չհրապարակված) թարգմանություններ, քան մինչև այժմ հայտնի եղածներն են։

Մատենագիտության մեջ նկարագրված են նաև հնատիպ մի քանի գրքեր, որոնք մինչ այդ չեն հիշատակվել մատենագիտական ցանկերում։

Անասյանը կատարել է նաև այլ կարգի ճշտումներ, ինչպես, ասենք, մի շարք դեպքերում ցույց է տվել, որ ճիշտ չէ այս կամ այն մատենագետի տեղեկությունը առանձին գրչագրերի գտնվելու վայրի մասին։

Ճի՞շտ է վարվել Անասյանը, երբ այլ լեզուներից հայերենի թարգմանված գործերը դիտել է իբրև հայկական բնագրեր։ Անշուշտ, ճիշտ է վարվել։ Օրինակ, ինչպե՞ս կարելի է հայկական բնագիր չհամարել առաջին անգամ մեսրոպյան տառերով գրված Սողոմոնի առակները և 5-րդ դարում Մեսրոպի ու նրա աշակերտների կատարած մնացած թարգմանությունները։ Կամ ինչպես կարելի է հայ բնագիր չհամարել հույն հեղինակ Եվսեբիոս Կեսարացու հայոնի ժամանակագրությունը, «Անսիպք Անտիոքայ» բնագիրը, հայոնի «Գիրք վաստակոց»-ը, որոնք պահպանվել են միայն հայերեն թարգմանությամբ, կամ, ասենք, մի՞թե հայերեն բնագրեր չեն Տիմոթեոս Կուզի, Փիլոն Եբրայեցու, Զենոնի, Հովհան Ոսկեբերանի և շատ ու շատ այլ օտար հեղինակների այն աշխատությունները, որոնք այսօր հայոնի են միայն հայերեն թարգմանական բնագրերից։

Տարբեր է «Մատենագիտության» հոդվածների ծավալը, տարբեր է և նրանց արժեքը։ Սակայն գրքին ծանոթացող ամեն ոք կարող է վստահորեն ասել, որ այնտեղ չկա ոչինչ անարժեք կամ անօգտավետ։ Երբեմն որոշ տեղեկանքներ կարող են թվալ երկրորդական, բայց բավական է խորանալ հարցի էության մեջ, որպեսզի պարզվի նրանց բանասիրական կարևորությունը։ Վերցնենք, օրինակ, «Անանիանք կամ երեք մանկունք» վերնագրով փոքր հոդվածը, որ նվիրված է բաբելոնյան երեք մանուկների ավանդության հայկական տարբերակներին։ Հոդվածը գուցե և անկարևոր թվա, բայց ահա, թե ինչ է գրում բելգիացի արևելագետ պրոֆեսոր Ժ. Դարիսը հենց այդ հոդվածի մասին. «Ես վերջերս հրապարակել եմ»

«Բաբելոնի երեք մանկանց գյուտի» վրացերեն բնագրերը՝ ցույց տալով, որ վրացական տեքստը իր հիմքում պետք է ունեցած լինի մի հայկական բնագիր, և ահա «Մատենագիտության» շնորհիվ տեղեկանում եմ, որ հայկական «Գյուտը» պահպանվում է Վենետիկի երկու ձեռագրերում»: Ապա Գաբրիտը Անասյանի մատենագիտության մասին ավելացնում է. «Այս աշխատությունը մի իսկական գանձարան է... նրանով վերջապես ստանում ենք մի հանրագիտարան, որի պակասը մինչև այժմ զգացվում էր հայկական բանասիրության մեջ»[1]:

Մատենագիտությունը վերջում ունի «Յանկ բնագրերի սկզբնատողերի», որ և միակ օժանդակ ցանկն է այս մեծածավալ հատորի մեջ:

Ուշագրավ է գրքի «Ներածությունը», որը հայ մատենագիտության պատմության առաջին ամփոփ և հակիրճ շարադրանքն է: Այստեղ հեղինակը կարողացել է իր մի հավաքել այն նյութերի զգալի մասը, որոնք վերաբերում են հայկական մատենագիտության անցյալին: Տողատակի ծանոթագրությունները ընթերցողին հղում են դեպի հարցին վերաբերող այլ նյութեր, ուր ընթերցողը կարող է ավելի հանգամանալից քննություններ գտնել: Ավելին, իր այս պատմական ակնարկում հայ մատենագիտական մի շարք աշխատություններ գնահատելիս Անասյանը մեծ մասամբ առողջ մոտեցում է ցուցաբերել, որոշ արժեքներ թեև շատ հակիրճ, բայց և շատ հիմնավոր վերագնահատել է:

Այստեղ կան, իհարկե, լրջորեն վիճարկելի դրույթներ ևս, որոնցից մի քանիսին արդեն անդրադարձել ենք (Ա. պրակում):

Ներածությանը կից է «Մատենագիտական բնագրեր» բաժինը, ուր բերված են հայ հին և միջնադարյան մատենագիտության մի շարք նմուշներ, տրված են այն ձեռագրերը, որոնցում ընդօրինակված են այդպիսի նշումներ կամ նրանց զանազան տարբերակներ: Բանասերներին, պատմաբաններին, մատենագիտության պատմությամբ զբաղվողներին հե-

1 «Գրական թերթ», 1962, № 4:

տաքրքրական շատ նյութ կարող են տալ Անասյանի «Հայկական մատենագիտության» այս երկու բաժինները [1]։

Մատենագիտության սկզբի բաժիններից երրորդը կոչվում է «Ձեռագրացուցակներ»։ Այստեղ առաջին անգամ հավաքված են (թեև առանց որոշակի կարգի) հայերեն մեծ և փոքր ձեռագրացուցակները և ձեռագրացուցակային բնույթի հրատարակությունները (178 անուն)։ Սա, ըստ էության, առաջին հայկական մատենագիտության մատենագիտությունն է, որին հաջորդեց երկրորդը (Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի կազմածը)։ Փոքր բացառությամբ Անասյանին հաջողվել է ընդգրկել մինչև 1959 թ. հրատարակված (ինչպես և մի շարք չհրատարակված) հայկական ձեռագրացուցակները [2]։

Ձեռագրացուցակների մատենագիտության այս բաժինը ունի նաև իր օժանդակ ցանկերը (հեղինակների, հրատարակիչների և այլն)։

Անկասկած է, որ բուն մատենագիտությանը նախորդող այս երեք բաժիններից յուրաքանչյուրը մի ինքնուրույն արժեքավոր աշխատություն է, ինչ վերաբերում է բուն մատենագիտությանը, ապա այն բացառիկ աշխատություն է ոչ միայն իր նշանակությամբ, ընդգրկումով, հարստությամբ, այլև նյութերի մատուցման ճշգրտությամբ, սխալների ու վրիպակների նվազագույն քանակով։

Ս. Դավիկյանի, Հ. Տաշյանի և Գ. Լևոնյանի մատենագիտական աշխատություններից հետո իրոք բարեխղճորեն ու

---

1 Տողերիս գրողին լուրջ օգնություն են ցույց տվել Անասյանի «Հայկական մատենագիտության» այս բաժինները ներկա աշխատության նախորդ պրակները գրելիս՝ գլխավորապես հին և միջնադարյան մատենագիտության մի քանի բնագրերին ծանոթանալու, դրանք ամփոփող մի շարք ձեռագրեր, ինչպես և հրապարակված բնագրեր և ուսումնասիրություններ գտնելու գործում։

2 Անասյանի այս ցանկի մի շարք պակասները նշել և լրացումներ են արել գրախոսողները։ Օրինակ, Ս. Քոլանջյանը նշել է ցանկից դուրս մնացած 22 ձեռագրացուցակ («Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 3 էջ 226—227)։

մեծ խնամքով կազմված մատենագիտական աշխատանք մեզ ներկայանում է Անասյանի այս գործը։

Թվարկված մատենագիտական աշխատությունները շատ տարբեր են թե՛ իրենց նպատակով, թե՛ ընդգրկմամբ և թե՛ կառուցվածքով։ Բայց նրանց բոլորին, դրանց հետ նաև Անասյանի մատենագիտությանը միավորում է այն, որ նրանք բոլորն էլ մատենագիտական տեղեկատուներ են։

Եթե Ղափլյանը տվել է հայ տպագիր գրքի ընդհանուր մատենագիտություն ստեղծելու լավագույն օրինակը, Հ. Տաշյանի կազմել է հայ ձեռագրացուցակներից ամենամեծարժեքը, իսկ Գ. Լևոնյանը հայ պարբերական մամուլի ամենահաջող մատենագիտությունը, ապա Անասյանը ոչ միայն ստեղծել է հայ հին գրավոր մշակույթի լավագույն ուղեցույցը, այլև տվել է հանգամանալից, գիտական մատենագիտություն կազմելու վերջին ամենալավ օրինակը։

Այսպիսով, Անասյանի աշխատությունը 15 դարերի ընթացքում հայերեն լեզվով ստեղծված գրավոր ամենաբազմազան երկերի, այն է հայ մատենագրության մի իսկական հանրագիտարան կլինի, որն իր արժանի տեղն է գտնելու հայագիտական լավագույն աշխատությունների կողքին։

Անասյանի աշխատության մասին եղան քսանից ավելի հանգամանալից գրախոսություններ ինչպես Հայաստանի ու Մոսկվայի, այնպես էլ արտասահմանյան հայ և այլալեզու մամուլում, և դրանք բոլորն էլ դրվատական էին։

Գրախոսողներից մեկը՝ Ս. Քոլանջյանը գրում էր. «...աշխատությունը խոշոր երևույթ է հայ մատենագիտության պատմության մեջ, նյութերի ընդգրկման ծավալով՝ կատարյալը անցյալում լույս տեսած բոլոր տիպի մատենագիտություններից»[1]։ Եվ այս գնահատականին համաձայն էին գրեթե բոլոր գրախոսողները։

Մենք ևս համակարծիք ենք այն գրախոսներին, որոնք Անասյանի այս աշխատությունը համարում են հայ մատենա-

1 «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 3, էջ 225։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. Ս. Ներսիսյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ե–ԺԸ ԴԴ

ՀԱՏՈՐ Ա

Ա–ԱՌԱՔԵԼ ՍԱԼԱՁՈՐԵՑԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երևան 1959

Հ. Աճառյանի «Հայկական մատենագիտության» Ա. հատորը

270

գիտության կարևորագույն նվաճումը։ Շատ ցանկալի կլիներ, որ միևնույն որակով նույն գիտական մակարդակով կազմվեին նաև հայ պարբերական մամուլի հոդվածների, ինչպես և հայ տպագիր գրքի մատենագիտությունները, որոնց կարիքն ու անհրաժեշտությունը այսօր շատ մեծ է։

Չպետք է մոռանալ, որ Անասյանի աշխատությունից օգտվողների շրջանակը ավելի սահմանափակ է, քան նշված կազմվելիք մատենագիտություններից օգտվողներինը. չէ՞ որ այսօր Անասյանի կատարած հսկայական աշխատանքից օգտվում են միայն հայ հին մշակույթի պատմությամբ զբաղվող գիտնականները։

Հասկանալի է, որ Անասյանի «Հայկական մատենագիտությունը» ունի նաև թերություններ։ Սակայն ուշադրություն է գրավում այն, որ այսպիսի հսկայական հատորի համեմատ թերությունները քանակով և նշանակությամբ շատ քիչ են։

Գրախոսողները ամենից ավելի շատ դիտողություններ արեցին պահանների վերաբերյալ, լրացումների կարգով նշվեցին բավական թվով նյութեր, որոնք մատենագիտության համապատասխան հատվածների մեջ պետք է տեղ գտնեին։ Այդպիսի մի շարք ուշագրավ լրացումներ արվեցին Ս. Քոլանջյանի, Ն. Տեր-Ներսեսյանի և այլոց կողմից (տե՛ս վերջում տրված գրականության ցանկը)։

Կան նաև այնպիսի արտառոց թվացող բացթողումներ, ինչպես ասենք այն, որ Ա-ի հոդվածի մեջ ուսումնասիրությունների ցանկից վրիպած երկերից է Լեոի հայտնի ուսումնասիրությունը համանուն վիպագրով։

Մատենագիտական աշխատանքին շատ քիչ ծանոթ ամեն ոք գիտի, որ այսպիսի հսկա բանասիրական-մատենագիտական աշխատության մեջ նման վրիպումներ, ինչպես և երբեմն այլ կարգի լուրջ բացթողումներ չեն կարող չլինել։ Անասյանը ինքը շատ լավ է գիտակցել այդ հանգամանքը և իր գրքի հենց սկզբից խելացի կերպով հայտարարել է այդ մասին՝ իրրև բնաբան բերելով Աբասի որդի Գրիգորի (Գրիգոր Աբասյանի) գեղեցիկ ասույթը։

Իբրև մատենագիտության այլ թերություն նշվեց այն, որ կարելին չի արված ներկայացվող նյութերը ընթերցողին ավելի դյուրին մատուցելու համար: Եվրոպական մի շարք տեղեկատու-մատենագիտական նոր հրատարակություններ լավ օրինակ են տալիս տարբեր տառատեսակների, նշանների, կլիշեների և այլ միջոցների ու հնարքների օգտագործմամբ մատենագիտական նյութը առավել լավ մատուցելու խնդրում: Եվ հարց է առաջանում, եթե ավելին արված լիներ այն բանի համար, որ առանձին բաժինների նյութեր առավել փոքր ճիգով ընկալվեին օգտվողի կողմից, արդյո՞ք այս հարուստ մատենագիտությունից օգտվողների քանակը ավելի մեծ չէր լինի:

Այնուհետև, մեզ ամենահաջողը չի թվում գրքի համար ընտրված ռուսերեն վերնագիրը՝ «Армянская библиология», քանի որ библиология-ն ռուսերենում այլևս չի գործածվում իր նախկին, Անաստասյանին հետաքրքրող իմաստով, այլ նշանակում է գրքագիտություն, ներառյալ տպագրության պատմությունը: Թեև դժվար է ասել, թե ռուսերեն ուրիշ ինչ ավելի հարմար վերնագիր կարելի էր ընտրել [1]:

Եվ վերջապես կա մի նուրբ հարց ևս: Անաստասյանի մատենագիտությունը աննախընթաց է նաև իր ծավալով, այն բաղկացած կլինի 10—12 ստվար հատորներից: Դա շատ ուրախալի է. որքան ավելի մեծ լինի հեղինակների, նյութերի, բնագրերի, ուսումնասիրությունների ընդգրկումը, այնքան ավելի լավ: Սակայն աշխատության այդպիսի մեծ ծավալը նաև այլ մտորումների տեղիք է տալիս: Քիչ չեն այն դեպքերը, երբ հայ իրականության մեջ նման ծավալուն, բազմահատոր աշխատություններ տարբեր պատճառներով մնացել են անա-

---

1 Անաստասյանը իր ներածականում իրավացիորեն նշում է, որ հայերեն մատենագիտություն անվանումը ավելի լայն է, քան հունարենից եկող библиография-ն: Ներկա դեպքում, իրոք, որ ճիշտ չէր լինի աշխատության ռուսերեն վերնագրում օգտագործել այս վերջին բառը (թեև այլ դեպքերում մատենագիտություն-ը իրոք библиография է):

վարտ. հիշենք Թևկուզ Հ. Առաքելյանի «Հանրագիտական բառարանը», Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտությունը», Հ. Էփրիկյանի «Բնաշխարհիկ բառարանը», Մ. Պոտուրյանի «Հայ հանրագիտակը» և այլն:

Այժմ Անասյանի «Հայկական մատենագիտության» Ա հատորի հրատարակումից անցել է մոտ յոթ տարի, իսկ Բ հատորը դեռևս չկա: Ինչ կատացվի, եթե յուրաքանչյուր նախորդ և հաջորդ հատորների միջև յոթ-ութ տարի անցնի: Արդյոք հնարավոր չէ՞ բազմահատոր այս մատենագիտության հեղինակին ազատ պահել այլ աշխատանքներից, որոնք նա անում է մատենագիտության կազմմանը զուգահեռ (ցավոք, երբեմն իր նախաձեռնությամբ):

Հարկ է նշել, որ Անասյանը ունի նաև պատմագիտական ուսումնասիրություններ և բնագրերի հրապարակումներ, որոնցից հիշատակելի են. «Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին» (1957, 148 էջ) և «17-րդ դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում» (Եր., 1961):

Պետք է ասել, որ այս աշխատությունների մեջ էլ զգացվում է բանասեր-մատենագետը: Ուշագրավ է այն, որ Աշոտ Հովհաննիսյանը, որը բարձր կարծիք է հայտնել Անասյանի «Հայկական մատենագիտության» մասին, լրջորեն ընդդիմախոսել է նրա «17-րդ դարի ազատագրական շարժումները...» աշխատությունը (որ Անասյանի դիսերտացիոն աշխատանքն էր): Սակայն քննադատելով այդ գրքի, իրրև պատմագիտական աշխատության մի շարք դրույթները՝ Ա. Հովհաննիսյանը դարձյալ բարձր է գնահատում նրա մատենագիտական կողմը [1]:

Ի դեպ, բացի այն, որ Անասյանի այս պատմական ուսումնասիրությունը, իրոք որ մատենագիտական ուշագրավ արժանիքներ ունի, գրքին կցված է նաև խնամքով կազմված մի ընդարձակ մատենագիտական ցանկ (էջ 235—248), որ նույնպես արժեքավոր է 16-րդ դարի Հայոց պատմությունն ուսումնասիրողի համար:

1 Տե՛ս, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 1, էջ 235—248:

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՅԼ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ

Հայաստանում մատենագիտական աշխատանքով զբաղվում և մատենագիտական ցանկեր հրատարակում են նաև մի շարք ուրիշ հիմնարկներ, ինչպես Երևանի պետական համալսարանը, Մաշտոցի անվան մատենադարանը, Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալը, «Հայաստան» հրատարակչությունը, ինչպես և ուրիշ հրատարակչություններ և այլն։

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Երևանի պետական համալսարանի դասախոսները իրենց գիտական ուսումնասիրությունների ժամանակ, հասկանալի է, նույնպես զբաղվում են մատենագիտական աշխատանքով, և նրանց այդ աշխատանքի արդյունքն են լինում ոչ միայն հրատարակվող ուսումնասիրությունները, այլև նրանց կից երկրորդային մատենագիտական ցանկերը (օգտագործած գրականության)։

Հայ ժողովրդի պատմության գծով համալսարանի դասախոսներից մատենագիտական բնույթի ծավալուն աշխատանք է կատարում Աշոտ Աբրահամյանը, որը իբրև աղբյուրագետ իր հետազոտությունների ընթացքում սերտորեն առնչվում է մատենագիտական աշխատանքի հետ։ Գիտնականի հրատարակած մի շարք բնագրեր, ինչպես Անանիա Շիրակացու կամ Հովհաննես Իմաստասերի (Սարկավագի) մատենագրությունները և այլ հրատարակություններ իրենց բնույթով մի կողմից նման են մատենագիտության, թեև, իհարկե, մատենագիտություն չեն բառի ընդունված իմաստներով։ Սակայն Ա. Աբրահամյանի մի շարք գրքերի վերջում կան պատմական

գրականության արժեքավոր մատենագիտական ցանկեր, այդ թվում ձեռագրացուցակներ։ Հիշենք հեղինակի հետևյալ աշխատություններին կից ցանկերը. «Հայկական պալեոգրաֆիա» (1948, էջ 180—183), «Հայաստանը վաղ ֆեոդալիզմի շրջանում» (Հայ. ժող. պատմ., պր. 2, 1959, էջ 189—191)։ «Մատենադարանի ձեռագիր գանձերը» (1959, էջ 140—142) և այլն։

Նշելի են նաև Ա. Աբրահամյանի կազմած մատենագիտական այն թեմատիկ ուղեցույցները (ձեռագիր), որոնք վերաբերում են Մաշտոցի անվան մատենադարանի գրչագրերի մեջ եղած մի շարք բնագրերին (պահվում են Մատենադարանում)։

Հայոց պատմության վերաբերյալ մատենագիտական ցանկեր կան նաև համալսարանի մի շարք այլ դասախոսների աշխատություններին կից, ինչպես Թ. Հակոբյանի «Աշխարհագրության պատմություն» (1955, էջ 349—351), «Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության» (1960, էջ 432—439), «Երևանի պատմությունը» (1963, էջ 565—573) և այլ գրքերում, Վ. Պարսամյանի «Յարիդմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում» (Հայ ժող. պատմ., պր. 7, 1960, էջ 213—215) և այլ աշխատություններում, Հ. Ժամկոչյանի «Հայաստանը նախնադարյան-համայնական հասարակության և սարկատիրության շրջանում» աշխատության մեջ, Հ. Ութմազյանի «Սյունիքը IX—X դարերում» աշխատության մեջ (1958, էջ 335—342), Ս. Մելիք-Բախշյանի «Պավլիկյան շարժումը Հայաստանում» գրքում (1953, էջ 246—253) և այլուր։

Լեզվաբանության գծով մատենագիտական ցանկեր կան Հ. Աճառյանի աշխատություններում, այդ թվում «Հայոց անձնանունների բառարանում» (Հտ. ե, 1962, էջ 363—382), Գ. Սևակի «Ժամանակակից հայոց լեզվի տեսության» (1939, էջ 228) և «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» (1959, էջ 354) գրքերում, Է. Աղայանի «Հայ լեզվաբանության պատմություն» գրքում (1958, էջ 13—21), Ս. Ղազարյանի «Հայոց

լեզվի համառոտ պատմության» մեջ (1954, էջ 465—468), Գ. Ջահուկյանի «Քերականական ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» (1954, էջ 380—386) և «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» (1959, էջ 398—404), Հ. Բարսեղյանի «Արդի հայերենի բայի և խոնարհման սիստեմը» (Հրատ. հետ. մանկ. ինստ., 1953, էջ 412—417), Ա. Մարգարյանի «Խաչատուր Աբովյանը և աշխարհաբարը» (1958, էջ 196—198) և «Արդի հայերենի կապերը» (1955, էջ 101—102), Մ. Ասատրյանի «Բայի սեռերը ժամանակակից հայերենում» (1959, էջ 229—232), Պ. Պողոսյանի «Բայի եղանակային ձևերի ոհական կիրառությունները արդի հայերենում» (1959, էջ 234—242), Պ. Շարաբխանյանի «Գրաբարի շաղկապները» (1960, էջ 117—118) գրքերում և այլուր։

Համալսարանը 1941 թվականին հրատարակեց «Երևանի պետական համալսարանի 1921—1941 թթ. հրատարակությունների կատալոգը» (127 էջ)։ 1953 թվականից համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայում իր հրատարակելիք գրքերի թեմատիկ պլանները։

Ներկայումս Երևանի համալսարանի մատենագիտական աշխատանքի կենտրոնն է համալսարանի գրադարանի մատենագիտական բաժինը։ Բաժնում այժմ կան 6 աշխատակիցներ։ Բաժինը ստեղծվել է 1958 թվականին (նախապես 2 աշխատակցով)։

Մատենագիտության այս բաժինը համալսարանի դասախոսներին և ուսանողներին տալիս է մատենագիտական տեղեկանքներ, կազմում է քարտարաններ։

Ներկայումս բաժնում կան հետևյալ մատենագիտական քարտարանները.

1. Երևանի Համալսարանի դասախոսների աշխատությունների քարտարան։

2. «Հայոց լեզու». ընդգրկում է հայոց լեզվի մասին գրված գրքերն ու հոդվածները (առանց ժամանակային սահմանափակման)։

3. Ամսագրային հոդվածների քարտարան (հիմնականում կազմվում է համամիութենական գրապալատի ռուսերեն տպագիր քարտերից, սակայն լրացվում է նաև հայերեն ու օտար լեզուներով հոդվածների քարտերով).

4. Ներգրքային մատենագիտության առարկայական քարտարան.

5. Համալսարանում պաշտպանված դիսերտացիաների քարտարան.

Բաժինն ունի նաև տրված տեղեկանքների քարտարան։

1964 թվականին համալսարանի գրադարանի մատենագիտության բաժինը լույս ընծայեց Լ. Գասպարյանի (գրադարանի այլ աշխատողների օգնությամբ) կազմած «Երևանի պետական համալսարանի հրատարակությունների բիբլիոգրաֆիա»[1] մատենագիտական ցանկը (294 էջ)։

Մատենագիտության մեջ նյութերը համարակալված են և խմբավորված ըստ գիտության ճյուղերի, վերջում կան հայերեն և ռուսերեն անվանացանկեր։

Նկարագրությունները կատարված են կանոնավոր, ըստ «Միասնական կանոնների»։ Հայերեն բոլոր գրքերը ներկայացված են բնագրի լեզվով, հայերեն գրքերի նկարագրությունները, բացի բնագրի լեզվից, տրված են նաև ռուսերեն։ Լավ կլիներ, եթե ռուսերեն գրքերի նկարագրություններն էլ տրվեին երկու լեզվով՝ բնագրի և հայերեն։

Այս մատենագիտության հրատարակումը անշուշտ, միանգամայն դրական երևույթ էր հանրապետության գիտական կյանքում, ափսոս միայն, որ փոքր է տպաքանակը (1000 օր) և շատ գիտաշխատողներ, որ կուզենային ունենալ այս կարևոր գիրքը, չեն կարողացել ձեռք բերել։

---

1 Լ. Գասպարյան Երևանի պետական համալսարանի հրատարակությունների բիբլիոգրաֆիա։ 1922—1963։ 294 էջ։

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Իբրև պետական ձեռագրատուն Մաշտոցի անվան մատենադարանը, հասկանալի է, պիտք է հրատարակի ձեռագրացուցակներ։ Եվ իրոք, «Բանբեր Մատենադարանի» տրեգրքի (նախկինում՝ «Գիտական նյութերի ժողովածու») համարներում հանդիպում են նման նյութեր։ Օրինակ, Աշ. Աբրահամյանի «Համառոտ բիբլիոգրաֆիա Հայկական ՍՍՀ մատենադարանի գրչագիր մանր ժամանակագրությունների» («Գիտ. նյութերի ժող.», 1941, № 1, էջ 207—225), Կ. Յուզբաշյանի «Պետական Մատենադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուի մաՍ» («Բանբեր Մատենադարանի», 1956, № 3, էջ 231—237), Լ. Խաչիկյանի և Ս. Լալաֆարյանի «Философские труды в армянских рукописях Матенадарана» («Բանբեր Մատենադարանի» 1956, № 3, էջ 387—457) և այլն։

Իրենց բնույթով մոտ են ձեռագրացուցակներին ձեռագիր հիշատակարանների ժողովածուները։ Այդպիսիք խորհրդային Հայաստանի գիտնականներից առաջինը կազմել է Լևոն Խաչիկյանը (այժմ Մատենադարանի դիրեկտոր), հայոց ձեռագրերի աշխարհում բազմահմուտ մի պատմաբան։

Տարիների ընթացքում Լ. Խաչիկյանի կատարած աշխատանքը մարմնավորվել է երեք ստվար հատորների մեջ, «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (1950, 756 էջ), «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մաս 1 (1955, 820 էջ), մաս 2 (1958, 601 էջ)։ Այժմ հրատարակության է պատրաստվում նույն հատորի 3-րդ մասը։

Այս աշխատությունները հայ ժողովրդի միջնադարյան պատմության անփոխարինելի աղբյուրներն են ամփոփում։ Հին ձեռագրերի հիշատակարանների բնագրերը կազմված են մեծ խնամքով։ Խաչիկյանի աշխատանքը առհասարակ բարձր գնահատվեց մամուլում [1]։

---

1 *Տե՛ս, օրինակ,* Վ. Առաքելյան։—«Գրական թերթ», *1956, № 4,* Հ. Փա-

Աղբյուրագիտական շատ կարևոր արժեք ունեցող այս աշխատությունները ձեռագրացուցակներ են այնքանով, որ նրանցում թվարկվում են բազմաթիվ ձեռագրեր, որոնք ներկայացված են իրենց վերնագրերով, հիշատակարաններով և հասցեի (գրապահոցի ու համարի) նշմամբ։ Սակայն, ինչ խոսք, որ սրանք սովորական իմաստով ձեռագրացուցակներ, ուստի և մատենագիտական ցանկեր չեն (առաջնայինը հիշատակարանների բնագրերն են), և նրանց վրա այստեղ մանրամասն կանգ առնելու հարկ չկա։

Ձեռագրացուցակների կազմմամբ Մատենադարանում զբաղվել են նրա մի քանի աշխատակիցներ։ Սուրեն Քոլանջյանն, օրինակ, կազմել է մի քանի ձեռագրացուցակներ, գրել է մատենագիտական այլ բնույթի հոդվածներ, նվիրված Պենսիլվանիայի (Հունգարիա) և Ռումինիայի հայկական ձեռագրերին ու պարբերականներին։ Այդ աշխատությունների մի մասն է միայն հրապարակված [1]։

Ս. Քոլանջյանը մի քանի հետաքրքրական գրախոսականներում ճիշտ գնահատեց Հ. Անասյանի մատենագիտական աշխատանքը և ամենից ավելի շատ լրացումներն արեց «Հայկական մատենագիտությանը»։

Շուշանիկ Նազարյանի և Ասատուր Մնացականյանի աշխատասիրած գրքում՝ Պաղտասար Դպիրի «Տաղիկներ սիրոյ և կարոտանաց» (1958, հրատ. ԳԱ.), կան արժեքավոր մատենագիտական ցանկեր (էջ 267—271, 281—285), որոնք միասին բաղադրում են Պաղտասար Դպիրի մինչ այժմ եղած ամենից ավելի ամբողջական մատենագիտությունը։ Ընդարձակ է նաև Ս. Մնացականյանի «Հայկական զարդարվեստ» գրքի (1955, ԳԱ հրատ.) վերջում եղած մատենագիտությունը

վազյան։— «Տեղեկագիր» ՀՍԽՀ ԳԱ (հաս. գիտ.), 1956, № 10, էջ 115—120, Հ. Քյուրղյան։— «Բազմավեպ», 1956, էջ 185—188 և այլն։

1 Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1956, № 3, էջ 219—230, 1962, № 6, էջ 503—537, «Էջմիածին», 1948, № 10—12, էջ 60—67, «Տեղեկագիր» ՀՍԽՀ ԳԱ (հաս. գիտ.), Եր., 1957, № 8, էջ 53—58 և այլն։

(էջ 615—617, 620—626)։ Այնուհետև, մատենագիտական ցանկեր կան Մատենադարանում ստեղծված մի շարք այլ աշխատությունների վերջում, ինչպես, օրինակ, Հ. Փափազյանի «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» գրքում (Հտ. 1, պր. 1, 1956, էջ 308—309), Լ. Խաչերյանի «Գրչության արվեստի» լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում» (1962, էջ 402—405), Գ. Աբգարյանի «Սեբեոսի պատմությունը և Անանունի առեղծվածը» (1965, էջ 232—243) աշխատություններում և այլն։ Նշենք նաև, որ Գ. Աբգարյանի հիշյալ գրքում նշանակալի տեղ է գրավում միջնադարյան հայ մատենագիտական ցանկերի օգտագործումը։ Սեբեոսի անունով հայտնի պատմության վերաբերյալ իր մի շարք ճշտումները հեղինակն անում է միջնադարյան մատենագիտական ցանկերի աված որոշ տեղեկությունների հիման վրա։

Մատենադարանում նշանակալի աշխատանք է կատարվել նաև ձեռագրերը և նրանց մեջ եղած նյութերը ընթերցողներին ներկայացնելու համար տարբեր բնույթի տեղեկատու ուղեցույցներ կազմելու ուղղությամբ։ Կազմվել և լրացվել է ձեռագրատան գլխավոր (մայր) քարտային գրացուցակը, ստեղծվել են այլ կարգի քարտարաններ (սկզբնաղբյուրների, ժամանակագրական, գրչության վայրերի, մանրանկարիչների և այլն), գույքամատյան, թեմատիկ ցուցակներ (պատմագրության, մաթեմատիկայի, աշխարհագրության, բժշկության, քերականության և այլն)։

Մատենադարանի արխիվային բաժնում կազմվել է համապատասխան ուղեցույց-գրացուցակ։

Տպագիր գրականության բաժնում կազմված են մի շարք քարտային գրացուցակներ, որոնցից ուշագրավ են հնատիպ գրքերի՝ գույքահամարային, ժամանակագրական և այբբենական գրացուցակները։

Պետք է հիշել նաև Մատենադարանի տպագիր գրականության բաժնի նախկին վարիչ Շուշանիկ Շահնազարյանի կատարած մատենագիտական աշխատանքը։ Նա կազմել է մի

քանի չհրապարակված մատենագիտական ցանկեր, որոնցից են Մատենադարանում պահվող նյութերի հիման վրա գրված աշխատությունների ցանկը, «Արարատ» թերթի մատենագիտությունը և այլն։ Շ. Շահնազարյանը իր մի քանի հոդվածներով նպաստ է բերել նաև հայ հնատիպ գրքի պատմության ուսումնասիրման գործին [1], սակայն այդ մասին կխոսվի իր տեղում։

Մաշտոցի անվան մատենադարանի ամենից ավելի կարևոր և ծավալով ուղղակի հսկայական գործը կլինի այնտեղ պահվող ավելի քան 10.000 ձեռագրերի և բազմաթիվ պատառիկների ամբողջական ցուցակը։

Ուղղակի անբնական էր, որ հայ հին ձեռագրերի ամենահարուստ գանձարանը աշխարհում՝ մինչև վերջերս չուներ իր որևէ կարգի ձեռագրացուցակը, այն ժամանակ, երբ հայկական ձեռագրերի գրեթե բոլոր մեծ ու փոքր հավաքածուները (ողջ աշխարհում) ունեն իրենց ձեռագրացուցակները, մեծ մասամբ շատ հանգամանալից կազմված։ Այս վիճակը էլ ավելի տարօրինակ էր այն պատճառով, որ Մաշտոցի անվան մատենադարանն ունի գիտական աշխատողների և մատենագետների պատկառելի քանակ, որպիսին երազել անգամ չէին կարող (և չեն կարող) արտասահմանյան հայոց մատենադարանները։

Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերի հավաքածուն, ինչպես հայտնի է, գոյացել է տարբեր վայրերի մի շարք հավաքածուների, ինչպես և առանձին մարդկանցից ձեռք բերված գրչագրերի գումարից։ Հիմքն, իհարկե, կազմել է էջմիածնի մատենադարանի հին հավաքածուն։

Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերը բաղադրող առանձին հավաքածուների մեծ մասն ունեցել է իր ձեռագրացուցակները, ինչպես, ասենք, Ե. Լալայանի («Ջա-

---

1 Նորահայտ հնատիպ գրքերի ցանկեր են «Բանբեր Մատենադարանի» 4-րդ (էջ 425—436) և 5-րդ (էջ 513—526) համարներում տպագրված «Մատենագիտական նորույթները»։

վախք» աշխատության մեջ, Թիֆլիս, 1897, ապա նաև՝ «Յուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», Թիֆլիս, 1915 և այլն), Ն. Մառի («Յուցակ համառօտ ձեռագրաց վանուց Սևանայ», Մոսկվա, 1892), Մ. Բարխուդարյանցի («Արցախ» գրքում, Բաքու, 1895), Հ. Աճառյանի («Յուցակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանի...», Վիեննա, 1900, «Յուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի», Վիեննա, 1910) կազմածները և ուրիշներ։

Ամենակարևորն, իհարկե, Դ. Շահնազարյանի կազմած «Մայր ցուցակ»-ն է, որ հրատարակվեց 1863 թվականին Հ. Կարենյանցի կողմից (Թիֆլիսում)։ Սա էջմիածնի Մատենադարանի երկրորդ ձեռագրացուցակն է (Առաջինը՝ Հ. Շահխաթունյանցի կազմած և Մ. Բրոսսեի հրատարակածն է՝ 1840-ին)։

Ահա 1863 թվականից հետո այլևս էջմիածնի Մատենադարանի որևէ կարգի ամբողջական ձեռագրացուցակ չի հրատարակվում ավելի քան 100 տարի, այսինքն՝ մինչև որ 1965 թվականին լույս տեսավ Մաշտոցի անվան Մատենադարանի «Յուցակ ձեռագրաց»-ը [1]։

Նախքան այս ցուցակի կազմման աշխատանքներն սկսելը Մատենադարանի գիտխորհրդի ընդլայնված նիստերում լուրջ բանավեճեր էին գնում կազմվելիք ձեռագրացուցակի բնույթի և ծավալի շուրջ։ Վեճերին մասնակցում էին ինչպես Մատենադարանի, այնպես էլ այլ հիմնարկների գիտնականներ։

Բանն այն է, որ երբ Մատենադարանը տեղափոխվում էր նոր շենք (1959 թ.), այն սովորական ձեռագրատնից դարձավ հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ, այնտեղ ստեղծվեց մատենագիտության բաժանմունք, որի դերը պի-

---

1 Յուցակ ձեռագրաց *Մաշտոցի անվան մատենադարանի։ Կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան։ Ներածութ. Օ. Եգանյանի։ Խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի և Ա. Մնացականյանի։ Հատոր Ա։ Եր., 1965, 1635 սյունակ։*

ուի լիներ ստեղծել Մատենադարանի ձեռագիր հարստությունների ցուցակը։

Գիտնականների մի մասը գտնում էր, որ այդ ձեռագրացուցակը պետք է լինի հնարավորին չափ հանգամանալից, բնագրերի սկզբնատողերով, հիշատակարաններով, բանասիրական բնույթի ընդարձակ ծանոթագրություններով, մանրամասն ցանկերով և այլն։ Այսինքն՝ պահանջվում էր կազմել ձեռագրացուցակ մոտավորապես Հ. Տաշյանի կազմածի օրինակով։ Ենթադրվում էր, որ մատենադարանի շուրջ 10 000 ձեռագրերի համար կազմված այդպիսի ձեռագրացուցակը բաղկացած կլինի 20—25 ստվար հատորից։ Այս կարգի ձեռագրացուցակի կազմումը պաշտպանող բանասերները ելնում էին այն բանից, որ ձեռագրացուցակի կազմումը մատենադարանի, իբրև գիտական հիմնարկի, ամենակարևոր աշխատանքը պիտի լինի։

Գիտնականների մյուս խումբը գտնում էր, որ այդպիսի ծավալուն ձեռագրացուցակի կազմումը անիմաստ է մի շարք պատճառներով, որոնց մեջ երկրորդական չէին այն փաստարկները, ըստ որոնց նման մատենագիտական աշխատանքը հսկայական ուժեր և ահագին ժամանակ կպահի Մատենադարանից, իսկ ստացված արդյունքը չի արդարացնի ո՛չ այդ հսկա աշխատանքը, ոչ էլ ծախսված ժամանակը։ Բերվում էին նաև մի շարք ուրիշ լուրջ փաստարկներ հօգուտ ծավալուն ավելի փոքր ձեռագրացուցակի, որը կարող էր բաղկացած լինել շուրջ 10 հատորից։

Բանավեճերը շատ ձգձգվեցին և որևէ օգտակար հետևանքի հանգեցնել ի վիճակի չեղան։ Ի վերջո, առաջարկվեց նախապես կազմել մատենադարանի ունեցած ձեռագրերի մի ցանկ, ուր թվարկված ձեռագրերի մասին պետք է տրվեին նվազագույն տեղեկությունները։ Ահա այսպիսի ցանկի կազմմանը Մատենադարանի ղեկավարության որոշմամբ ձեռնամուխ եղան երեք աշխատակիցներ՝ Օնիկ Եգանյանը, Անդրանիկ Ջեյհունյանը, Փայլակ Անթաբյանը։

Ցուցակի կազմման և առաջին հատորի հրատարակման

աշխատանքները տևեցին մոտ 5 տարի։ Երկրորդ (և վերջին) հատորը ծրագրվում է լույս ընծայել 1967 թվականին։

Ձեռագրացուցակի առաջին հատորը ընդգրկում է Մատենադարանի ունեցած ավելի քան 10280 ձեռագրերից 5000։ Երկրորդ հատորում պետք է ներկայացվեն մնացած ձեռագրերը և կորած հին գրչագրերի 1683 պահպանված պատառիկները։

Առաջին հատորն սկսվում է Օ. Եգանյանի հետաքրքրական և ջանասիրաբար կազմված ներածականով, որ կոչվում է «Մատենադարանի ձեռագրական հավաքածուները»։ Այստեղ տրվում է Մատենադարանի պատմությունը սկսած 5-րդ դարից։ Հեղինակը հմտորեն օգտագործել է գրավոր տարբեր աղբյուրների մեջ Մատենադարանի մասին եղած մեծ ու փոքր բազմաթիվ տեղեկություններ։ Մանրամասն նկարագրված են հայ հին ձեռագրերի այն հավաքածուները, որոնցից բաղադրվել է Մատենադարանի ներկայիս մեծ հավաքածուն։ Խոսվում է տարբեր ժամանակներում էջմիածնում իբրև մատենապետ աշխատած անձանց, նրանց կատարած աշխատանքի մասին և այլն։ Մի խոսքով, Օ. Եգանյանի աշխատությունը մի ուշագրավ ավանդ է ինչպես Մաշտոցի անվան Մատենադարանի, այնպես էլ Հայաստանում գրադարանային գործի պատմության ուսումնասիրման մարզում։

Ձեռագրացուցակում 5000 ձեռագրերից յուրաքանչյուրին նվիրված է երկու-երեք տողից մինչև մեկ սյունակ։ Մի էջի վրա միջին հաշվով նկարագրված են յոթ ձեռագրեր։

Յուրաքանչյուր ձեռագրի նկարագրությունը բաղկացած է հետևյալ տարրերից. ա) համար, որ տվյալ գրչագրի հերթական գույքահամարն է ձեռագրատունը, բ) խորագիր, որ բաղկացած է ընագրի հեղինակի և երկի անունից և կամ ձեռագրի մատացածին (կազմողների կողմից դրված) կամ փաստական վերնագրից, գ) տվյալներ ձեռագրի ստեղծման, չափերի, նյութի, տառատեսակների մասին, ուր նշվում են գրչագրի ստեղծման թվականը, վայրը, գրիչը (ընդօրինակողը), ծաղկողը, կազմարարը, ստացողը, պատվիրողը, թերթերի

քանակը, ինչի վրա է գրված (թուղթ, մագաղաթ), մեծությունը, օգտագործված գրի տեսակը, մանրանկարները և այլն, դ) բովանդակությունը, ուր թվարկվում են ձեռագրում եղած նյութերն ու բնագրերը։

Ձեռագրացուցակն ունի հետևյալ օժանդակ ցանկերը՝ ժամանակագրական, Նախագաղափար և հետագա հիշատակարանների, Նյութերի, Պատառիկ պահպանակների, Տեղանուններ, Անձնանուններ։

Երկրորդ հատորը պետք է ունենա այս նույն ցանկերը երկու հատորի համար, գումարած ձեռագրերի նախկին և ներկայիս համարների համեմատական տախտակը, ինչպես և մի երկու նոր օժանդակ ցանկ, այդ թվում գուցե և՝ թեմատիկ ցանկ։

Երկրորդ հատորում տրվելու է նաև ձեռագիր պատառիկների տախտակ, ուր նշվելու է յուրաքանչյուր պատառիկի գրության ժամանակը (մոտավոր), չափսը, տառատեսակը, բովանդակությունը, թերթերի քանակը։

Անկասկած է, որ այս ձեռագրացուցակի հրատարակությամբ թե՛ Երևանում և՛ թե աշխարհի տարբեր մասերում ապրող հայագետ-բանասերների ձեռքը մի կարևոր և արժեքավոր տեղեկատու է տրվում Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագիր հարստությունների վերաբերյալ։

Այս ձեռագրացուցակով վերջապես հրապարակ է հանվում հայ ձեռագրերի աշխարհում ամենահարուստ հավաքածուի ամբողջական ցանկը։ Հենց միայն այսքանը բավական է հրատարակված ձեռագրացուցակի կարևորությունը հասկանալու համար։ Այնուհետև, ինչպես տեսանք, ցուցակում տրվում են յուրաքանչյուր ձեռագրի վերաբերյալ մի շարք շատ կարևոր տեղեկություններ, թեև շատ հակիրճ։

Այսուհետև Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերից օգտվող յուրաքանչյուր անձ չի կարող չդիմել այս «Ցուցակ ձեռագրաց»-ին։ Ճիշտ է, օգտվողների բոլոր հարցերին չէ, որ կպատասխանի ձեռագրացուցակը, բայց ամեն դեպ-

քում նախնական ուղղություն կտա հետագա պրպտումների համար։

Այդպիսով, «Ցուցակ ձեռագրաց»-ի երևան գալը շատ ուրախալի, ողջունելի երևույթ է։

Մի երկու խոսք ձեռագրացուցակի թերությունների մասին։ Նախ ասենք, որ այդ թերությունները երկու տեսակ են, առաջինը այն է, որ ձեռագրացուցակը հանգամանալից չէ, նրա տված տեղեկությունները չափազանց հակիրճ են։ Հասկանալի է, որ ցուցակի նախապես որոշված բնույթի հետ կապված այս թերությունը կազմողների կամ խմբագիրների գործած ինչ-որ սխալը չէ։ Այլ կերպ ասած, թերություն է ցուցակի ոչ հանգամանալից, հակիրճ լինելու բնույթն ինքը։ Թերությունների մյուս խումբը կազմողների և խմբագիրների աշխատանքի հետ է կապված։ Խոսքը վերաբերում է թույլ տրված տարբեր վրիպակների, բացթողումների և այլ թերիների, որոնք լինում են ամեն մի մատենագիտության մեջ։ Սակայն կան նաև թերություններ, որոնք այս երկուսի միացումն են. երբ կազմողները դժվարացել են հակիրճ ձեռագրացուցակի ընձեռած փոքր հնարավորությունները լիովին օգտագործել։ Քննենք այդ թերություններից մի երկուսը։

Ամենից ավելի նկատելի է այն, որ ձեռագրերում եղած յուրաքանչյուր առանձին բնագիրը բնորոշող կարևորագույն հատկանիշները հաճախ չեն նշվում։ Բազմաթիվ դեպքերում տարբեր նյութեր պարունակող ձեռագրերի բովանդակությունը, ինչպես ասվեց, նկարագրությունների տակ տրվում է։ Մեծ մասամբ նշվում է բնագրի հեղինակը և վերնագիրը կամ, հեղինակ չլինելու դեպքում, միայն վերնագիրը։ Օրինակ, վերցնենք 55 համարի ժողովածուի բովանդակությունը՝ «Լուծմունք Վեցօրէից Բարսղի։ Դաւթի և Յակոբայ Լուծմունք Դիոնիսիոսի։ Լուծմունք Յաղագս բնութեան մարդոյն Նեմեսիոսի» և այլն։

Սակայն շատ դեպքերում էլ տարբեր նյութեր պարունակող այսպիսի ձեռագրերի բովանդակությունը անբավարար է բացվում։ Այսպես, օրինակ, Ճառընտիրների մեջ սովորաբար

լինում են մի շարք հեղինակների ճառեր, խրատներ, ներբողներ և այլն, սակայն բովանդակության մեջ թվարկվում են միայն հեղինակները, չեն նշվում առանձին ճառերի, խրատների կամ ներբողների անունները։ Վերցնենք 4756 համարի ճառընտիր-ը, բովանդակության մեջ կարդում են.

«Բվնդ. ճառք, խրատք (Մովս. Երզնկացի, Յովհ. Երզնկացի, Ոսկեբերան, Թէոփիլոս, Գէորգ վրդ., Եղիշէ, Սարգիս Շնորհալի, Գրիգոր վրդ., Բարսեղ, Վարդան վրդ., Յովհ. Գառնեցի, Եփրեմ, Յակ. Սրճեցի, Ան. Նարեկացի, Եւսեբիոս Կեսարացի, անանունք)։ Ներբողեանք (Եփրեմ, Ոսկեբերան, Յակ. Սրճեցի)...»։ Այստեղ ճառ և խրատ վերնագրերի դիմաց նշված են 15 հեղինակներ և անորոշ քանակով անանուններ, բայց որևէ կերպ չեն բերված այդ ճառերի և խրատների անունները։ Նշված հեղինակներից շատերը մի շարք տարբեր ճառեր ունեն, և ձեռագրի բերված բովանդակությունից անհնար է իմանալ, թե ո՛ր ճառերի կամ խրատների մասին է խոսքը։

Նույն բանը տեսնում ենք մի շարք ժողովածու-ների բովանդակության մեջ։ Օրինակ, 3239 համարի ժողովածու-ի բովանդակության մեջ կան. «Ճառք, Քարոզք, Խրատք (Բարսեղ, Եփրեմ, Ոսկեբերան, Յովհ. Մանդակունի, Վարդ. Այգեկցի, Եղիշէ վրդ. Թէոփիլոս, Գրիգոր, Յովհ. Երզնկացի, անանուն)»։ Դարձյալ նույն անորոշությունը։

Այստեղ պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ ճառ, Քարոզ, Խրատ, ըստ էության, իրական վերնագրեր չեն, այլ մեծ մասամբ կազմողների կողմից դրված ընդհանուր բնույթի անուններ, որոնք բնագրերի իրական վերնագրերին ճշտությամբ չեն համապատասխանում և մանավանդ ոչինչ չեն ասում նրանց բովանդակության մասին։

Նույնիսկ հակիրճ ձեռագրացուցակի մեջ էլ հարկ էր հեղինակների առանձին երկերի (ճառերի, քարոզների և այլն) իրական անունները թվարկել։ Իսկ ընդարձակ ձեռագրացուցակում շատ դեպքերում հարկ կլիներ տալ նաև բնագրերի սկզբնատողերը, քանի որ միևնույն բնագիրը, ինչպես հայտ-

նի է, հաճախ տարբերակներ է ունենում, երբեմն իրարից շատ հեռացած։ Սակայն այս ձեռագրացուցակից սկզբնատղեր պահանջել չի կարելի։

Այնուհետև, ձեռագրացուցակի նյութերի և անձնանունների ցանկերում մեծ մասամբ չկան բնագրերի իրական անունները։ Օրինակ, վերը բերված «Լուծմունք Վեցօրէից Բարսղի» կամ «Լուծմունք յաղագս բնութեան մարդոյն Նեմեսիոսի» բնագրերը, որ նշված են 55 համարի ձեռագրի բովանդակության մեջ, ցանկերում տեղ չեն գտել։ Նրանք նյութերի ցանկում անհուսալիորեն թաղվել են «Մեկնողականք. Մեկնութիւնք, Լուծմունք սուրբ և ծիսական գրեանց» ընդհանուր, ոչինչ որոշակի շատող վերնագրերի տակ եղած շուրջ 1000 ձեռագրերի համարների մեջ։

Նյութերի ցանկում հաճախ ոչ թե ձեռագրերի նյութերն են բացահայտված, այլ հավաքված են գրչագիր մատյանների և բնագրերի ունեցած կամ կազմողների կողմից դրված ընդհանուր բնույթի անունները և այդ անունների տակ նշված են այն ձեռագրերի համարները, որոնք այդ անուններով են նկարագրված կամ որոնց բովանդակության մեջ կան այդպիսի անուններ։

Որոշ դեպքերում այդ կարգի անվանաբառերը, իհարկե, պատկերացում տալիս են համապատասխան բնագրերի մասին։ Օրինակ, այնպիսի կանոնական բնագրերի անուններ, ինչպես Աստուածաշունչ, Աւետարան, Սաղմոսարան, Շարակնոց ընդհանուր պատկերացում տալիս են բնագրերի մասին (թեև այդ բնագրերում էլ լինում են առանձնահատկություններ, որոնք չեն նշված)։ Սակայն ավելի շատ դեպքերում նյութերի ցանկում թվարկված անվանաբառերը ուղղակի ոչինչ չեն ասում օգտվողին։ Արդեն ասվեց «Մեկնողականք»-ի մասին։ Կան նաև ուրիշ նման վերնագրեր։ Օրինակ, Քարոզ բառի տակ էլ թվարկված են շուրջ 800 ձեռագրերի համարներ, այսինքն՝ նշված են այդ ձեռագրերում եղած շուրջ 800 ամենատարբեր բովանդակության բնագրեր, որոնք կարող են համարվել քարոզ կամ որոնց վերնագրում

կա fառոզ բառը և կամ որոնց կազմողները այդպես են կոչել։ Այսպիսի թվարկումը, նման համաբարակույտը միայն վիճակագրական արժեք կարող է ունենալ, իսկ ուսումնասիրող ընթերցողին ոչինչ ասել չի կարող։ Համարների նույնպիսի կուտակումներ կան նաև այլ վերնագրերի տակ՝ Զափաբերականաճ, ձաոռ, Փիլիսոփայականաճ, Պատմագրականաճ, ժողովածոյ, Խրատականաճ և այլն։ Արդյո՞ք ավելորդ աշխատանք չի թափվել այս կարգի անվանաբառերի տակ հարյուրավոր համարներ հավաքելու համար։ Եթե այդ մեծ աշխատանքը, որ կազմողները թափել են «Նյութերի ցանկը» ստեղծելու համար, գործադրեին այս հակիրճ ձեռագրացուցակի ընձեռած հնարավորություններուն սահմաններում մի շարք բնագրեր ինչ-որ չափով տարբերակելու համար, շատ ավելի մեծ բան արած կլինեին։ Օրինակ, նույնիսկ ձեռագրացուցակի բովանդակություններում չտրված վերնագրերը կարելի էր տալ առանձին ցանկով ու նշել յուրաքանչյուր վերնագրով բնագիրը պարունակող ձեռագրի համարը։

Անձնանունների ցանկը շատ ավելի օգտակար է և ընթերցողի մի շարք կարևոր հարցումներին պատասխանում է, բայց դարձյալ թերություններ ունի։ Ձեռագրացուցակում բանասիրական քննական աշխատանք, իհարկե, տարվել է. ճշտվել են շատ բնագրերի հեղինակների, գրիչների, ծագկողների անուններ և այլն, սակայն կազմողները չեն խորացել այնպիսի հարցերում, ինչպես այն, թե տվյալ հեղինակի ու նրա գործերի մասին ինչ կարծիքներ կան, արդյոք այս կամ այն հեղինակի անունով հայտնի բոլո՞ր գործերն են նրանը, թե՞ ոչ, և այլն։ Ձեռագրում արձանագրվածը նշել,— ահա հիմնականում սա է եղել կազմողների մոտեցումը հիշյալ հարցին։ Այդ բանը արտացոլվել է նաև օժանդակ ցանկերում։ Օրինակ, Մովսես Խորենացու անունով հայտնի «Աշխարհացոյց»-ը շատերը լուրջ հիմքով համարում են Անանիա Շիրակացուը, ուրիշները՝ անհայտ հեղինակի, երրորդները գրտնում են, որ այդ գործը նախապես կազմել է Խորենացին, ապա հիմնովին վերակազմել Շիրակացին։ Այս ամենի մա-

սին խոսք չկա ձեռագրացուցակում։ Եթե որևէ ձեռագրում «Աշխարհացույց»-ը Խորենացու անունով է դեպեղված, կազմողները այն Խորենացուն էլ համարել են, առանց մի փոքր ծանոթագրության անգամ։ Նույն բանը տեղ է գտել անձնանունների ցանկում. «Աշխարհացոյց»-ը դրված է Մովսես Խորենացու անվան տակ, իսկ Անանիա Շիրակացու անվան տակ որևէ հղում կամ ծանոթություն չկա այն մասին, որ այդ երկը սմանց կարծիքով Շիրակացունն է։

Կամ՝ Մևսրոպ Մաշտոցի անունով հայտնի են տպաշխատության շարականները, իսկ Գրիգոր Լուսավորչի անունով հայտնի «Յաճախապատում»-ը (կամ նրա մի մասը) որոշ բանասերներ փորձում են վերագրել Մաշտոցին։ Այս իրողությունների մասին էլ որևէ ակնարկ չկա ձեռագրացուցակում կամ ցանկերում։ Մևսրոպ Մաշտոցը որպես նրա անունով հայտնի շարականների հեղինակ բնավ հանդես չի գալիս ձեռագրացուցակում։ Եվ այսպես, բոլոր մյուս բնագրերի վիճելի կամ անվիճելի հեղինակների բազմաթիվ հարցեր, ինչպես և այլ բնույթի ուրիշ շատ կարևոր խնդիրներ չեն արծարծվում ձեռագրացուցակում կամ օժանդակ ցանկերում։

Անձնանունների ցանկը որոշ դեպքերում քիչ օգտակար է դառնում։ Օրինակ, Ներսես Շնորհալու անվան տակ դրված են 300-ից ավելի համարներ։ Պարզ է, որ ընթերցողը չի կարող իմանալ, թե դրանցից որն է «Յիսուս որդի»-ն, որը՝ «Ողբ Եդեսիոյ»-ն, որը՝ հանելուկները և այլն, դեռ չհաշված միևնույն երկերի տարբերակների որոշման հարցը։ Նույն կարգի համր թվերի հավաքածուներ են դրված Գրիգոր Տաթևացու, Գրիգոր Նարեկացու, Առաքել Սյունեցու և մյուս նշանավոր հեղինակների անունների տակ։ Հեղինակների առանձին երկերը այստեղ էլ չեն տարբերակվում։

Մի խոսքով, ձեռագրացուցակը մի շարք դեպքերում չի պարունակում ուսումնասիրողներին ամենից ավելի շատ անհրաժեշտ տեղեկատվությունը։ Այդ մասին ասված է նաև ձեռագրացուցակի «Երկու խոսքում». «...ցուցակը, իհարկե, ի վիճակի չէ սպառիչ պատասխան տալու մատենագիտական

բոլոր հարցումներին, սակայն անտարակույս այն կդյուրացնի հայագետների աշխատանքը, մանավանդ վերը թվարկված ուղեցույցների և քարտարանների, ինչպես նաև տպագրվող ձեռագրաց հիշատակարանների, «Հայկական մատենագիտության» ծավալուն աշխատության և այլ աղբյուրների օգտագործմամբ»: Այս խոստովանությունը, իհարկե, մատնանշում է ձեռագրացուցակի առանձնահատկությունը, նրա հակիրճ բնույթը. պարզվում է, որ «Յուցակ ձեռագրաց»-ը չի փոխարինելու Մատենադարանում եղած քարտարաններին և ուղեցույցներին:

Ձեռագրացուցակում եղած բացերի, սխալների և վրիպակների մի մասը ուղղված է գրքի վերջում կցված «Լրացումներ և ուղղումներ» բաժնում. մի մասն, իհարկե, մնում է:

«Յուցակ ձեռագրաց»-ում տեղ են գտել մատենագիտական ու լեզվական բնույթի անճշտություններ, որոնցից հեշտությամբ կարելի էր խուսափել: Օրինակ, խորագրում երկի հեղինակը և վերնագիրը շարված են միևնույն գլխագիր տառերով, որ մատենագիտական նկարագրության տեսակետից սխալ է. հեղինակը վերնագրից պետք է տարբերվի որևէ կերպ (ձեռագրում՝ ընդգծումով, տպագիր երկում՝ տառատեսակների տարբերությամբ): Նույն սխալը կրկնված է գրչագիր մատյանների բովանդակություններում՝ հեղինակն ու վերնագիրն այստեղ ևս որևէ ձևով չեն տարբերակված:

Այնուհետև, բոլոր դեպքերում (որոնք շատ են) հիշտ չէ օգտագործած հայերենի հարցական նշանը՝ պարույկը (՞): Հայերենում բառի վրա հարցականը դրվում է միայն այն դեպքում, երբ այդ բառը հարցական հնչերանգով է արտասանվում կամ այդպես պետք է արտասանվի (ըստ որում, այդ նշանը դրվում է բառի հարցական հնչվող ձայնավորն արտահայտող տառի վրա): Այլ դեպքերում, երբ հարկ է լինում ցույց տալ, որ որևէ թվական, անձնանուն, տեղանուն սուտ չէ, կասկածելի է, հայերեն հարցականը դրվում է բառի կողքին, փակագծում, ինչպես՝ 1594 (՞), Գլաձոր (՞), Շնորհք երից (՞) և այլն: Մինչդեռ ձեռագրացուցակում հա-

կառակն է արված, ամենուրեք կասկածելի բառերի վրա է դրված հարցականը, ինչպես, օրինակ՝ «1737՞ թ.), «Գլաձո՞ր», «Սկևռա՞յ», «Նոր Ջուղա՞յ», «Մեծոփայ վա՞նք», «Գրիգոր Խլաթցի՞», «Գրիչ՝ Շնո՞րհք երէց», «Գրիչ՝ Մխիթա՞ր», «Ծաղկող՝ Թորոս Ռոսլի՞ն» և այսպես շարունակ։ Ստացվում է այնպես, որ կազմողները անընդհատ հարց են տալիս օգտվողին։ Իսկ երբեմն էլ այլ բյուրիմացության տեղիք է տրվում, օրինակ, «Գրիչ՝ «Շնո՞րհք երէց» դեպքում կարծես կազմողները հարցնում են՝ Շնո՞րհք երեցն է եղել գրիչը, թե՞ մի այլ երեց, և այլն։ Կամ՝ հանդիպում են այնպիսի սխալներ, ինչպես՝ «Ստացող՝ «Թո՞վմայ վրդ.» (հայերենում Թովմա անունը հարցական արտասանելու համար վերջին ա ձայնավորն են հարցական հնչերանգով արտաբերում, և ոչ՝ առաջինը, թեև, ինչպես ասվեց, հարցման կարիք այստեղ բնավ չկա)։ Պարզ է, որ հարցական նշանների գործածման կարգը խախտված է տեղ շահելու նպատակով։

Կան նաև, ինչպես ասում են, «տեխնիկական բնույթի» թերիներ։ Օրինակ, օժանդակ ցանկերում նշված անունները կամ համարները երբեմն անհրաժեշտ տեղը չեն հղում ընթերցողին։ Այսպես, 1549 այունակում (անձնանունների ցանկ) Մովսէս անվան տակ գտնում են «սրկ., 1628 թ., ծաղկման օժանդակող ի Բաղէշ— 198»։ Սակայն 198 համարի տակ եղած նկարագրության մեջ Մովսէս անուն չկա։ Անձնանունների ցանկում նույն Մովսէս-ի տակ կան նաև 4263, 835, 4457, 326, 3055, 4322 համարները, սակայն այդ համարներն ունեցող ձեռագրերից ոչ մեկի նկարագրության մեջ Մովսէս *չկա, այլ կա* Մուրադ։ *Պարզվում է, որ ցանկում Մուրադ-ի փոխարեն Մովսէս է դրվել։ Կամ՝ տեղանունների ցանկում Վեհեփիկ-ի դիմաց դրված համարների մեջ կա 4338։ Բայց ենք անում ձեռագրացուցակը ուսումնասիրելու համար, թե այդ ինչ ձեռագիր է դրված Վենետիկո՞ւմ, բայց այդ համարի տակ նկարագրված է էջմիածնում 1864 թվականին գրված մի ձեռագիր։ Այս կարգի անճշտություններ քիչ չեն ցանկերում, սակայն նրանք, թերևս, բնականոն են ամեն մի*

մատենագիտության օժանդակ ցանկի համար, ուստի ավելի կանգ առնել նրանց վրա հարկ չկա։

«Երկու խոսքում» Մատենադարանի ղեկավարությունը խոստանում է մոտ ապագայում հրատարակության պատրաստել առանձին մատենագիտական ցուցակներ, որոնք կբացահայտեն ձեռագրերի բովանդակած նյութերը ըստ բնագավառների (պատմագրություն, փիլիսոփայություն, աստղաբաշխություն և այլն)։ Սա, անշուշտ, շատ լուրջ լրացում կլինի «Ցուցակ ձեռագրաց»-ին, սակայն, այնուամենայնիվ, հարց է առաջանում՝ այդ ամենով լուծվո՞ւմ է արդյոք Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրացուցակի հարցը։

Շատերը գտնում են, որ՝ ոչ, որ այդ բնագավառային ցանկերով անգամ այդ հարցը չի լուծվում և որ պետք է օրակարգի մեջ մնա բազմահատոր, հանգամանալից (գույքահամարային հերթականություն ունեցող) ձեռագրացուցակի կազմման հարցը, ձեռագրացուցակ, որ իր կազմման սկզբունքներով պետք է նման լինի Հ. Տաշյանի և Հ. Ոսկյանի կազմած ձեռագրացուցակներին։ Այսպես մտածողների մի մասը հրատարակված «Ցուցակ ձեռագրաց» համարում է գրեթե անօգուտ մի գիրք։

Մեզ թվում է, որ սա ծայրահեղ և ոչ միշտ կարծիք է, քանի այն հայտնողները միանգամայն վաստակաշատ բանասերներ են։ Մեծ, հանգամանալից ձեռագրացուցակի հարցը, թվում է, ոչ ոք չի կարող օրակարգից հանել, բայց և ոչ ոք չի կարող այն մտցնել օրակարգի մեջ, մինչև որ չլինի մի այնպիսի մատենագետ կամ այնպիսի մատենագետներ, որ իրենց նվիրեն այդ հսկայական ու դժվարին աշխատանքի կատարմանը։ Ինչպես ցույց է տվել մատենագիտական աշխատանքի փորձը, նման բանասիրական-մատենագիտական բնույթի խոշոր աշխատանքները հիմնարկային ծրագրով, որևէ բաժնի աշխատակիցներին հանձնարարելու միջոցով իրագործելը ուղղակի անհնար է։ Այստեղ անհրաժեշտ է աշխատողի բարյացակամությունը և խանդավառությունը։ Մինչդեռ փաստ է, որ Մատենադարանի, ինչպես և այլ գիտական հիմնարկ-

ների և ոչ մի փորձված գիտնական մինչև օրս պատրաստակամություն չի հայտնել նման մի հսկա ձեռագրացուցակ կազմելու։ Ընդհակառակը, տողերիս գրողը հիշում է, թե ինչպես Մատենադարանի աշխատողները, որ զբաղված էին մեծ, բազմահատոր ձեռագրացուցակի կազմմամբ, բերկրանքով ընդունեցին այն լուրը, որ այդ մեծ ձեռագրացուցակը այլևս չի կազմվելու։ Նրանց ձգում էր մենագրություններ գրելու և բնագրեր հրատարակելու, ինչպես ասում են, «երևացող» գործը։ Հասկանալի է, որ ձեռագրացուցակ կազմելու մատենագիտական աշխատանքը շատ ավելի ծանր է, հոգնեցուցիչ, քան մենագրություն գրելը և բնագիր հրատարակելը, մինչդեռ այս վերջիններն ավելի հարգի են գիտական աշխարհում։

Իսկ առայժմ «Յուցակ ձեռագրաց»-ի տպագրված առաջին հատորը ցույց է տալիս, որ իր թերություններով հանդերձ այն շատ լուրջ օգնություն է Մատենադարանի ձեռագիր գանձերից օգտվողներին։ Երկրորդ հատորի հրատարակմամբ այդ օգնությունը ավելի որոշակի կլինի։ Եվ, ինչ խոսք, մերժելի է այն տեսակետը, թե մեծ ջանքերով ստեղծված այս արժեքավոր մատենագիտությունը հավասար է չլինելուն։

Այս դեպքում էլ մատենագիտական ցանկի պիտանիության հարցը որոշելու համար սխալ չի առաջնորդվել այն օգտագործելու չափով։ Մենք հետևեցինք, թե Մատենադարանի ընթերցողները որքանով են օգտվում «Յուցակ ձեռագրաց»-ի Ա հատորից։ Պարզվեց, որ օգտվողները բավական շատ են. ձեռագրերի ընթերցման սրահում հատորը մեծ մասամբ ազատ չէր լինում, և հարկ ղգացվեց ընթերցողների տրամադրության տակ դնել հատորի երկրորդ օրինակը։

Այսպիսով, «Յուցակ ձեռագրաց»-ի կազմողներն ու խմբագիրները, հիրավի, շնորհակալ և չափազանց օգտակար գործ են արել՝ ստեղծելով Մատենադարանի բոլոր ձեռագրերի նկարագրություններն ամփոփող այս մատենագիտությունը, որը թեև ոչ լիովին, բայց նկատելի չափով լրացրեց տասնյակ տարիներ ղգացվող մեծ բացը։

ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալում կատարված մատենագիտական աշխատանքը նախ ներկայացված է Վ. Ի. Լենինի երկերի տեղեկատուի ցանկերով։ 1953 թվականին լույս տեսավ Վ. Ի. Լենինի երկերի 4-րդ հրատարակության (հայերեն) այբբենական ցանկը հետևյալ վերնագրով. «Այբբենական ցանկ Վ. Ի. Լենինի երկերի 4-րդ հրատարակության մեջ մտած աշխատությունների» (178 էջ)։

Այնուհետև, 1961 թվականին լույս տեսավ «Վ. Ի. Լենինի 4-րդ հրատարակության տեղեկատու հատորի» 2-րդ մասը, որ կազմված էր ռուսերեն համանուն տեղեկատուի (Մոսկվա, 1956) հիման վրա, ավելի հիշտ, նրա փոխադրությունն էր հայերենի։ Այստեղ մտել է նաև նախապես առանձին լույս տեսած վերոհիշյալ այբբենական ցանկը։ Տեղեկատուի մեջ կան նաև հետևյալ բաժինները՝ «Վ. Ի. Լենինի կեղծանուններ», «Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի այն աշխատությունների ցանկը, որոնցից մեջբերումներ է անում և որոնք հիշատակում է Վ. Ի. Լենինը», «Պարբերական հրատարակությունների ցանկ», «Աշխարհագրական անունների ցանկ», «Վ. Ի. Լենինի օգտագործած և հիշատակած գեղարվեստական գրականության և քննադատական գործերի, առածների, ասացվածքների ու թևավոր խոսքերի ցանկ»։

Այս տեղեկատուի առաջին մասը, որ պետք է ընդգրկեր Վ. Ի. Լենինի երկերի 4-րդ հրատարակության առարկայական- այբբենական ցանկը (ռուսերենը լույս է տեսել 1955 թվականին), այնպես էլ հայերեն լույս չտեսավ։

Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի գիտական աշխատողները, հասկանալի է, որ նույնպես մատենագիտական մեծ աշխատանք են տանում, որի մի մասը արտահայտվում է նրանց գրքերի հրատարակությունների վերջում՝ ցանկի կամ տողատակում՝ ծանոթությունների ձևով։

Այս ինստիտուտի գծով կատարված մատենագիտական աշխատանքի ավելի ծավալուն արդյունք է ինստիտուտի նախկին դիրեկտոր Խիկար Բարսեղյանի «Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիան»[1]: Այս մատենագիտությունը, ինչպես հեղինակն է ասում, նրա «Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն (1900—1920 թթ.)» աշխատության հավելվածն է: Սակայն մատենագիտությունը առանձին վերցրած մի վերջավորված աշխատություն է և իր տեղն է գրավում Հայաստանում հրատարակված առաջնային մատենագիտական ցանկերի շարքում:

Մատենագիտության մեջ ընդգրկված են ցարական Ռուսաստանում լույս տեսած հայերեն բոլշևիկյան թերթերը (47 անուն), տրված է յուրաքանչյուրի բնութագիրը, վերլուծված են ամեն մի թերթի մեջ լույս տեսած նյութերը: Մատենագիտությունը թեև կոչվում է «Պարբերական մամուլի», բայց ընդգրկում է նաև Վ. Ի. Լենինի աշխատությունների նախախորհրդային շրջանի հայերեն հրատարակությունների մատենագիտությունը, 1900—1920 թվականներին հրատարակված հայերեն հեղափոխական կոչերի ու թռուցիկների ցանկը և նախախորհրդային հայ բոլշևիկյան մամուլին թղթակցած մի շարք հեղինակների ծածկանունների վերծանումը: Ունի նաև հավելված մի քանի լրագրերի նկարագրություններով, ռուսերեն ամփոփում և օգտագործված գրականության ցուցակ:

Հայ բոլշևիկյան մամուլի մատենագիտության մասը, որ հիմնականն է գրքում, հետևյալ կազմությունն ունի. ժամանակագրական կարգով իրար հաջորդում են առանձին լրագրերի նվիրված բաժինները: Յուրաքանչյուր բաժին-հոդված սկսվում է ոչ թե թերթի սովորական մատենագիտական նկարագրությամբ, այլ նրա ճակատի լուսանկարով, ինչպես ժամանակին արել էր Գ. Լևոնյանը:

---

1 Խ. Բարսեղյան Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա: Եր., Հայպետհրատ, 1959, XV, 387 էջ:

Այնուհետև, տրվում է տվյալ պարբերականի հակիրճ բնութագիրն ու պատմությունը. ով է հիմնել, ինչ հանգամանքներում, ով կամ ովքեր են խմբագրել և այլն։ Դրանից հետո տրվում է թերթի յուրաքանչյուր համարի բովանդակությունը, այսինքն՝ հոդվածների ցանկը։ Հիմնական բաժնում և հավելվածում նկարագրված տարբեր պարբերականների հոդվածները ընդհանուր համարակալում ունեն, վերջին համարն է 6200, որ նշանակում է, թե այդքան հոդված է նկարագրված։

Յուրաքանչյուր պարբերականի բնութագրման տակ թվարկվում են այն գրադարանները կամ արխիվները, ուր գտնվում են տվյալ պարբերականի հավաքածուները։

Այս վերջին տեղեկությունների առկայությունը Խ. Բարսեղյանի մատենագիտությանը տալիս է միաժամանակ նաև գրադարանային համահավաք գրացուցակի բնույթ, որ ավելի է բարձրացնում աշխատության արժեքը։ Ընթերցողը, ուսումնասիրողը անմիջապես ստանում է իրեն հետաքրքրող պարբերականի հասցեն և ազատվում է լրացուցիչ որոնումներից, որոնք կարող էին նաև շատ երկար տևել և երբեմն ապարդյուն վերջանալ։

Հսկայական, մանրակրկիտ աշխատանք է կատարել Խ. Բարսեղյանը։ Իսկական մատենագետի բծախնդրությամբ նա որոնումներ է կատարել Հայաստանի և Խորհրդային Միության այլ վայրերի բազմաթիվ գրադարաններում ու դիվանատներում, հայտնաբերել անհրաժեշտ պարբերականները, երբեմն նաև այնպիսիք, որոնցից ընդամենը մեկ համար է լույս տեսել։ Ապա նա ստուգել և ուղղել է պարբերականի իրոք բոլշևիկյան լինելը, վերլուծական նկարագրության է ենթարկել յուրաքանչյուր համար։ Էլ չենք խոսում թերթերի լուսանկարման և ծածկանունների վերծանման հետ կապված հոգնեցուցիչ աշխատանքների մասին։

Այդ քրտնաջան աշխատանքի շնորհիվ է, որ ներկա մատենագիտությամբ նախ հրապարակ են բերված նախախորհրդային շրջանի մի շարք բոլշևիկյան հայ թերթեր, որոնք

չկան նախորդ բոլոր մատենագիտությունների մեջ, այդ թվում Հ. Պետրոսյանի «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիայի» բոլշևիկյան մամուլին նվիրված հատորում[1]: Ճշտված է մի շարք պարբերականների քաղաքական ուղղությունը, որոնք Գ. Լևոնյանի աշխատության մեջ ճիշտ չեն եղել ներկայացված[2]:

Գովասանքի է արժանի նաև այնպիսի մի մանրուք, ինչպես, ասենք, այն, որ Բարսեղյանը թվարկել է նյութին վերաբերող մի շարք պարբերականներ, որոնք ինքը չի կարողացել հայտնաբերել (տես աշխատության XII էջում), բայց որոնց գոյության մասին ինքը տեղեկացել է զանազան աղբյուրներից:

Ա. Բաբայանի «Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն թարգմանությունները» մատենագիտության համեմատ նորություններ կան նաև Լենինի աշխատությունների Խ. Բարսեղյանի կազմած ցանկում:

Ինչ վերաբերում է նյութերը ներկայացնելու եղանակին, ապա պետք է ասել, որ մատենագիտական նկարագրության ընդունված միասնական կանոնները այստեղ ևս պահպանված չեն: Սա մի թերություն է, որ, ցավոք, վերաբերում է խորհրդային հայ մատենագիտության լավագույն երկերի մի զգալի մասին (Գ. Լևոնյանի, Հ. Անասյանի գործերը և այլն): Մենք հատուկ գլխում դեռ կխոսենք այս հարցի մասին, իսկ այժմ ասենք միայն, որ նյութերի նկարագրության եղած միասնական կանոններին հավատարիմ չմնալը կարելի է նաև պարտադիր չհամարել, եթե մատենագիտական անճշտությունների պատճառ չդառնա այն: Մինչդեռ որոշ դեպքերում մատենագիտական աշխատությունների մեջ տեղ գտած անճշտությունները պայմանավորված են լինում տպագիր երկերի նկարագրության մատենագիտական կանոնների պահ-

---

1 Տե՛ս Խ. Բարսեղյան Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա, էջ XI:

2 Նույն տեղում, էջ VII:

պանման բացակայությամբ։ Ներկա մատենագիտության մեջ, բարեբախտաբար, այդ կարգի բացերը հատուկենտ են, ինչպես, օրինակ, Լենինի աշխատությունների մատենագիտական ցանկի մեջ առանձին գրքերով հրատարակված աշխատությունների նկարագրությունների մեջ չի նշված էջերի քանակը կամ՝ փոխված են որոշ երկերի այն վերնագրերը, որոնք իրականում եղել են գրքերի վրա և այլն։

Իբրև թերություն պետք է նշել մատենագիտության մեջ նկարագրված լրագրային հոդվածների հեղինակների այբբենական անվանացանկի բացակայությունը։ Այդպիսի ցանկը կօգներ անմիջապես գտնելու այս կամ այն հեղինակի հոդվածները, տարբեր թվերին, տարբեր պարբերականներում լույս տեսած։ Լավ կլիներ նաև, եթե համարակալված լինեին պարբերականների նկարագրությունները։

Հարց է առաջանում նաև այն մասին, թե կարիք կա՞ր արդյոք «Նախասովետական շրջանի հայերեն հրատարակություններ» համարել 1918—1920 թվականներին Մոսկվայում լույս տեսած գրքերը, ինչպես արվել է ցանկում։

Կան նաև այլ բնույթի թերություններ, որոնք չեն կարող չլինել ամեն մի մատենագիտական գործում և, հասկանալի է, որ չեն անդրադառնում հոգատարությամբ կատարված այս աշխատանքի արժանիքների վրա։

***

Մատենագիտական աշխատանք առավել կամ պակաս չափով կատարվում է Հայաստանի նաև այլ գիտական հիմնարկներում և բուհերում, սակայն այդ աշխատանքները մեծ մասամբ երկրորդային մատենագիտության բնույթ ունեն և արտահայտվում են ներգրքային ցանկերի կամ տողատակի ծանոթագրությունների ձևով։

Մատենագիտական ոչ փոքր աշխատանք է կատարվում Հայաստանի գլխավոր հրատարակչություններում՝ «Լույս»,

«Մխար», «Գիտություն» և մանավանդ «Հայաստան» հրատարակչություններում։ Նախկին Հայպետհրատար, այժմյան «Հայաստան», ինչպես տեսանք, իր հրատարակած գրքերի գրացուցակները սկսել է տպագրել դեռևս 1923 թվականից։ Այնուհետև, ամեն տարի հրատարակվել են Հայպետհրատարի հրատարակչական գրացուցակները։ Որոշ տարիների լույս են տեսել տարեկան մի քանի համար փոքրիկ գրքույկների ձևով տպագրված գրքերի ցուցակներ՝ «Գրացուցակ», «Գրացանկ» կամ «Բյուլետեն» անուններով։ Այժմ լույս է տեսնում տարեկան 12 պրակ (ամիսը մեկ)։ 1936 թվականից Հայպետհրատը հրատարակում է իր թեմատիկ պլանները (տարեկան)։

Հրատարակչական գրացուցակներ տպագրել կամ տպագրում են նաև՝ Հայպետուսմանկհրատը (այժմ՝ «Լույս») 1956-ից, «Սոյուզպեչատ»-ի Հայաստանի բաժանմունքը 1934-ից (տարին մեկ, կոչվում էր «ՀՍԽՀ պարբերական մամուլի կատալոգ», այժմ՝ «Հայկական ՍՍՌ թերթերի և ամսագրերի 19.. թվականի կատալոգ»), Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերությունը (այժմ «Գիտելիք» ընկերություն), որ տպագրել է իր 1948—1956 թթ. հրատարակությունների գրացուցակը և թեմատիկ պլաններ, Հայգյուղհրատը և այլն։

Հայգիրքը տպագրել է իր կենտրոնական պահեստում եղած, ինչպես և դուրս գրման կամ գների իջեցման ենթակա գրքերի ցուցակներ (1949, 1960, 1961 և այլ թվականներին)։

Գրադարաններից դուրս գրման ցուցակներ հրատարակել է Կուլտուրայի մինիստրությունը։ Իր ունեցած գրքերի ցուցակներն է հրատարակել Հայաստանի գրադարանային կոլեկտորը (օրինակ 1951-ին)։

Որոշ հիմնարկներում էլ կազմվում են առաջնային մատենագիտական ցանկեր, սակայն հիմնականում ոչ հայերեն գրականության կամ ոչ հայերեն վերնագրերով ու ձևավորմամբ (ուստի և, ըստ էության, դուրս են հայկական մատենագիտության ոլորտից)։ Օրինակ, Առողջապահության մի-

նիստրության գիտական գրադարանը հրատարակում է «В помощь практическому врачу» *մատենաշարով հանձնարարական ցանկերը, ինչպես՝* «Лейшманиозы в Армении» (1957), «Зоб» (1960), «Болезни желчного пузыря и желчеотводных путей» *(1962) և այլն։ 1956 թվականից գրադարանը հրատարակում է նաև ստացված գրքերի տեղեկատու (բյուլետեն), նույնպես գրքի ամրողջությամբ ռուսերեն։*

Ռուսերեն կազմված ցանկերից են նաև.

Сборник аннотаций работ армянского научно-исследовательского института стройматериалов и сооружений за 30 лет (1930—1960). Ереван, 1961. 132 стр. (Госкомитет Сов. мин. Арм. ССР по делам строительства и архитектуры).

Н. Тер-Минасян Библиографический сборник трудов сотрудников института виноградарства и виноделия с 1927 по 1956 гг.— «Труды» института виноградарства, виноделия и плодоводства», вып. III. Ереван, 1957, стр. 249—284.

Այս մատենագիտության մեջ կա նաև հայերեն գրականություն, որ սակայն առանց պատճառաբանման ներկայացված է միայն ռուսերեն թարգմանությամբ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՍ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մենք արդեն խոսել ենք 20-ական թվականներին Մոսկվայում ԽՍՀՄ ժողովուրդների կենտրոնական հրատարակչության տպագրած հրատարակչական ոչ մեծ ցանկերի մասին: Բացի այդ, Հայաստանից դուրս, Միության այլ վայրերում ևս տպագրվել են մի քանի այլ մատենագիտական ցանկեր: Օրինակ, ցանկեր են տպագրվել Թիֆլիսում, այդ թվում Լ. Մելիքսեթ-Բեկի կազմածները, ինչպես՝ «Публикации письменных источников по истории Грузии» *(նյութերի մի մասը հայերեն է), 1948, 232 էջ: Թիֆլիսում է տպագրվել նաև իր՝ Մելիքսեթ-Բեկի աշխատությունների մատենագիտությունը հետևյալ վերտառությամբ.* «Полная библиография печатных работ... по арменоведению, грузиноведению, кавказоведению Леона Меликсетовича Меликсет-Бека... за 1909 — 1960 гг.» *(1960, 89 էջ)*:

Միության այլ վայրերում տպված հայ մատենագիտական ցանկերից կարելի է հիշել նաև Գ. Դոյանի «Театр древней Армении» *գրքի 1-ին և 2-րդ հատորների մեջ (1952, համապատասխանաբար՝ էջ 455—512, 435—474) տեղ գտած ընդարձակ մատենագիտությունը, ուր կա բավականին քանակով հայերեն գրականություն: Ապա նաև Գ. Բհբուտովի* «Искусство Армении. Краткий библиогр. указатель» *գրքույկը (1939, 61 էջ), ուր հայերեն գրքերը տրված են ռուսերեն թարգմանությամբ: Հայ գրքի պատմության վերաբերյալ մատենագիտական ցանկ կա* «400 лет русского книгопечатания» *գրքում (Մոսկվա, 1964, էջ 648—649) և այլն:*

Պատվեր տալու և գրադարանային մկջազգային փոխանակության նպատակով Մոսկվայում հայերեն գրքերի ցուցակներ է տպագրում «Մեժդունարոդնայա կնիգա» համա-

միութենական միավորումը (1905 թվականից)՝ «Հայերեն գրքեր» կամ «Հայկական ՍՍՌ թերթեր և ամսագրեր» (այսինչ թվի) վերնագրերով։ Այս ցանկերը շարունակվող հրատարակությունների ձևով են լույս տեսնում (տարեկան մի քանի գրքույկ)։

Կան նաև որոշ շատ փոքր ցանկեր, որ լույս են տեսել անցյալում, ինչպես, օրինակ, Բաքվում հրատարակված «Ցուցակ մարքսիզմ-լենինիզմի հիմունքների գրականության» (1940, 8 էջ) փոքր ցուցակը և այլն։

Բոլոր այս կարգի մատենագիտական ցանկերի մեջ ամենից ընդարձակը և ուշագրավը 1941-ին Թիֆլիսում հրատարակված մատենագիտությունն է՝ «Հայկական գիրքը Վրաստանում» վերնագրով[1], որ կազմել է Վրաստանի պետգրապալատի նախկին աշխատակից Սիմեոն Շեյանը։

Այս մատենագիտությունը ընդգրկում է խորհրդային տարիներին Վրաստանում հրատարակված գրքերը (մինչև 1938 թ.)։

Մատենագիտության մեջ գրքերի անունները դասավորված են ըստ գիտության ու մշակույթի բնագավառների։ Օգտագործված է գրապալատի դասակարգման աղյուսակը։

Գրքերը համարակալված են։ Մեկից ավելի բնագավառների վերաբերյալ գրքերը լրացուցիչ կերպով արտացոլված են համապատասխան բաժիններում։

Գրքերի հիմնական նկարագրությունները համարակալված են (լրացուցիչները՝ ոչ)։ Վերջին համարն է 707։ Սակայն մի շարք հիմնական նկարագրություններ դուրս են մնացել համարակալումից, ուստի ցանկում 707-ից ավելի գիրք է ընդգրկված։

Մատենագիտությունը հարուստ է օժանդակ ցանկերով, դրանք են.

---

1 Ս. Շեյան, Հայկական գիրքը Վրաստանում։ 1921—1938։ Բիբլիոգրաֆիա։ Թիֆլիս, Վրաց. պետգրապալատ, 1941, էջ 152։

ա) Հեղինակների, թարգմանիչների և նկարիչների այբբենական ցանկ։

բ) Personalia *(ցանկում տրված են այն մարդկանց ազգանունները, որոնց նվիրված գրքեր կան մատենագիտության մեջ)։*

գ) Կազմակերպությունների, հիմնարկությունների և ձեռնարկությունների ցուցակ։

դ) Ժամանակագրական ցուցակ։

Օժանդակ ցանկերում կան թերություններ, որոնցից կարևոր է այն, որ մատենագիտության մեջ նշված մի շարք հեղինակներ և կազմակերպություններ դուրս են մնացել ցանկերից կամ սխալ հղում ունեն, օրինակ, ցանկում չկա Սմիդովիչ Ս., որ տեղ է գտել մատենագիտության մեջ (էջ 18) կամ կազմակերպությունների և հիմնարկների օժանդակ ցանկում «Ցեկավշիրի»-ի դիմաց նշված է 415, այնինչ այդ համարի տակ մատենագիտության մեջ ուրիշ բան է և այլն։

Ամեն դեպքում այս մատենագիտությունը բարեխիղճ աշխատանքի արդյունք է։ Կազմողը եղել է բավական բանիմաց մատենագիտական աշխատանքի բնագավառում։

Կարևոր է նշել, որ այս մատենագիտությունը ընդգրկում է այն հիմնականը, ինչ Վրաստանի խորհրդայնացումից հետո տպագրվել է այնտեղ (քանի որ 1938 թվականից հետո Վրաստանում տպագրված հայերեն գրքերը համեմատաբար այնքան էլ շատ չեն)։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ[1]

Աբգարյան Գ. *Հայկական մատենագիտության առաջին հատորը։— «Տեղեկագիր» ՀՍԽՀ ԳԱ (Հաս. գիտ.), 1962, № 3, 91—96։*

Աբոյան Ս. *Ինչ կարող է կարդալ շոֆերը...։— «Ղևկի մոտ», 1958, № 3։*

Առաքելյան Վ. *Թանկարժեք հիշատակարաններ։— «Գրական թերթ», 1956, № 4։*

Բաբայան Ա. *Բիբլիոգրաֆիայի մի քանի հարցեր։— «Գրական թերթ», 1933, № 2։*

Բաղդասարյան Ե. *Ազգային մատենագիտության օջախը։— Երևան, 1962, № 304։*

Բառսեղյան Կ. *Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա։— «Պարտ. կյանք», 1954, № 11, էջ 57—60։*

Նույնը *Մատենագիտական նոր աշխատություններ։—«Սովետ. Հայաստան», 1964, 18 Հունիսի։*

Բիբլիոգրաֆիա Դևրնիկ Դևմիրճյանի մասին։— «Սովետ. Հայաստան» (Հանդես), 1958, № 3, էջ 28։

Գ. Լ. *«Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա»։— «Հառաջ» (Փարիզ), 1958, Հուլիսի 22, 23, 24։*

Գասապյան Ն. *«Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա...»—«Պատմա-բանասիր. հանդես», 1961, № 3—4, էջ 307—330։*

Գավթյան Հ. *Հայ նշանավոր մարդկանց նվիրված մատենագիտություն։ (Հ. Պետրոսյանի)։— «Գրադարանավար», 1960, № 5, էջ 27—30։*

Նույնը *Ալ. Շիրվանզադեի մատենագիտությունը։— «Սովետ. գրականություն», 1960, № 4, էջ 152—156։*

---

1 *Այն մատենագիտական ցանկերն ու աշխատությունները, որոնք նևրկա պրակի քննության նյութն են կազմում կամ որոնց մասին խոսք կա պրակում, չեն մտել օգտագործված գրականության ցուցակի մեջ։*

Նույնը *Սովետահայ գրական-գեղարվեստական ժողովածուներ։— «Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1965, № 4, էջ 47—48։*

Երեմյան Ս. և Մարտիրոսյան Ա. *Արժեքավոր ներդրում հայագիտության մեջ։ [Հ. Անասյանի «Հայկական մատենադիտ.»]։— «Սովետ. գրականություն», 1962, № 1, էջ 143—146։*

Թութունջյան Ժ. *«Աշխարհաբար դիրքը մինչև 1850 թ.»։— «Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1965, № 6, էջ 44—45։*

Խանդամուրյան Հ. *Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիան։— «Սովետ. գրականություն», 1958, № 6, էջ 155—158։*

Կարինյան Ս. *Հայ հին և միջնադարյան գրականության բիբլիոգրաֆիա։— «Սովետ. դպրոց», 1942, № 2։*

Կուրտիկյան Ս. *Հայ մատենագիտության անխոնջ մշակը։ [Հ. Անասյան]։— «Սովետ. գրականություն», 1960, № 6, էջ 79—82։*

Հակոբյան Վ. *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ։— «Տեղեկագիր», ՀՍԽՀ ԳԱ (հաս. գիտ.), 1951, № 3, էջ 63—69։*

Հայրապետյան Գ. *Յուրատեսակ ձոն Ակսել Բակունցին։— «Ավանգարդ», 1961, № 36։*

Հովհաննիսյան Ս. *Հ. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում։— «Պատմա-բանասիր. հանդես», 1963, № 1, էջ 235—248։*

Հովսեփյան Ն. *Պահանջվում է արտակարգ բարեխղճություն։ («Սովետահայ գրական-գեղարվեստական ժողովածուներ» մատենագիտ.)։— «Գրական թերթ», 1965, № 39։*

Իշխանյան Ռ. *Ինչ կարդալ անասնաբուծության վերաբերյալ։— «Հայաստանի կոլտնտեսական», 1958, № 9, էջ 47—48։*

Նույնը *Ինչ կարդալ պտղաբուծության մասին։— «Հայաստանի կոլտնտեսական», 1959, № 2, էջ 40։*

Նույնը Կոմիտասի բիբլիոգրաֆիան։—«Սովետ. արվեստ», 1958, № 2, էջ 80։

Նույնը Հայ տպագիր գրքի մատենագիտություն։— «Պատմ-բանասիր. հանդես», 1959, № 1, էջ 291—293։

Նույնը Մատենագիտություն. սկիզբ և հիմք ուսումնասիրության։ («Հովհաննես Թումանյան» մատենագիտ.)։ «Երևան», 1962, հունիսի 15։

Նույնը «Նորարարություն» մատենագիտության մեջ։ (Հ. Պետրոսյանի «Հայ գիտնականներ...» մատենագիտ.)։— «Գրական թերթ», 1960, № 32։

Նույնը և Դավթյան Հ. Հայ մատենագիտության հանրագիտարան։ («Հայկական մատենագիտ.»)։— «Գրական թերթ», 1962, № 4։

Կոստիկյան Հ. Տիրապետել մատենագիտությանը և սովորեցնել ընթերցողներին։— «Կուլտուր-լուս. աշխատանք», 1963, № 3, էջ 21—23։

Ղազարյան Ս. Աշխարհաբար գիրքը Աբովյանից առաջ։— «Գրական թերթ», 1965, № 21։

Ղանալանյան Ա. Հայ բազմադարյան մշակույթի հանրագիտարանը։ («Հայկական մատենագիտ.»)։— «Սովետ. Հայաստան», 1962, № 18։

Մարգարյան Ա. Բարեխիղճ աշխատանքի արդյունքը։ («Ակսել Բակունց» մատենագիտ.)։— «Սովետ. գրականություն», 1961, № 9, էջ 154—156։

Նույնը Ունկնդրել քննադատության ձայնին։ (Հ. Պետրոսյանի «Հայ գիտնականներ...» մատենագիտ.)։—«Լենինյան ուղիով», 1960, № 10, էջ 105—109։

Մեծ բանաստեղծի երկերի բիբլիոգրաֆիան։— («Եղիշե Չարենց» մատենագիտ.)։— «Սովետ. Հայաստան» (հանդես), 1958, № 4, էջ 46։

Մելիքյան Ա. Ա. Բաբայան, Վ. Ի Լենինի աշխատությունների հայերեն թարգմանությունները»։— «Պրոլետար» (Թիֆլիս), 1934, № 73։

Մելքումյան Լ. Դիտողություններ «Հայ գրականության

բիբլիոգրաֆիա»-ի մասին։— «Սովետ. գրականություն և արվեստ», 1953, № 11, էջ 151—155։

Մխիթարյան Ա. Հայ հին և միջնադարյան գրականության բիբլիոգրաֆիա։— «Սովետ. գրականություն», 1942, № 1, էջ 98—101։

Մկրտչյան Լ. և Դադումյան Գ. Լրացվում է հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիան։— «Կուլտուր-լուսավորական աշխատանք», № 5, էջ 38—39։

Մնացականյան Ա. Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ։— «Երեկոյան Երևան», 1964, № 65։

Նահապետյան Ա. Արժեքավոր բիբլիոգրաֆիա («Հովհաննես Թումանյան» մատենագիտ.)։— «Սովետ. Հայաստան», 1962, № 35։

Նույնը «Կոմիտաս»։— «Գրական թերթ», 1958, № 2։

Նույնը Ուշագրավ գիրք։ («Ակսել Բակունց» մատենադիտ.)։—«Գրական թերթ», 1961, № 13։

Նուրիջանյան Ա. Ինչ կարդալ արբանյակների մասին։— «Գրադարանավար», 1960, № 1, էջ 28։

Շահիկյան Ս. Երբ հաշվի չի առնվում քննադատությունը։— «Սովետ. գրականություն», 1961, № 1, էջ 172—175։

Ոսկանյան Ն. Մատենագիտական արժեքավոր ուղեցույց։— («Մատենագիտութ. հայկական մատենագիտութ.)։ —«Երևան», 1964, № 254։

Ոսկյան Հ. Հայկական մատենագիտություն...։— «Հանդես ամսօրյա» (Վիեննա), 1960, էջ 155—158։

Ռոստոմյան Գ. Արժեքավոր մատենագիտություն։ («Մատենագիտութ. հայկական մատենագիտութ.»)։— «Գրական թերթ», 1964, № 30։

Նույնը Արժեքավոր մատենագիտություն հայ մեծ գրողի մասին։ («Հովհաննես Թումանյան»)։— «Բյուրակն», Փարիզ, 1962, հոկտ.

Ռուբինյան Ռ. Ակադեմիայի մատենագիտության նոր հատորը։— «Երևան», 1963, № 272։

Նույնը Արժեքավոր աշխատություն մատենագիտության

տեսության և պրակտիկայի վերաբերյալ։— «Կուլտ.-լուս. աշխատանք», 1963, № 8, էջ 45—47։

Սարգսյան Ն. *Տեղեկատու-բիբլիոգրաֆիական աշխատանքների կազմակերպումը մասսայական գրադարաններում։— «Գրադարանավար», 1960, № 3, էջ 19—20։*

Տեր-Ներսեսյան Ն. *Հայկական մատենագիտություն։— «Բազմավեպ» (Վենետիկ), 1961, էջ 178—180։*

Փափազյան Հ. *Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ։— «Տեղեկագիր» ՀՍԽՀ ԳԱ (Հաս. գիտ.), 1956, № 10, էջ 115—120։*

Քոլանջյան Ս. *Հայ մատենագիտության հանրագիտարանը։— «Էջմիածին», 1961, № 2, էջ 51—60։*

Նույնը *Հայկական մատենագիտություն։— «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 3, էջ 225—231։*

Ֆելեֆյան Հ. և Շահինյան Ս. *Բիբլիոգրաֆը պասիվ արձանագրող չէ...։ (Հ. Պետրոսյանի «Հայ պարբերական մամուլի բիբլ.»)։— «Լենինյան ուղիով», 1959, № 6, էջ 116—120։*

Аршаруни А. Библиография армянской литературы.— «Сов. библиография», 1953, вып. 2(35), стр. 101—108.

Ишханян Р. Создание библиографии армянской печати.— «Сов. библиография» (Москва), 1959, № 4, стр. 117—120.

Карменян В. Хорошее начало.— «Коммунист», 1964, № 89.

Машкова М. Библиография армянской периодической печати.— «Сов. библиография», 1958, вып. 51, стр. 127—132.

Стамболцян В. В поисках книги.— «Коммунист», 1964, № 67.

Штикян М. Неудавшаяся работа.— «Коммунист». 1958, 17 июля.

Юзбашян К. А. Анасян Армянская библиология.— «Известия», АН СССР, отд. лит-ры и языка, т. 19, вып. 6, 1960, стр. 540—542.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5

Գլուխ առաջին 1920—30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ 7

Գլուխ երկրորդ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՊԱԼԱՏ . . . 38

Տարեգրեր 38
Տպագիր քարտեր 50
Մատենագիտական աշխատությունների և ցանկերի հրատարակում 61

Գլուխ երրորդ Ա.Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ . . . 110

Տեղեկատու-մատենագիտական բաժնի աշխատանքը . 116
Հայ երաժշտական գրականության մատենագիտության ստեղծում 170
Տեխնիկական հատուկ տեսակի գրականության բաժնի մատենագիտական աշխատանքը 175
Ջանքեր հյ գրքի ընդհանուր մատենագիտության ստեղծելու ուղղությամբ 181
Գրադարանագիտական-մեթոդական բաժնի հրատարակությունները 218
Հանրապետական գրադարանի մատենագիտական այլ հրատարակություններ 222

Գլուխ չորրորդ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՏԻԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ 239

ԳԱ կենտրոնական գրադարանի մատենագիտական աշխատանքը 244

Գլուխ հինգերորդ ՄԱՏԵՆԱԴԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՅԼ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ 274

Երևանի պետական համալսարան 274
Մաշտոցի անվան մատենադարան 278
Մաթեմատիկայի ինստիտուտի հայկական ֆիլիալ . 295

Գլուխ վեցերորդ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՍ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ . . 302

Օգտագործված հոդվածների և գրախոսականների ցուցակ . . 305

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾՐԻՆԴԱՄԵՆՁԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

Ռաֆայել Ավետիսի Իշխանյան

Հայ մատենագիտության պատմության։ Պր. 3.

Խմբագիր՝ Վ. Դավթյան
Տեխ. խմբագիր՝ Հ. Մարտիրոսյան
Վերատեսող սրբագրիչ՝ Լ. Նազարյան

ՎՖ 06415 *Պատվեր 2572* *Տիրաժ 600*

Հանձնված է արտադրության 1/IX 1966 թ.։
Ստորագրված է տպագրության 2/XII 1966 թ.։
Թուղթ՝ 84×108 1/32։ Տպագրական 19,5 մամ. հնդ. 11 մամ.։
Գինը 60 կոպ.

ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր մամուլի կոմիտեի
պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության
№ 6 տպարան, Երևան, Թումանյան № 51։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220040463

A II
40463